



Մեկենասությունը՝

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ

ԳԼԱԶՈՐ ՄԱՍՆԱԾԻԻՂԻՆ



Մ. ԻՇԽԱՆ

ՀԱՅԻ ԵՒ
ԼՈՅՍԻ ՀԱՄԱՐ

Հրատարակություն՝



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆ

ՊԵՅՐՈՒԹ - 2007

ՆՈՐԸՆԾԱՆ

Շատ անի կանոխ արթնցաւ այդ ատու: Ամբողջ գիշերը երազած էր տենդայոյզ քունի մը մէջ եւ հակառակ ցուրտ օդին՝ քրտինքի կաթիլներ կային ճակատին վրայ: Ծիգ չըրաւ սենեակի առարկաները զատորոշելու. կարծես նորածագ արեգակը բնական շարունակութիւնը ըլլար գիշերուան երազին: Կարճ վայրկեան մը միայն աղօտ յոյսը ունեցաւ բացուող աչքերուն առջեւ մղձաւանջը փարատած տեսնելու, բայց բո՛ւն մղձաւանջը նոր պիտի սկսէր, ցերեկուան լոյսին հետ, իր ահաւոր իրականութեամբ:

Հասած էր ուրեմն ճակատագրական պահը: Քիչ ետք պիտի բանար դուռը եւ նետուէր փողոց՝ իբրեւ հասուն մարդ, սնտուկի մը մէջ շալկած ընտանիքին ամբողջ հոգը: Տասնչորսամեայ պատանին պարտաւոր էր հասուննալ մէկ անգամէն, ստանց փորձի ու մարզանքի:

Նախանջի ճամբաները փակուած էին շատոնց. հոգերու արկղը կը սպասէր իրեն, հոն՝ դրան քով, հարսնացող աղջկան մը օժիտի սնտուկին պէս: Անդարձ մեկնումի հրաւեր մըն էր ան այդ պահուն: Պսակ մը կը սպասէր իրեն, կեանքին պսակը: Անցեալէն վերջնականօրէն բաժնուելու տրտմութի՞ւնը թէ անձանօթին վախը թեթեւ դողով կը պատէր իր անդամները:

Բարոյական դաստիարակութեան մը ամբողջ դրամագլուխը օգնութեան կանչեց: Ցատկեց անկողիներէն եւ սկսաւ հագուիլ կտրուկ շարժումներով: «Քաջ պէտք է ըլ-

լալ եւ ուժեղ կամքի տէր» կը կրկնէր ինքն իրեն, իւրաքանչիւր շարժումի հետ: Աթոռին նետուած հագուստի հին կրտորները շուտ սպառեցան. կարճ տաբատ մը՝ լետոյքին վրայ երկու կլոր կարկտանով, մինչեւ ծունկը դժուար հասնող սեւ գուլպաներ, քառակուսի մուֆ գիծերով շապիկ մը եւ կոշտ բաճկոնակ մը, որուն բուրդը մայրը իր ձեռքով մանած, ներկած եւ հիւսած էր տարի մը առաջ՝ անկողինին մէջէն «գողնալով»: Մեքենաբար շարժող իր մատները երբ հանդիպեցան վերջին կտորին՝ ակամայ տատանում մը ունեցաւ եւ դառն ժպիտով կծկեց դէմքին գիծերը: Գոգնոց մըն էր, սեւ ու հասարակ կտաւէ շինուած, նման այն գոգնոցներուն, զոր արհեստաւոր աշկերտները կ'անցընեն իրենց վիզէն եւ երկու կապիչներով կ'ամրացնեն մէջքին: Աւելորդ էր անշուշտ իր զարմանքը, քանի որ զայն չափելու ու ձեւելու արարողութեան ներկայ էր եղած օր մը առաջ. բայց եւ այնպէս, գոգնոցը դիտեց պահ մը երկիւղածութեամբ, ինչպէս կը դիտեն միջոցին մէջ առկախ խորհրդաւոր վարագոյր մը եւ լետոյ վտիտ իրանը փաթեց անով: Պիտի ուզէր ինքզինք տեսնել խոշոր հայելիի մը մէջ, որի շնորհէ առաջ ի՛ր աչքերուն յանձնել կեանքի պայքարին պատրաստուող քաջարի տղու իր կերպարանքը, բայց սենեակը ո՛չ պահարան ունէր, ոչ ալ հայելի:

Գետնի տափին վրայ, վերմակը մինչեւ աչքերը քաշած, քեռին կամ կը քնանար կամ քուն կը կեղծէր: Հաւանականը վերջինն էր: Անոր շունչին հետքն անգամ զգալի չէր: Խեղճ քեռի, ի՞նչ էր յանցանքը այս բոլորին մէջ, ինչո՞ւ կը տանջէր ան իր խիղճը գիշեր ու ցերեկ:

Գլուխը դարձուց եւ մօրը անկողինը պարապ գտաւ: Իրմէ կանուխ արթնցած էր ուրեմն հիւանդ այդ կինը եւ վստահօրէն հոգածու կարգադրութիւններով զբաղած: Պիտի նախընտրէր գողունի մեկնիլ տունէն եւ իրիկունը, վաստակը ափին՝ ճառագայթող դէմքով յաղթական տուն

դառնալ: Տառապանքը, մա՛նաւանդ ամօթախար տառապանքը, որոշ պայմաններու տակ, աւելի տանելի է երբ միմակդ կը կրես եւ հարազատներու հետ բաժնելու հարկադրանքին ենթակայ չես: Սիրտը ճմլող սուր կակիծը կ'աճէր, ամէն անգամ որ երեսակայէր մօրը անսահման վիշտը: Մէ՛կ հատիկ տղան խլել դպրոցի նստարաններէն եւ նետել փողոց, անձանօթ ու չարակամ մարդոց ամբոխին մէջ: Ինք չէր որ պիտի իյնար անցորդներու ոտքին տակ, այլ՝ մօր մը արհնոտ սիրտը: Եւ այս մտածումը աւելի ծանր կը կշռէր իր ուսերուն, քան ողբերգութիւնը, որուն դերակատար ըլլալու կոչուած էր ինք:

Ինքնավստահ եղանակով մը Սեդրակ վեր առաւ ճակատը ճիշդ այնպէս, ինչպէս սովորութիւն ունէր ընելու ուսուցիչի դժուար մէկ հարցումին պատասխանելու ատեն: Վարժուած չէր հարցումներու առջեւ անճրկած սպասելու որքան ալ դժուար ըլլային անոնք: Կեանքն ալ հարցում մըն էր ի վերջոյ, գուցէ գերագոյն հարցումը, զոր պէտք էր լուծել ուշ կամ կանուխ: Անձկալից մօտեցաւ դրան քովի արկղին, ծոեցաւ եւ տարօրինակ յուզումով սկըսաւ հայլ սրճագոյն փայտէ այդ տուփը զարդարող առարկաներուն: Յիշեց քեռիին խօսքը.

- Պոյաճիի շատ աղուոր սնտուկ մը ունեցար, խերլի ըլլայ...

Իսկապէս աղուոր ու հաճելի էր անոր տեսքը, կապոցէն նոր հանուած խաղալիքի մը պէս: Երկու կողմէն պրսպողուն թիթեղէ երկու գրպաններ, որոնց մէջ զոյգ շարքի վրայ, երեքական ներկի շիշ. կեդրոնէն՝ վեր կարկառող կաղապարեալ տոտիկ մը. միակտուր եւ յղկուն առաջամաս, որ ժանեկագարդ կտրուածքներով կը վերջանայ. ետեւը՝ փոքրիկ դարակներ, որոնցմէ մէկը՝ առանձին բանալիով՝ գանձանակի պաշտօն պիտի ունենայ եւ միւսը արկղի փոքրին մէջ պիտի պահէ ներկարարի զանազան առարկաներ:

Սեդրակ դարձուց բանալին, բացաւ ու գոցեց պահա-
րանին կափարիչը, ասիլը երկու հեղ անցուց մեծ խոզանա-
կի փաղաքշող մագերուն վրայէն եւ նորէն դրաւ տեղը:
Հոգերու սնտուկը պահ մը վերածուեցաւ հրաշագան բա-
նի մը եւ մղձաւանջը տեղի տուաւ նորութիւններու սիրա-
հար մանկունակ հետաքրքրութեան, որմէ դեռ չէր
պարպուած բոլորովին: Պահ մը միայն, որովհետեւ ժամա-
նակ չունէր դանդաղելու:

Անբացատրելի սէր մը զգաց տուփին հանդէպ, գրե-
թէ եղբայրական գուրգուրանք մը, երբ զայն օղակող փո-
կը անցուց իր աջ ուսէն: «Կեանքի ընկերս պիտի ըլլաս
դուն այսուհետեւ, եւ՝ մեր տան նեցուկը» շշուշեցին իր շըր-
թունքները առանց բացուելու: Սեդրակ կը սիրէր հանդի-
սատրութիւնը եւ կ'ուզէր որ վայելուչ շուք մը ստանար իր
երթը: Բայց հազիւ դուռը բացած՝ դէմ առ դէմ եկաւ մօրը
հետ: Օքերթը արկածահար փշրուեցաւ կարծես: Յանցան-
քի վրայ բռնուող մանչու մը պէս դողդողացին քայլերը եւ
կարկամեցաւ լեզուն:

- Արդէն կ'երթա՞ս...

Ձայնը խեղդուելու մօտ էր եւ դիմացը կանգնած դէմ-
քին ժպիտը անելի տխուր, քան թառամած ծաղիկի մը
վրայ խաղացող աշնան ցուրտ ճառագայթը:

- Բեզի փուռէն տաք հաց բերի. աշխատողը պէտք է
կուշտ ուտէ. ասիկա դպրոցի խաղերուդ չի մմանիր, ու-
ժասպառ կ'ըլլաս:

Սեդրակ կը նայէր մօրը ձեռքերուն մէջ բռնուած խո-
շոր նշխարի երեւոյթով արաբական կլոր հացին ու իրեն
այնպէս կը թուէր թէ սնտուկը ուսէն վար կապարի ծան-
րութիւն կը ստանայ: Հազիւ կրցաւ բառերը իրարու քով
բերել եւ կեղծ շեշտով մը արտասանել.

- Ախորժակ չունիմ. ես յետոյ շուկան բան մը կ'առ-
նեմ եւ կ'ուտեմ:

Բայց մայրը անոր գրպանին մէջ խոթած էր արդէն երկուքի ծալուած հացը եւ առանց մտիկ ընելու տղուն՝ կը շարունակէր.

- Դուն քեզի ուշադրութիւն ըրէ, շատ մի՛ յոգնիր, հետու թաղէր չերթաս, գէշ ընկերներէ զգուշացիր, քիչով գոհացիր եւ իրիկունը շուտ տուն եկուր:

- Հոգ մի՛ ըներ, ես պզտիկ չեմ:

- Աստուած հետդ ըլլայ, իմ բարի տղաս, Աստուած արտիդ համեմատ տայ եւ իր թելը պակաս չընէ վրայէդ. մի մոռնար երեսդ խաչակնքելու...

Պոյանին ա՛լ չէր լսեր. կը հեռանար արագ քայլերով, մէկ ձեռքը տուփին վրայ, միւսով՝ ցած աթոռակ մը բռնած: Լուռ էր փողոցը եւ ամայի: Հեռուէն կը լսուէր միայն կաթնավաճառին խոպոտ ձայնը, որ այծերու հօտը առջին ձգած կը հեռանար: Փողոցի դարձուածքին Սեդրակ կանգ առաւ եւ զգուշութեամբ դարձաւ ետին: Մայրը սեւաւոր արձանի մը պէս քարացած էր տան սեմին...

ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԸ

Թաղամասի գլխատր պողոտան կը տարածուէր դիմացը: Իր մանկութեան անուամին թիզ առ թիզ վկայ եղած այս ճամբան մտերմական հրապոյր մը ունէր Սեդրակի աչքին: Ծանօթ էին շէնքերը, խանութները, նոյնիսկ սալայատակի անկանոն եւ տեղ-տեղ խանգարուած քարերը: Ամէն ինչ նոյնն էր կրկին եւ ամէն բան իր տեղը, բացի ժամանակէն, որ սովորականէն աւելի կանուխ կ'առաջնորդէր իր քայլերը: Օրուան այս ժամուն, երբ դեռ խանութներու ժանգոտած փեղկերը շտապելով նոր կը բացուին, ինք նախաճաշի վրայ կ'ըլլար կամ՝ կիսատ մնացած դասի մը սերտողութեամբ զբաղած: Բայց քանի կը յառաջանար, կեանքին ընթացքը իր բնական հունին մէջ կը մտնէր կարծես: Ի՞նչ կար փոխուած, ի՞նչ իմաստ ունէր հոգին պէկոծող անտեղի խոտվքը. անյայտ ու անհրապոյր աշխարհի մը մէջ չէր ինկած, փա՛րք Աստուծոյ: Կը քալէր անցեալի հետքերուն վրայէն եւ ասիկա մեծ ինքնավստահութիւն կը ներշնչէր իրեն: Քիչ-քիչ մոոցաւ ժամանակի զգայնութիւնն ալ եւ պատրանքը գրաւեց իր ամբողջ էութիւնը: Այն տպաւորութիւնը ունեցաւ, թէ ամէն օրուան պէս դպրոց կ'երթար կրկին, ուսէն կախած գիրքերու պայուսակը: Կը բաւէր շարունակել այսպէս, անցնիլ կամորջը, հասնիլ ոստիկանատան պահականոցին, յետոյ թեքիլ ձախ եւ ահա զինք կը դիմաորէ եկեղեցիի գեղակերտ գմբեթը եւ անոր կողքին՝ վարժարանի աղմկոտ բակը: Զանգակէն առաջ՝ բաւական

ատեն պիտի ունենար ընկերները հալածելու, գնդակի կամ հողի զուարթ խաղ մը կազմակերպելու...

Յնցունցաւ մէկու մը նման, որ անսպասելի կերպով կը տեսնէ այլանդակուած իր անձին կենդանի պատկերը. եղբայրակից մը խաչածեալ էր ճամբուն վրայ. աղտոտ, մրոտած, արգահատելի պոյաճի մը, որ կ'անցնէր հակադիր մայրէն: Իր ծաղրանկա՞րը, թէ արհեստին կատարելատիպ մարմնացումը: Սեղրակ սիրտ չէր ըներ ուղիղ անոր դէմքին նայելու: Կը զգար սակայն, թէ վաստակաւոր արհեստակիցին աչքերը յառած էին իր վրայ եւ կը չափէին զինք վերէն վար, կարծես ըսել ուզելով. «Դուն ո՞րքէ բուսար»:

«Մրցորդ մը կեանքի պայքարին մէջ,- մտածեց նոր-ընծան,- պէտք չէ արտաքինէն դատել, գուցէ ոսկի սիրտ մը կը պահէ իր սեւ գոգնոցին տակ եւ լաւ ընկեր մը պիտի ըլլայ ինձի»:

Նոյն պահուն, արթնցող քաղաքի լոռութեան մէջ տիրաբար հնչեց զիլ ու պայծառ ձայն մը.

- Պոյաճի՛, պոյա աւչի՛...

Հեզնանքով, կծու խայթով եւ յանդիմանութեամբ խառն այդ կանչը աւելի իրեն ուղղուած էր քան հաւանական յաճախորդներու: Մարտահրաւեր սաստի մը պէս արձագանգեց ան իր հոգիէն ներս. եւ ազգային վարժարանի նախկին աշակերտը յանցապարտ զգաց ինքզինք՝ անհրաւ տեղը պայուսակը ներկատուփի մը հետ փոխանակած ըլլալուն: Ժտապեց փախուստ տալ, չքանալ հրապարակէն, չերեւիլ ոչ մէկուն, բայց ի գուր. անծանօթ պոյաճիին կանչը կը հալածէր զինք ու կը թուէր, թէ իր անունը կը պոռար ի լուր աշխարհքին:

Գլխուն վերեւ պատուհանի մը ապակիները բացունցան եւ անհասկնալի բառերու հետ զոյգ մը կօշիկ ինկաւ իր ոտքերուն տակ: Հարիւր մէթր անդիէն «ոսկի սիրտը» խոյացած էր արդէն եւ զինք մէկ կողմ հրելով տէր դար-

ձած կօշիկներուն:

Սեդրակ շիասկցաւ, թէ ի՛նչպէս մրցորդը տեղատրուեցաւ շուտ մը, բացուեցան ներկի շիշերը եւ խոզանակի թեթեւ հարուածներ անհաւատալի արագութեամբ սկսան ծեծել պատուհանէն ինկած կօշիկներու փոշեպատ երեսը: Հակազդելու համար շատ ուշ էր: Եւ յետոյ, ի՞նչ լեզուով պաշտպանել իր դատը, ի՞նչ միջոցով ետ խլել իր արդար իրաւունքը: Ձեւ մը կար անշուշտ, որուն ինք անտեղեակ էր տակաւին:

Յիշեց իրագիտութեան իրենց ուսուցիչը, պարոն Սարգիսը, որ սովորութիւն ունէր յանախ կրկնելու «Տղաքս, դըպրոցը տարբեր բան է, կեանքը՝ տարբեր: Հացի պայքարը գութ չի ճանչնար: Զօրատրոն է, որ կը յաղթէ միշտ»:

Սեդրակ իրաւունք տուաւ պրն. Սարգիսին եւ համակերպող ներողամտութեամբ բաժնուեցաւ զօրատրէն, որ չարախիհնո՞ ծիծաղով մը լեզու ցոյց կու տար իրեն:

Նոր ու պատկերազարդ դաս մը առած ըլլալու գոհունակութիւնը ունէր. կեանքի պայքարին առաջին դասը: Պատրաստ էր անակնկալներ դիմագրաւելու եւ պիտի զարմանար եթէ օրը իրիկուն ըլլար առանց արկածի: Օտտ բաներ պիտի լսէր եւ շատ բաներ պիտի տեսներ անշուշտ շուկայի կրկեսին վրայ: Ի՛նչ փոյթ, ինք վճռած էր իրեն վերապահել բոլոր դառնութիւնները եւ տուն դարձին վարդագոյն ցոյց տալ ամէն պատահար:

Դերակատարը դեռ չէր հաւատար իր խաղալիք դերի լրջութեան: Սեդրակի դանդաղ քայլերով փողոցի մէջտեղէն կ'առաջանար երկչոտ հանդիսատես մը, որուն խոստացած են անսովոր երեւոյթներ ներկայացնել: Ներկատուիք կ'օրօրուէր ուսէն վար եւ մեղմօրէն իրարու բախող շիշերուն ձայնը համաչափ կշռոյթի մը պէս կը ներդաշնակուէր իր քայլերուն: Եռուզեղը հետզհետէ կ'աճէր շուրջը. լրջախոհ դէմքեր կ'անցնէին քովէն, երբեմն իրեն

քսուելով, բայց միշտ անտարբեր, ամէն մէկը իր գործին, վճռական մարդոց անշեղ արտոբանքով: Ո՞ր կ'երթար ինք. ո՞ր էր իր հացին աղբիւրը. ո՞ր կողմ պէտք է դիմէր յաջողելու համար. ի՞նչպէս զգացնել իր ներկայութիւնը ընկերութեան այս մակընթաց ծովուն մէջ:

Յանկարծ ոռմբի պէս պայթող ձայն մը տիրապետեց օդին, միջոցին եւ տարածութեան: Ձայն մը, որ թոքերու խուլ քարայրէն դուրս կը ժայթքէր անգուսպ թափով եւ շէնքերը կը դղրդացնէր իրենց հիմքէն, լուծեան դատապարտելով ինքնաշարժներու ժխորն անգամ:

Տախտակէ խոշոր ափսէ մը գլխուն՝ շրջուն վաճառորդը կը գովէր իր տաք ու թարմ քեահիքէները:

Սեղրակ մեծ ուշադրութեամբ հետեւեցաւ ընկերութեան այս շատ յարգելի անդամին շարժումներուն: Ահա մէկը, որ գիտէր պարտադրել ինքզինք: Այնպէս կը պոռար, որ կարծես ինք ըլլար կեանքին առանցքը, իմաստն ու նպատակը: Մարդիկ պարտաւոր էին մտածելու անոր քեահիքէներու կենարար համին ու հոտի մասին: Չէին կրնար չմտածել: Առանց անոնց՝ ժամերը կանգ պիտի առնէին ապահովաբար եւ արեգակը պիտի գահավիժէր անդունդն ի վար:

Պոչանճին, ընկերութեան սա միւս յարգելի անդամը, անդրադարձաւ իր դերին ու մտածեց. «Այսպէ՛ս պէտք է ըլլալ, պէտք է համոզուիլ՝ համոզելու համար ուրիշները: Պէտք է դղրդացնել շրջապատը եւ արթնցնել թմրած գիտակցութիւնները: Ի՞նչ արժէ մարդս առանց կօշիկի եւ ի՞նչ արժէ կօշիկը առանց ներկի, փայլի, պայծառութեան: Իրեն վիճակուած էր ցեխակոյտի մէջ կորսուած սիրելի կերպարանքներ իրենց ինքնութեան վերադարձնելու կարելոր պաշտօնը. ինք ու իր նմանները լոկ գիտէին թափառայած եւ պարտասուն մարդկային անդամներու վրայ հակիլ գուրգուրագին շոյանքով եւ անոնց տալ կրկին ճա-

նագայթող թարմութիւն: Իր գործը ասելի արուեստ կը պարունակէր քան շարունած հաց ծախելու սովորական արարողութիւնը: Եւ եթէ քեահքէնին հրատուք ունէր իր ձայնով թաղ մը լեցնելու, իրեն արտօնուած էր ուրեմն ամբողջ քաղաքը ուշքի բերելու:

Ինչպէ՛ս կրնար մոոցած ըլլալ այս մանրամասնութիւնը, որ սակայն իր գործին հիմնական պայմաններէն մէկը կը կազմէր. ներկին, խոզանակներուն եւ գոգնոցին չափ կարելոր: Պոռա՛լ բարձրաձայն, երգել հրապարակով. զարմանալի էր, որ չէր մտածած այդ մասին: Զայնը դեռ չհնչած սկսաւ խեղդուիլ կոկորդին մէջ: Դասընկերներու շարքին, երգեցողութեան պահերուն, բաղաձայններէն մէկը ճանչցրած էր ինք: Ուսուցիչը քանի՛ հեղ յայտարարած էր խօսքը իրեն ուղղելով. «Սեղրա՛կ, ականջ չունիս դուն, նօթերը իրարմէ չես կրնար զանազանել»: Ու հիմա պարտաւորուած էր ահաւասիկ մեներգ մը ըսելու՝ փողոցին մէջ, ծանօթ ու անծանօթ հազարաւոր ունկնդիրներու առջեւ: Սոսկալի էր մտածումը: Ո՞ր նօթէն սկսիլ եւ ձայնախաղի ո՞ր աստիճանին վրայ վերջացնել: Գրեթէ վատահ էր, որ անվարժ արջորի հիւանդ կոկորդէն դուրս նետուող ճիչ մը պիտի ըլլար իրը: Բզկտուած ու ծիծաղելի կանչ մը: Կեանքի սեմէն ներս՝ պայքարի իր կամքը ծանուցանող ողորմելի՛ կանչ:

Քայլերը դանդաղեցան. կանգ առաւ ակամայ՝ ետ դառնալու, դասալիք ըլլալու մղում մը արունքներուն մէջ: Որքան ատեն կը լատաջանար լուռ ու մունջ, ինքնամփոփ ստուերի մը պէս, տէր էր իր ուժերուն եւ պաշտպանուած կը զգար ինքզինք: Բայց ձայն առնել եւ իր իսկ շրթունքներով յայտարարել աշխարհին իր ո՛վ ըլլալը, կօշիկ սրբողի իր մոոցուած գոյութիւնը, ո՛չ. առիկա համազօր էր մատնութեան, առիկա ինքնադատապարտութեան եւ հրապարակային խոստովանութեան պէս բան մըն էր, որուն համար շատ տկար էր տակաւին իր ամօթխած հոգին:

Ակնթարթի արագութեամբ աչքերուն առջեւ արձանացաւ կրկին իրենց տան սեմին անշարժացած մօրը սեւաւոր կերպարանքը: Ինք միակ յոյսն էր եւ վերջին սիւնը՝ փլելու մօտ տախտակաշէն հիւղակին, որուն ծանրութիւնը այսուհետեւ պիտի հանգչէր ի՛ր ուսերուն: Աւելորդ եւ անտեղի պերճանք մը չէ՞ր միթէ վնասկան պահուն անձնատուր ըլլալ քմահաճ դպրոցականի զգացումներուն, որոնք պէտք է ծալէր եւ մէկ կողմ դնէր՝ ներկատուփը շակած վայրկեանին իսկ: Սեղրակ արգահատեցաւ իր տկարութեան վրայ եւ ամչցաւ՝ ամօթ զգացած ըլլալուն համար: Ընկատ մեկնողը իրաւունք չունէր ետ նայելու:

Զգուշաւոր ակնարկ մը պտտցուց շրջապատին վրայ եւ անել ու նեղ փողոցէ մը սահեցաւ գողունի քայլերով: Փողոցը իր ուզածին պէս էր. ո՛չ մարդ, ո՛չ իսկ կատու՝ պատերու երկայնքին. կատարեալ ամայութիւն: Ասկէ աւելի յարմար վայր մը չէր կրնար ընտրել՝ փորձութեան կամուրջէն անցնելու համար: Կանգ առաւ լայն շունչ մը քաշեց, նայեցաւ դէպի վեր, դէպի շէնքերու պատուհանները: Փակ էին բոլորն ալ: Դատարկ էին ուրեմն հանդէսին վերին օթեակները, փողոցի բացօթեայ սրահին նման: Անհրաժե՞շտ էր խոնարհութիւն ընել՝ դերը սկսելէ առաջ: Յիշեց ամաւերջի հանդէսի մը ընթացքին կատարած իր առաջին արտասանութիւնը: Այսպէս շփոթահար կեցած էր բեմին վրայ, հարիւրաւոր աչքերու այրող նայուածքին տակ եւ այսպէս կը դողար ամբողջ մարմինով: Թուրք կլլեց երկու անգամ: Բացաւ բերանը, բայց ձայնը անսպասելիօրէն դաւաճանեց զինք: Աջ ուսը կքած էր՝ կախ ինկած սնտուկի ծանրութենէն: Վիզին ոտած երակը կը բաբախէր տեսանելի զարկերու ուժգնութեամբ: Հաւաքեց ուժերը եւ գերագոյն ճիգի մը լարումին մէջ ինքն ալ չհասկցաւ, թէ ինչպէս ի վերջոյ ոլորուն եւ անվստահ հնչականութեամբ կուրծքէն դուրս թռան ճակատագրական զոյգ բառերը.

- Պոյաճի՛, պոյա...

Զարմացաւ: Ի՞նքն էր իսկապէս կանչողը թէ հեռաւոր, անծանօթ ձայնի մը արձագանգը կը զարնուէր ականջներուն: Ծանր քար մը ինկած էր ուսերէն: Թեթեւցած մարմինով ու հոգիով՝ պարապութեան մը խորը սահելու տպաւորութիւնը ունեցաւ: Խա՛ղ էր այս ամէնը, չար ու անմիտ կատակ, որմէ վրէժ լուծելու անող կատաղութեամբ իրարու ետեւէ քանի մը անգամ եւս պոռաց նոյն բառերը, աւելի տիրական, աւելի կրքոտ շեշտով: Եւ սակայն, անզօր կատաղութեան մը յուսալքումը զինաթափ կ'ընէր զինք հետզհետէ: Մշուշապատ գիտակցութեան մէջ միտք մը կը մրճահարէր շարունակ. «Կեանքը լուրջ է, կեանքը կատակ չի վերցնէր»: Ո՞ր սորված էր այս իմաստութիւնը, ո՞վ էր անոր հեղինակը: Իրեն այնպէս թուեցաւ, որ պոյաճի ու պոյա բառերը տարբեր իմաստ ունին եւ իր կանչը ուրիշ բան չէ, եթէ ոչ անպաշտպան ու լքուած տղու օգնութեան աղաղակը...

Փողոցի խորքէն դուռ մը ճոնչեց իր ծղնիներուն վըրայ եւ գիշերանոց հագած մարդու մը կերպարանքը ուրուագծուեցաւ: Յուլօրէն բարձրացող ձեռք մը նշան կ'ընէր մօտենալու: Իրե՞ն էր արդեօք, պե՞տք է առաջանար: Բայց իրմէ զատ ուրիշ մէկը չկար փողոցին մէջ: Սեղրակ մէկ ձեռքով մէջքին սեղմեց ներկատուփը եւ միւսով աթոռակը առաջ պարզած՝ վազեց դէպի բաց դուռը: Խորշոմած դէմքով տանուէրը նոյնքան թոմթոկած երեսներով գոյգ մը կօշիկ երկարեց իրեն եւ անհետացաւ:

Վար ինկող առաջին թռչունին հետ իր յոգնութիւնը եւ չարչարանքները մոռցող նորավարժ որսորդի նման՝ պոյաճին գոհունակութեամբ տեղատրուեցաւ պատին տակ: Վերջապէս ինքն իր գործին տէրը եւ իր գործին հետ: Բացաւ դարակները, դուրս քաշեց խոզանակը, գոգնոցը տարածեց ծունկերուն վրայ եւ վերցուց կօշիկներէն մէկը: Կոշտ կաշիէ շինուած, գոյնը շփոթուող հին ու խոշոր ոտ-

նաման մըն էր: Երբ ծոեցա՛ս սպունգի կտորով մը զայն օճառելու համար, քրտինքի եւ գարշապարի նողկալի հոտ մը զարկաւ ունգերուն. ուշադրութիւն չդարձուց: Ամէն գործ ունի իր անհաճոյ կողմերը եւ մարդիկ ինչե՛ր յանձն չեն առներ դրամ վաստկելու սիրոյն: Ձախ ձեռքը մխրճուած էր կօշիկին ներսը՝ քարացած կեղտին մէջ, իսկ աջը կը բանէր եռանդով. կը սրբէր, ներկի առատ խաւ մը կը ծեփէր վրան եւ կը խոզանակէր մեծ արագութեամբ: Ի՛նչ փոյթ, թէ խոզանակը յանախ խոյս տար իր անճարակ մատներուն մէջէն եւ իյնար գետին: Դիտող չունէր քովը, կարելորը բարեխիղճ աշխատանքն էր՝ վերջին հաշուով:

Ջնարակի թիթեղէ կլոր տուփը բացած պահուն թեթեւ գլխու պտոյտ եւ սրտախառնութեամբ զգաց: Կաշին փայլեցնող մեղրագոյն մոմանիւթէն ծանր հոտ մը կ'եթերանար եւ կը խառնուէր ոտնամանի խոնաւ արտաբերումին: Սեղրակ գլուխը պատին կոթնեցուց պահ մը՝ աչքերը վարագորտող մթին մէզը փարատելու համար: Առաւօտեան ծոմ բերան աշխատա՞նքն էր արդեօք, որ կ'ազդէր վրան, այսքան դիրաբեկ դարձնելով դիմադրական իր կարողութիւնը: Ծօշափելով՝ գրպանին մէջ հաստատեց մօրը տուած հացին ներկայութիւնը, բայց չդպար անոր: Մի՞նչեւ իրիկուն շատ ժամանակ կար տակաւին եւ հաւանօրէն աւելի ուժասպառ վայրկեաններ ունենար:

Դիմացի սանդուղներէն շորորալէն վար իջաւ դպրոցական աղջնակ մը, կարմիր ժապատէնը մազերուն եւ պալուսակը թեւին տակ: Հազիւ ոտք դրած մայթին, աղջիկը իր սեւ աչքերուն խորէն նախ նայեցաւ իրեն եւ ապա՝ մեքենաբար՝ կրած կօշիկներուն: Անձանօթ աշակերտուհին հեռացած էր արդէն, տրտմութեան ալիք մը նետելով Սեղրակի հոգիին մէջ: Թաքուն վերք մը կարծես ցաւագնօրէն ճմլուեցաւ կոյրծքին ներքեւ: Ուրեմն այսպէս, որոշ էր իր դիրքն ու արժէքը մարդոց մէջ: Այսուհետեւ ո՛վ որ տեսներ զինք,- մեծ,

պզտիկ, այր թէ կիճ,- իր կօշիկներու կեղտին ու փոշիին մա-
սին պիտի մտածէր: Ուրիշ գաղափար, ուրիշ զգացում ընդու-
նակ չէր ներշնչելու իր նմաններուն: **Պոյաճի**, կօշիկ սրբող...

Ազգային վարժարանի նախկին աշակերտը, ան որ
մատով ցոյց կու տային դասարանէն ներս իբրև խոստում-
նալից փայլուն ապագայ, անդարմանելի կորուստի մը, ան-
դարձ մեկնող գեղեցկութեան մը վիշտին հետ միմակ գտաւ
ինքզիք: Նայեցաւ իր սպիտակ ձեռքերուն, նրբակերտ
մատներուն: Անճանաչելի դարձած էին անոնք՝ սեւ ներկի
արատաւորումներով: Կեանքի հրապարակին վրայ աղտո-
տած ձեռքերը ո՞ր ջուրով կարելի էր լուայ: Մեռած էր բան
մը իր մէջ, շատ թանկագին բան մը: Եւ անհատը այն էր, որ
ինք ստիպուած էր անա ականատես յուղարկատորը ըլլալու
իր մեռած մանկութեան եւ նորագարթ երագներուն...

Գիշերանցով մարդը ուրուականի մը նման տըն-
կընեցաւ դիմացը: **Պոյաճի**ն նայեցաւ մարդուկին անտար-
բե՛ր, անայլայլ ու բացակայ արտայայտութեամբ: Ներկը
աւարտած էր: Կօշիկները իր փոխարէն կը ժպտէին յա-
ճախորդին, որ շտապեց արծաթ դահեկան մը սահեցնել
պատանի աշխատատրին ափին մէջ ու փակեց դուռը:

Ցուցամատին եւ բթամատին միջեւ կորսուող արծա-
թի այդ փոքր կտորը անսպասելի ջերմութիւն մը փոխան-
ցեց թմրած ջիղերուն: Առաջին վաստա՛կը, արդար քըր-
տինքի առաջին պտուղը... նման էր սովորական բոլոր
մանրուք դրամներուն, բայց եւ այնպէս՝ որքա՛ն տարբեր
անոնցմէ: Ի՛րն էր ան, ի՛ր շահը, ի՛ր ստեղծագործութիւնը:
Ինչպէ՛ս կարելի էր ծախսել զայն ու մանաւանդ կշռել ա-
նոր անչափելի արժէքը:

Սնտուկի փոքրիկ ճեղքէն դրամը նետեց գանձանակ
դարակին խորը, ականջ տուաւ անոր հաճած խոլ ձայնին
եւ հպարտ, ուժովցած՝ համրեց կիսաձայն.

- Մէկ...

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ

Դամասկոսի վրայ իջնող աշնան գաղջ երեկոն, որ մինարէին երկարաձիգ աղօթքով կը սփռուէր ամէն կողմ, լի էր տրտում քաղցրութեամբ: Մերձակայ մզկիթին բարձրասլաց աշտարակը բոցավառած էր մայրամուտի ցուլքերով: Փողոցի երթելեկութիւնը թէեւ խիտ, բայց քաղաք մտնող ուղտերու կարաւանին վեհաշուք ընթացքով կը հոսէր, չխանգարելու համար կարծես երեկոյեան համափիտ խաղաղութիւնը: Ծրջուն վաճառորդներ, արհեստատրներ, արեւէն այրած բանուորներ յամրաքայլ կը դառնային իրենց տունները, ոմանք կողով մը շալկած, ուրիշներ հացի ծրարը սեղմած իրենց անութին: Անկիւնատր մեծ շէնքի մը պատշգամին տակ, սնտուկը առջին գետեղած, Սեդրակ կը հանգստանար՝ խառնաշփոթ ապրումներու երազանքին անձնատուր: Յոգնութի՞ւն: Կը դժուարանար անուն տալ այն տարօրինակ հոգեվիճակին, որ անսովոր լարումի մը կը յաջորդէ: Իրար բարեւող կամ իրար անտեսող բոլոր անցորդները իրենց կեանքի օրերէն մէկը անցուցած էին, աննշմար եւ անյիշատակ օր մը գուցէ, մինչդեռ նոյն օրուան ընթացքին ինք ճանչցած էր այլափոխումը բովանդակ կեանքին: Հսկայ անջրպետ մը կար հիմա իր անցելիքն ու ներկային միջեւ: Յանկարծ կտրուող գահավէժ մը, որուն երկու ափերը կամուրջ չունին: Որքա՛ն տարբեր է աշխարհը եւ որքա՛ն անճանաչելի՝ միեւնոյն քաղաքին միեւնոյն փողոցներուն մէջ, երբ կեանքի թելը կը փրթի բախ-

տին հարուածով ու կը կապուի նոր նակատագիրի մը: Դպրոցական պայուսակի փոխարէն ուսին նետած էր ներկի տուփ մը եւ ահա՛ մարդիկ, աշնան երեկոն, իր անձն ու շրջապատը իրեն կը ներկայանային նո՛ր գոյնով ու նոր իմաստով: Առաջ ալ, յաճախ դիտած էր աշնան դեղնատուն ծառերը, բայց չէր զգացած անոնց տերեւաթափին մահա-համբոյր թախիծը: Տուրտէն դողացած էին իր մերկ անդամները, բայց ցուրտը երբե՛ք չէր թափանցած հոգիին: Դաշտերու ամապութեան մէջ անգամ մինակ չէր զգացած ինքզինք, մինչդէռ հիմա յուսահատօրէն մինակ էր, անպաշտպան ու լքուած՝ քաղաքի տենդին ու ամբոխին մէջ:

Սեդրակ թափառած էր ամբողջ օրը ընդարձակ թաղամասի բոլոր անկիւնները, նոյն փողոցը այցելելով երբեմն քանի մը անգամ. խուսափած էր հրապարակ վայրերէ, աշխատելով միշտ ծածկուած ու անյայտ մնալ: Թանօթ դէմքերու եւ մա՛նաւանդ դասընկերներու հանդիպումին սարսափը առաջնորդ ունեցած էր իր քայլերուն: Իր սպասածէն շատ աւելի միօրինակ ու տաղտկալի անցած էին ժամերը՝ ինը դահեկանի գիհար արդիւնքին հասցնելով իր աշխատանքը եւ աշխատելու անսպառ եռանդը: Ինը գոյգ կօշիկ եւ ինը դրուշ: Յաճախորդներէն ոչ մէկը առատաձեռնութիւնը ունեցած էր աւելիով վճարելու: Ընդհակառակն, գտնուած էին նոյնիսկ նազելաշուք տիկիւններ, որոնք իշապանէն բանջարեղէն գնելու պէս իր հետ սակարկած էին մէկ դահեկանն անգամ, առաջարկելով երկու գոյգը մէկ արծաթով ներկել:

Սեդրակ փորձեց աւելի քան ինը ժամերու իր տպաւորութեանց, տեսածներուն, լսածներուն եւ ըրածներուն հաշուեկշիռը կազմել մտովի, բայց չկրցաւ: Աւելի դիւրին էր վատկած գումարը հաշուել, որուն իրաքանջիւր դահեկանը սրբուած, մաքրուած կօշիկի մը մոայլ փայլը կը ցոլացներ՝ սրճագոյն, կարմիր կամ սեւ: Այր մարդու, կնոջ

կամ մանուկի: Ինը դրուշ՝ ինը ժամ - արծաթաշար պատ-
մութիւնը փոշեթաթա գորշ օրուան մը:

Պատանի ներկարարը որոշեց տեղէն չշարժիլ, մին-
չեւ որ յաճախորդ մըն ալ ներկայանար եւ շահած դրամնե-
րուն ընդհանուր գումարը հասներ տասի. կլոր գումար մը,
հաւասար՝ կէս մէճիտի. բան մըն էր վերջապէս եւ իրա-
ւունք կու տար իրեն ինքնավատան քայլերով տան ճամբան
բռնելու: Իր նախատեսութիւնը ակելի էր եղած, բայց ի՞նչ
կրնար ընել: Ձեռքէն եկածը փորձած էր, արհամարհելով
ամէն դժուարութիւն: Ինքզինք զրկած էր նոյնիսկ կէ-
սօրուան ճաշէն ու բաւականացած այն ցամաք հացով, զոր
մայրը գրեթէ բռնի դրած էր գրպանը մեկնելու պահուն:

Հեզմական ժպիտով յիշեց իր մաքառումը ուտելու
փորձութեան դէմ: Ի՞նչ տղայութիւն: Կէսօրը անցած էր,
երբ առանց մտածելու հասաւ ֆուլ ծախողի մը խանութին
առջեւ: Ներսէն կը ծաւալէին տաք ֆուլի, խաշած սիսեռի
եւ թթուաշ շողգամի բոյրեր: Բանի մը հոգի նստած ախոր-
ժակով կը ճաշէին: Գիտէր, որ պնակ մը այդ համադամնե-
րէն պիտի արժէր երկու գոյգ կօշիկի ներկ: Տատամսեցաւ,
հեռացաւ, կրկին մօտեցաւ խանութին, բայց չհամարձա-
կեցաւ ներս մտնելու: Խորհեցաւ մօրը եւ քեռիին մասին, ո-
րոնք շատ հաւանօրէն չոր հացի կտորն իսկ չունէին սե-
ղանին վրայ: Ձեռքը առաջ չգնաց երկու դահեկանը մէկ
անգամէն ծախսելու: Ի՞նչ կը մնար գանձանակին տակը.
ինչպէ՞ս պիտի ամբողջացներ կէս մէճիտը գոնէ:

Սեղրակ գոհ էր հիմա ինքն իրմէ: Ըրած զոհողութիւ-
նը ուրախութեամբ եւ հպարտութեամբ կը լեցներ սիրտը:
Տնօրէնին դէմքը ներկայացաւ մտքին առջեւ ու մտածեց.
«Բարոյախօսութեան դասի մը աղուոր միթ կրնար դար-
ձընել այս պարագան, եթէ իմանար»: Ու մէկ անգամէն,
չեւ գիտեր ինչպէս, ամբողջ դպրոցը վերակենդանացաւ
աչքերուն դէմ: Տեսաւ վեցերորդ դասարանը՝ բակին վրայ

նայող իր պատուհաններով, դասընկերներու շարքը, առ-
ջեւի նստարանին վրայ Ջարուհիի խարտեաշ գլուխը եւ
յտակօրէն լսեց շարադրութեան ուսուցիչին ձայնը, որ
կ'ըսէր. «Օրինակ առէ՛ք Սեդրակէն»:

Մէկ ամիս հազիւ կրցաւ հետեւիլ նախակրթարանի
աւարտական դասարանի ընթացքին: Ընտանիքին պայ-
մանները այն աստիճան վատթարացան, որ ստիպուեցաւ
վարժարանէն հեռանալ: Անիմաստ ու անկարելի էր շա-
րունակելը՝ պատառոտուն հագուստներով, կէս կուշտ կէս
անօթի, առանց թուղթի ու տետրակի: Քեռին անդամա-
լուծուած էր յօդացաւերու սաստկութենէն: Մօրը աչքե-
րուն լոյսը սպառած էր այլեւս՝ տարիներ շարունակ ասեղ
զարնելով: Հազիւ կը յաջողէր ան ոտքի պահել իր քայ-
քայուած առողջութիւնը: Հիւանդութեան վերջին տագնա-
պին՝ Կարմիր Խաչի բժիշկը արգիլած էր որեւէ աշխա-
տանք: Տան մէջ զոհողութեան յետին աղբիւրները չոր-
ցած էին: Քիչ շատ արժէք ներկայացնող իր մըն ալ չկար,
որ կարելի ըլլար ծախել եւ ատեն մը եւս դիմանալ: Սեդ-
րակ յիմար չէր, ո՛չ ալ անսիրտ. կը տեսներ ողբերգութիւ-
նը ու ամէն ժամ կ'ապրէր զայն: Երէկուան մանուկն ալ
չէր, որ աչքերը գոց համակերպէր ճակատագրին: Ինքն
էր միակ յոյսը եւ միակ նեցուկը այն երկու խլեակներուն,
որ ամէն ինչ զոհած էին իրեն համար: Կրնար աշխատիլ
ու վճոց ժամանակ չկորսնցնել: Քեռին ու մայրը շատ
ընդդիմացան, նեղ օրերու մօտալուտ վախճանէն խօսե-
ցան, Աստուած մե՞ծ է ըսին: Բայց ինք կը զգար, որ մխի-
թարանքի խօսքեր էին այդ բոլորը եւ այս վախճանը ելք
չունէր: Իրիկուն մըն ալ Սեդրակ ունեցած չունեցածը հա-
ւաքեց դպրոցէն, տուն եկաւ եւ յայտարարեց, թէ աշխա-
տանքի պիտի ձեռնարկէր: Մայրը լացաւ, քեռին ծխատու-
փին մէջ սիկարէթ փնտռեց, բայց չգտաւ ու ջղային շար-
ժումներով սկսաւ պելխին ծայրերը կրծոտել: Յաջորդ օրե-

րուն տնօրէնը երկու անգամ մարդ դրկեց իր ետեւէն: Եկողները երկար բարակ դրուատեցին Սեդրակին ընդունակութիւնները.

- Մեղք է տղուն, կարդալու փափաք ունի. այսպիսի յառաջադէմ աշակերտի մը ապագան պէտք չէ խորտակել: Դպրոցը յանձն կ'առնէ տարեթոշակը բարերարէ մը ճարել:

Ի՛նչ օգուտ: Հապա հա՞ցը, հապա տո՞ւնը, հապա քեռիին ծխախոտը:

Ձիւնի պէս ճերմակ շապիկով եւ գունավառ փողկապով երիտասարդ մը կանգ առաւ մայթին վրայ, ծոցեցաւ, դիտեց ոտքերը, շարժում մը ըրաւ դէպի ներկին սնտուկը, յետոյ միտքը փոխեց, ետ դարձաւ կրունկին վրայ ու բռնեց իր նախկին ուղղութիւնը: Սեդրակ արթնցաւ աններելի բռնէն. գրասեղանին առջեւ չէր գտնուեր, այլ՝ ներկատուփի՛ն: Պարտաւոր էր գո՛րծ տեսնել եւ ոչ թէ անշահ մտածումներու թմբիրով օրօրուիլ: Պարտաւոր էր արթուն հսկել, յանախորդներ գրաւել: Գործը բախտ ըսել է եւ չես գիտեր, թէ բախտը ե՛րբ կը ներկայանայ: Իսկոյն քաշեց խոզանակը եւ անոր փայտով սկսաւ տուփին թխթխկացընել, ինչան պատրաստակամութեան եւ սիրալիր հրաւերի... Ափսո՛ս, բախտը հեռացած էր արդէն:

Մեծ եղաւ զարմանքը, երբ քիչ ետք դարձեալ նըշմարեց շողշողուն փողկապին ծածանումը. երիտասարդը ներշնչում փոխած ու վերադարձած էր: Անթերի արդուկով տաքատ մը կը կախուէր իր առջեւ:

- Ուշադրութի՛ն գուլպաներուս, չաղտոտե՛ս:

Հարկա՛ր թէ ուշադրութիւն. ինչի՞ տեղ կը դնէր զինք: Այնպիսի ներկ մը գարնէր, որ վրան ծոողը դէմքին պատկերը մէջը տեսնէր: Զգուշութեամբ վեր դարձուց տաքատին վարի ծայրերը, զգուշութեամբ շփեց կօշիկներուն երեսները եւ զգուշութեամբ մօտեցուց ներկին սպունգը: Իրականին մէջ՝ ներկի ալ պէտք չկար, այնքան որ մաքուր

էին պարոնին կօշիկները: Կամ առաւօտուն սրբուած ըլլալու էին անոնք կամ օր մը առաջ: «Եթէ ամէն մարդ ասոր չափ գիտակից ըլլայ եւ հոգ տանի ոտքերուն, մենք՝ պոյաճիներս, ոսկի կը կտրենք», խորհրդածեց Սեդրակ ու փափաք մը ունեցաւ այդ խնամուած, այդ շոյուած ոտքի մետաքսէ գուլպային դպչելու:

*

* *

Հայկական քեմփէն հեռու, Դամասկոսի քրիստոնէական թաղի ծայրամասին մէջ հողածէսի եւ թիթեղածածկ սենեակ մըն էր Սեդրակենց «տուն»ը, վարձու հողի կտորի մը վրայ նստած: Գաղթէն դարձին, կոտորածի սարսափներէն ճողոպրած մեծ ընտանիքի մը ճղակտոր այս բեկորը, երբ ինքզինք գտաւ հիւրընկալ երկրի ազատ երկինքին տակ, քեռիին առաջին մտահոգութիւնը եղաւ սեփական երդիկի մը ներքեւ ապաստանիլ: Հայրենի ծառագարդ գիւղաքաղաքին անշէջ կարօտով՝ փնտռեց ու գտաւ քաղաքը պտղաւոր պարտէզներուն միացնող լքուած այդ գետինը: Իր ձեռքով աղիւսներ թափեց եւ իր ձեռքով հիւսեց նոր խրճիթին պատերը: «Առողջ ու մաքուր օդը ամէն բանէ աւելի կարեւոր է. ուտելիք ալ չըլլայ՝ օդը կ'ապրեցնէ», կ'ըսէր շուրջիներուն: Սեդրակ այն ատեն պզտիկ մանչուն՝ բոպիկ ոտքերով ջուր կը կրէր եւ ցեխ կը հասցնէր քեռիին: Քանի մը բարեկամներ նոյնպէս իմաստութիւն նկատեցին խճողումներէ հեռու մնալը եւ հետեւեցան իրենց օրինակին: Այնպէս որ, շատ չանցած, գետինը շէնցաւ եւ տասնեակ մը ընտանիքներէ բաղկացած կոկիկ համայնք մը ստեղծուեցաւ նոյն վայրին մէջ: Տեսակ մը մանրանկար հիւղաւան, աւելի մաքուր եւ աւելի մտերմական: Այնուհետեւ քեռին գլուխը զարկաւ հոս ու հոն՝ գործի

մը համար: Արհեստ չունէր ձեռքը, ոչ ալ դրամագլուխ: Քոչըրը հին կապոցները քակեց, եւ արտոյի ճամբաներու երկայնքին համրիչի հատիկներուն մասն հալած ոսկիներու իր մշանատր շարոցին վերջին երեք միատրները զոյգ մը օղերու հետ եղբօրը յանձնեց: Քեռին սրճարանի մասնող տեղ մը բացաւ այդ դրամով ու անմիջապէս Սեդրակը դպրոց դրին: Աստուծմով ամէն ինչ լաւ պիտի ընթանար, մէյ մը որ յաճախորդներուն ոտքը վարժուէր: Գտնուեցան յաճախորդներ, որոնց ոտքը դուրս չելաւ սրճարանէն, բայց բոլորն ալ օրուան հացի կարօտ, բոլորն ալ անգործ գաղթականներ: Խմեցին՝ ապառիկ, խաղացին՝ ապառիկ, խօսեցան ու ծրագիրներ կազմեցին՝ ապառիկ: Քեռին միշտ մասնակից էր անոնց ցաւերուն եւ յոյսերուն. **խաթր** կտրող մարդ չէր ինք ու բաժակը կը զարներ ամէնէն խոճարհի բաժակին: Ինք, որ բուրդի ու ոչխարի առեստորին մէջ աչք բացած ու հասունցած էր հին ու լաւ օրերուն, հազարներ առած եւ հազարներ տուած, չէր կրնար երեսակայել, որ կրպակի մը նեղ սահմաններուն մէջ կրնար խեղդուիլ: Վեց ամիսը չանցած՝ սնանկութիւնը մագիլներ նետեց կոկորդին: Օրէ օր հատնող դրամագլուխին հետ օղն ալ պակսեցաւ կարծես թոքերուն եւ բոլոր յաճախորդներուն հոգերը դիզուեցան իր ուսերուն: Սկսաւ խմել բոլորի՛ փոխարէն, անհիծելով ճակատագիրը: Մաքրուած, թեթեցած, երբ դուրս ելաւ սրճարանէն՝ հաշուեյարդարի տոմարին մէջ արձանագրուած գտաւ միայն մէկ շահ - խմելու այրող պապակ մը եւ կեանքի կարեւոր իմաստութիւն մը. «Մեծ ծովերու ձուկերը աւազանի մէջ չեն կրնար լողալ»:

- Դրամագլու՛խ, թող լայն դրամագլուխ ըլլար ձեռքս եւ ես ձեզի սորվեցնէի, թէ ի՛նչպէս կը հարստանան,- կը կրկներ քեռին զինք մխիթարել փորձողներուն:

Կորուստին վի՞շտը, արքո՞ւը թէ յառաջացող տարիքը դարձաւ այս կենսութիւն մարդուն յիսերիմ թշնամին:

Մարմնին խարխլած շէնքը տարագրութեան բոլոր սարսափներուն ապաստան տալէ ետք, կը քայքայուէր ժամանակէն առաջ, խաղաղութեան մէջ դուռ ու պատուհան լայնօրէն բաց ձգած՝ մեծ կարօտներու եւ մեծ երազներու դէմ: Սեդրակի աչքին քեռին հորիզոն մըն էր. ընդարձակ ու հըմայիչ հորիզոն մը, ուր հրկիզուող անցեալին թանձր մուխը կը միախառնուէր շքեղ գալիքի մը արշալոյսին հետ: Իր թշուառ որբութեան վերել ան միայն մնացած էր կանգուն ու կը ժպտէր իրեն իբրեւ հայր ու իբրեւ հերոս: Յիշատակն ու յոյսը, պարտութիւնն ու պայքարը ոգեղէն հաղորդութեան վերածող հերոս:

Մօրը զոհաբերութիւններէն աւելի, որոնք բնական ու հասկնալի կը թուէին, Սեդրակ անտանելի գտաւ քեռիին լուռ հատումն ու զուսպ տառապանքը: Վերջին ամիսներուն՝ հերոսը գամուած էր տունը, սուրճի մը փոխարժէքն իսկ չունենալով գրպանին մէջ: Մինչեւ ե՛րբ պիտի հիւրասիրուէր սրճարանի իր բարեկամներէն: Կը ըզզար, թէ անոր անդամալուծումը աւելի հոգեկան էր քան ֆիզիքական: Ընթրիքի սեղանին, ձեռքը առաջ չէր երթար քրոջը վաստկած հացի կտորը կիսելու եւ գոց ախորժակը պատրուակ բռնած՝ կը քաշուէր անկիւն մը, դատարկ ծըխատուփին մէջ գլանիկ փնտոելով: Անձնասպանութիւնը միայն դաշոյնով չի կատարուիր: Սեդրակ խելացի տղայ էր. կը զգար, թէ սիրելի քեռին անձնասպանութիւն կը գործէ քիչ մը ամէն օր:

*

* *

Սնտուկը՝ շալակին, աթոռակը՝ ձեռքին, ուշ իրիկունան ստուերներուն մէջէն պոյաճին տուն կը դառնար: Իր կէս մէճիտը ի՞նչ պիտի տանէր տունէն ներս. ուրախու-

թի՞ւն թէ նոր ափսոսանքներ: Ծատ փափուկ էր իր դիրքը, նման այն տղուն, որուն ծնողները զինք վաճառած են՝ ափառոր թշուառութեան դարման մը գտնելու համար: Հըպարտանալ իր նոր բռնատիրոջ պարգեւած արեան գինով, պիտի նշանակէր անգամ մը եւս սպաննել հարազատներու զգեստնուած արժանապատուութիւնը: Տունէն ներս անտարբեր ու անխօս մուտքը պիտի վերագրուէր դժգոհութեան, նոր բեր մը դնելով ցաւակոծ խիղճերու վրայ: Սեղրակ հրաժարեցաւ նախապատրաստուած բեմադրութիւններէ եւ որոշեց կարելի եղածին չափ բնական ձեւանալ ու հետեւիլ վայրկեանի պահանջին:

Մայրը գտաւ տան սեմին արձանացած, այնպէս ինչպէս ձգած էր առաւօտուն: Կը սպասէր արդէն: Կարծես բնաւ շարժած չըլլար իր տեղէն, կարծես ամբողջ օրը պատարը հետեւած ըլլար անկէ, հոգիի աչքերով, իր զաւկի շարժումներուն:

- Այս որքա՛ն ուշացար, եւրոսմ, աչքս ճամբադ մընաց... քիչ մըն ալ չերեւէիր՝ փնտտութի պիտի ելլէի:

- Գիտե՛մ սովորութիւնդ,- պատասխանեց տղան չոր ու կտրուկ,- դպրոց գացած ատենս ալ այդպէս էիր. աշխարհը փոխտի՛ դուն չես փոխտիր: Ի՞նչ կայ մտահոգուելու. գործի մարդը իր գործը չաւարտած տո՞ւն կու գայ:

- Ի՛նչ գիտնամ, մութը կոխեց, հազար չար ու չարիք կայ դուրսը. դուն անփորձ, ես անտէր... ո՞վս պիտի հոգայ:

Համբին պատրոյզը ստուերոտ լոյս մը կը սփռէր սենեակի թարշամած որմերուն: Հօրը դեղնած նկարը հիւանդ ժպիտ մը ուներ քեռիին գլխուն վերեւ, որ կը դժուարանար վեր բարձրանալու: Սեղրակ շփոթեցաւ, անորոշ բարեւ մը թափեց շրթունքներէն եւ անցաւ լուացուելու:

Բարեբախտաբար ընթրիքը հասաւ օգնութեան եւ պնակներու, դգալներու աղմուկը փրկեց լոութիւնը խեղդուելէ:

- Խմէ՛, որ տաքնաս, լաւ ապուր է, իւղը առատ դրած եմ,- ըսաւ մայրը աչքը տղուն վրայէն չհեռացնելով:

Տօնական օրերը յիշեցնող ապուր մըն էր արդարեւ: Սեդրակ սրտապնդուեցաւ. առաջին անգամ ըլլալով մայրը չէր վախցած պարտք ընելէ եւ ինքն էր այդ քաջութեան, այդ յուսին աղբիւրը:

- Է՛հ պատմէ նայինք, տղա՛յ, ինչպէ՞ս գտար առետուրը, դպրո՞ցը լաւ է թէ շուկան,- հնչեց քեռիին կեղծ զուարթութիւնը:

- Առետուր ըլլար երանի,- միջամտեց մայրը,- արժեմին-չարժեմին կօշիկ սրբողը դարձաւ չօճուխս. աչքը կուրնայ ժամանակին:

- Աւելորդ բաներ կ'ըսես, մայրիկ, առետուրը դրամագլուխով կը դառնայ:

- Գոնէ արհեստ մը սորվէիր. ելար այս աղտոտ գործը ընտրեցիր՝ դերձակութիւնը, կօշկակարութիւնը, ոսկերչութիւնը կեցած տեղը:

- Ո՞ր արհեստին մէջ նոր սկսողին օրական կը վճարեն. դրացիին տղան տարի մըն է վարպետի մօտ է՝ ի՞նչ կ'անցնի ձեռքը: Դեռ վեց ամիս ալ ձրի աշխատեցաւ: Տունէն խանութ, խանութէն տուն վարպետին կերակուր կրեց: Առաջին օրս է՝ կէս մէճիտ կայ գրպանս. կէս մէճիտը չե՞ս հանիր, գործատրի մը օրականը ըսել է: Դասընկերս՝ Աւետիսը պոյաճիութեամբ մեծ տուն կ'ապրեցնէ: Խառնուող չկայ, վրադ խօսող չկայ, ուշ եկար, կանուխ գացիր ըսող չկայ:

- Իրաւունք ունի տղան,- եզրակացուց քեռին,- արհեստ ըսածդ պոչի կը նմանի, ո՛չ կ'երկարի, ոչ կը կարճնայ. մեր քաղաքը՝ արհեստատրիին աղջիկ չէին տար: Երիտասարդի մը աչքը շուկայի իրարանցումին մէջ պէտք է բացուի. իյնայ ու բարձրանայ: Դազկեանի գերիները, ճիշդ է, անօթի չեն մնար, բայց մարդ ալ չեն դառնար: Գործին աղտոտը չ'ըլլար. գործողն է, որ կ'աղտոտէ իր գործը:

- Շուտ էր, Յակոբ, շա՛տ շուտ էր տղուս համար ասանկ բեռան մը տակ մտնելը: Տարի՞քը ինչ է որ, երէկուան չոճուխն է դեռ: Գոնէ տարի մըն ալ դիմանայինք, դպրոցը վերջացնէր, տիպլոման առնէր: Ա՛խ կարօտս փորս մնաց. այնքա՛ն կ'ուզէի Սեդրակս բեմին վրայ տեսնել շրջանաւարտներու շարքին, ժապաւէնով կապուած թուղթը ձեռքին...

Քեռին բերանը բացաւ կարեւոր բան մը ըսելու համար անշուշտ, բայց Սեդրակ ընդմիջեց մէկէն.

- Տեսելու բան մը չկայ այստեղ: Դուք երկուքդ ալ հազար նեղութիւն յանձն առիք ինձի տեղ մը հասցնելու համար: Ամէն գոհողութիւն չափ մը ունի վերջապէս, անկարելին փորձելը յիմարութիւն է:

Սեդրակ կ'ուզէր շարունակել, եւ ըսել, որ ինք այժմ իր որդիական պարտականութիւնն է, որ կը կատարէ, բայց կարմրեցաւ, չափազանց հանդիսաւոր ու իր լեզուին անյարմար անկառեց գիրքերու մէջ գրուող մնան խօսքեր, ու լռեց:

- Մէկ բան արտիս տերտ եղած է,- շարունակեց մայրը,- կրնայինք տունը ծախել...

- Տունը ծախե՞լ,- զարմացաւ Սեդրակ,- ո՞ր պիտի մնայինք այն ատեն. դիրի՞ն է ուրիշին վարձակալ ըլլալը, վարձակալը ուրիշին դուրը վարձկան ծառայ ըսել է: Եւ յետոյ՝ ի՞նչ գին կը բերէ որ...

- Այդպէս է, ամմա, քու ուսումդ կէս մնաց. ուսումէն աղոտոր բան չկայ աշխարհիս երեսին. ով որ ուսում ունի՝ ամէն բան ունի:

- Ուսումը օղիի պէս է. մէկ գաւաթէն ի՞նչ կ'ելլէ. կամ շնորհքով պիտի խմես կամ գաւաթը պիտի փշրես քարին՝ ալ ձեռք չառնելու պայմանով,- կատակեց քեռին:

- Դուն մեր դպրոցի վկայականը բժիշկի կամ փաստաբանի վկայական՞ն կը կարծէիր,- լրացուց Սեդրակ՝ մօ-

րը դառնալով:- Առեր ես, չես առեր՝ հաշիւը միեւնոյնն է, քանի որ շարունակելու միջոցներ չկան: Առնողներուն վիճակն ալ մէջտեղն է...

Անկեղծ չէր Սեդրակ: Սիրտը ուրիշ բան կ'ըսէր այդ պահուն եւ ուրիշ բան կրկնած էր երկար ատեն: Ազգային վարժարանի ասարտական պսակադրութիւնը փառքի կատար մըն էր, երազագեղ բարձունք մը, որուն ձգտած էր միշտ հոգեւին, մօրը հետ եւ մօրմէն անելի: Քեռիին թափանցող նայուածքը պէտք չունէր գաղտնի ծալքեր խուզարկելու՝ իր հոգին կարողալու համար, երբ ան կարեկից լրջութեամբ, բառերը հատիկ-հատիկ շեշտելով յայտարարեց.

- Եթէ մէջդ կայ, ուր ալ նետեն քեզ մարդ կ'ըլլաս: Եթէ մէջդ չկայ՝ աշխարհի բոլոր գիրքերն ու վարժարանները օգուտ չունին: Այս տղան մարդ ըլլալիքներէն է, վըստահ եմ ատոր ու չեմ քաշուիր երեսին ըսելու:

- Լուսահոգին ողջ ըլլար ու տեսներ: Մէջ մը աչքը բանար իր անչայտ գերեզմանէն, տեսներ տղան մեծցած, մարդ եղած, տունին սինը դարձած,- փղձկեցաւ մայրը արցունքներու մէջ:

Անսովոր չէր տեսարանը: Լուսահոգին, իր հայրը, որ անուն մըն էր ու շատ-շատ՝ տժգոյն նկար պատին վրայ, մօրը արցունքներու ծիածանէն ծագած էր շարունակ, ուրախութեան թէ ցաւի պահերուն: Սեդրակ գրեթէ անայլայլ դիտած էր անոր խորհրդաւոր եւ ստուերային յայտնութիւնը: Բայց այդ գիշեր չես գիտեր ինչո՛ւ, թարթիչներուն՝ տակ խոնաւութիւն մը զգաց ու մաղթեց, որ պատկերին մարդը իրապէս վար իջներ պատէն, կեանք ու մարմին ստանար եւ կրկնէր քեռիին հետ.

- Վստահ եմ մանչուս վրայ:

ԱՔԼՈՐԱՄԱՐՏԸ

Թաղամասի արհեստակիցներուն սպասումի եւ հանգիստի կայան կը հանդիսանար շարժանկարի սրահին առաջամասը, քառուղիի մը բացուածքին: Օրուան բոլոր ժամերուն, մա՛նաւանդ կէսօրներէ ետք, հոն կարելի էր գտնել ներկատուփերու նկատելի թիւ մը շարքի կեցած, իրենց տէրերուն հետ կամ առանձին: Պայման չէ պոչաճիին ներկայութիւնը: Տուփը հոն է, կը հսկէ, ականջ կու տայ հեռաւոր ու մօտիկ բոլոր կանչերուն, կը թրթռայ դաշնակի մը սրտին պէս ու թեւ առած կը վազէ յանկարծ յաճախորդին ետեւէն. կը բաւէ, որ որեւէ տեղէ հնչէ իր տիրոջ հանրածանօթ անունը.

- Պոչաճի՛:

Դպրոց երթուղարձի ատեն Սեդրակի ուշադրութիւնը յաճախ գրաւած էին այդ ճարպիկ, աղմկարար ու տարօրինակ տղաքը, երբ կանգ կ'առնէր սինեմայի ծանուցումներուն եւ գունազարդ պատկերներուն դիմաց: Թրքերէնը հայերէնին խառնած եւ սրտմտութիւնը՝ հայհոյանքին, անոնք իրենց ներկայութեամբ կը լեցնէին ամբողջ փողոցը: Անհրաժեշտ ու անբաժանելի մէկ մասը կը կազմէին շրջապատի նկարչագեղ կենդանութեան: Միշտ գրօսանքի մէջ եղող անկարգ ու անսանձ դասարան մը կարծես:

Ծաբաթ իրիկուն մը, նորեկ աշակերտի վախուղող, Սեդրակ մօտեցաւ այդ դասարանին ու տեղ գրաւեց շարքի ծայրամասին վրայ: Քննութիւնները անցընելու

համար չորս օր տրամադրած էր. ժամանակն էր այլևս օրինաւոր անդամութեան իրաւունքին տիրանալու:

Իր կողքին՝ քով քովի նստած էին երեք պոյաճիներ, փոքրիկ տարբերութեամբ մը գուցէ երեքն ալ իրեն հասակակից, բայց՝ անձանօթ: Սեդրակ չորս դին դարձաւ ու փնտռեց Աւետիսը՝ իր նախկին դասընկերներէն, որ տարի մըն է ներկարար էր արդէն եւ ասպարէզին յաջողածներէն: Անոր բացակայութիւնը անլի էս շփոթեցուց զինք: Ինչո՞ւ չէր լարգած արդէօք խոստումը: Նախորդ օր հանդիպած էին իրարու եւ սինեման ժամադրավայր նշանակած: Թանկագին սիրելիի մը չափ կարօտը կը զգար անոր: Գէշ տղայ չէր Աւետիս, թէեւ պարտականութիւնները ասկէ անկէ հաւատարիմ ընդօրինակող մըն էր դպրոցին մէջ, թէեւ քէն էին իրարու հետ: Երջանիկ օրերու քմահա՛ճ պերճանք:

Հազիւ տեղաւորուած՝ յանախորդ մը ներկայացաւ, քննիչի խուզարկու նայուածք մը պտտցուց պոյաճիներու շարքին վրայ եւ առանց վարանքի կոխեց իր սնտուկի ոտնակալին: Հակառակ որ գործերը լաւ չէին գացած այդ օր, Սեդրակ չուրախացաւ տարած յաղթանակէն: Նախընտրեալը ինք չէր, այլ նոյն-նոր ներկատուփը, որ հարուստի հով մը կը ցուցադրէր միւսներուն աղքատիկ խեղճութեան քով: Քովիներուն խոժոռ դէմքերը չարագուշակ նախագագումներ արթնցուցին հոգիէն ներս: Ըիգ մը ըրաւ հանդարտութիւնը պահելու եւ անտարբեր երեւոյթով շարունակեց իր գործը: Աշխատած պահուն հայհոյանքի եւ հեզութեան հնչեղ կտորներ կը զարնուէին ականջին: Սիրտը կը բարբախէր ուժգնօրէն: Գիտցածն ալ մոռցաւ կարծես. այնքա՛ն դժուար էր փորձառու վարպետներու աչքին առջեւ խոզանակ շարժելը: Չհասկցաւ, թէ ինչպէս աւարտեց աջ ու ձախ ոտքերուն ներկը: Միայն տեսաւ, որ արաբ պարոնը դժգոհանքի շարժում մը գծագրեց, վճարեց ու հեռացաւ:

Գետիկնը ցիր ու ցան իրերը տակաւին տուփին մէջ

չէր տեղաւորած, երբ իր դէմ կանգնած տեսաւ երեք պոյա-
ճիներուն ամէնէն մեծն ու թիկնեղը՝ ծաղկահար դէմքով
տղան: Թեւերը խաչաձեւ կուրծքին ծալած՝ ան կեցած էր
ճիշդ իր սնտուկին առջեւ եւ լուռ ու անշարժ զինք կը դի-
տեր: Սեդրակ զոհի մը խղճալի կացութեան մէջ կը
գտնուէր եւ զոհի բռնագրօսիկ պաղարիւնութիւնը կ'աշ-
խատէր տալ իր շարժումներուն:

- Որմէ՞ հրաման առիր հոս գալ նստելու համար,-
լսելի եղաւ լսանկարծ հակառակորդին սպառնալից ձայնը,
որ վերջ կը դնէր ճնշող լռութեան:

- Որմէ՞ հրաման պիտի առնէի,- պատասխանեց
Սեդրակ, թրքերէնին՝ հայերէնով:

- Պոյաճի Արսէնէ՛ն:

- Ո՞վ է պոյաճի Արսէն:

- Ան որ չի ճանչնար պոյաճի Արսէնը, իրաւունք չու-
նի այս սնտուկը շալկելու:

Ծաղկահար դէմքով տղան իր բառերու ոռնոցին ըն-
կերացուց նոյնքան ուժեղ կից մը՝ ուղղուած Սեդրակի սրն-
տուկին: Սրբակերտ ներկատուփը կողքին վրայ տապա-
լեցաւ նաւաբեկեալ մակույկի մը պէս. փշրուող շիշերու
հծծիւններ լսուեցան եւ թիթեղապատ պահարանը ծոմըռ-
կած խոռոչ մը դարձաւ: Սեդրակ ցնցուեցաւ ամբողջ մար-
մինով. հարուածը ատելի մեծ ատեր պիտի չգործէր եթէ իր
կուրծքին հասած ըլլար: Արիւնազանց մշուշ մը խուժեց իր
աչքերուն ու խելակորոյս՝ գոռաց տղուն երեսին.

- Սրիկա՛յ, փողոցայի՛ն սրիկայ...

- Սա տունի սոխակին նայեցէք մէյ մը,- քրքջաց Ար-
սէն շուրջի հանդիսականներուն դառնալով.- ծօ՛, եթէ փո-
ղոցային դառնալ չէիր ուզեր՝ ինչո՞ւ փողոց իջար. քեզի
ո՞վ հրաւեր կարդաց:

- Քեզի կը ցուցնեմ,- պոռաց Սեդրակ այնպէս, ինչ-
պէս դպրոցէն ներս զինք անհրաւող աշակերտին պիտի

ըսեր. «Տնօրէնին պիտի երթամ»:

- Դուն չէ, քու գերդաստանդ ալ գայ բան մը չի կրնար ընել:

- Կը տեսնուի՛նք:

- Հիմա՛ տեսնուինք:

Արսէն արդէն խոյացած էր գոհին վրայ ու բռնած անոր օձիքէն: Աններելի՛ յիմարութիւնը Սեդրակին: Տեսնուիլ ուզողը առնուազն ոտքի կը ցատկէ, դիրք կը գրաւէ, մէջքը պատին կու տայ, բռունցքները կը պրկէ: Աթոռակէն գետին շատ ջնջին է հեռաւորութիւնը, ինչպէս գիտէք, եւ տապալումը՝ վայրկեանի խնդիր: Վայրկեանը շատ իսկ էր նորընծան իր աթոռէն վար նետելու համար: Արսէն կոփամարտիկ ախոյեանի տիտղոս չունէր թէեւ, բայց գիտէր չխնայել իր հարուածները: Ու չխնայեց: Ծունկը դրած Սեդրակի կուրծքին՝ քիթ ու բերան մէկ ըրաւ: Ո՛չ մէկ ճիչ տակէն, ո՛չ մէկ աղիողորմ աղաղակ. անգօր թելերու գալարում միայն եւ հեւասպառ տապալտութիւն:

Պզտիկ ամբոխ մը հաւաքուեցաւ շուտով անհաւասար այս մենամարտին շուրջ. ոմանք ամերիկեան դիտողներու դերը ստանձնեցին, ոմանք խրախոյսի բացականչութիւններ արձակեցին, ուրիշներ գլուխ շարժեցին ու անցան: Չէզոք միջամտութեանց փորձեր ալ եղան անշուշտ, բայց անօգուտ: Արսէն գոհ կը թուէր ըլլալ իր ուժէն, իսկ Սեդրակի դժգոհութիւնը արժէք չունէր:

Ի վերջոյ հասան թաղին բեռնակիրները, քաշեցին, քաշկոտեցին մէկուն ոտքէն, միւսին թելէն եւ իրարմէ բաժնեցին երկու պոյաճիները:

- Ամօ՛թ է, տղա՛ք, երկուքդ ալ հայ էք.- խրատեց դիմացի նպարավաճառը՝ կարապետ աղան:

- Ի՞նչ պիտի ըլլայ, փողոցը մեծցող տղոցմէն ասկէ աւելի՞ն կը սպասես,- տրտնջաց տարիքոտ անցորդ մը ու շարունակեց ճամբան:

Արսէն Գիթակեան յաղթանակը ապահովելէ ետք բարոյականն ալ կ'ուզէր շահիլ. ահա թէ ինչու անհրաժեշտ Գկատեց ճառ մը արտասանել ունկնդիր հասարակութեան:

- Մեղքցայ իրեն, թէ ոչ ձեռքէս, ողջ չէր ազատեր: Մեռանք, եղբայր, հակիրթէն ելլողը պոյաճի կ'ըլլայ ու մէջտեղ կ'իյնայ. ասանկները մեր գործին պատիւը մէկ փարայի ըրին: Աղքատ են՝ թող երթան աղքատախնամէն ալիւր առնեն, անպայման պոյաճի՞ պիտի ըլլան: Հազար տեսակ գործ կայ. աչքերնին տնկեր են մեր կերած կտոր մը հացին: Գոնէ խոզանակ բռնել մը սորվէին. ասանկներու երեսէն չէ՞ որ յաճախորդները կը փախչին մեզմէ:

Սեդրակ չէր լսեր: Անզգայ, անշունչ դիակ մըն էր ան այդ պահուն, թէեւ քունքերը կը մըմահարէին պայթելու աստիճան, թէեւ կուրծքը կը հետար անօրինակ թափով եւ ականջներուն մէջ լեցումս էին ալելոյզ ջուրերու բոլոր ժըխորները: Տարօրինակ էր ետոյթ. ֆիզիքական որեւէ ցաւ չէր զգար մարմինին վրայ: Մտածումը կանգ առած էր ան խանգարումս ժամացոյցի մը սլաքին պէս. բայց զսպանակները կը բանէին ներսէն, անհունները կը թառալէին խելացնոր արագութեամբ, ամէն մէկը իր հաշուին, իրարմէ անջատ եւ իրար հրմշտկելով: Քակումս, տարտղնումս, կտոր-կտոր եղած պատկերներ սկսան ներկայանալ մտքի մշուշոտ պաստառին, որոնցմէ կրցաւ զանազանել մօրը սարսափահար դէմքը, ուսուցիչի մը թախծոտ նայումսքը, Զարուհիին գլխահակ ճակատը: Տակաւ այդ բոլորը ձուլունցան, դարձան գորշ զանգումս, յետոյ ամօթանքի ու նուաստացման այրող հեղուկ՝ իր սրտի աւազանին մէջ: Մեռած լմնցած էր ինք: Աւելի լաւ էր, որ գետինը բացուէր եւ մթին խորշերուն մէջ առնէր իր գոյութեան անհուն եւ անպարփակ ստորնացումը: «Վայրկեան մը առաջ հեռանալ, կորսուիլ, չտեսնուիլ». ա՛յս եղաւ Սեդրակը զգաստութեան բերող միակ առողջ մտածումը եւ թելեր նետեց անոր խա-

մածիկի շարժումներուն: Մեքենաբար հաւաքեց ինքզինք իր առարկաներուն հետ ու շալկեց վիրատր ներկատուփը: Աւետիս հասած էր, բայց շա՛տ ուշ: Ե՞րբ տեսնուեր է արդէն, որ մէկուն սպասես եւ չուշանայ: Հո՛գը: Սեդրակ պէտք չուներ այլեւս ո՛չ մէկուն, ո՛չ իսկ իր անձին:

Նախկին դասընկերը մէկ նայուածքով հասկցաւ ամէն բան եւ ուղեկցեցաւ իրեն նախանշի ճամբուն վրայ: Որոշ տեղ մը քալեցին կողք-կողքի լուռ ու մունջ, քննութեան մէջ գերօ ստացած աշակերտներու յուսաբեկ լքումով: Աւետիս, ճարպիկ ընդօրինակող եւ գործնական միտք, գերոյէն վախճալու պէտք չուներ անշուշտ: Զեռքը դրաւ ընկերոջը ուսին ու շշնջեց.

- Այս վիճակով տուն չէրթո՞ցուիր: Աչքդ ոտած է եւ քիթդ կ'արիւնի: Քալէ մեզի երթանք, որ քիչ մը շտկոտուիս:

- Ո՛չ,- ընդդիմացաւ Սեդրակ,- պատճառ մը կը գրտնեմ. կ'ըսեմ ինկայ, շատ գէշ ինկայ, ոտքս սահեցաւ ու դէմքս խոշոր քարի մը եկաւ:

Նախատեսող բնագրին գուգահեռ հետզհետէ կ'արթըննային նաեւ մտածումն ու տրամաբանութիւնը: Դէմքը քարին քսուած էր իրապէս, բայց ո՞ր քարին եւ ո՞ր անկումով: Մանրամասնութեանց վերլիշումը թուլցուց չիղերը եւ արցունքի կաթիլներ սահեցուց ոտած աչքին մէջ: Սեդրակ չյաջողեցաւ զսպել բարձրաձայն հեծկլտանքը:

- Վնաս չունի, ասանկ բաներ կը պատահին պոչաճիութեան մէջ. ինձի ալ պատահած է: Դուն անոր նալէ՛, որ սնտուկդ ողջ-առողջ ազատած ես: Թիթեղին ծած մասը դիրքին է շտկել,- մխիթարեց Աւետիս:

- Անակնկալի եկայ, բնաւ մտքես չէր անցներ, որ վայրենին անմիջապէս վրաս պիտի յարձակեր. թէ ոչ ես անոր խերը կ'անհիծէի...

- Օգուտ չուներ, սիրելի՛ս, Արսէնին հետ մեզմէ ոեւէ մէկը չի կրնար չափուիլ: Լաւագոյնը հետը չիյնալն է:

- Ես տեղի չտուի. հանգիստ նստած էի քովերնին:

- Անպիտանը կատարեալ բռնապետ մըն է մեր գրւ-
խուն: Խելքին փչած աստեն տուրք կը գանձէ բոլորէս եւ կի-
րակիներն ալ թոյլ չի տար, որ իւղոտ յաճախորդներու թաղե-
րը մտնենք: Ասկէ դուրս՝ անձնուէր ընկեր է սակայն, եթէ հե-
տը լեզու գտնես: Դուն ինձի ձգէ, ես պէտք եղածը կը խօսիմ:

- Աւելորդ է, մեռնիլս գիտնամ՝ բարեւ չեմ տար
այլեւս...

Եւ մինչ կը մօտենային տան փողոցին, Սեդրակ մը-
տովի վճռեց հանդիսաւոր ուխտ մը.

- Մեռնիլս գիտնամ՝ վաղը նորէն պիտի երթամ ու
նստիմ նոյն տեղը, նոյն ժամուն:

*

* * *

Սեդրակի հիւանդութեան երրորդ օրն էր: Դէպքին
գիշերը անկողին ինկաւ սաստիկ դողով ու տաքութեամբ:
Մալարիա է, ըսին տնեցիներն ու դրացիները եւ ինք որեւէ
առարկութիւն չըրաւ քացախի ու քինին ընթացիկ դար-
մանումներուն, որոնց վարժուած էր արդէն իր մարմինը:
Քեռին անհրաժեշտ նկատեց ամէն ցաւ դանակի պէս
կտրող օղին եւ փոքրիկ շիշ մը բերել տուաւ: Բաժակ մը
խմցուց Սեդրակին եւ մնացեալը քովը պահեց:

Հիւանդը բացառիկ ճիգ թափեց, որպէսզի չգառանցէ
եւ անտեղի բառեր չփախցնէ բերնէն: Բարեբախտաբար
վիճակը երթալով բարելաւուեցաւ եւ ջերմութեան աստի-
ճանը զգալի անկում կրեց: Մայրը, ինչպէս միշտ, այս ան-
գամ եւս զաւակին տկարութեան առջեւ ուժով ցած զգաց
ինքզինք, մէջքը շտկեց երկու օր իրարու վրայ լուացքի
գնաց արաբ ունետր ընտանիքներու մօտ: Տղան սնունդի եւ
դեղի պէտք ունէր, ոտքի կանգնելու համար: Տղան կրնար

նորի չկանգնիլ: Դիւրի՞ն բան է մայր ըլլալը, մա՛նաւանդ հայ մայր ըլլալ եւ որբ մեծցնել:

Ծածկոց մը ծունկերուն, տիւանին վրայ, քեռիին կողքին ծալապատիկ նստած, Սեդրակ կը գծէր: Դպրոցական օրերէն մնացած սիրական գրադում մը: Դրան վերեւ բազմող Քաշն Վարդանի խոռխոտ կերպարանքը իր ձեռակերտն էր: Ծատոնց մտադրած էր մեծցնել նաեւ Զօրավար Անդրանիկի նկարը, բայց պայմանները թոյլատու չէին գտնուած: Միայն արուեստագէտ նկարիչները չեն, որ ներշնչումի պէտք ունին ստեղծագործելու համար, երբեմն աշակերտ Սեդրակներն ալ կարօտը կը քաշեն մուսաներու այցին, խոնարհ խրճիթներու մէջ եւ սպասելէ յոգնած՝ կը կոտորեն իրենց մատիտը ու կը դառնան ներկարար, կօշկարար կամ փոսպանի աշկերտ:

Երբ տաքութիւնը բոլորովին մարեցաւ, անձրեւէն ետք բեղմնատրուած հողին արեւոտ թարմութիւնը զգացան իր մէջ: Խլրտումներ անցան հոգիէն եւ աղոտոր գործ մը կատարելու ներքին պահանջքը մոռցնել տուաւ, որ ինք պոյաճի մըն էր: Սեդրակ անկողիներուն կոյտին ետեւէն դուրս քաշեց դպրոցի մաշած պայուսակը եւ դալկահար մատներով սկսաւ խառնել հին յիշատակներ: Կործանած տանարներու տրտմութիւնը աւելի մեծ չ'ըլլար քան լքուած պայուսակի մը աներակէն բարձրացող սուգը: Կիսահալ երկու մատիտ, կոթը կրծուած գրիչ մը՝ ժանգոտ գրչածայրերով, կէս մնացած պարտականութիւններու քանի մը տետրակ, որոնք երբեք պիտի չլեցուէին այլեւս եւ մէկ-երկու դասագիրք, որոնց մէջ էջի մը ծայրը կը մնայ ծալուած վերջին դասին վրայ...

Սեդրակ քրքրեց պայուսակին պարունակութիւնը մի առ մի, թուղթ առ թուղթ: Զօր. Անդրանիկի քարթ-փոստալին փնտրոտութիւնը պարզ պատրուակ դարձաւ՝ հոգեկան խորունկ եւ անբացատրելի խոռվքի մը անձնատուր ըլլալու:

Չորցած մելանի, կալիճի փոշիով յագեցած դասամիջոցներու եւ քրտնաթոր ընկերներու ընտանի բոյր մը կը բարձրանար այդ իրերէն: Գիրք մը յանկարծ երկուքի ճեղքուեցաւ իր մատներուն տակ, ցուցադրելով վաղաթարշամ ծաղկաթերթ մը: Սեղրակ շտապուեցաւ՝ քառասուն աստիճան հաճելի ջերմութեամբ մը կարծես: Չարուհիին ձեռքէն առած էր այդ ծաղիկը, դպրոցի սանդուղներուն վրայ, երբ կողք-կողքի միճակնին վեր կը բարձրանային երջանիկ առաւօտ մը: Ահա՛ ինչ որ կը մնար իր անցեալէն ու պատանեկան առաջին վառ երազներէն.- խամրած թուղթերու դէզի մը հետ խամրած ծաղիկի թերթ մը:

- Նորէն ինկա՞ր գիրքերուդ մէջ,- ձայն տուաւ քեռին իր անկիւնէն,- պիտի յոգնիս, տաքութիւնդ պիտի բարձրանայ եւ մօրդ ձեռքէն պիտի չկրնանք ազատիլ իրիկունը, երբ գործէն վերադառնայ:

- Բան մը չէ, քեռի՛, կը զբաղիմ, ժամանակ կ'անցնի:

Սեղրակ գտաւ վերջապէս Անդրանիկին պատկերը, քառակուսի գիծեր քաշեց վրան մատիտով, շատոնց ի վեր տունը պահ դրուած գծագրութեան խոշոր թուղթ մը ամրացուց հացի տախտակին եւ տեղադրուեցաւ տիւանի ծայրը:

Ծունկերը սեղան ըրած՝ Սեղրակ կ'աշխատէր գլխահակ մօտ երկու ժամէ ի վեր: Երբեք այսքան կիրք ու եռանդ չէր ունեցած ստեղծագործելու: Մատիտը ինքնաբերաբար կը սահէր սպիտակ տարածութեան վրայէն՝ անսխալ դրոշմելով հոն քառակուսիներուն չորս անգամ մեծցուած հաշիւը: Նկարին ստուերագիծը պատրաստ էր արդէն ու հիմա թաւ կամ թէթեւ շուքերով արուեստագէտը կէտանք ու հոգի կու տար հերոսին:

- Քեռի՛, Անդրանիկը տեսա՞՞ծ ես:

- Ո՛չ: Բայց տեսածի պէս եմ. ինչո՞ւ կը հարցնես:

- Կատակի համար չեմ հարցներ. սա աչքը չեմ կըրնար կոր արտայայտիչ դարձնել:

- Ես ալ կատակ չեմ ըներ. չկայ իմ տարիքիս ոեւէ հայ, որ Անդրանիկը տեսած չըլլայ, անոր նայուածքը իր հոգիին մէջ չունենայ:

Քեռին շարժեցաւ տեղէն, հասնիչը մէկ կողմ դրաւ, երկար վայրկեան մը հակեցաւ Սեդրակի թուղթին վրայ եւ լետոյ, կարծես մենախօսութեան մը մէջ, գլուխը շարժելով դանդաղօրէն խորհրդածեց.

- Ո՛չ, չէ եղած. հերոս Անդրանիկը այսքա՛ն խիստ, այսքա՛ն վայրագ նայուածք չունէր. չէր կրնար ունենալ: Վրէժի կայծեր կային իր աչքերուն խորը, բայց նաեւ սիրոյ քաղցրութիւն. ցասումի հրդեհներ կը վառէին հոն, բայց նաեւ տառապանքի ամպեր կը ծփային անոնց մէջ: Անդրանիկ հերոս էր, հայոց պաշտպան ֆետայի, լեռներու արծիւ...

Սեդրակ մատիտը վար դրած մտիկ կ'ըներ ապշահար. իրեն կը թուէր, թէ աներեւոյթ շրթունքներ ոսկեգօծ դիցազ-նագիրքէ մը ընթերցումներ կը կատարէին: Քեռին չէր տեսած այդ բարձունքին վրայ ու չէր կրնար երեւակայել, որ այդ պարզուկ մարդը բառերու եւ գաղափարներու նման զանձ մը կրնար թաղած ըլլալ իր ձորձապատ կտրծքին տակ:

- Երգարանը բե՛ր, որպէսզի ճիշդ գծես:

- Երգարա՞նը,- զարմացաւ Սեդրակ,- մեր երգարանին մէջ պատկերներ չկան:

- Գիտե՛մ, դուն բե՛ր,- պնդեց քեռին:

Սեդրակ տեղեակ էր ձեռագիր երգարանի խորհուրդին, որ աղօթագիրքի մը հետ մօրը սնտուկին մէջ կը պահուէր: Հայրիկին ձեռքով ընդօրինակուած այդ տետրակը նուիրական մասունքի մը պէս տօնական օրերուն միայն մէջտեղ կու գար ու երկիւղած մատներու գուրգուրանքին կ'արժանանար: Մայրը կը դողար անոր դեղնած թերթերուն վրայ ու կը կրկնէր յաճախ.

- Հօրդ երկու սնտուկ գիրքերէն աս կրցայ ազատել ու հետս պտտցնել ամէն տեղ, ծոցիս մէջ պահած: Յարգը

գիտցիր, լուսահոգին շատ կը սիրէր այս երգարանը, որուն վրայ աչքի լոյս թափած է:

«Քեռիս առաւ տետրակը եւ թերթատեց քանի մը անգամ, քիթին տակէն մրմնջելով՝ «հանգուցեալը ի՞նչ ալ աղոտոր գիր ունէր». ապա լրջացաւ, հագաց ու բամբ ձայնով սկսաւ երգել.

«Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ...»

Երգեցողութիւնը հետզհետէ վերածունցաւ երգախառն արտասանութեան: Գեղեցիկ ու տպաւորիչ էր քեռիս այդ պահուն. տժգոյն իր դէմքը անօրինակ ոգեւորութիւն կ'արտայայտէր. այնքան յուզում կար իր ձայնին մէջ, որ անկարելի էր անով չվարակուիլ: Սարսուռ մը անցաւ Սեդրակի ամբողջ մարմնէն եւ մեծաբաց աչքերուն դիմաց կանգնեցաւ հրեղէն հերոսը, իր կերպարանքին ու հոգիին բովանդակ վսեմութեամբ, որ այլեւս միայն գիր չէր. ո՛չ ալ անկենդան ստուեր, այլ հայրենիքի տէր ու պաշտպան անսասան Անդրանիկը, այնպէս ինչպէս թնդացուցած էր երկինք գետին եւ դափնեայ պսակով անմահացած:

Առաջին անգամ չէր, որ կը լսէր այս երգը. զայն երգելու առիթ ալ ունեցած էր յաճախ: Բայց երբեք իրենց տունը, դպրոցը, փողոցն ու դաշտը այսպիսի հրաշքի մը կախարդանքին տակ չէին միախառնուած երգին հետ:

Խրճիթին գորշ որմէրը ինկած, ընդարձակուած ու իրենց մէջ գրկած էին հայոց սարերն ու ձորերը, որոնց վերեւ հայ ֆետային կը սաւառնէր արծուի թելերով: Քեռիս կերպարանափոխուած ու կարծես նոյնացած, մէկ անձ դարձած էր Անդրանիկին հետ: Ան հիմա ոչ թէ կ'ոգեկոչէր հերոսին առասպելական դէմքը, այլ ինք կը ստեղծէր զայն: Սեդրակ հիանալով քեռիին վրայ, կը հետեւէր Անդրանիկի սխրագործութիւններուն, կը տեսնէր փախուստը թշնամիներուն, որոնք օձերու պէս կը սողային իրենց բոյները, կը տեսնէր գնդակներու տարափը, որոնք կարկու-

տի մման կը փշրուէին մեծ մարտիկի պողպատակուռ կուրծքին դէմ, առանց խոցեր բանալու անկէ ներս:

- Քեռի՛, Անդրանիկը ո՞ղջ է դեռ:

- Ողջ է եւ ողջ պիտի մնայ դարե դար:

- Ո՞ւր է ան հիմա:

- Քեզի եւ ինծի պէս արքայական, Ամերիկայի մէջ:

- Այլեւս Անդրանիկ չէ ուրեմն, այլեւս գէնք չունի, սուր չի գործածեր:

- Անդրանիկները Անդրանիկ կը մնան ո՛ւր ալ գտնուին. անոնք ստանձին չեն մեկնիր, մինակ չեն գաղթեր. իրենց հետ կը տանին հայրենիքը եւ իրենց հետ կը պտտոցնեն Հայաստանի հողն ու քարը: Ո՞վ կրնայ խլել անոնցմէ իրենց սուրը:

Երեկոյեան ստուերները տեղաւորուած էին արդէն սենեակի անկիւնները: Բայց Սեդրակի մատները, անըզգալաբար շարժելով գծագրութեան թուղթին վրայ գտած ու սեւեռած էին Անդրանիկի աչքին մէջ անոր հոգիին անմահ ճառագայթը...

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Հակառակ ծունկերը կթոտող ցաւին եւ ընդհանուր տկարութեան, պոչաճիւն դէռ կը չափէր թաղին ծուռ ու մուռ փողոցները: Տխուր, անշահ եւ յուսահատական օր մըն էր անցուցած: Այդ լուռ ու անփայլ օրուան ընթացքին, հացի սովորական պայքարին մէջ, ո՞վ է կօշիկներու մաքրութեան մասին մտածողը: Ամէն մարդ իր հոգը ունէր եւ իր վագրը. սրճարանները դատարկ էին, զբօսավայրերը՝ անմայի: Տօնական տրամադրութիւն մը գտնելու համար՝ ճրագով պէտք է ման գալ:

Սեղրակ յոյսը դրած իրիկնային եռուզեոյն վրայ՝ ուղղուեցաւ դէպի սինեմայի հրապարակը: Արսէնին չէջոտ դէմքը թէ՛ կը հալածէր զինք եւ թէ կը գրգռէր իր վիրաւոր արժանապատուութիւնը: Երկընտրանքի ճամբաներ չկային իր առջեւ. կամ պիտի պարտադրէր ինքզինք կամ պիտի նետէր ուսէն պոչաճիւն ներկատուիը:

Ջիղերուն տէր ըլլալուն համար՝ փորձեց մտածումը շեղեցնել իր արիւնող բեւեռէն: Փորձեց հաշիւ տալ ինքնիրեն թէ իրապէս ինչո՞ւ ընտրած էր այս աղտոտ գործը: Չէ՞ր կրնար շնորհքով արհեստի մը հետեւիլ, ինչպէս թելադրած էին շուրջէն: Ծա՛տ ալ լաւ կրնար: Մայրը տարհամոզելու համար ներկայացուած պատճառաբանութիւնները անկե՞ղծ էին միթէ: Ծիշո՞ւ է, վեց ամիս դժուարութիւն պիտի քաշէր, անմիջական շահէ պիտի զրկուէր, բայց որոշ ատեն ակոսան սեղմելէ ետք՝ ապագան գոնէ

փրկած պիտի ըլլար: Ապագա՛ն. այդ չէ՞ր արդէն զինք սարսափեցնողը: Ձեռքն ու ոտքը շղթայել արհեստի մը կապանքներով, դառնալ գերին մուրճի կամ ասեղի, մտնել ոսկեգօծ լուծի մը ստրկութեան տակ, որմէ անհնար էր այլեւս ազատիլ: «Աշկերտ» Սեդրակը տարիներու ընթացքին պիտի բարձրանար ղալֆայութեան աստիճանին եւ լաւագոյն պարագային՝ որեւէ կրպակի մէկ անկիւնը՝ պիտի նստեր իբրեւ «վարպետ» Սեդրակ, ակնոցները քիթին եւ յախտեցական գոգնոցը կտրծքին վրայ: Ըմբոստ իր հոգին չհաշտուեցաւ այս հեռանկարին հետ եւ ընտրեց պոյաճիութիւնը այն անխոտոտվանելի տարտամ յոյսով, որ ժամանակաւոր զինուորագրութեան կը մեկնէր, օր մը նորէն ետ դառնալու համար: Նեղ օրերու տագնապը անցընելու տեսակ մը միջանկեալ պարտականութիւն, ճակատագիրի հեռասոյգ ճամբուն վրայ տեսակ մը անցաւոր մոլորանք:

Սեդրակի նայուածքը կառչեցաւ սալայատակի քառակուսի քարերուն, որոնք տեղ-տեղ դուրս ցցուած էին ու տեղ-տեղ բոլորովին քանդուած: «Չի՞ կրնար պատահիլ, որ սա քարերուն մէջ քսակ մը ոսկի ինկած ըլլայ ու ես բախտը ունենամ այդ գանձը գտնելու», մտածեց ու ժպտեցաւ կարծես լուսաշող հեքիաթի մը: Ինչո՞ւ պիտի չպատահէր. աշխարհի վրայ անկարելի բան չկար: Եթէ իրականանար հրաշքը, ի՞նչ պիտի ընէր այն ատեն...

- Կ'ուսանիմ,- եղաւ Սեդրակին կտրուկ պատասխանը.- սնտուկս աղքատ տղոյ մը նուէր կու տամ եւ ուղղակի՛ դպրոց...

Մտածումներուն երգեցիկ թելը յանկարծ կտրուեցաւ: Պոյաճին դէմ առ դէմ եկած էր կոյր մուրացիկի մը հետ, որ ափը պարզած իրմէ ողորմութիւն կը խնդրէր: Սիրտը լեցուեցաւ կարեկցութեամբ... ապագայ իր հարըստութեան հաշուին: Դատարկ գրպանին մէջ մխրճուող ձեռքը դուրս եկաւ ջղաճիգ պրկումով: Ուզեց հարցնել

թշուառ այդ մարդուն. «Եթէ իմ տեղս դո՛ւն գտնէիր գանձը, ի՞նչ պիտի ընէիր», բայց լոնց, քաշուեցաւ մէկ կողմ ու շարունակեց քալել, քիթին տակէն մոլտալով.

- Ես այս աշխարհին...

Սիներայի պատին տակ միայն մէկ սնտուկ կար, որուն տէրը՝ խղճալի մանուկ մը, երեւի յուսահատած յաճախորդի սպասելէ, իր ծակ ոտնամանները կը ներկէր: Սեղրակ հազիւ թէ ուշադրութիւն դարձուց եւ տեղաւորուեցաւ ամէնէն յարգի տեղը, մուտքին աջ կողմը: Ծիշոյ իր քով, խոշոր ցուցատախտակի մը վրայ, շարժանկարի անպարտելի հերոսը հրեղէն ձի մը կը թոցներ, մէկ ձեռքը անոր բաշերուն, միւսին մէջ ատրճանակ մը: Դրան առջեւ թըմբուկ եւ փող նուագող զոյգ երաժիշտներ աղմկալի եղանակ մը կը հնչեցնէին՝ անցորդներուն հետաքրքրութիւնը շարժելու համար: Քիչ յետոյ անոնք ներս պիտի փոխադրուէին, որպէսզի իրենց նուագը համր նկարներու շարժումներուն թափ ու կենդանութիւն տար: Սեղրակ հազիւ երկու անգամ առիթը ունեցեր էր ներկայ ըլլալու կախարդական պաստառի ցուցադրութեան եւ այդ առիթները անցնջելի հետք մը ձգած էին յիշողութեանը մէջ, իբրեւ իր կեանքի կարեւորագոյն դէպքերէն մէկը: Առաջին անգամ յաջողած էր մուտք գործել՝ հին գիրքի մը փոխարժէքը վճարելով **սիներայի** տոմսակին եւ երկրորդ անգամ ներս էր սպրդած գողունի՝ օգտուելով խուռնամբոյս հանդիսականներու իրարանցումէն: Այդ հազուադէպ երանութեանց վերյիշումը բաւական էր, որ ան կարօտով ու նախանձով դիտէր տոմսակավաճառի խցիկին մօտ հաւաքուած հասակակից տղոց բազմութիւնը: Տղաք՝ որոնց դէմքին վրայ անպատասխանատու զուարճութեանց հըրթիւններ կը բռնկին եւ որոնց ձայնին մէջ մանկութիւնը կ'աղմկէ: Իսկ իր մանկութիւնը լուծ էր ի սպառ. մեռած էր դեռ չծնած: Քանի գիտէր՝ ինք մասնակից էր մեծերու հո-

գին ու մորմոքին, վաղահաս լրջութեամբ մը: Ի՛նչ կրնար ըլլալ մանկութիւն մը, որ կաղանդ-պապան չէր այցելած բնաւ: Ահաւասիկ եւ պատանութիւնը. շալակ մը բեռան տակ կքած կորաքամակ պատանութիւնը, որ աւելի ծերութեան էր նման: Գանգատ չունէր սակայն ոչ ոքի դէմ, ոչ մէկ բանի համար, խորշակէն զարնուած տունկի մը պէս, որ ողջ է դեռ եւ արեգակէն ու հողէն կը ծծէ այն ինչ որ կրնայ, ինչ որ բաժին կը մնայ իրեն:

Իրմէ քիչ մը անդին նստած արհեստակիցը, որ առաջին ակնարկով տհաս մանուկի մը տպաւորութիւնը ձգած էր վրան, ժպտեցաւ այնպիսի սրտառուչ նայուածքով, որուն մէջ Սեդրակ կարդաց իսկոյն խորշակահար ուրիշ հայ տղու մը իմաստուն հասունութիւնը: Որոշապէս զգալի էր, որ լղրնուած ու բարակ այդ մարմինը դժուարաւ կը կրէր իրմէ աւելի ծանր եւ իր պարունակէն դուրս յորդող հոգին: Սեդրակ ժպիտով պատասխանեց մտերմութեան հրաւիրող անոր ժպիտին: Տղան քաջալերուեցաւ:

- Գործերը լաւ չեն, այնպէ՞ս չէ,- լսելի եղաւ անոր շրթունքներէն բոլորովին անսպասելի հաստ ու հեքրոս ձայն մը:

- Լաւ չեն,- արձագանգեց Սեդրակ առանց մտածելու:
- Անունս Վահան է, Վահան Սողոմոնեան...
- Պատիւ ունիմ,- վրայ բերաւ միւսը՝ կէս հեգնական:
- Ի՛նչ լաւ է այս սնտուկներուն գլուխը դպրոցական կրթուած մէկուն հանդիպիլ. մարդուս սիրտը կը բացուի: Ես ալ դպրոցական եղած եմ, Հալէպի որբանոցէն: Արհեստ ալ ունիմ՝ դերձակութիւն: Տերեկները արհեստի կը հետեւե՛իմք, գիշերները դաս կ'առնե՛իմք:

- Հապա ինչո՞ւ արհեստդ չես աշխատիր:
- Չեմ կրնար, հիւանդացայ, արգիլեցին: Արդուկին հոտն ու ծուխը կործքիս վնասեցին: Տեսակ մը հազի բոճը-ւեցայ: Քեզի մաքուր օդ ու ազատ կեանք պէտք է, ըսին:

Ստիպուեցայ պոյանհութիւն ընել: Ասանկ անելի հանգիստ եմ: Ժամանակ մը պիտի շարունակեմ, մինչեւ որ ամբողջութեամբ կազդորուիմ: Մէկ երկու ծրագիրներ կան մտքիս մէջ. տեսնենք ինչ կ'ըլլայ: Կ'ուզեմ Պէյրութ փոխադրուիլ. հոն ազգական մը ունիմ, որ խանութի եւ գործի տէր է:

Սեդրակ թերահաւատութեամբ նայեցաւ ընկերոջը սոճոյն աչտերուն, որոնց վրայ արհեստական վարդի զոյգ կարմրութիւններ փակած էին կարծես: Բուրջի խոշոր կըտոր մը դուրս քաշեց եւ անտարբեր երեսոյթ մը առնելով՝ ներկատուփին փոշիները մաքրելու աշխատանքին լծուեցաւ: Իրականին մէջ տուփը պէտք չունէր արդուզարդի, այն պարզ պատճառով, որ խանգարող ոտքեր չէին եկած խոռվելու անոր հանգիստը: Բայց Սեդրակի ջղային շարժումները պէտք ունէին քողարկող զբաղումի մը: Ուր որ էր՝ Արսէն պիտի հասներ քիչ ետք եւ դեռ ինք չէր որոշած բռնելիք դիրքը ոխերիմ հակառակորդի ներկայութեան:

- Բեռդ ծա՞մր է, - հարց տուաւ նորէն դրացին, սրտակից քնքշութեամբ մը. ու երբ տեսաւ, թէ հարցումը օդին մէջ կախուած կը մնար, անելցուց.- ըսել կ'ուզեմ՝ քանի՞ հոգի ձեռքիդ կը նային:

- Ինձմէ զատ երկու հոգի՝ մայրս եւ քեռիս:

- Չըսե՞ս ես քեզմէ բախտաւոր եմ: Մի՞նակս կ'ապրիմ, մի՞նակս կը շահիմ եւ մի՞նակս կը ծախսեմ: Ո՛չ խառնուող ունիմ, ո՛չ սպասող: Որքանոցէն ելլելէս ի վեր առանձին եմ:

- Ո՞վ կ'եփէ կերակուրներդ, ո՞վ կը լուայ հագուստներդ,- հետաքրքրուեցաւ Սեդրակ, ինքն ալ նեղուելով իր միամիտ հարցումէն:

- Ի՞նչ կայ որ, ամէն բան ալ կ'ընեմ,- պատասխանեց Վահան:- Կերակուրը դժուար չէ, երբեմն՝ շուկան, երբեմն ալ չոր բաներ կը տանիմ հետս տուն:

- Տունդ ո՞ր է,- շարունակեց Սեդրակ, ներկատուփի նոյն տախտակը տասներորդ անգամ սրբելով:

- Անգլիական հիւանդանոցին կողմերը, արաբի մը բնակարանին մէջ, սանդուղներուն տակը, սենեակի պէս բան մը: Տանտէրը առաջ փայտ կը դնէ եղեր, բայց երբ ես վարձակալ եղայ, պարպեց, մաքրեց եւ ինծի տուաւ: Գինը սուղ չէ: Ի՛նչ պիտի ըլլայ, մէկ հոգի եմ, գիշերէ գիշեր պատկելու կ'երթամ: Զմեռը միայն շատ խոնաւ կ'ըլլայ:

Սեդրակի աչքերէն աստիճանաբար սրբուած էր Արսէնի ծաղկահար դէմքը եւ անոր տեղը գրաւած՝ որբանոցի տղան, իր թախծոտ եւ պայծառ աչքերով: Քովը նստած էր դժբախտ որբ մը, որ ինքզինք բախտաւոր կը նկատէր մի՞նակ ըլլալուն, իրմէ՛ աւելի բախտաւոր: Այդ բախտին ողբերգական հեգնանքը լալու չափ յուզեց Սեդրակի հոգին, որ երբեք չէր զգացած որբութեան սառնաշունչ ձմեռը, հակառակ անոր որ ինք ալ կիսովին որբ էր մեծցած: Բայց միթէ կարելի՞ է որբ անուանել մէկը, որ իր գլխուն վերեւ հարազատ մայր մը ունեցած է միշտ, սրտեր՝ որ կը բարբախեն իրեն համար եւ երդիկ մը՝ որ ամէն իրիկուն իրեն կը սպասէ ճրագը վառած: Աւելի՛ն. Սեդրակի ըմբռնումով որբ չէր նոյնիսկ այն հայ տղան, որ որբանոցի երես չէ տեսած եւ պառաւ հօրքոր մը կամ մօրքոր մը իր թելերուն հովանին բացած է վրան: Ինք որբ չէր. մտքէն անգամ չէր անցուցած նման մտածում: Իր երեսակայութեան մէջ որբը այն կիսաքաղց եւ անձրեւին տակ թափառող մանչուկն էր, որուն մասին շատ յուզիչ շարադրութիւն մը գրեր էր օր մը, չորրորդ դասարան եղած միջոցին: Եւ ահա երեսակայութեան նոյն որբը իրական մարմնացումով նստած էր այժմ իր քով, պոչաճիի խեղճ ու կրակ սընտուկին առջեւ: Յիշեց, գրեթէ բառ առ բառ, շարադրութեան նախադասութիւնները, որոնք այսպէս կը վերջանային. «Սիրելի մանչուկ, աշխարհէն լքուած իմ դժբախտ եղբայր, պիտի ուզէի սրտիս մէջ տաք անկիւն մը տալ քեզի, պիտի ուզէի իմ ամբողջ ունեցածս բաժնել քեզի հետ,

մեղմելու համար քու անմխիթար տառապանքը: Մի՛ յուսահատիր եւ կրնաս վատահ ըլլալ, որ քեզ արհամարհողները վաղը քու օգնութեանդ պէտք պիտի ունենան...»:

Սեդրակ կը փորձուէր բարձրաձայն արտասանել այս խօսքերը, երբ հետուէն նշմարեց Արսէնի օրօրուող հասակը եւ մէկէն գունատեցաւ: Ծտապեց խել եւ քովը դնել քիչ անդին ինկած խոշորկէկ քար մը: Այլայլուծը, որ պերճախօս էր, չվրիպեցաւ նաեւ Վահանին նայուածքէն:

- Մի՛ վախճար,- ընդմիջեց անպաշտպան որբը,- այլեւս խնդիր չես ունենար հետը: Ես ներկայ էի ձեր կոհիւն, բայց ոչինչ կրնայի ընել: Անոր սովորութիւնն է ամէն հորեկի աչքը կոտորել անգամ մը. կը կարծէ, թէ հասաւ նպատակին: Եւ յետոյ, Աւետիս անցած օր խօսեցաւ իրեն քու մասին...

Նախատեսութիւնը ճիշդ էր: Պոյաճի Արսէն իր խարխլած ներկատուփը գետնոց միւս երկուքին միջեւ, առանց բառ մը արտասանելու: Չբարեւեց, չհայհոյեց: Չափազանց մտազբաղ կ'էրեւէր: Անոր լուծիւնը պարտադիր դարձաւ նաեւ արհեստակիցներուն: Սեդրակին կասկածները բոլորովին չէին փարատած. կը սպասէր մօտայրտ փոթորիկի պայթումին:

Որքա՞ն տեսեց այս տագնապալից կացութիւնը - յամենայնդէպս Սեդրակ չէ, որ պիտի տար պատասխանը: Ուշքի եկաւ միայն այն ատեն, երբ երեքը մէկ ընդոստ վեր ցատկեցին՝ նոյն զայանակէն լարուած շարժումով մը:

- Պոյաճի՛:

Կանչողը, դիմացի մայթին վրայ կեցած, ֆրանսացի սպայ մըն էր: Բոլոր պոյաճիներուն իտէալ յանախորդը: Ֆրանսացի մը, որ սպայ է. սպայ մը, որ մոյլ կը կրէ. մոյլկեր, որոնց ներկը եռապատիկ գին կը բռնէ, չհաշուած ենթակային հառանական առատամեռնութիւնը:

- Նստէ՛ տեղդ, լսկոտ, ան քու պատառդ չէ,- որոտաց Արսէն Վահանին դառնալով:

Վահանին հետ միաժամանակ ինքնաբերաբար աթոռին գամուեցաւ Սեդրակ: Բայց անշարժացած էր Արսէն եւս, որ երկվայրկեանի մը տատանումէն ետք, յանդիմանական խտութեամբ յօսքը ուղղեց Սեդրակին.

- Դո՛ւն գնա:

Սչդպէս ալ եղաւ: Գնաց, ներկեց, շահեցաւ ու վերադարձաւ, առանց հասկնալու, թէ ինչո՞ւ ինք գնաց եւ ինչո՞ւ Արսէն կամովին հրաժարեցաւ այդ «պատառ»էն:

- Աճիտա՞ն էր, - հարցուց պոյաճիներուն հրամանատարը, միշտ խիստ եւ միշտ քէնոտ շեշտով մը:

- Ոչ, քաբիթէն, - պատասխանեց Սեդրակ քիթին տակէն: - Երեք գիծ ունէր թելին:

- Խօսեցա՞ր հետը:

- Խօսակցութիւն չքացաւ:

- Ֆրանսերէն ալ գիտես եղեր դուն. կրնա՞ս միտքդ շնորհքով հասկցնել:

- Եթէ դիտրին բաներ ըլլան՝ նեղը չեմ մնար:

- Իսկ հայերէն ամէն գիրք կը կարդա՞ս, որքան ալ խոշոր ըլլայ:

- Խոշորութիւնը տարբերութիւն չ'ըներ:

- Հը՛մ, ծօ՛ դուն յիմար ես ուրեմն, որ այսքան զարգացումով, այսքան տարի դպրոց կոխկոտելէ ետք՝ եկեր պոյաճիութիւն կ'ընես:

Սեդրակ լուռ մնաց: Ի՞նչ ըսէր, ինչպէ՞ս արդարաւանք: Չէր ուզեր մանաւանդ հետը վէճի մտնել:

- Ա՛խ, ես ըլլայի տեղդ, քու գիտցածիդ կէսին չափ բան գիտնայի, գոնէ երկու տարի մը դպրոց դրկած ըլլային, կը տեսնէիք թէ ի՛նչ կ'ընէի...

Չինաթափ մարտիկի մը խեղճութիւնը կար Արսէնի ձայնին մէջ: Առաջին անգամ ըլլալով Սեդրակ շեշտակի նայեցաւ անոր դէմքին եւ մարդկային բան մը գտաւ հոն:

- Բա՛ց նայիմ սա շիշին բերանը, տեսնեմ ի՞նչ ներկ կը

գործածես,- շարունակեց Արսէն, յանկարծ փոխելով նիւթը:

- Երոպական ամէնէն լաւ ներկը,- ըսաւ Սեդրակ ինքնավստահ, գնահատանքի սպասումով:

- Ծօ՛ դուք բոլոր ուսումնականներդ ալ, ախմախ էք. գործի մարդ չէք ըլլար: Վահանն ալ քեզի պէս է: Երոպականին դրա՞մ կը դիմանայ: Ինչո՞ւ չես խառներ կէս առ կէս: Քիչ մը օճառ առ, քիչ մը փոշի, լաւ մը եփէ եւ խառնէ շուկայի ապրանքին հետ: Ո՞վ պիտի հասկնայ: Ես կը վարժեցնեմ քեզի ուզած ատենդ:

- Նայինք...

- Նայինք-մայինք չկայ. արհեստի մը հետեւողը պիտի տիրանայ նաեւ այդ արհեստի գաղտնիքին ու խաղէրուն: Քանի՞ զոյգ կօշիկի կը բաւեցնես մէկ տուփ ճիւղան:

- Չեմ հաշուած:

- Պէտք է հաշունէ՛ս, եթէ ոչ թոփ կը նետես: Ծիւան խարդախելը դժուար է, բայց կրնաս մատներդ խարդախել: Երբ որ տուփին մէջտեղի մասը հայի կլոր մը եւ թիթեղը տեսնուի, ալ անկէ վերջ ճիւղան պէտք չէ լրանայ: Քսած ատենդ, յաճախորդին առջեւ, մատներդ կրակի պէս արագ-արագ կ'երթան կու գան, կը հասկնա՞ս, շափ-շուփ ձայն կը հանեն եւ միշտ բացուած թիթեղին կը քսուին: Կրկնէ որքան որ ուզես. թող մարդը կարծէ, թէ ամբողջ տուփը իր ոտքերուն վրայ պարպեցիր: Լեցուն եզերքներուն մի՛ դպնար դուն, ինչուդ պէտք: Փայլեցնելու խնդի՞րը: Թեւիդ ու խոզանակիդ ուժ տուր, օղլում: Կը կարծես, թէ ճիւղայ՞ով կը փայլի կօշիկին երեսը: Խօսքս աներես կօշիկներուն համար չէ,- խնդաց Արսէն, օգտաշատ իր յորդորները ասարտելով:

Աւետիս, որ պահ մը առաջ հատած ըլլալով ոտքի վըրայ մտիկ կ'ընէր իրեն համար վաղուց ծանօթ այդ գաղտնիքները, տեղատրուեցաւ շարքին ծայրը: Համաստեղութիւնը կատարեալ էր.- Սեդրակ, Արսէն, Վահան ու Աւե-

տիս, միեւնոյն նպատակին զինուորագրեալ ուղեկիցներ, միեւնոյն ճակատագիրին ձեռքով եղբայրացած:

Օարժանկարի երաժիշտները ներս քաշուած էին արդէն: Երկինքը կ'ամպոտէր եւ անձրեւի սպառնալիք մը կար կախուած օդին մէջ: Պոյաճիներու կոնակէն, որմի թանձրութեան ընդմէջէն, հեռաւոր արձագանգի մը մեղմութեամբ, դուրս կը թափանցէին «Զէյթունցի ենք» եղանակին խեղդուած ալիքները: Ռոռշ էր, որ այդ պահուն, ներսը, կարմիր երկվարին առասպելական հերոսը կը ձիւկարէր, սար ու ձոր ոսքի տակ տալով: Պոյաճիներուն ոտքերն ալ սկսան ներդաշնակուիլ թմբուկի կշռոյթին եւ դոփել գետինը: Լոնցին: Կը թուէր, թէ անոնցմէ իւրաքանչիւրը շատ լուրջ մտածում մը կը փայփայէր մտքին մէջ եւ բոլորի մտածումները սեւեռուած կը մնային մոյն կէտին:

Արսէն լանկարծ խզեց լոռութիւնը հիացական սուլոց մը արձակելով եւ յետոյ՝

- Վա՛յ, ես քու հոգի'դ ուտեմ,- բացականչեց արտին խորէն,- նայեցէ՛ք մէյ մը սրտը, տեսէ՛ք ի՛նչ կտոր է:- Ու թելին, յօնքերուն, աչքին, դէմքի ամէն մէկ մկանին շարժումներով ցոյց տուաւ երիտասարդ կին մը, որ շորորալէն կ'անցներ իրենց գրասած մայթի քովէն:

Կինը զգաց անմիջապէս զինք մերկացնող նայուածքներու ջերմութիւնը, շիկնեցաւ թեթել մը եւ արագցուց քայլերը: Օտտ աւելի խոր լուզումի մատնուած էր սակայն Սեդրակ ու կաս-կարմիր կտրած էր մինչեւ ականջներուն ծայրը: Չէր գիտեր՝ գլուխը ո՞ր կողմ դարձներ, չնշմարուելու եւ չնշմարելու համար: Հրապարակային մեղանշումի մը պարտադիր դերակատարը կ'ըլլար կարծես իր ներկայութեամբ:

- Կուրծքերը տեսէք ինչպէ՛ս կը թոյվոան. գանգակ է, գնդա՛կ. կաթի պէս մարմին ունի:

- Մարմինը տեսնողի պէս ալ կը ճառես,- հեզանց Աւետիս:

- Ծօ՛, ես այս կինը նո՞ր պիտի ճանչնամ: Աստուաներուն աղջիկն է, տարուան մը հարս: Երթալէն գեղեցկացաւ, երթալէն ծաղկեցա՛ւ: Աղջիկ եղած ատենը շաբաթը մէկ-երկու օր տուներնին էի. ինձի շատ կը հաւնէր ու մեծ վստահութիւն ունէր վրաս: «Արսէն, կօշիկներս լաւ մաքրէ: Արսէն, փուռ վագէ: Արսէն, ծաղիկ բեր շուկալէն»:
Քանի՛ անգամ սենեակին դուռը բացած ու զիս ներս կանչած է կիսամերկ վիճակի մէջ:

- Քիչ մըն ալ առաջ երթաս պիտի ըսես, թէ...

- Եղածը կ'ըսեմ, սուտ խօսելու սովորութիւն չունիմ: Ու եթէ բոլոր եղածներն ու բոլոր ըրածներս ըսեմ՝ ձեր խելքը կը թոխ: Դուք ի՞նչ գիտէք կեանքէն, ի՞նչ կը հասկնաք աղջիկներէն... կաթէն նոր կտրուած չօճուխներ...

- Քու հասկցածիդ չափ մենք ալ կը հասկնանք, - յամատեցաւ Աւետիս իր հեզմանքին մէջ:

- Լա՛ւ, ըսէ Աայիմ, կնոջ մը ո՞ր մասը ամենէն շատ կը հաւնիս դուն:

- Ուրքերը, գոնէ կօշիկ կը կրեն, կը ներկես ու փարսա կը շահիս. միւս մասերէն ի՞նչ խեղ կ'ելլէ, - խնդաց Աւետիս:

- Քու խելքդ ալ կօշիկէն անդին չ'անցնիր արդէն: Դո՛ւն, ծօ, Վահան, ո՞ր մասը կը սիրես:

- Ձեռքերը, - պատասխանեց Վահան, քիչ մը մտածելէ ետք, - ճերմակ ու փափուկ ձեռքերը, որոնք կը գուրգուրան, կը տաքցնեն:

- Մաշալլա՛, բուն տաք տեղերը ձգած, չոր ձեռքերը պիտի ընտրես ուրեմն: Բարի վայելում: Սեդրա՛կ, տէ՛, դուն ալ քիթի՛ն ծայրը ընտրէ:

- Ո՛չ, ես աղջկան մը մազերը եւ աչքերը կը նախընտրեմ, - ըսաւ Սեդրակ, մտածելով Զարուհիին խարտեաշ մազերու բուրումնաւէտ զեպիտինն եւ վճիտ աչքերուն:

- Ըսելիք չկայ, երեքդ ալ մէլ մէկ խախաներ էք. ոտք, ձեռք ու մազ: Ո՞ր կը ձգէք հապա մարմարի պէս զիտե-

րը, լեցուն կոնքերը, ցցուն կուրծքերը: Ափդ, մետած ատենդ՝ պէտք է լեցուի...

Արսէն կը խօսէր փորձառու մարդու հեշտանքով, տոփական խոնարարութիւն մը շրթներուն վրայ: Սեղրակ շշմած, ամօթահար, բայց նաեւ տխրագին հետաքրքրութեամբ կը լսէր կեանքի այս նորօրինակ իմաստութիւնը, մերթ երակներուն մէջ տաք հոսանքի մը բռնկումը զգալով:

Անձրեւի առաջին կաթիլները դասամիջոցի վերջը ազդարարող զանգի դերը կատարեցին: Պոչանիները չորսը մէկ ոռքի ցատկեցին իրենց ներկատեղաններուն առջեւ ու յետոյ շակեցին զանոնք: Երթելեկութիւնը ցանցառ էր արդէն եւ աշխատանքի վերջին յոյսերն ալ ի սպառ անհետացած՝ օրուան տմոյն լոյսին հետ: Արսէն եւ Աւետիս ուղղուեցան դէպի վեր, իսկ Սեղրակ եւ Վահան՝ դէպի վար:

- Ոչ միայն կոուազան, այլ բաւական անկիրթ է այս տղան, - ըստ Սեղրակ, երբ առանձին սնացին:

- Իսկական պոչանին ան է, մենք իր քով չբախ իսկ չենք հաշուտիր, - պատասխանեց Վահան:

- Ատ ի՞նչ լեզու կը գործածէ, ի՞նչ բաներ գիտէ:

- Ականջ մի՛ տար. երեք քառորդը ջուրը նետէ: Աւելի կ'երեւակայէ, քան թէ կ'ապրի: Համով հայհոյանքներու անմրցելի պաշար մը կայ միշտ լեզուին տակ: Ծատ դոժբախտ է սակայն:

- Ո՞վ ունի:

- Խորթ հայր մը, որ ամէն իրիկուն կը տփէ զինք: Վեց-եօթ հոգի են մէկ սենեակի մէջ:

Անձրեւը կը սաստկանար հետզհետէ: Ծանր ու թեթեւ ինքնաշարժներ կը ստրային մեծ աղմուկով: Վահանին անապարող ոտքերը դժուարաւ կը քաշէին թրջուած ու իրենցմէ անհամեմատ ավելի խոշոր կօշիկներու ծանր բեռը: Կողքէն կախուած սնտուկը ճիգ մը ըրաւ կոնակին տեղաորելու՝ ցուրտէն ու ջուրէն պաշտպանուելու հա-

մար կարծես: Վիզը ներս կը քաշուէր եւ սրսիուն անդամ-
ները կը կծկուէին հնամաշ լաթերուն տակ:

Սեդրակ կանգ առաւ իրենց փողոցի մուտքին եւ բռ-
նելով ընկերոջը թելէն հարցուց.

- Ի՞նչ պիտի ընես հիմա:

- Տուն պիտի երթամ, քանի մը փողոց անդին:

- Ընթրիք ունի՞ս:

- Քիչ մը արմա կայ եւ հաց:

- Քալէ մեզի երթանք. դեռ կանուխ է: Անձրեւը թող
դադրի՝ յետոյ կը մեկնիս:

Վահան ընդդիմացաւ: Ծանօթ չէր տնեցիներուն:
Անչարմար էր այդ վիճակով ներկայանալ. ի՞նչ պիտի մը-
տածէին: Ուրիշ օր մը: Քանի որ բարեկամ դարձան՝ դեռ
շատ առիթ կ'ըլլար այցելելու:

Սեդրակ մտիկ չըրաւ ներկայացուցած առարկու-
թիւններուն եւ գրեթէ բռնի, հրելով, ընկերը մտցուց իրենց
բնակարանէն ներս:

ՈՐՔԱՆՈՑԻ ՏՂԱՆ

Քեռին կէս մը նստած, կէս մը պսակած՝ անկողինն էր ատուրընէ ի վեր, յօդացաւի նոր տազնապի մը մէջ: «Ոսկորներս կ'ըսեն, որ պիտի անձրեւէ այսօր», - յայտարարած էր կանուխէն, առանց երկինքին երեսը նայելու:

Մայրը իր տղուն հետ ընդունեց հիւրը սիրալիր ժպիտով, հին մտերիմի մը պէս: Հարցումներու տարապի մը թափեցաւ Վահանին վրայ. - *ո՞ւրտեղացի էր, ո՞վ ունէր, ո՞ւր կը մնար, առաջ ի՞նչ կ'ընէր, վերջը ի՞նչ պիտի ընէր, գո՞հ էր վիճակէն:*

Ու երբ իմացաւ, որ Սեդրակին ընկերը հօրմէ ու մօրմէ գուրկ որբ մըն էր, եփող-թափող, վրան-գլուխը հոգացող չունէր, կրկնապատկեց իր գուրգուրանքը: Տղուն պահեստէն գոյգ մը հին գուլպայ բերաւ եւ ստիպեց, որ Վահան իր թրջուած գուլպաները անպայման փոխէ եւ մունակ հագնի: Առաջարկեց, որ ուսերուն բուրդէ շալ մըն ալ առնէ:

- Վահա եարու՛մ, վահա, - կը բացագանչէր գացած ու եկած միջոցին, - շատ դժուար բան է գլխուդ վրայ մայր չունենալը: Մօր մը տեղը ոչ ոք կրնայ բռնել:

Վահան յայտնապէս նեղ կացութեան մատնուած կ'երեւէր: Կ'ուզէր մերժել ու չէր կրնար. կ'ուզէր շնորհակալութեան ջերմ խօսքեր մըննջել, բայց պատշաճ բառեր չէր գտներ:

- Մի՛ գնդուիր, տղաս, ասիկա քու տունդ է. եթէ մայրդ ողջ ըլլար եւ որբ հայու մը հանդիպէր, նոյնը պիտի

չընէ՞ր,- ըստ քեռին իր անկողինէն:

- Խեղճ կնիկը,- աւելցուց մայրը,- ո՛վ գիտէ ինչպէ՛ս տառապեցաւ քեզմէ բաժնուած ատեն: Աչքը բաց ու սիրտը ետին մեռաւ ամէն մէկ հայ մայր: Երկու աչքով թող կուրճան պատճառ եղողները: Մամադ կը յիշէ՞ս գոնէ...

- Լաւ կը յիշեմ. մինչեւ Տէր Զօր միասին էինք. ճիշդ ասանկ, ձերինին նման սեւ լաչակ մը կը կապէր գլխուն. ամբողջ ճամբան փէշէն չզատուեցայ: շատ բաներ տեսանք, շատ ցաւեր քաշեցինք: Քաջ կին էր մամաս. ամէն փորձանքէ կրցաւ զիս ազատել, բայց ի վերջոյ ժանտարմաները մտրակի հարուածներով մեզ իրարմէ բաժնեցին. մեծերը մէկ կողմ տարին, պզտիկները՝ ուրիշ կողմ: Այ անկէ վերջ չեմ գիտեր, թէ ի՛նչ եղաւ...

- Մեղք, որ գալէդ լուր չունէի,- ընդմիջեց տանտիրուհին,- ոսպապոր միայն պատրաստած եմ. քովը քիչ մըն ալ փաթաթէս կը տապկէի:

- Շնորհակալ եմ, ես կուշտ եմ,- կմկմաց Վահան եւ գետին նայեցաւ:

- Դէ՛, ելի՛ր Վահան, քեզի կուշտ ես, անօթի ես հարցընող չկայ. մեզի հետ սեղան պիտի նստիս,- պոռաց Սեդրակ, ձայնին զուարթ երանգ մը տալով:

«Սեղան»ը ցած ոտքերով հացի կլոր այն տախտակն էր, որուն վրայ Սեդրակ մեծցուցած էր Անդրանիկի նկարը, այժմ փառաորապէս բազմած Քաջն Վարդանի կողքին: Երեքը մէկ ծալապատիկ նստան շուրջը, տակի կարկրտնուած լայն սփոռցին ծայրերը քաշելով իրենց ծունկերուն: Միսացող պտուկին մէջ շերտիը ձգելէ առաջ՝ մայրը իաչակնքեց երեսը եւ լեցուց պնակները:

- Որքա՛ն ատեն է, որ ոսպապոր չեմ կերած,- համարձակեցաւ ըսել Վահան, քիչ-քիչ քաջութիւն ստանալով:

- Կե՛ր, անուշ ըլլայ, պնակը շուտ լրացուր, որ նորէն լեցնեմ,- վրայ բերաւ մայրը շոյուած ինքնասիրութեամբ եւ

առանց դադար տալու շարունակեց.

- Ես աղուոր թանապուր ալ կ'եփեմ. օր մը ընեմ եւ թող Սեդրակս լուր տայ քեզի: Մայրդ թանապուրը ինչո՞վ կը շիճեր:

- Չեմ յիշեր, կարծեմ ծեծածով,- ըսաւ Վահան՝ երկրի կերակուրներուն հասը վաղուց կորսնցուցած մէկու մը տրտմութեամբ:

Խօսակցութեան ամբողջ ընթացքին մայրը իր որդին մոռցած կը թուէր ըլլալ: Վահանն էր իր ուշադրութեան կեդրոնը: Կ'աշխատէր հացը անպակաս ընել անոր առջեւէն եւ պնակը միշտ լեցուն պահել, յաճախ կրկնելով նոյն ջերմ յանկերգը.

- Կե՛ր, մի՛ քաշուիր, ապուրդ մի՛ պաղեցներ. նորէն պիտի լեցնեմ, գիտցած եղիր:

Վահան յանկարծ դադրեցաւ ուտելէ, դգալը դրաւ սեղանին եւ անսովոր լրջութիւն մը առնելով, ինքն իրեն խօսելու պէս յայտարարեց.

- Տարօրինակ է, իրա՛ւ որ տարօրինակ: Կարծես թէ ուրիշ աշխարհի մը մէջ կը գտնուիմ... Մինչեւ հիմա ինձի ոչ ոք կեր չէր ըսած. բայց մի՛ ուտեր ըսողներ՝ շա՛տ... հացի պատառը ձեռքէս խլողներ՝ որքան որ ուզէք...

Մանր լոռութիւն տիրեց սենեակին մէջ: Քարիւղի լամպին պատրոյզը ցաւագին գալարում մը ունեցաւ եւ անծանօթ խորշէ մը ներս սողոսկող քամին ծուխի հառաչ մը խլեց լոյսի դողդոջուն լեզուակէն: Սեդրակին լեցուն դգալը կէս ճամբան մնաց: Մայրը լաչակին ծայրով արցունքի կաթիլ մը սրբեց այտին վրայէն: Ի վերջոյ քեռին է, որ սիրտ ըրաւ կացութիւնը փրկելու.

- Նայէ՛, տղաս, քու անունդ Վահան է, չէ՞: Պարսպ տեղ չէ, որ այդ անունը տուած են քեզի: Դուն պարտաւոր ես արժեցնել անոր իմաստը. պէտք է վահան դառնաս այս անհրաւ աշխարհի չարիքներուն դէմ, իսկակա՛ն վահան:

Ուրիշներ պիտի հարուածեն՝ դուն պիտի դիմանաս, ուրիշներ մի՛ ուտեր պիտի ըսեն՝ դուն պիտի յաիշտակես, ուրիշներ մահո՞ պիտի ուզեն՝ դուն պիտի ապրիս: Մի՛նակոյ չես. քեզի պէս հազարաւորներ կան:

- Ի՞նչ ձեռով ազատեցար շարդերէն միս մի՛նակոյ եւ ինկար որբանոց,- հարցոց Սեդրակ՝ խօսակցութեան թելը շարունակելու համար:

- Օ՛հ, երկար ու հին պատմութիւն է,- ըսաւ Վահան եւ ցնցեց ուտերը:

- Սովորական ու ծանօթ պատմութիւն,- ատլցոց քեռին:

- Եթէ օր մը ժամանակ ունենամ եւ եթէ կարենամ միտքս դրած եմ գրի առնել տեսածներս... վէպ է եւ վէպէն ալ ատելի բան մը...

- Քանի՞ տարեկան կայիր այն ատեն,- յամառեցաւ Սեդրակ իր հետաքրքրութեան մէջ:

- Վեց-եօթը տարեկան մը կայի,- շարունակեց Վահան:- Ի հարկէ, շատ մը բաներ մոռցած եմ. կան շատ մը բաներ ալ, որոնց իրական ըլլալուն եւ ինքս չեմ հաւատար այսօր: Սոսկայի էր վիճակնիս: Կը գտնուէի՛նք Մէսքէնէի եւ Տէր Զօրի միջեւ տեղ մը. հայրս ամիսներ առաջ սպաննած էին մեր աչքերուն առջեւ: Քոյրերէս մէկը մեռաւ ճամբու եզերքին՝ անօթութենէ եւ հիւանդութենէ: Միսը գիշեր մը փակցուցին. ես ամէնէն պզտիկն էի: Մայրս երանի կու տար հայրիկիս, որ կանուխ մեռաւ, քոյրերուս կորուստը չտեսաւ, երկար չտանջուեցաւ: Բայց միեւնոյն ատեն կը կրկնէր շարունակ. «Գոնէ քեզ կարենամ ազատել՝ Աստուծոյ փառք պիտի տամ: Առանց ինձի դուն ո՞ր պիտի մնաս, ի՞նչ պիտի ընես»: Մեր կարաւանը ատենէ մը ի վեր հաստատուած էր Եփրատի ափին, բաց դաշտին մէջ. բոպիկ ոտքերս կ'այրէի՛ն տաք արագին վրայ. ոչ հագուստ, ոչ ուտելիք: Հարիւր տեղ հարիւր անգամ կո-

ղոսպտուած էինք: Ամէն օր քանի մը մտել կար. ոմանք գետինը փռուած՝ շարժելու կարողութիւն իսկ չունէին: Իմ տարիքիս եւ ինձմէ աւելի փոքր մանուկներ՝ կաշի ու ոսկոր դարձած, օրերով հա՛ց պոռալէ ետք կը բնանային յանկարծ եւ այլեւս չէին արթննար... հետաւոր վայրերէ ճարուած ձմերուկի մը կեղեւները ձեռքէ-ձեռք կը խլուէին: Անգամ մը բախտը ժպտեցաւ ինձի. պէտք է ըսել, որ բախտաւոր աստղի տակ ծնած եմ ես, ապա թէ ոչ կրնայի՞ ազատիլ, կրնայի՞ ապրիլ: Այո՛, անգամ մը գետի եզերքին կը թափառէի՝ ուտելիք խոտ ու արմատներ ճարելու համար: Յանկարծ ձիաւոր մը երեւցաւ. թորք չէր. ժանտարմաները լաւ կը ճանչնայինք: Ձիաւորը օտարականի երեւոյթ ունէր: Անմիջապէս տաս-քսան պզտիկ շրջապատեցինք ձին եւ դողդացող մեր ձեռքերը իրեն երկարեցինք, աղաչելով որ բան մը տայ ուտելիք: Ժանտարմաներուն անգամ ձեռք կը բանայինք, շատ լաւ գիտնալով, թէ ուտելիքի փոխարէն մտրակի կամ փայտի հարուածներ պիտի ստանայինք: Անօթութիւնը, երբ ոսկորներդ եւ աղիքներդ կը քամէ, ահռելի բան կը դառնայ. հողն ու քարը ճանկրոտել ու խածնել կու տայ: Անձանօթ մարդը բարի երեւոյթ մը ունէր. տխրութեամբ նայեցաւ մեզի, գլուխը օրօրեց եւ տոպրակէն հաց մը հանելով՝ կտոր-կտոր բաժնեց հաւաքուած տղոց: Ընդմեջ եւ կակուղ հաց մըն էր. չեմ կրնար նկարագրել անոր համը. կեանքիս մէջ ես այնուհետեւ ատանկ համով հաց չեմ կերած, կաթօճ ու քաթան բան մը չէին քովը: Ծշմած էինք բոլորս ալ: Ոմանք փորի վրայ ինկած ու երկու ձեռքով ամուր գետին սեղմած՝ ազահօրէն կը լափէին հացին կտորը, վախճալով որ ետեւէն մէկը կու գար եւ կը յափշտակէր: Ուրիշներ կը հոտոտէին եւ փշրանք-փշրանք կը դնէին իրենց բերանը... Չեմ յիշեր, թէ ես ինչպէ՛ս կերայ իմ բաժինս. միայն լաւ գիտեմ, որ երկու պատառ պահեցի եւ վազեցի մայրիկիս քով, որպէսզի

անոր տամ: Խեղճ մամաւ չհաւատաց աչքերուն, առաւ շօ-
շափեց, թորքը կլլեց, վայրկեան մը կեցաւ եւ յետոյ ինծի
վերադարձնելով ըսաւ. «Վահան, մանչս, դո՛ւն կեր, ես
կուշտ եմ»: Հիմա ամէն անգամ, որ ասանկ սեղաններու
մերկայ կ'ըլլամ եւ ճերմակ հաց կ'ուտեմ՝ այդ պատկերը
մտքիս առջեւ կու գայ ու սիրտս կը կծկուի...

Վահան խոր շունչ մը քաշեց. կարծես ծանր բեռ մը կը
ճնշէր կործքին: «Քեռիմ, որ մերժած էր անկողիներ ձգել, սեղ-
մըսած ակոսներուն մէջէն, հազիւ լսելի բառերով մոնչեց.

- Բարբաբոսներ, իմ ձագուկներս ալ այդպէս մտո-
ցուցին... աչքերէս հեռու... ով գիտէ ո՞ր քարին քով, անա-
պատի ո՞ր անկիւնը...

- Յետոյ,- վերսկսաւ Վահան,- Աոր գաղթի հրաման
եկաւ: Տեսնողը միայն գիտէ, ի՞նչ ըսել էր գաղթ Եփրատի
երկայնքին: Սովին եւ տեսակ-տեսակ հիւանդութիւննե-
րուն պակաս ձգածը ժանտարմաները եւ ճամբու ընթաց-
քին վայրենի ցեղերը կը լրացնէին: Չերկարեմ. շարաթ մը
կար, որ Տէր Զօր մտած էինք, երբ իրիկուն մը գաղթա-
կանները քննութեան անցնելու համար բարձր աստիճան
ունեցող թորք մը մեզ աչքէ անցուց: Չափահաս այր մարդ
չէր մնացած մեր մէջ: Մայրս կ'աշխատէր թեւին տակ ան-
հետացնել ինձ: Մեր կարաւանին կեսն իսկ չէր մնացած:
Գիշեր ցերեկ մէկ մտածում ունէինք՝ աւելցուք մը, բոյս մը,
միջատ մը գտնել ուտելու: Մայրս կը զարմանար ճարպի-
կութեանս վրայ. հիմա այդ ատենուան ճարպիկութեանս
մէկ քառորդն իսկ չունիմ: Ծան պէս հոտ կ'առնէի եւ ան-
յայտ անկիւններէ, աւազներուն տակէն ուտելիք բան մը
դուրս կը հանէի: Հազիւ հրամանատարը մեկնած՝ ամէն
կողմ լուր տարածուեցաւ, թէ մանուկները պիտի գտնեն
իրենց մայրերէն եւ առանձին վայրեր պիտի բշեն: Նոր
շարդի մը մասին շշուկներ սկսան շրջան ընել: Ջարդը
սարսափելի բան մըն էր ի հարկէ, բայց ո՛չ անօթութեան

չափ: Դիակ եւ արիւն տեսնելէն մեր աչքերը յոգնած էին: Մահը մեռնողին կը վերաբերէր, իսկ անօթութիւնը՝ բոլորին, մեզմէ ամէն մէկուն: Հիմա ալ տակաւին ոչ մէկ բանէ այնքան կը վախնամ, որքան անօթի մնալէ: Յաջողոյ օր գէշ լուրերը իրականութիւն դարձան: Մէկէն պայթող որոտումի մը պէս բաժանման հրահանգը հաղորդուեցաւ եւ իսկոյն գործադրութեան դրուեցաւ: Հտաքեցին մեզ դաշտին մէջ եւ չորս կողմէն շրջապատեցին զինուած մարդիկ: Մայրիկիս ձեռքը ամբողջ ուժովս կը սեղմէի եւ լալով կը կրկնէի. «Ինծի միեակ մի՛ ձգեր, տար, քեզի չեմ նեղացներ, հնազանդ կ'ըլլամ, ինչ որ ըսես՝ կ'ընեմ»: Իմ լացիս կը խառնուէին բազմաթիւ ուրիշ պզտիկներու լացն ու աղաչանքը: Հայրենակից բարեկամուհի մը ունէինք՝ տիկին Վարդուհին, որ իր մանչուկը թելերուն մէջ կտրծքին պինդ գրկած կը քալէր եւ մօրս կ'ըսէր. «Աղջի՛, թող նախ մեզ մեռցնեն, յետոյ մեր զաւակները առնեն»: Ծատ չանցած դահիճները խումբին մէջ մտան ու բռնի ուժով, հրացանի կոթին հարուածներով սկսան քակել իրենց զաւակներուն փաթթուած մայրական բազուկները: Տիկին Վարդուհին արիւնլուայ ինկաւ ճիշդ մեր առջեւ եւ մայրս թելէս քաշկոտելով եւ գրեթէ վրան կոխելով ինծի փախցուց քիչ մը անդին: Ականջներս խուցած էին ճիշերու եւ աղաղակներու աննկարագրելի աղմուկէն: Հիմա կ'անդրադառնամ, թէ դիտելիք տարօրինակ տեսարաններ կը պարզուէին. կին մը ժանտարմայի մը առջեւ ծնկաչոք, ձեռքերը իրարու միացուցած, արցունք կը թափէր եւ կ'աղաչէր. քովը երեխայ մը անտարբեր գետին նստած՝ թիթեղէ գաւաթի մը մէջ առագ կը լեցնէր իր մանրիկ ափերով. ան կը շարունակէր իր հին խաղը: Ուրիշ մայր մը՝ ծալապատիկ եւ պզտիկը գիրկին մէջ՝ օրօր կ'ըսէր անոր, խելագարի շարժումներով ու եղանակով: Այս բոլորը թէ՛ կը տեսնէի եւ թէ՛ չէի տեսներ. հետզհետէ անելի ու անելի

պիճոյ կը սեղմէի մօրս ձեռքը, որ կը դողար: Երբեմն գըն-
դակներ կը սուլէին ու կը ծակէին կարծես ոչ թէ իրական
մարմիններ, այլ հարիրատոր բերաններէ բարձրացող
կանչերու, ճիչերու եւ գոռում-գոչումներու փոթորիկը:
Յանկարծ հսկայ մարդ մը նետուեցաւ մեր վրայ եւ այնպի-
սի ուժով թելէս բռնեց ու նետեց ինձի մէկ կողմ, որ լաթի
կտորի մը պէս քանի մը մէթոյ անդին ինկայ: «Մամա՛» ե-
ղաւ կտրծքէս դուրս թռչող միակ բառը: «Վահան, ճանս,
փախի՛ր, մի՛ կենար...», - ասոնք եղան մօրս վերջին խօսքե-
րը, որ ամբոխի իրարանցումին մէջէն ականջիս հասան:
Մամաս կորսնցուցած էի: Փախիմ, բայց ո՞ր: Քիչ մը հե-
ռուն Եփրատը կը հոսէր. Եփրատը, որ փախչող շարժում
էր եւ նոյն ատեն հազարատոյ հայերու գերեզման, կեանքի
յոյս դարձաւ իմ յուսահատ աչքերուս դիմաց: Հաւաքեցի
ուժերս եւ հրելով հրմշտկելով, սողալով ու սողոսկելով
ուղղուեցաւ դէպի գետը: Աստուած օգնեց ինձի. հասայ
ջուրին եզերքը առանց վիրատրուելու եւ ինքզինքս նե-
տեցի մացառներուն եւ թուփերուն ետին: Կէս մը մարած
էի: Երբ ուշքի եկայ, զգացի, որ ուսս կը ցաւէր սուկալի
կերպով: Մութը կոխելու վրայ էր. լացի եւ օգնութեան ձայ-
ները հետզհետէ բոլորովին մարեցան եւ կատարեալ լու-
թիւն տիրեց ամէն կողմ: Կծկտած էի թուփի մը տակ, մէկ
ոտքս ջուրին մէջ, միւսը՝ կակուղ աւազին: Չէի համարձա-
կեր շարժում ընել. այդ վիճակի մէջ քար կտրած՝ սպասե-
ցի, մինչեւ որ գետն ալ սեւցաւ: Անկարելի էր այլեւս երեք
քայլ անդին տեսնել: Այն ատեն, տարօրինակ վախ մը
մտաւ մէջս: Երբ վախս կ'ըսենք, կը կարծենք, թէ վախը մէկ
տեսակ է: Ո՛չ, տեսակ-տեսակ վախեր կան: Ամէնէն գէշը,
պզտիկի մը համար, չտեսնող, բայց զգացող վտանգ-
ներու վախն է: Մութին, անծանօթին, միանկութեան, հրէ-
շի պէս ոտքիդ տակ սողացող հսկայ գետին վախը: Ջուրը
կը տեսնես, մտելը կը շօշափես, հարուածը կ'ընդունիս.

ասոնք սարսափելի են ի հարկէ, բայց ո՛չ անտանելի. մայրդ քովդ է. կը սեղմուիս փէշին եւ կը կարծես, պաշտպանուած ես ամէն վտանգի դէմ. լոյս կայ վերջապէս, երթալիք ճամբայ մը, ընելիք բան մը: Իսկ իմ վիճակս մեռնելէն աւելի գէշ էր: Միս-միճակ՝ գիշերուան խառարին մէջ եւ ջուրերու պաղ հոսանքին դէմ: Միայն մայրս չէր կորստողը. կորսուած էի նաեւ ես: Հազար տեսակ գէշ պատմութիւններ կու գային միտքս: **Ժանտարմաներուն** դէմքերը հրեշտակի պէս կ'երեւէին այն ոգիներուն եւ սատանաներուն քով, որոնք կրնային մէկ վայրկեանէն միւսը գետէն դուրս ելլել, խուժել վրաս, խեղդել կամ ոտքիս կառչելով՝ ջուրին մէջ քաշել: Ամբողջ ուժովս չպոռալու համար շրթունքներս կը խածնէի: Միս կողմէ սակայն, մամայիս խօսքերը կը հնչէին ականջներուս մէջ. «Վահան, ճանս, փախի՛ր, մի՛ կեանար...»: Ո՞ր փախչէի, ինչպէ՞ս դուրս ելլէի, որո՞ւ քով երթալի, շարժելու ուժ չկար վրաս: Սկսայ հեկեկալ եւ կամաց-կամաց, հեկեկալով, քունս տարաւ:

- Հերի՛ք է,- ընդմիջեց լանկարծ Սեդրակին մայրը, արցունքները աչքերուն:- Ինչո՞ւ կը ստիպէք, որ յիշէ այդ անիծուած օրերը, տղուն կերածը քիթէն բերնէն եկաւ...

- Թո՛ղ, մամա, թո՛ղ շարունակէ, տեսնենք ինչպէ՞ս ազատեցաւ,- առարկեց Սեդրակ, ամբողջովին ուշադրութիւն կտրած:

- Թո՛ման է, ոռմա՛ն, օրերով պատմեմ՝ չի վերջանար,- ըսաւ Վահան, հպարտութեան մասնատր շեշտով մը. ուրախ էր ու շոյուած, որ ինք էր ուշադրութեան կեդրոնը եւ կարեկից երեք հոգիներ իր անտեսուած անձին անչաչտ պատմութիւնը մտիկ կ'ընէին: Գոհունակութեան անան առիթներ չէր ունեցած ո՛չ որբանոցին մէջ, ուր բոլորը բախտակից էին իրեն, ոչ ալ կեանքի ասպարէզին, ուր արհամարհուած խլեակ մըն էր ինք:

- Մենք ալ շատ քաշեցինք, տուն-տեղ կորսնցու-

ցինք, կտոր-կտոր եղանք, բայց մինչեւ Տէր Զօր չհասանք,- աւելցուց մայրը:- Լուսահոգի ամուսինս թրէնի պաշտօնեայ էր: Ի՛նչ օգուտ. կրցաւ մեզ ազատել, սակայն ինք չազատեցաւ:

- Ով որ Տէր Զօրը չտեսաւ՝ կրնայ վստահ ըլլալ, որ բան չէ տեսած,- վրայ բերաւ Վահան անհամբեր:- Երկու օր երկու գիշեր մնացի Եփրատի ափին, քարերու եւ մացառներու ետին պահուղտած: Երբեմն տեղս կը փոխէի՝ նոր բոյս մը, ծառի կակուղ արմատ մը, կանաչ խոտ մը ճարելու համար: Ծատ անգամ մինչեւ մէջքս ջորին մէջ խրած կը սպասէի: Ականջներս տարօրինակ ձայներ կը լըսէին, որոնց ամէնէն սովորականը շնագայլերու ձայներն էին: Ատոր ալ վարժուեցայ: Սովորական գրադումներէս մէկն էր Եփրատին հետ հոսող դիակները դիտել: Որքա՛ն շատ էին անոնք. ոմանք ոռած փորերով, դանդաղօրէն կը ծփային ջորին երեսը ու չէին հեռանար կարծես: Ոմանք հագի երեցած՝ կ'անհետանային մէկ վայրկեանէն: Խումբով եկողներ ալ կ'ըլլային. քով-քովի, իրարու փակած, մէկուն գլուխը միւսին թեփն տակ անցած: Ասիկա մաման է, կ'ըսէի, ասիկա՛ տղան եւ այդ մէկն ալ՝ քոյրիկը: Յաճախ ինծի այնպէս կը թուէր, թէ ողջ եմ, կը լողան եւ շուտով միւս եզերքը պիտի անցնին, պիտի ազատուին: Իրաւ ալ կը մօտենային եզերքին, կը զարնուէին քարերուն, պահ մը կ'անշարժանային, ինքն իր վրայ կը դառնային եւ նորէն կը շարունակէին հոսիլ, ծփալ, տակը իջնել, վրան ելլել ու դարձեալ հոսիլ... Մանուկի խելք. մտքիս մէջ մրցում ընել կու տայի նոյն գիծին վրայ գտնուող երեք կամ չորս մարմիններուն եւ կը նայէի, թէ ո՛ր մէկը առաջ պիտի անցնի: Անգամ մը սակայն, գիշերուան մօտ, շատ վախցայ: Դիակները իմ կողմս կու գային, ուղղակի վրաս կը խուժէին, ոտքերուս կը զարնուէին, ինծի կը փաթթուէին եւ ինձմէ օգնութիւն կ'ուզէին կարծես: Իրական կոհի մը սկսաւ իմ եւ

անոնց միջև: Արիւն քրտինքի մէջ մտած՝ կը դիմադրէի շարժող մեղեկներու այս յարձակումին. ձեռքով, բռունցքով եւ ծունկերով դէպի գետին բացերը կը հրէի զանոնք. «Գացէ՛ք, չե՛մ ուզեր, ես ձեզի հետ չեմ գար, ես պիտի փախչիմ, մամաս ըսաւ, որ ես պէտք է փախչիմ», - կը մրմնջէին շրթունքներս: Մամա՛ս: Յանկարծ լոյս մը ծագեցաւ մտքիս մէջ: Չըլլա՞յ թէ մայրս ալ դիակներու կոյտին մէջ էր, ինծի կը դիմէր ու ես ետ կը հրէի... վայրկեանական զոջումի մը հետ՝ կորսուած ուժերս վերադարձան եւ սկսայ որոնող աչքերով քննել մօտէս անցող մարմիններու այլանդակուած դէմքերը: Ծառ դժուար էր զանոնք իրարմէ զանազանել. ոչ անոր համար, որ արեւը մարը մտած էր շատոնց, այլ որովհետեւ բոլորն ալ կիներ ու երեխաներ էին, նոյն պատուած հագուստներով, ջուրին վրայ փռուած նոյն ծփացող մազերով եւ գետը կը պահէր ինձմէ անոնց աչքերը: Ուրիշ անգամ մը, քանի մը քալլ անդին, ուշադրութիւնս գրաւեց կին մը, որ չէր հեռանար: Մարմինը կորսուած էր ալիքներու տակ, բայց գլուխը դուրս կը մնար: Ասիկա անպայման մայրս ըլլալու է, խորհեցայ, ինծի կը փնտռէ ու չի գտներ: Խենթի պէս նետուեցայ վրան եւ հագի մօտեցած՝ սարսափի խեղճուկ ճիչով մը ետ քաշուեցայ: Սուրի կամ կացիճի հարուածի մը տակ դէմքը երկուքի ճեղքուած էր, բերանը խոռոչի մը պէս լայն բացուած, աչքին մէկը արիւնով լեցուն, միւսը ապակիէ գնդիկի նման կարծր ու սառած:

- Է՛հ, մա՞րդ էր, ճանչցա՞ր, - չհամբերեց Սեդրակ:

- Չեմ գիտեր, չհասկցայ, չնայեցայ: Մազերը կտոչած էին ջուրին վրայ երկարած ճիւղի մը փուշերուն: Գիտեմ միայն, որ առանց մտածելու թէ ինչ կ'ընեմ՝ մատներս խզեցին մազերուն հանգոյցը ու մարմինը սկսաւ շարժիլ: Ան ալ անթաղ չմնաց. չզրկուեցաւ Եփրատի հսկայ գերեզմանի հանգիստէն... Այսօր երբ կը վերջիջեմ գինք՝ երախտագիտութեամբ կը լեցուիմ իր հանդէպ: Այդ կինը ազատեց

կեանքս. այո՛, մի՛ զարմանաք, այդ ստուած աչքը ազատեց
իճծի: Եթէ ան չըլլար, դեռ երկար կը մնայի թերեւս եղած
տեղս, առանց դուրս գալու համարձակութեան: Եւ ո՛վ գիտէ
թէ ի՞նչ կ'ըլլայի: Կամ սովամահ եւ կամ հրացանազարկ:
Բայց այդ պատկերը տեսնելէ ետք՝ ալ չհամբերեցի. որոշե-
ցի դուրս գնալու եւ հեռանալ. փախուստ տալ անմիջապէս,
առանց տատամսելու, կարելի եղածին չափ շուտ: Աստուա-
ծային կարգադրութեամբ քովս եկած էր այդ կինը. որքան
ալ անհաստատի թուի՝ մտնել մը դարձաւ իմ ազատարարս:

Վահան կը խօսէր հեասպառ շունչով. երբեմն չոր
հագ մը միայն կու գար խանգարել մախադասութիւններուն
անճիգ արտաբերումը: Աչքերը կը վառէին եւ երեսներուն
կարմրաւուն արատը քիչ մը անելի խոշորցած կ'երեւէր:

- Ասիկա երկրորդ փախուստս եղաւ,- շարունակեց
խոր շունչ մը առնելէ ետք:- Առաջին անգամ փախայ ողջե-
րուն հալածանքէն, երկրորդին՝ մեռելներու առջեւէն: Հիմա
եթէ հարցնէք, թէ ո՞ր ուղղութեամբ գացիր, ո՞ր ճամբան
բռնեցիր չեմ կրնար յստակ բան մը ըսել: Նախ բաւական
տեղ մը քալեցի գետին քովէն, գետին հետ մէկտեղ. յետոյ
ջուրը եզերող ամբարտակը ճեղքուած գոյաց եւ այդ ճեղքի
փլած քարերուն վրայէն սողալով դուրս անցայ: Գիշեր էր
արդէն. մարդ մարդասանք չկար շուրջս: Սկսայ դէպի ա-
նասպառ, դէպի ամայի դաշտերը առաջանալ: Սրունքներս
կը ծալուէին յոգնութենէս. փորս թմբուկի պէս ոռած էր,
ոտքերս թեւ մերկ՝ բայց ցաւ չէին զգար աւազին վրայ:
Մարդ պարսպ տեղ կը կարծէ, թէ ուժասպառութենէ կըր-
նայ գետին իյնալ: Որքան ալ ուժասպառ ըլլաս, ուժի ան-
սպասելի նոր պաշար մը կը գտնես միշտ, երբ կեանքդ ա-
զատելու յոյս ունենաս: Բալեցի մէկ կտոր, մեծ մարդու խո-
շոր քայլերով, երթալիք տեղը գիտցողի մը պէս: Ա՛խ, եթէ
ուտելիք գտնէի, մի՞նչեւ Պաղտատ կրնայի քալել այդպէս:
Բայց անօթութենէն սիրտս կ'անցնէր: Բաւական երթալէ

ետք ծարաւն ալ անտանելի դարձաւ: Զարմանալի է. ջորին եզերքը եղած միջոցիս գրեթէ խմելու փափաք չէի ունենար. հիմա որ ջուր գտնել կարելի չէր՝ սաստիկ ծարաւ կը զգայի, բերանս կը չորնար: Չերկարեմ. առտուան դէմ ըլլալու էր, երբ հեռուն լոյս մը նշմարեցի: Որքան մօտեցայ, այնքան լոյսը խոշորցաւ: Ծուներու տկար հաջոցները երթալով գօրացան: Վերջապէս դէմ առ դէմ եկայ պետէուիի մը, որ գէնքը վրաս ուղղած կը սպասէր: Մօտէն լաւ մը քննել վերջ ինձ, գէնքը վար իջեցուց: Տարիքոտ հովիւ մըն էր եւ քանի մը բառ թրթրէն գիտէր: Ծառ բան ըսելու պէտք չեղաւ. մարդը վիճակէս ամէն ինչ հասկցաւ: Բռնեց ձեռքէս, ոչխարներուն մօտ տարաւ, խոշոր աման մը կաթ կթեց եւ լաւաջ հացի մը հետ դրաւ առջեւ: Բնաւ պիտի չմոռնամ այդ վայրկեանը. նոր ծնածի պէս էի: Թէ՛ կ'ուզէի լալ եւ թէ խնդալ: Հաց, կաթ եւ մէկը, որուն աչքերուն մէջ սպաննելու դիտաւորոյթուն չկար: Արաք հովիւը լետոյ ինձի իր վրանը տարաւ եւ ճամբան յայտնեց, թէ քրոջս քով կը տանի: «Բո՞յր. ես քոյր չունէի. շատոնց մեռած էր խեղճ Սոնան: Զայն չհամեցի եւ կատարեալ վստահութեամբ հետեւեցայ իրեն: Երբ վրանին տակ մտանք, մարդը դարձաւ պետէուի շատ երիտասարդ աղջկան մը եւ ըսաւ. «Ես՝ Մ'երիէմ, եղբայրդ բերի»: Աղջիկը հայ էր, ինձի պէս հրաշքով ողջ մնացած որբունի մը: Ժամանակ մը ետք հասկցայ, թէ տարիքոտ հովիւին կինն էր խեղճ Մարիամը: Իրական քոյր մը եղաւ ան ինձի համար եւ հարազատ քրոջմէ անելի սիրով խնամեց հիւանդութեանս ատեն... Պատմելով չի լրանար: Այսքանը միայն անելցնեմ, որ բաւական երկար ժամանակ արարներուն մօտ մնալէ ետք, Մարիամը եւ ես միասին փախանք: Ան ողջ է հիմա, Հայէպ կը գտնուի եւ ամուսնացած է հայ տղու մը հետ:

- Աս տղոց տեղը քար ըլլար կը հալէր. ինտո՞ր ալ դիմացան. մեռնիմ Աստուծոյ զօրութեան, - բարձրաձայն խորհրդածեց մաման եւ վահանին դառնալով անելցուց, -

խելքի գլուխդ պէտք է հաւաքես. այսքան չարչարանքներէ ազատելէ վերջ՝ նայէ՛ որ հոգ տանիս առողջութեանդ եւ մա՛րդ դառնաս. տանդ օճախը դուն պիտի վատես:

Գիշերը յառաջացած էր արդէն եւ անձրեւը դադրած. վահան ոտքի ելաւ, ներողութիւն խնդրեց տնեցիներուն գլուխը ցաւցուցած ըլլալուն համար եւ շալկեց ներկատուփը:

ՄՈՓԱԿԱՆ ՀԱՅԵԼԻՆԵՐ

Պայծառ առաօտ մըն էր: Դամասկոսի այն լուսաւոր օրերէն մէկը, երբ երկինքին խորունկ կապոյտը զարնան պատրանքը կու տայ եւ արեգակի քաղցր ջերմութեան տակ աշնանային տերեւաթօսի ծառերն իսկ կը փորձուին նոր ծիլեր արձակել՝ մոռնալով վերահաս ձմրան ցուրտն ու քամին:

Սեդրակի հոգին նոյնպէս երկնքի պատկերով կը շողար: Իր անցքը ծանուցող պոյաճիի սովորական կանչը հրճուալից ու տեսական երգի մը վերածելու պահանջքը կը գգար: Իր դերին գիտակից եւ իր վիճակին հետ հաշտ՝ ոչ մէկուն դէմ տրտունջ ունէր: Ուսէն կախուած սնտուկը փետտորի մը պէս թթթէ կը կշռէր ու քայլերը ուստուստուն խենթութիւններ կ'ընէին հարթ ճամբուն վրայ: Կը սուլէր ու ոտքով քարեր կը թոցներ գետնէն: Մասնաւոր պատճառ մը ունէ՞ր ուրախ ըլլալու: Անդրադարձաւ, մտածեց, քննեց եւ ոչինչ գտաւ: Նոյն պոյաճին էր, գոգնոցը կործքին եւ շարժուն կրպակը ուսին: Կրնար շահր չներդաշնակուիլ առատահոս լոյսի շոպլանքին կամ գերազանցել զայն: Այդ չէր մտածումին առարկան: Լաւ բան մը, լաւ պատահար մը, լաւ հանդիպում մը դիմաւորներու նախագգացումով կը յորդէր հոգին, քանի կը մօտենար ծանօթ ու նուիրական փողոցներու:

Ինչպէ՞ս համարձակած էր, իր այդ կերպարանքով, Չարուհիէնց տան թաղամասի փէշերուն մերձեւալ: Ի՞նչ ակնկալութիւն եւ ինչո՞ւ համար: Չարուհին դպրոցական օ-

րերու իր ոսկեմատեանի էջերը զարդարող լուսապատկեր մըն էր լոկ եւ այդ մատեանին հետ փակուած, անհետացած, յո՛ւշ դարձած քաղցրութիւն մը: Յիմարութիւն չէ՞ր զայն դպրոցի ամբողջութենէն բաժնելով իրեն վերապահելու յոյսը: Կարելի՞ էր միթէ պատկերը գիրքէն մկրատել, առանց խորտակելու անոր դաշնաւոր հրապոյրը: Մինչեւ իսկ եթէ կարելի ըլլար, ի՞նչ վերաբերում պիտի գտնէր ընկերուհիին մօտ: Ո՞ր աղջիկն է, որ հին օրերու ժպտով պիտի ուզէր ժպտիլ նորէն պոյաճիի մը այլափոխ դէմքին:

Սեդրակ տարտամ, բայց արագ անդրադարձումը ունեցաւ այս հարցումներուն, միեւնոյն ատեն առաջ ընթացալով՝ անդիմադրելի մղումէ մը քշուած: Երկարատեւ տարագրութենէ վերադարձողի մը այրող կարօտը կը փոթորկէր իր հոգին: Կարօտը հին վայրեր տեսնելու, ընտանի միջավայր ոգեկոչելու, կորսուած մանրամասնութիւններ վերապրելու:

Հանդարտութիւն մը իջաւ վրան, երբ մտաբերեց, որ այդ պահուն չէր կրնար Զարուհիին հանդիպիլ. ժամը իննի կը մօտենար եւ ան, հիմա դասարանի սովորական իր անկիւնը, խարտեաշ գլուխը հակած պէտք է ըլլար տետրակի մը վրայ: Ծանր վտանգէ մը ազատուողի պէս, Սեդրակ վճռաբար ուղղունեցաւ իր նպատակին: Քաղաքի ամենէն անուշ եւ առիւնքնող բնակարանը կանգնած էր դիմացը: Ահա՛ այս դռնէն ներս կը սահէին Զարուհիին թեթեւ քայլերը, երբ իրիկունները դպրոցէն իրեն կ'ուղեկցէր երբեմն, խօսելով յաջորդ օրուան պարտականութիւններու մասին: Այս պատուհանին տակ կը գտնուէր գրասեղանը, որուն շուրջ յաճախ նստած էին միասին դաս բացատրելու պատրուակով: «Ի՞նչ շուտ կը թռչին կ'երթան գարնան անուշ օրերը», - փիլիսոփայեց Սեդրակ ու սրտի կծկում մը ունեցաւ: Հազիւ կրցաւ զսպել «պոյաճի՛» պոռալու մեքենական պոթկումը շրթներուն, որ կեանքին դէմ

բերան բանալ կու տար վո՛ւժխնդիր ծաղրի մը նման: Սարսափեցաւ մտածելով, որ յանկարծ վարագորտուած պատուհանը կը բացուի դիմացէն եւ ներսէն մէկը գոյգ մը կօշիկ կը նետէ իր առջեւ: Սարսափը գլխու պտոյտ տուող շփոթանքի վերածուեցաւ շուտով, երբ «քաղաքի ամենէն անուշ բնակարան»ին դուռը ճոճչեց եւ Ջարուհին յայտնուեցաւ իբրեւ հեքիաթի իշխանուհին: Երա՞զ էր թէ իրականութիւն: Սեդրակ ակնթարթ մը տատանեցաւ ոտքերուն վրայ: Բարեւէ՞ր, անտարբէ՞ր ձեւանար: Ինչ որ կրցաւ ընել՝ օրհասական վայրկեաններու պահանջած հերոսութենէն շա՛տ հեռու մնաց: Սեդրակ հասարակ մահկանացուներու պէս ընտրեց նահանջի ճամբան, անկիւնի դարձուածքին մէջ նետելով ինքզինք:

Ուշացած ընկերուհին, պաշուսակը թեւին տակ, դարոց կ'երթար...

Պոյանին փլաւ աթոռակին վրայ, ամօթահար եւ ըզզետնուած: Վայրկեան մը ետք, ճակատը շփեց, աչքերը մոռթկեց ու հաշուի նստաւ ինքն իրեն հետ:

Տեսիլքը անհետացած էր, բայց բոյրն ու շլացքը կը մնային տակաւին: Ինք որ անխոստովանելի պահանջքով մաղթած ու գրեթէ փնտրած էր այս հանդիպումը, հիմա կը զղջար: Ջարուհիին ակնթարթային շարժումներն իսկ բացատրիկ նշանակութիւն սկսան տտանալ իր աչքին: Այո՛, տեսած էր զինք, չէր կրնար չտեսնել, քանի որ հագիւ քանի մը քայլ հեռու էին իրարմէ: Ուրեմն ինչո՞ւ չծպտեցաւ, ինչո՞ւ բարեւելու փորձ մը չըրաւ: Մի՞նչէի իսկ կարծես, թէ ուզեց գլուխը անդին դարձնել եւ չտեսնելու զարնել իր բռնողնկած գոյութիւնը: Բայց իսկապէս ո՞վ էր մեղաւորը: Կրնա՞ր վստահօրէն պնդել, թէ աղջիկը խուսափած էր իրմէ: Ինչո՞վ արդարացնել իր ծիծաղելի փախուստը: Եթէ շարունակէր բնական ընթացքը, եթէ յառաջանար հանդարտ քալուածքով դէպի ընկերուհին, ո՞վ ըսաւ, թէ ան է-

րես պիտի դարձնէր իրմէ: Ո՞ւր պահէր սակաչն կոնակի՞ն կուզը, որ այդ վայրկեանի՞ն ճանկոտող պալարի մը մնան մագիլներ կը նետէր մինչեւ իր սիրտը: Ո՞վ էր ինք - կօշիկ սրբող փողոցի լակոտ մը: Դասարանին մէջ դէռ բան մը կը ներկայացնէր. քննութիւններու ատեն փրկութեան լաստ կը դառնար, որուն կը յատէին շատերու հետ նաեւ Զարուհիի աղաչական նայուածքները: Իսկ հիմա՞...

«Ասպարէզը հիմա Հրայրին մնաց,- եզրակացուց Սեդրակ դառն համակերպութեամբ:- Առանց մրցակիցի՝ ան կրնայ տիրապետել թէ՛ դասարանին եւ թէ Զարուհիի սրտին: Իրատւոյնը զօրատրին է»:

Գլուխը կախ, վարի շրթունքը ծամելէն, սնտուկէն ատելի ծանր մտմտութիւններու բեռան տակ կքած, ազգային վարժարանի նախկին աշակերտը փողոցն ի վար յառաջացաւ քայլամուտ: Ոտքերը բնագոյ ունին սակաչն եւ գրիխու տիրապետութենէն ազատագրուելով՝ երբեմն ատելի պայծառատես վստահութեամբ կը գտնեն իրենց ճամբան: Եւ Սեդրակի ոտքերը ուղղուեցան դէպի հոն, ուր գացեր էին տարիներ շարունակ, երբ կեանքը զինք կը կանչէր զանգի մը ոսկեհունչ ղօղանջիւնով:

Կանգ առաւ փողոցին ծայրը: Նոյն զանգին ծանօթ ձայնը կը թրթոսար ականջներուն մէջ: Ո՛չ, զգայախաբութիւն չէր ինչ որ կը լսէր. ոչ ալ յիշողութեանց խօսուն արձագանգը: Դպրոցը դիմացն էր, տասնեակ մը մեթօր անդին ու զանգակը կ'օրօրուէր բակը շրջապատող աչ պատին վրայ: Սեդրակ նստեցաւ եղած տեղը, առանց քայլ մը եւս յառաջանալու: Ապահով էր դիրքը իբրեւ թաքստոց եւ իբրեւ դիտարան: Ինք կրնար աշակերտներու շարժումներուն հետեւիլ զբօսանքի պահուն եւ մնալ աննշմար:

Խաղացող տղոց պոռչտութիւն ու աղմուկը, զանգի ղօղանջին պէս, իրեն կը հասներ խեղդուած եւ ընդհատ ալիքներով: Դէռ երէկ այդ եռուզեռին մէջ, այդ ակելոյզ ծո-

վուն մէկ մասնիկը, հիմա դուրս գետուած խլեակ մըն էր ինք, որ իրաւունքն ու համարձակութիւնն իսկ չունի անոր ափունքին մօտիկնալու: Ներկի սնտուկը եւ ներկերուն չափ թանձր ու տղմուտ կեանքը եկած տեղաւորուած էին իրենց միջեւ:

Չանգալը հնչեց կրկին, աշակերտները խոնուեցան սանդուղին առջեւ եւ յետոյ վեր վազեցին: Սեդրակ տեսաւ, թէ ինչպէս անոնցմէ մէկը խելառ ուտումներ կատարեց եւ իր անցքին վրայ տապալեց մէկ-երկու հոգի: Օճնիկն է անպայման, բնաւ չէ փոխուեալ,- մտածեց պոյաճին ու ժպտեցաւ: Քիչ ետք բակը պարպուեցաւ, դասարաններու դռները փակուեցան իրարու ետեւէ եւ փոթորկուն ձայներու հետաւոր որոտը լոնց մէկ անգամէն, կախարդանքի մը ուժով կարծես:

Սոսկալիօրէն միմակ ու տխուր զգաց ինքզինք: Միմակ, լքուած եւ հալածակամ: Բոլոր ընկերները հոն էին, քիչ մը անդին, քով-քովի միեւնոյն յարկին տակ: Չարուհին ալ անոնց մէջ էր: Ինք միայն պիտի մնար դուրսը ու պքտար փողոցէ փողոց: Աչքերուն դէմ արձանացաւ իր անձը կենդանի ու վառ գոյներով եւ զարմանքով հաստատեց, որ այդ անձը կը ներկայանար աղքատ տղու մը կերպարանքին տակ, ցնցոտիներ հագած, տոպրակ մը ուսին, դասարանի մը կիսաբաց դրան առջեւ, տրտմալի նայուածքը ներսի աշակերտներուն յառած: Անդրադարձաւ իսկոյն, որ ակամայ ոգեկոչեալ էր իրենց դպրոցի սրահին մէջ կախուած նշանատր այն նկարը, որուն եղերական խորհուրդին նոր կը թափանցէր, իր իսկ ճակատագիրին օրինակով: Նկարի տղուն եւ իր միակ տարբերութիւնը անոր մէջ էր, որ ան մախաղ մը կը կրէր ուսին, իսկ ինք՝ ներկատուի մը: Բայց երկուքն ալ անհաս կարօտով ստիպուած էին ուտումնարանի դրան մօտենալ եւ գողունի նայիլ անկէ ներս:

Սեդրակ բացաւ սնտուկի պահարանին կափարիչը, որուն կոնակին կարմիր գիծերով զարդարուած թուղթ մը

փակցուած էր: Աչքերը խոնացան արցունքի տաք շոգիով եւ մատները դողացին: Քառակուսի այդ թուղթը դասացուցակն էր, զոր պոյաճին ամրացուց կափարիչի ներսի կողմը, բոլորի աչքէն հեռու, իբրեւ սրբութեան մատուց մը, առանձնութեան պահերուն երբեմն բանալու եւ հեռուէն դասարանի կեանքին հետեւելու համար: Գիրքերն ու տետրակները պայուսակին հետ տան մէկ անկիւնը նետած ատեն, չկրցաւ բաժնուիլ զարդարուն թուղթի այդ կտորէն, որ վերջին լուշարարը պիտի դառնար անցեալի երջանիկ ժամերուն: Տղայութիւն՝ ի հարկէ: Բայց ի՞նչ է ըրածը մեծերուն, աւելի խելօքներուն, որոնք Սէրը կորսընցընելէ ետք՝ սիրոյ գունաթափ եւ անշարժ ստուերը կը պըտըրոցնեն իրենց գրպանին մէջ, պատկերի մը վրայ: Սեղրակի համար դպրոցը ներկայ սէր մը եւ հեռակալ ջբեղ երազ մը նոյն ատեն, զոր անողոք աշխարհը խլեց իր բազուկներէն: Ինք հաւատարմութիւն ուխտած էր սակայն, անխախտ երդումի յաւերժական հաւատարմութիւնը, նոյնիսկ պոյաճիութեան թշուառ լքումին մէջ:

Հինգշաբթի, երկրորդ պահ: Սեղրակ մատը դրաւ դասացուցակի չորրորդ սիւնակին ու կարդաց. «Հայերէն»: Պահը իր լետին մանրամասնութիւններով վերակենդանացաւ, խուժեց վրան, լեցուց ամայի փողոցը եւ գրկեց զինք: Անոնք որ նոյն վայրկեանին, գրասեղաններու առջեւ նստած, կը հետեւէին դասին, գուցէ այնքան յստակ չէին տեսներ ուսուցիչին դէմքը, որքան տեսաւ եւ ըմբռնեց ինք: Պարոն Պօղոսեանի հեզնաժպիտ ու մելամաղձոտ աչքերը լաւեցան իր աչքերուն եւ անոր սիրելի ձայնը քաղցր երաժշտութեան մը պէս հնչեց կրկին. «Գտէ՛ք այս բառին հոմանիշները... ո՞վ կրնայ ըսել, թէ մեր կարդացած կտորին հեղինակը ի՞նչ գործեր արտադրած է...»:

Սեղրակ պոյաճիի արձուէն վեր ցատկելու, ձեռք բարձրացնելու փորձութիւն մը հազիւ զսպեց եւ սարսուտ

մը անցաւ ոսկորներէն: Ի՛նչ խենթ էին ինք եւ ընկերները իրենց աններելի ծուլութեամբ, չարութեամբ եւ անտարբերութեամբ: Մարդ արդէն իր ունեցածին արժէքը կորսնցրնելէն ետք միայն կը հասկնայ: Իրատունք ունէր պր. Պօղոսեան, երբ գիրքերը անդին նետելով գաշալից կը բացականչէր երբեմն.

- Մե՛ղք սպառած շունչիս, մե՛ղք ազգին յոյսերուն. դուք մարդ պիտի չըլլաք...

Ուսին իջնող զօրեղ թաթի մը հարուածէն անակընկալի եկած՝ Սեդրակ ետին դարձաւ եւ զարմանքով տեսաւ Աւետիսը, որ խորհրդաւոր լուծեամբ իրեն կը նայէր: Սեդրակի առաջին շարժումը եղաւ ներկատուփի կափարիչը գոցել եւ դասացուցակը անհետացնել:

- Պարսպ տեղ իրար մի՛ անցնիր, գաղտնիք չէր պահածդ,- ըսաւ պաշտօնակիցը:

- Պահելիք բան չունիմ:

- Գիտե՛ս, բայց կարմրելու պատճառ մըն ալ չունիս. դժուար չէր գուշակել թէ ի՛նչ կրնար ըլլալ սնտուկիդ սրտին գաղտնիքը: Ամէն պոյաճի իր նախասիրութիւններուն համեմատ թուղթ մը կը փակցնէ հոն, քանի մը ամիս ետքը պատռելու համար: Վահանը, օրինակ, մօրը պզտիկ մէկ պատկերը գամած է, որ պատկերէ զատ ամէն բանի կը նմանի: Իսկ Արսէնը քով-քովի շարած է մերկ աղջիկներու պատկերներ, որոնք, գիտես, զինուորական մելիս սիկարէթներուն փաթէթներէն կ'ելլեն:

- Զու սնտուկինդ չըսիր:

- Իմի՛նիս սիրտը մաքուր է: Ես չեմ սիրեր դուրսէն տեսակ մը երեւիչ, ներսէն ուրիշ տեսակ: Պոյաճի եմ եւ պոյաճի ալ կը մնամ, լմնցաւ գնաց:

Սեդրակ դառնութեան շեշտ մը նշմարեց Աւետիսի խօսքին ու ձայնին մէջ եւ հարց տուաւ մտահոգ.

- Ասիկա յանցա՞նք է արդեօք:

- Չեմ ըսեր յանցանք է, բայց ի՞նչ պետք ունիս դասացուցակ պտտցնելու հետո, քանի որ դպրոցը ձգած ու հեռացած է: Արսէնը գիշեր-ցերեկ մերկ սրունքներ կ'երազէ, չի գտներ եւ անոնց փոխարէն մերկ պատկերներուն վրայ հոգին կը հասցնէ. դուն վարժարան կ'երազես, ձեռքդ չ'անցնիր եւ դասացուցակ դիտելով կը մխիթարուիս: Բուժուեցէ՛ք եղբայր, այս հիւանդութենէն: Անկեղծ եղէք, շիտակ քալեցէք եւ ձեր գործին նայեցէք:

- Չեմ հասկնար...

- Չե՞ս հասկնար. ինչո՞ւ կը թափառիս այս փողոցներուն մէջ, ի՞նչ գործ ունիս հոս. յաճախո՞րդ փնտրելու եկած ես թէ յիշատակներ որսայու...

- Անանկ, կը քալէի աննպատակ, մի՞նչեւ հոս հասայ:

- Ո՛չ, սո՛ւտ կը խօսիս, դուն պոյաճի չես, կ'առջնաս պոյաճի ըլլալուդ. մեր մէջ ինկած՝ վերէն կը նայիս մեր վըրայ. սիրտդ հո՞ն է. այդ շէնքէն ներս: Կ'ըսես, թէ երկար ժամանակ բանտ պատկած մէկը, երբ բանտէն արձակուի, աստե՞նը մէջ մը այցելութիւն կու տայ անոր եւ կը սիրէ բանտի պատերուն շուրջ դառնալ...

- Ինչե՛ր կ'ըսես, Աւետիս, դպրոցը բանտի՞ հետ կը բաղդասես. դուն ալ ինձի հետ հոն էիր եւ իմ բախտիս արժանացածներէն ես:

- Ա՛հ , մի՛ խօսիր այդ մասին, կ'ատեմ այս շէնքը, որ հոգիս կերակրելու համար արիւնս քամեց եւ յետոյ քորջի կտորի մը պէս դուրս նետեց ինձ: Չեմ ցափր ելած ըլլալուս. երանի թէ բնա մտած չըլլաչի:

- Է՛հ, ամէն մարդ ուսումի յարմարութիւն չ'ունենար: Ոմանք ալ կեանքի մէջ կը յաջողին:

- Ուսումի յարմարութի՛ւն... այո՛, ես՝ յարիտենական ընդօրինակողս՝ քառակուսի ապուշ մըն էի, այնպէս չէ՞: Ուսուցիչներուն եւ ձեր բոլորին կարծիքով՝ իշու գլուխ մը:

- Ես ատանկ բան չեմ ըսած քեզի:

- Ձեռ ըսած, բայց մտածած ես. շարունակ լսած՝ ըտողներու բերնէն: Բի՞նչ խնդացած էք դասարանով վրաս: Ո՞վ հետաքրքրուած էր սակայն, թէ ի՞նչ պայմաններու մէջ դպրոց կու գայի, ինչո՞ւ տետրակներս միշտ աղտոտ էին, ինչո՞ւ բան չէի հասկնար դասերէն... Երբ կը յիշեմ այդ օրերը, շունչս կը բռնուի: Չէի բողոքեր, չէի բարկանար, մարդու բան չէի ըսեր, ակռաներս կը սեղմէի, բայց ե՛ս միայն գիտեմ, թէ ի՞նչ կը քաշէի: Ամբողջ օրը, նստարաններուն վրայ, գլուխս կը դառնար անօթութեան: Կէսօրուան ճաշին փողոցները կը թափառէի եւ առանց պատահո մը բան ունելու դպրոց կը դառնայի նորէն, որովհետեւ գիտէի, թէ տունը ուտելիք չկար: Գիշերները՝ քոյրերուս լացը եւ մամայիս ու պապայիս կոխը: Չքատրութեան լաց եւ չքատրութեան կոխ: Ո՛չ սեղան, ո՛չ աթոռ եւ ոչ ալ շնորհքով լոյս՝ աշխատելու համար: Եթէ նոր տետրակ մը ձեռք անցնէի՝ կը կարծէի, թէ Նոր Տարի է ու կաղանդ Պապան այցելած է մեզի: Կրծուած մատիտներէս եւ պատըռտած հագուստներէս ամչնալէն գետինը կը մտնէի: Դպրո՛ց... ուսո՛ւմ... ո՛չ, ես քառակուսի ապուշ մը չէի, ոչ ալ հաստ գլուխ անպէտ արարած մը...

- Բայց, Աւետի՛ս, կը կարծէիք, թէ դուն մեր մէջ լալիճակ ունեցողներէն ես. հայրդ գոնէ ողջ էր եւ մինչեւ իսկ կաթօ կը ծախէր:

- Ծա՛ղր մըն ալ այդ կաթօներուն պատմութիւնը: Կ՛աղաչէի, որ դպրոցին չմօտենայ. խեղճ մարդը սակայն, հիւանդ ու դողդոջուն, ժամերով ոտքի կը սպասէր դպրոցի դրան առջեւ, որպէսզի աշակերտներուն քանի մը կտոր կաթօ ծախէ: Տղաքը կ՛ըսէին ինծի. «Երանի՛ քեզի, Աւետիս, պապադ կաթօճի է, ուզածիդ չափ կաթօ կ՛ուտես»: Համը գիտէի՞ արդեօք: Պապաս ճերմակ ու շաքարոտ կաթօներ կը ծախէր, որ տունը ընթրիքին կտոր մը սեւ հաց ունենայինք...

Անսպասելիօրէն լաճախորդ մը ներկայացաւ եւ կո-

խեց Աւետիսի սնտուկին: Խօսակցութիւնը ընդհատուեցաւ: Սեդրակ երախտապարտ էր ընկերոջը աշխուժ մատնէրուն տակ փայլ ստացող կօշիկներուն, որոնք վերջ տուած էին անախորժ վիճակի մը: Լուսկեաց եւ անայլայլ Աւետիսէն երբեք մման խոստովանութիւններ չէր սպասեր եւ այդ պատճառով ալ չէր գիտեր ի՛նչ դիրք բռնէր: Ուրախութեամբ դիտեց Աւետիսի դէմքին կերպարանափոխումը, որ խոզանակի իրաքանչիւր հարուածին հետ աւելի կը պայծառանար:

Երբ յաճախորդը մեկնեցաւ, նախկին դասընկերները շալկեցին իրենց ներկատուիները:

- Դուն լաւագոյն պոյաճի՛ն ես, Աւետի՛ս, ո՛չ մէկերնիս կրնանք հասնիլ քեզի,- ըսաւ Սեդրակ՝ նիւթը փոխելու անկեղծ ցանկութեամբ:

- Չէ՞ որ ամէն մարդ ուսումի յարմարութիւն չ'ունենար: Զգեցէք, որ ինձի պէսներն ալ կեանքի մէջ յաջողին,- դիտել տուաւ Աւետիս դառնութեամբ:

- Կատակ չեմ ըներ, իրապէ՛ս հիանալի խոզանակ ունիս. ուրիշ է քու զարկած ներկիդ փայլը. դուն մեռած կօշիկն իսկ կ'ողջնցնես...

- Կը սխալիս՝ եթէ կը կարծես թէ կը վիրաւորուիմ. պատիւ է ինձի համար գործիս մէջ լաւագոյնը ընել եւ լաւագոյնը ըլլալ: Պոյաճիութիւնը գործ մըն է: Հաց կ'ուտենք այս սնտուկին երեսէն: Պր. Պօղոսեանը դուն մի՛ նետեր. աղուոր խօսքեր ունէր երբեմն: Իր տուած դասերէն շատ բան չեմ յիշեր թէն, բայց ականջիս օղ եղած է իր սա խրատը. «Ինչ որ ընէք՝ լաւ ըրէք: Փողոցները մաքրող աւելածու իսկ ըլլաք՝ լաւը եղէք: Գողին ու աւազակին անգամ լաւագոյնը ի պատուի է»: Կը յիշե՞ս հովանատրիդ այդ ճառը:

- Կը յիշեմ, Աւետիս:

- Աւելածու չեղանք, բայց պոյաճի դարձանք: Երկուքն ալ սրբել ու մաքրել ըսել է՝ խոշոր տարբերութեամբ

մը: Պոչաճիութիւնը ապագայ ունի իր առջեւ, կրնայ քեզ հասցնել մինչեւ կօշիկի վաճառականութեան: Պիտի սիրես գործը, պիտի հետապնդես նպատակդ- աչքդ հեռուն պիտի ըլլայ, որպէսզի այբբենագիմէն սկսելով հասնիս եօֆէին:

- Երանի քեզի, Աւետիս:

- Ի՞նչ կարծեցիր: Կը տեսնէ՞ք օր մը ինձի: Եթէ կոնակիս շարժուն կրպակը խանութի չփոխեմ՝ թող անունս Աւետիս չըլլայ: Ապակիէ ցուցափեղկով սանկ աղոտ՝ խանութի մը, ուր անգամ մը մտնողը ստիպուի շարունակ գալու...

Սեդրակ հիացումով դիտեց կողքէն քալող ընկերոջը անձնավստահ, տիրական կեցուածքը, որ անկախ գործատէրի մը խորխտութիւնը ունէր: Ներկատուիի ծանրութիւնը նուազագոյն չափով իսկ չէր ծոեր անոր մէջքը:

*

* *

Կեդրոնատեղին գրառուած էր արդէն Պոչաճի Արսէնին եւ Վահանին կողմէ, որոնք լուռ նստած էին քովէ քով: Երբ մօտեցան՝ Վահանին դէմքը ճառագայթեց ուրախութեան ժպիտով մը: Կողքին տեղ բացաւ իսկոյն Սեդրակին համար:

Արսէն գլուխն իսկ վեր չառաւ: Հնամաշ սնտուկին վրայ հակած, շատ լուրջ եւ շատ կարեւոր գործի մը լծուած կը թուէր ըլլայ: Աւետիս պահ մը ուշադրութեամբ դիտելէ վերջ զինք, հանդիսատրապէս յայտարարեց.

- Բաղնիքին գմբեթը ձիւն չի բռներ, պարապ բան է ըրածդ:

- Պարապը դուն ես,- մոմոաց Արսէն ակոսներուն մէջէն եւ հագի հաճեցաւ ծուռ նայուածք մը նետել ընկերոջը վրայ:

- Ամէն բանի մէջ թերս ես, օգուտ չունի. ուրիշներ

սնտուկի ճակտին հայելի կը փակցնեն, դուն՝ վրան: Չեչոտ երեսի՞դ կարօտ ես, ինչ է, որ կ'ուզես ամէն ծոկուդ տեսնել:

- Խելքդ չհասած բանի մասին մի՛ խօսիր: Տեսնելիք ինչե՞ր կան...

- Թերեւս որոշած է սնտուկը աղոտը մը զարդարել,- խօսքի խառնուեցաւ Վահան անհամարձակ ձայնով մը:

- Այն ատեն թող կարպոչտ պոնճուխներ ալ կահել, որպէսզի հարսի պէս սիրուն այս սնտուկը աչքի չգայ,- անելցուց Աւետիս:

Երեքը մէկ խնդացին: Իսկապէս ծիծաղելի էր պատկերը: Խարխլած, կաղ, ժանգոտ թիթեղներով ներկատուի մը, որուն վրայ՝ ոտնակալի երկու կողմերը, Արսէն կ'աշխատէր երկու կողմ հայելիներ ամրացնել, կօշկակարի հասարակ խէժով: Գործողութիւնը հազիւ աւարտած, իր լարած ծուղակի յաջողելուն վստահ մէկու մը գոհունակութեամբ բացականչեց.

- Եղա՛ւ. մի՛նչեւ իրիկուն կը չորնայ եւ քարի պէս կ'ամրանայ. իրիկունը կազմ ու պատրաստ կը սպասեն: Նայինք ե՞րբ կը հանդիպի նորէն...

- Ո՞վ, ի՞նչ բան,- հարց տուաւ Աւետիս աճող հետաքրքրութեամբ:

- Խերերնիդ, կ'անիծեմ եթէ գաղտնիքը դուրս տաք կամ ըսածս դուք ալ ընդօրինակէք... Այս ատուտ փողոց իջած էի, մէյ մըն ալ տեսնեմ՝ լուսնի պէս ճերմակ աղջիկ մը...

- Վիզդ փաթթուեցաւ...

- Համբերէ՛, իշո՛ւ ձագ,- որոտաց Արսէն, սպանալից նայուածք մը շողացնելով Աւետիսին վրայ: - Օր մը ատոր ալ ներկայ կ'ըլլաս եւ մոմ բռնել կու տամ քեզի: Աղջիկը հագուած շքուած էր եւ ընկերուհիին հետ կարծեմ եկեղեցի կ'երթար: Կօշիկները աղտոտ էին: Յայտնի էր, որ ժամանակ չէր ունեցած զանոնք ներկել տալու: Խնդրեց ինձմէ, որ պատին տակը երթամք եւ ամմիջապէս ներկեն: «Գլխուս

վրայ»,- ըսի եւ գործի անցայ: Քիչ մը ետ քաշուեցաւ, փէշերը հաւաքեց եւ կոխեց սնտուկիս: Եկուր դուն Արսէն եղիբ եւ դիմացիր: Խոզանակը սկսաւ դողալ ձեռքերուս մէջ: Գոլպան մինչեւ ծունկը կը հասներ: Ծունկէն վեր լոյսի ճեղքեր կը բացուէին երբեմն, ամէն անգամ որ հովը փէշին հետ խաղար եւ կամ ինք քիչ մը կողքին դառնար՝ ընկերուհիին հետ խօսակցելու համար: Կօշիկին ետեւի մասերը լաւ ներկելու բոլոր առիթները օգտագործեցի, գլուխս դէպի ներսերը խոթելով եւ աչքիս ծայրով վերի կողմերը նայելով: Անպիտանը սակայն բաներ մը զգաց կարծեմ. շատ զգուշ էր եւ շարունակ սրունքները իրար քով կը բերէր: Հակառակ աղջկան *անապարանքին*, երեք զոյգ *կօշիկ ներկելու* ժամանակ դրի անոր անուշիկ ոտքերուն վրայ: Վիզս ցանցաւ ծռելէն եւ ճակատս քրտինքով ծածկուեցաւ: Մեծ բան մըն ալ չկրցայ տեսնել ի վերջոյ...

- Է՛հ, ա՞ս է ամէնը. առաջին անգամս էր, որ քեզի ասանկ շանս կը հանդիպի:

- Առաջինը չէր, բայց առաջին անգամ ըլլալով, այդ պահուն, մտքիս մէջ ծագեցաւ հայելիներու գաղափարը: Ի՛նչ լաւ առիթ էր: Եթէ սնտուկիս վրայ հայելի ըլլար, ամէ՛ն բան պիտի երեւէր: Առանց ծռելու, առանց յոգնութեան՝ ամէ՛ն ինչ պիտի տեսնէի...

- Տեսնելիքդ ի՞նչ պիտի ըլլար որ...

- Քեզի պէս փայտերը չի հետաքրքրեր անշուշտ: Երկինքէն աստղերն իսկ վար թափին՝ դուն գլուխդ չես բարձրացներ ու չես նայիր:

- Ատոնք փոր չեն կշտացներ,- վճռեց Աւետիս եւ անելցուց.- շան ու ոսկորի պատմութիւնը գիտե՞ս: Դայրոց եղած ատենս կը կարդային մեզի: Կ'ըլլայ չ'ըլլար՝ շուն մը կ'ըլլայ: Այս շունը օր մը, ակոսներով ոսկորի կտոր մը սեղմած՝ գետի եզերքին կը մօտենայ եւ ջուրին մէջ կը տեսնէ իր պատկերը. կը տեսնէ շուն մը ակոսներով ոսկո-

րի կտոր մը բռնած: Մէկդի կը նետէ իրական ոսկորը եւ ջուրը կը նետուի՝ իր շուքը հալածելու եւ անոր բերնին ոսկորը խլելու համար: Հայելիիդ մէջ երեւնալիքը՝ իշտէ այդ շուքն է, ջուրին ոսկորը...

- Վնաս չունի, աստիկա ատէի անուշ է. դուք չէք հասկընար ատոր համը: Եթէ պատահի, որ միասին եղած ատեննիս ձեզմէ մէկուն աղջիկ յաճախորդ մը ներկայանայ, դուք ինձի փոխանցեցէք: Ես կը ներկեմ կօշիկները եւ հատաստեմք՝, մեծ սիրով ձեզի կու տամ շահած դրամս, իրական ոսկորը...

Վահան անտարբեր էր տեղի ունեցող խօսակցութեան: Ուտերը ներս քաշած, անորոշ երազանքի մը անձնատուր, կ'ըմբռնէր արեւուն գաղջ ջերմութիւնը: Իսկ Սեդրակ, որ սկիզբը կախարդական հայելիներու հեքիաթային ցոլքը տեսնել կարծած էր պահ մը, յանկարծ ցրնցունեցաւ: Չես գիտեր ի'նչպէս, աչքերուն ներկայացաւ Զարուհիին սրունքը, իր յարակից ծածուկ մասերով, Արսէնի հայելիներուն մէջ ցոլարձակ: Գոյն առաւ ու գոյն տուաւ Զարուհիի հաշուին: Հազիւ զսպեց ներքին ըմբոստացում մը, նման այն զգացումին, զոր ապրած էր օր մը, դասարանէն ներս, երբ կողքի շարաննի ընկերը նստարանին տակ մտնել ու ելլել վերջ, ըսած էր ականջին.

- Կամաց մը մատիտդ վար ձգէ, առնելու համար աղոտը մը ծոէ, քիչ մը ետ դարձիր, նայէ ինչէ՛ր պիտի տեսնես...

Ետեւի շարքին վրայ նստողները գոյգ մը աղջիկներ էին: Սեդրակ իսկոյն ըմբռնեց եւ ինկող մատիտի այդ խաղը սրբապղծութիւն նկատեց Զարուհիի անքիժ մաքրութիւնը աղարտող, հոգ չէ թէ գոհերը անոր անգիտակից ընկերուհիները ըլլային: Նոյն խաղն էր, որ կը կրկնուէր կարծես հիմա, այս անգամ Արսէնի հայելիներով եւ պոչաճիի վայել յանդգնութեամբ:

Խօսակցութեան եւ մտածումի այս տաք թելերը կըտրողը Վահանը եղաւ, իր խունապահար եւ յանկարծական ուստումով: «Կու գան կոր, փախէ՛ք», - ըսելն ու ոտքի ցատկելը մէկ ըրաւ: Անակնկալի եկան բոլորն ալ: Առանց որեւէ բան հասկնալու, բնագոյային վախ մը անշարժութեան մատնեց Սեդրակի անդամները: Վահան մտած էր արդէն վարի փողոցէն ներս ու աներեւոյթ եղած: Աւետիս ոտքի ելաւ նախ, անցուց թեւին ներկատուփը, բայց շրջապատին վրայ աչք մը պտտցնելէ ետք՝ մնաց անշարժ, կեցած տեղը: Արսէնն էր միայն, որ չարեց ինքզինք ու շարունակեց ձեռքի լաթով հանդարտօրէն հայելիները սրբել:

Երկու ուստիկաններ դանդաղ քայլերով կը յառաջանային դէպի պոչաճիներու կողմը: Մօտեցան, անտարբեր նայուածք մը նետեցին հայ տղոց վրայ. մէկը ուզեց ճամբան շարունակել, բայց միւսը կանգ առաւ ճիշդ Արսէնին առջեւ, ընկերոջը թեւէն քաշելով:

- Զէ՞ք գիտեր, որ պոչաճիներուն արգիլուած է այս հրապարակին վրայ բազմիլ,- ըսաւ առաջին ուստիկանը ձայնին բռնագրօսիկ խստութիւն մը տալով:

- Մենք ձեր հրամանին տակն ենք, Էֆենտի,- պատասխանեց Արսէն ժպտադէմ, առանց շարժելու:

- Ո՞ւր են ձեր թիւերը. քաղաքապետական տուրքը վճարա՞ծ էք,- ւաւելցուց երկրորդ ուստիկանը:

- Ձեր հրամանին տակ, Էֆենտի,- կրկնեց Արսէն, ւաւելի հաճոյակատար:

- Հարցումիս պատասխանէ, ստահա՛կ, ապա թէ ոչ տուգանք պիտի գրենք ձեզի եւ սնտուկները գրաւենք:

- Հրամա՛նքդ, եա Էֆենտի, մեզի պէս վարպետ ներկարար չէք գտներ այս քաղաքին մէջ... թոյլ կու տա՞ք, որ ձեր կօշիկները ներկենք, շատ աղտոտած են. մեղք է, կաշին շուտ կ'արորի այսպէս անխնամ ձգելով:

Ուստիկանները տարտամ ժպիտ մը ունեցան, իրա-

րու երեսնայեցան պահ մը եւ յետոյ կոխեցին Արսէնի եւ Աւետիսի սնտուկներուն:

- Վա՛յ որ աղուոր չփայլեցնես,- ըսաւ ոստիկանը, կակուղցած շեշտով:

- Հոգ մի՛ ըներ, Էֆենտի,- բացականչեց Արսէն գուարթ աշխուժով եւ աչք քթթեց ընկերոջը:

Ոստիկանները մէկ մէկ գլանիկ վառեցին եւ վերսկըսան ընդհատուած գրոյց մը: Արսէն եւ Աւետիս գերազանցեցին իրենց արուեստը՝ օրէնքի պաշտօնեաներու սրճագոյն մոյկերուն վրայ: Երբ ներկը լրացաւ, ոստիկանները կրկին խոժոռ դէմք առին: Անոնցմէ մէկը, մեկնելէ առաջ պարտականութիւն նկատեց ազդարարել.

- Յաջորդ անգամ ձեզ հոս չտեսնեմ:

- Ձեր հրամանը, եա սիտի, կ'ուզէ՞ք որ վաղը իրիկուն ձեր տունը հանդիպիմ, պգտիկներուն կօշիկները ներկելու համար...

- Գէշ չ'ըլլար, քանի որ մեր տունը գիտես: Հաշիւը վերջը կը տեսնենք...

- Ամօթ է, Էֆենտի, դրամին խօսքը կ'ըլլայ. չնչին ծառայութիւն մը... մենք ձեր հրամանին տակն ենք...

Ոստիկաններու մեկնումէն երկու վայրկեան ետք՝ Վահան երեցաւ վարի փողոցի ծայրէն եւ մօտեցաւ ընկերներուն, յայտնապէս տժգունած: Ծարժումներուն մէջ զգալի էր լանցաւոր մէկու մը վարանքն ու ամօթխածութիւնը: Զգուշութեամբ տեղ գրաւեց, գլուխը կախ եւ անխօս: Պահ մը լռութիւն պահեցին նաեւ միւսները, քմծիծաղով եւ հեզնութեամբ յագեցած լռութիւն մը, զոր մէկ անգամէն պայթեցուց Արսէն.

- Թօ՛, նապաստակը քեզմէ աւելի քաջ է. առաջին անգամը չէ, որ այս խախտութիւնը կ'ընես. ոստիկանները քեզ պիտի ուտե՞ն: Ինչո՞ւ անոնց շուքէն իսկ կը փախչիս: Ամօթ է, եղբայ՛ր, վերջ տուր այս խայտառակութեան.

շատ-շատ քանի մը դրուշ պիտի ստիպուիս ցնծալ:

- Աստուած վկայ՝ որ դրամի համար չեմ փախչիր. հա-
ւատացէ՛ք, ձեռքս չէ. այն հի՛ն օրերէն, գաղթականութենէն,
Տէր Զօրէն մնացած բան մըն է, որ մէջէս դուրս չեմ կրնար
հանել: Ի՛նչպէս բացատրեմ, որ հասկնաք. եթէ կատղած
շուն մը յարձակի վրաս՝ տեղէս չեմ շարժիր. բայց երբ ոստի-
կանի այդ հագուստը կը տեսնեմ, երբ այդ փայլուն կոճակ-
ները կը շողան աչքերուս դէմ՝ ինքզինքս կը կորսնցնեմ. ոտ-
քերս կը սկսին դողալ. կարծես թէ մը կը փրթի սըտեղէս,-
կմկմաց Վահան, ափը դնելով կուրծքին վրայ:

- Ծօ՛ յիմար, այս ոստիկանները ի՞նչ կապ ունին այդ
հրէշներուն հետ. ասոնք արսաք են, անոնք՝ թուրք:

- Գիտե՛մ, շատ լաւ գիտեմ, բայց մտրակի պատկե-
րը, վայրագ ծեծերու յիշողութիւնը ինձմէ աւելի զօրաւոր
զգացում մը կ'արթնցնեն մէջս: Երանի՛ ձեզի, որ այդ օրե-
րը չէք ասարած...

Ներկայացուած պատճառաբանութիւնը բաւակա-
նաչափ համոզիչ չթուեցաւ՝ «մեղմացուցիչ դէպք յանցա-
նաց» դառնալու համար: Սեդրակն էր միայն, որ ուզեց կա-
րեկից արտայայտութիւն մը ունենալ, բայց Արսէն եզրա-
կացուց կտրուկ կերպով.

- Մարդ ըլլալիք չունիս:

*

* *

Կէսօրը անցած էր արդէն: Պոչանիներու սնտուկին
գանձանակները նոյնքան դատարկ էին, որքան իրենց
փորերը: Բայց ոչ ոք կը մտածէր տեղէն շարժելու մասին:
Փողոցին մէջ երթելեկը ցանցատ էր: Երբեմն աչքի կը
գարնէին գիտացիներ, որոնք պտտողներով բեռնաւոր է-
շերը իրենց անջել ձգած՝ քաղաք կը բերէին պարտեզնե-
րու օրհնեալ բարիքները: Զամբիուղի, խուրջիցի կամ

տախտակէ սնտուկներու մէջ պոռանիներու կարօտաբաղձ աչքերուն առջեւէն Դամասկոսի ոսկեծպիտ մրգահասն էր, որ կ'անցներ՝ օրօրուն, երազի մը պէս: Կը պատահէր յաճախ, որ խանութպանի մը առաջարկին վրայ, գիւղացին բանար միրգերուն ծածկոցը, այն ատեն երազը այրող իրականութեան կը վերածուէր, անդիմադրելիօրէն փորձիչ, շքեղօրէն գեղեցիկ... Աւշատատ տանձերու, սաթի նման դեղին չոր ծիրանի կամ խշրտացող ընկոյզներու թոյրը, բոյրն ու ձայնը մէկ անգամէն կը լեցուէին մթնոլորտին մէջ, գլխու պտոյտ պատճառելով փողոցի անչափահաս հանդիսականներուն, որոնք ստիպուած էին հեռուէն դիտել ցուցադրուող այդ հրաշագիքները:

Զրկանքը այնքան մեծ չէր ըլլար ամառը, երբ կարելի է գաղտագողի այցելութիւններ տալ մերձակայ պարտէզներուն, ուր ծառերը, նորահաս աղջիկներու պէս, հաճոյքով անձնատուր կ'ըլլան արկածաւէր տղոց յանդուգն բազուկներուն: Բայց այգեկութիւն վերջ, տերեւաթափին, աշնան առաջին անձրեւներուն տակ, ծառերը կը մնան լքուած, մերկ ու ցրտահար: Անոնց պատանի սիրահարներն ալ կը դառանան են իրենց հաւատարմութեան ու կը մոռնան պարտէզներու ճամբան:

Արսէն անտոյտր լռութեան մը անձնատուր՝ կ'ապրէր յիշատակը ամբան շահատակութեանց: Անցեալ համբոյրի մը չափ աննիւթ եւ խուսափուկ կը թուէր հիմա իրեն համը այն թութերուն եւ ծիրաններուն, զորս կուշտ ու կուտ ճաշակած էր սաղարթախիտ ծառերու վերին ճիւղերուն մէջ պահուրտած, մինչեւ իսկ պարտիզպանի շմորուն աչքին դիմաց: Իրեն կը թուէր տակաւին, թէ պտղաբարձ էշերով անցնող գիւղացիները բարբարոս աւագակներ էին, անգութ յանցագործներ, որոնք ծառերուն եւ իր արդար իրաւունքը կողոպտած, սնտուկներու մէջ փակած՝ կը տանէին անձանօթ եւ անզգայ յաճախորդներու վաճառելու:

- Պտուղի ախորժակ ունի՞ք,- դարձաւ ընկերներուն վճռական հարցումով մը:

Բացի Սեդրակէն, միաները իսկոյն ըմբռնեցին Արսէնին իմաստուն միտքը եւ գոհունակութեամբ ճառագայթեցին: Այն ատեն Արսէն անհրաժեշտ նկատեց կարճ բացատրական մը տալու: Աւետիս եւ Վահան պիտի գործէին միասին, իսկ ինք կը յօժարէր անփորձ նորընծան գործի մղել: Էականը ունէր արդէն Սեդրակ. տոկոսն ու խոշոր գոգնոց մը, որ կրնար բաական ասար պարտկել: Ծառ դիրիմ պիտի ըլլար ընկերոջը ընելիքը. այն պահուն երբ ինք տաք խօսակցութեան բռնուելով՝ զբաղեցնէր իշապանը, Սեդրակ ետեւէն պիտի գգուէր էշը, այսպէ՛ս, կամաց-կամաց եւ գգուանքին արդիւնքները պիտի լեցնէր գոգնոցին մէջ այսպէ՛ս, հանդարտօրէն: Ո՛չ մէկ կասկած, ո՛չ մէկ վտանգ: Բան մը ըլլալու պարագային՝ ինքն էր պատասխանատուն: Յիմարութիւն էր ի վերջոյ ձգել, որ մարդիկ օր ցերեկով ասանկ հարստութիւններ փոխադրեն եւ իրենք դէմը կեցած, լորձունքը շրթներնուն՝ ապուշ-ապուշ դիտեն: Եթէ պատահի նոյնիսկ, որ սատանան գործի խառնուի (ինչ որ հարիրէն հարիւր չի պատահիր), փախչիլը դժուար չէ: Իշապանը խե՛ղթ է, որ էշը ձգած իրենց ետեւէն վազէ քանի մը տանձի եւ խնձորի համար: Ետքը ամէնը կը կորսնցնէ...

Սեդրակ մտիկ ըրաւ ուշի-ուշով, աչքերը լայն բացած եւ բաական ուշ գլխու ինկաւ:

- Ես... ես ասանկ բաներ չեմ կրնար ընել, չեմ վարժուած,- կակազեց վախկոտ ու շփոթահար:

- Մէկ փորձով կը վարժուիս,- պատասխանեց Արսէն,- երբ ինծի հետ ես՝ բնաւ մի՛ վախնար. ալ ժամանակն է, որ քիչ մը փոխուիս. ամօթ է, պէ, սա կնիկմարդկութիւնդ մէկ կողմ նետէ:

Իսկապէս ամօթ էր: Ամէն բանի մէջ երկշոտ ու վերապահ: Աւետիս ու Վահան ոտքի էին արդէն ու կը պատրաս-

տէին իրենց ծրագիրը: Սեդրակի կործքին տակ երկու հա-
կասական զգացումներ մահացու պայքար կը մղէին: Մէկ
կողմէ՝ արժանապատուութիւնը, ընկերներուն քով պզտիկ
չմնալու, անոնց հաւասարելու զօրատր մղումը, միւս կողմէ՝
բարոյական իր ըմբռումներն ու դաստիարակութիւնը:

Ի վերջոյ յաղթեց առաջինը եւ Սեդրակ ձգեց ներկա-
տուփը՝ զոհի մը պէս Արսէնին հետեւելու համար: Երկու-
քը մէկ յառաջացան քիչ մը եւ յարմար դիրք գրաւեցին փո-
ղոցին մէջ: Հերթը նախ իրենց կը պատկանէր:

Այս աստիճան չէր խոսված հոգին երբեւիցէ, ամսա-
վերջի քննութիւններուն անգամ, լրջադէմ հոգաբարձունե-
րու ատեանին առջեւ, ամէնէն դժուար հարցումի սպառ-
նալիքին դէմ: Սեդրակ կարծես կախուելու կ'երթար: Բայց
պետք է երթար, ուրիշ ճար չունէր: Փախուստի ճամբանե-
րը կտրուած էին. դասալքութեան ամօթը խայտառակու-
թեանց մեծագոյնը պիտի ըլլար:

Քանի մը վայրկեան ետք, չհասկցաւ, թէ ինչպէս ի-
շու մը ետեւէն կը քալէր, փողոցին ճիշդ մէջտեղը: Չհաս-
կըցաւ, թէ ինչո՞ւ ափերը կ'այրէին՝ պարկի մը կողերէն
դուրս ցցուող կարծր կլորութեանց վրայ: Ծունկերը կը
ծալուէին յուզումէն: Արտակարգ ճիգ կը թափէր գետին
չիյնալու համար: Կարծես հազարաւոր հրաշէկ նայուածք-
ներ իր վրայ բեւեռուած՝ զինք կը լրտեսէին: Կը զգար ա-
նոնց նիզակները մինչեւ իր երակներուն խորը:

Ծանր բեռան տակ յոգնասպառ առանակին գլուխը
կ'օրօրուէր երկու մարդոց միջեւ: Անոնցմէ մէկը լսու կը
ճանչնար, պոյսաճի Արսէնն էր. միւսը՝ քրտնաթոր, այրած
վիզով հաստ մարդ մը: Սեդրակ տեսաբար կը լսէր Արսէ-
նի ձայնը, բայց իր գիտակցութեան չէին հասներ անոր
արտասանած բոլոր բառերը: Երբեմն-երբեմն, երազի մէջ
կարծես, կը զատորոշէր արաբերէն նախադասութեան
կտորներ. - «Օխայով չեմ ծախել, ամէնը մէկ... քու պար-

տեզէ՞ղ է... հօրեղբայրս՝ երկու փողոց անդին, մեծ խանութպան է... անպայման կը գնէ, եթէ տեսակը հաւնի... զինն շուրջ ինձի հետ պէտք է համաձայնիս... ասանկ սերկեիլ ոչ եկած է, ոչ ալ պիտի գայ...»:

Սեդրակ մէկ-երկու անգամ նշմարեց Արսէնին դէմքը, որ աճապարանքով ետ կը դառնար եւ քաջալերանքի տարօրինակ ժպիտ մը կը սփռէր իր վրայ: Ձեռքերը, իր այդ մեղկ, դողդոջուն, անճարակ ձեռքերը սակայն չէին գտնէր տոպրակի բերանը: Փոխանակ դէպի վեր բարձրանալու, յառաջ խիզախելու, մարտի առաջին կոչէն սարսափահար երկու փոքրիկ զինուորներու նման՝ թուլցած էին բոլորովին եւ խելակորոյս:

Յանկարծ պայթեցաւ հայհոյանքի մեծադողորդ ումը մը եւ գիտացիի ճոկանը անսպասելի կերպով իջաւ Սեդրակի յետոյքին: Արսէն անհետացած էր ակնթարթի մը մէջ:

- Կորսուեցէ՛ք, անօթի շուններ, գող սրիկաներ, - կ'որոտար իշապանը զայրալից:

Դաւադրութեան հոտը տարածուած էր փողոցի չորս կողմը, ուրկէ անցնող պատահական մարդիկ կանգ կ'առնէին հետաքրքրութեամբ: Սեդրակ հազիւ կրցաւ հաւաքել ինքզինք եւ անդունդն ի վար գահավիժող մէկու նման՝ փախուստ տուաւ իր բոլոր ուժերով:

Կռնակէն փչող հովէն տարութեր՝ դատարկ գոգնոցը կ'ուռէր, ինչպէս չարագուշակ սեւ առագաստ...

Ընկերները յտնկալս ծափահարութիւններով ընդունեցին իր անփառունակ վերադարձը: Իւրաքանչիւր ծափ շառաչուն ապտակ մըն էր Սեդրակի վիրատր հոգիին համար, անելի դառն ու սպանիչ՝ քան այն ծեծը, որ խոշտանգած էր զինք, առաջին օրերուն, Արսէնին հետ կրուած ատեն:

Պոյանքներու հրամանատարը առաջ նետուեցաւ եւ կծու ծաղրով մը հանդիսատրապէս թօթուեց իր ձեռքը.

- Կը շնորհատրե՛մ... իսկական յաղթանակ մը: Օրերով ուտենք՝ չի վերջանար գոգնոցիդ պարունակութիւնը: Ծօ տխմա՛ր, ժամ մը գբաղեցուցի մարդը, խօսելէն կոկորդըս չորցաւ. այդքան ժամանակէն կարելի էր ամբողջ պարկը պարպել. ի՞նչ կ'ընէիր ետեւը կեցած. սերկեհիւնէ՞րը կը համրէիր մէկիկ-մէկիկ...

- Ես գողութիւն չեմ կրնար ընել,- պոռաց Սեդրակ, ջղալին անսպասելի պողթկումով:

- Գողութի՛ւն,- ծիծաղեցաւ Արսէն բարձրաձայն,- գողութի՛ւն... կը լսէ՞ք տղաք, Պօղոս Առաքեալն է խօսողը: Ծօ՛, ասիկա գողութիւն չէ, ասիկա թոցնել է: Հսկայ տարբերութիւն կայ գողնալուն եւ թոցնելուն մէջ: Վահանէն աւելի վախկոտ մէկը կարելի՞ է երեւակայել. բայց տղան առիծ կը կտրի, երբ թոցնելիք բան մը կայ մէջտեղ: Անոր չա՞փ ալ չկաս:

- Իմ կեանքս թոցնելով անցաւ,- միջամտեց Վահան: Իմ եւ Սեդրակին տարբերութիւնը շատ մեծ է: Ես վարժ եմ, ինչպէս ձուկը՝ ջուրին: Գաղթականութենէն մինչեւ որբանոց, որբանոցէն մինչեւ այսօր, թոցնելով ասպած եմ: Եթէ թոցնելը չըլլար՝ շատոնց անօթի կը սատկէի:

- Պարապ բաներ կ'ըսես: Սրտի հետ կապուած է ասիկա: Աչքը բացութիւն պէտք է: Մե՛ղք, մե՛ղք... ի՞նչ առիթ փախցուցի՞նք: Կիզելի՛մ սերկեհիւները... հոտը քիթես չի հեռանար: Մէյ մըն ալ ե՞րբ պիտի ներկայանայ ասանկ առիթ:

Սեդրակ, վիզը ծուռ նստած էր աթոռակին: Նման էր մէկուն, որ իր դաւաճանութեամբ ճակատամարտի մը կորստեան պատճառ կը դառնայ: Խորտակուած էր վարկը եւ վարկին հետ նաեւ ներքին այն հպարտութիւնը, որ կեղծ արժէքներու վրայ խարսխած կը մնար: Իսկապէս վախկոտութիւն չէ՞ր իր փայփայած առաքինութիւնը: Այդքան յետամնաց եւ յիսմա՞ր պիտի մնար մինչեւ վերջ՝ չըմբռնելու համար գողնալուն եւ թոցնելուն բացայայտ

տարբերությունը: Կեղծիք էր ըրածը: Կ'ուզեր իր անարի
թուլամորթությունն ու տկարությունները քողարկել շողշո-
ղուն բառերու վարագոյրով: Բառեր, որոնք կեանքի ո՛չ
մէկ իմաստ ունին: Առանց դպրոց տեսած ըլլալու, Արսէն
հազար անգամ աւելի ճիշդ գիտէր դատել:

Սեդրակ նման էր մէկուն, որուն հաւատքի շէնքը վը-
տանգատոր ճեղքեր կը ստանայ եւ կը ճարճատի:

Ընկերները առանձին ձգած էին զինք իր խորհրդա-
ծութիւններուն հետ, շատ կարեւոր զբաղումի մը անձնա-
տուր: Անոնք իրենց միջեւ բաժնելու վրայ էին վահանի եւ
Աւետիսի թոցուցած չոր ծիրանները: Ողորմածաբար բա-
ժին հանեցին նաեւ Սեդրակին: Ինք չէր սպասէր այդ վե-
հանձն վերաբերումին, որուն արժանի չէր բնաւ: Ուտէ՞ր
թէ չուտէր: Անոնք կը վայլէին իրենց ճակտին քրտինքը,
իսկ ինք պիտի ճաշակէր գութ եւ ողորմութիւն: Բայց ըս-
քանչեւի էր տեսքը քաղցրաբոյր ծիրաններուն:

«Ձիր ու չամիչ ընկոյզ ու թուզ...», - կրկնեց մտքէն
մոռցուած ոտանատրի մը առաջին տողը եւ զարմանքով
զգաց, թէ բերանը կը ջրոտէր:

Չրկանքը, իբրեւ արդար պատիժ, աւելի մխիթարա-
կան պիտի ըլլար դառնացած իր սրտին համար: Սրտին
առջեւ պարտուելէ ետք, այժմ պիտի պարտուէր նաեւ
ստամոքսէն:

- Դէ՛ կե՛ր, սառած ճարպի պէս մի՛ մնար այդպէս:
Խե՛րը անիծեմ, յաջորդին կը յաջողիս, - ըսաւ Աւետիս հեշ-
տական հաճութեամբ ծիրան մը խոթելով բերանը:

- Երեւի՛ գողնալը մէկ մեղք, գողցուած ապրանք ու-
տելը երկու մեղք կը հաշուէ մեր տղան: Քեզի բան մը ը-
սեմ, - դարձաւ Արսէն Սեդրակին մեղմութեամբ, - դուն պը-
խալմամբ պոյսճի եղած ես: Եկեղեցին շապիկ հագուելու
սահմանած է քեզ Աստուած: Այսքան ատեն է՛ շնորհքով
հայհոյել անգամ չտրվեցար: Աղջիկներու նման կարմրիլ

միայն գիտես: Բամպակի մէջ մեծցուցած է քեզ մամադ...

Սեդրակ խորապէս վիրաւորուած՝ ափին մէջ ճմլեց ծիրան մը՝ իր անգօր կատաղութենէն եւ յետոյ սկսաւ ծամել մեքենաբար, առանց համը առնելու:

Եկեղեցիէն ներս շապիկ հագուելու գաղափարը մօրը պատկերը կենդանացուց աչքերուն դէմ: Խեղճ կինը որքա՛ն փափաքած էր իր տղան դպիրներու երգեցիկ խումբին մէջ տեսնել:

Խնկաբոյր շապիկի պարծանքին տեղ՝ պոչաճիի սեւ գոգնոցին նուաստութիւնը կը կրէր ան հիմա:

ՄՐԻԿԱՆԵՐՈՒ ԿԵՆԱՅԸ

Կեանքի յորձանուտին դեմ միևսկը պայքարել է ուժասպառ եւ ամօթապարտ՝ Մեղրակ աչքերը փակեց եւ նետունցաւ մէջը: «Քիչ առ քիչ սորվեցաւ հայհոյանքի տեսակներ: Բարձրաձայն հայհոյելու վարժութիւններ ըրաւ: Մէկու մը պէս, որ ծանր կորուստներու վիշտը կը փորձէ մարել օդիին ոգելից կրակով, իր կուսագեղ պատանութեան թաղումն ու մահերգը ուզեց խեղդել ընթացիկ հայհոյաբանութեանց բարբարոս աղմուկին խորը:

Սկիզբը նողկանք եւ գլխու պտոյտ կ'ունենար. շրթունքները կ'արհնէին կարծես՝ լպիրշ բառերու հպումէն: Հետզհետէ սակայն կորսնցուց անոնց համին եւ իմաստին զգացողութիւնը եւ սկսաւ գործածել իբրեւ մաշած յանկերգ, իբրեւ լեզուի փորձութիւն, ինչպէս կ'ընէին ընկերները: Դադրեցաւ «գրաբար» խօսելէ եւ միւսներուն պէս՝ իր ամէնէն սովորական արտայայտութիւններն իսկ զարդարեց թրքերէն բառերու եւ հայհոյանքի համեմներով: Աշխատեցաւ անձնատրել իսկական պոյաճիի տիպարը եւ «մարդ» դառնալ:

Որքան ալ ուշիմ եւ չտաջադէմ՝ չէր հասներ սակայն Արսէնին, որ կը մնար անպարտելի ասպետը հայհոյանքին: Ան կը ստեղծագործէր անասնման եռանդով, միւսները կը կրկնէին ըստ յարմարութեան: Վերջիններուն համար հայհոյելը ներքին պահանջքի մը արդիւնքը չէր. այդ պատճառով ալ հետեւակ էին միշտ: Միանշդեռ Արսէն թո՛հչք ուներ.

հայհոյանքը գիտեր հասցնել արուեստի ներշնչեալ ոլորտները, գունագեղ և ցայտուն պատկերներու հրախաղով: Փողոցի առատահոս իր բանահիստութեան նիւթ կրնար դարձնել մէկուն կօշիկներէն մինչեւ մազերուն ծայրը...

Տղաք էին ասոնք, վաղաժամօրէն հասունցած պըտուղները յիշեցնող, որոնք կասկածելի կարմրութիւն մը կը ցուցադրեն՝ արեգակի շեշտ ճառագայթներուն տակ:

Սեղրակ վարժուեցաւ առանց շիկնելու նայիլ կիներու և աղջիկներու աչքերուն խորը: Իր նայուածքը գիտցաւ յամենալ հոլանի կուրծքերու և սրունքներու վրայ, երեսակայութեամբ լրացնելով անոնց մերկութեան ամբողջական խորհուրդը: Չէր խորշեր այլեւս վրան բաց խօսակցութիւններէ, որոնք սկիզբը գայթակղութիւն կը պատճառէին իրեն: Մէկը միտէն աւելի պատկերալից և հիւստեղ նկարագրութիւններու և տոփալի պատմութիւններու ամբողջ պաշար մը ունէր հիմա, որուն քով կենդանի փորձառութեան արդիւնքը շատ տժգոյն պիտի մնար:

Պոյանդիութեան առաջին շաբաթները, իր դէմ էլլող ամէն հասուն աղջիկ Զարուհիի անհպելի սրբութենէն և երազային քաղցրութենէն մաս ունէր իր վրայ: Մինչեւ անգամ պորտախաղի սրահին պատուհաններուն փակած, վարագոյրի ճեղքերէն, երբ ընկերներով մերկ պարուհին կը դիտէին, Սեղրակ կը վերանար, հոգեկան յուզումի մը անձնատուր, և բեմին վրայ կը տեսնէր հերարձակ պարիկ մը լոկ, հեքիաթներու աշխարհէն հոն ինկած: Սրբապղծութիւն կը նկատէր ընկերներուն ըրած տենչավատ ակնարկութիւնները՝ անոր մարմնի զանազան շարժումներուն մասին: Ու կը հեռանար պարասրահի պատին քովերէն, անբացատրելի երազանքի մը բոյրը հոգիին մէջ:

Արսէն այլեւս իրաւունք չուներ գինք անմիտ որակելու, քանի որ գիտէր հիմա, թէ կիները էգ են նախ՝ ուսէ բան ըլլալէ առաջ, սկսած պորտախաղի պարուհիէն մին-

չեւ փողոցէն անցնող նազելաշուք տիկիներն ու օրիորդները: Եւ այս վաղահաս գիտակցութիւնը, քաղաքի մայթերուն վրայ ինկած պատանի հայ տղոց համար կը դառնար երկրորդ մեծ տագնապը, կեանքի երկրորդ հրատապ խնդիրը, հացի խնդրին հետ մէկտեղ, զոր կը ստիպուէին դիմագրաւել եւ լուծել միասնաբար:

Արսէն խոստումնալից ուժ մը կը տեսներ Սեդրակին մէջ եւ հետզհետէ աւելի գովելի կը գտներ անոր արկածասիրական եռանդը: Կօշիկ փայլեցնելու, շրջուն վաճառորդներէն պտուղ թոցնելու, հայհոյելու, տեւնչալու եւ երազելու արուեստներուն տիրապետութեամբ Սեդրակ գերազանցած էր արդէն միա ընկերները, որոնցմէ մին՝ Վահանը, ինքնամփոփ էր միշտ եւ ուժասպառ, իսկ երկրորդը՝ Աւետիս, անալլայլ եւ ինքնաբաւ: Միայն թէ տարօրինակ, անբացատրելի գիծեր կային Սեդրակի բնատրութեան մէջ: Խուսափուկ բան մը, որ պոյսանիի իր նկարագիրը կ'ալլափոխէր շատ անգամ. ամէնէն յորդագել արտայայտութեան կամ գործերուն ընթացքին անվստահութիւն կը ներշնչէր անոր անձին հանդէպ: Տեսակ մը հով կար վրան, որ ներսէն կը փչէր անշուշտ եւ զինք կը վերածէր նոր պայմաններուն համակերպած տարաշխարհիկ թռչունի մը:

*

* *

Իրիկուն մը, ձանձրոյթի ճնշող եւ ամուլ պահել մը ետք, Արսէն դարձաւ ընկերներուն.

- Եկէ՛ք մարդավարի քէֆ մը ընենք, սանկ տղամարդու վայել աղոտ'ր քէֆ մը:

- **Քէֆը** դրամով կ'ըլլայ, - առարկեց Աւետիս:

- Կը վախճաս, որ գրպանէդ սանթիմ մը կը պակսի՞. դրամէն զատ ուրիշ Աստուած չունիս արդէն. վնաս չ'ըներ, ես կը վճարեմ բաժինդ:

Եւ իսկոյն Արսէն հանեց երկու պարդուս ու նետեց մէջտեղ: Սեդրակ եւ Վահան իրենց կարգին վճարեցին երկուքական դահեկան: Աւետիս չէր կրնար փախուստ տալ: Օտաւ լաւ գիտէր, թէ «խենթ չոփուող» կրկնապատիկը կը հանէր օր մը իրմէ: Դժկամութեամբ քակեց վիզէն կախուած լաթէ քսակին բերանը եւ մատներով վայրկեան մը մէջի արծաթները շօշափելէ ետք, դուրս քաշեց երկու դահեկաննոցը:

Քառորդ ժամ բաւեց, որպէսզի Արսէն պոյաճիներու խրախճանքի սեղանը շտկէ: Փոքր շիշ մը օղի, քիչ մը պանիր, ապուխտ եւ հաց, տուփ մըն ալ սիկարէթ:

Սեդրակ արտաքննապէս ամէնէն խանդավառը կ'երեւէր. բայց բռնագրօսիկ էին շարժումները: Ուրախութեան չափազանցուած գեղումներով կարծես ճիգ կ'ընէր խեղդելու այն ներքին անորոշ վախը, որ թեթեւ դող մը կը նետէր ջիղերուն: Առաջին անգամ ըլլալով պիտի խմէր ու ծխէր. եւ հրապարակային ցուցադրութեամբ, եկող ու գացողին աչքին առջեւ, իրենց սովորական նստավայրին մէջ, բաց երկինքին տակ:

Սիներմայի մայթին վրայ ներկատուիերը գետեղեցին քով-քովի եւ նստան անոնց առջին: Արսէն բացաւ շիշին բերանը եւ յաղթական շարժումով մը վեր բարձրացրնելէ ետք՝ բացականչեց.

- Կենացնո՛ղ, տղաք:

Այնուհետեւ օղիին շիշը փոխանցուեցաւ ձեռքէ ձեռք:

Առաջին քանի մը ումպերը, առանց ջուրի, դժուար վար գացին տողոց անվարժ կոկորդներէն: Հետզհետէ սակայն, գլուխներուն հետ մթնոլորտն ալ տաքցաւ եւ իւրաքանչիւրը կորովի ու քաջութեան ցուցադրութիւն նկատեց կլկլացող շիշը կարելի եղածին չափ երկար պահել շրթներուն մէջ, գլխիվար դարձած:

- Բան մը խմած չունիս, բայց հացին խերը անիծե-

ցիր,- ըսաւ Արսէն Աւետիսին դառնալով:

- Քեզիպէսները ջուրը կը տանիմ եւ ծարաւ կը բերեմ,- պատասխանեց իսկոյն Աւետիս, կաս-կարմիր կտրած:

Կարմրած էին բոլորն ալ: Արսէնին տրամադրութիւնը հասած էր արդէն քառասուն աստիճանի եւ կը խօսէր առատօրէն: Նախ պահանջեց «թէք» մը պարպել հրաշագեղ ու փարթամ այն կնոջ կենացը,- անունն ու բնակարանի վայրը յիշատակելը անպատշաճ կը նկատէր,- որ երեք անգամ շատ որոշակի առաջարկութիւններ ըրած էր իրեն, բայց ինք պարկեշտօրէ՛ն մերժած: Յետոյ, բազմափորձ սեղանապետի վայել իմաստութեամբ, կեանքին արժէքը սկսաւ վերլուծել. ըսաւ, թէ այս աշխարհը պարապ է եւ անցատր. հայհոյեց տիեզերքի եօթը պորտին եւ շեշտեց, որ կեանքի մէջ ինչ ընես՝ ան կը մնայ:

- Ծօ խմե՛նք,- եզրակացուց Արսէն,- նորէն աշխարհ պիտի չգանք եւ, խմողի՞ն համար պոյաճի՞ն եւ իշխանը նոյնն է:

- Մեր մօրը փորէն պոյաճի չծնանք,- խորհրդածեց Վահան, օղիի շիշը բերնի՞ն մօտեցնելով:- Եթէ մեր երկիրները մնացած ըլլայինք, եթէ մեր տունն ու տեղը մեր ձեռքէն խլած չըլլային, մենք ալ իշխանի պէս կ'սպրէինք:

- Օր մը կ'երթանք Հայաստան եւ այս օրերը կը յիշենք: Պապաս ամէն իրիկուն թերթ կը կարդայ. աշխարհի քաղաքականութիւնը կամաց-կամաց կը փոխտի կոր..., - հաւաստեց Աւետիս, ապովտի նոր պատառի մը ձեռք նետելով:

- Ծի՛շո, Հայաստանն ալ քեզի կը սպասէ արդէն, վարպետ պոյաճիներու պէտք ունի,- խնդաց Արսէն բարձրաձայն:

- Ինչո՞ւ կը խնդաս,- զարմացաւ Վահան,- Հայաստանի մէջ պոյաճի ըլլալը անելի մեծ պատիւ է քան թէ հոս պանքայի տնօրէն: Երանի՛ թէ մեր հայրենիքը երթայինք

եւ փողոց ալող ըլլայինք:

Վահան դժուար կը գսպէր լալու փափաք մը, որ սկըսած էր կործոքը ճանկոտել: Խմած օղին ամբողջութեամբ շոգիացած էր կարծես եւ ծփանուտ ու տաք գոլորշիի մէջ պարուրած իր ուղեղը: Կ'ուզէր բացուիլ, յորդիլ, վար առնել պոյաճի տղո՛ւ իր դիմակը, վերադառնալ իր իսկութեան եւ խօսիլ մօրը մասին: Ոգելից շոգին կը խտանար դարձեալ, կը վերածուէր հեղուկ կաթիլներու եւ կը խուժէր աչքերուն: Բայց այդ կաթիլները դառն չէին սովորականին պէս: Ինքզինք ուժեղ եւ յուսապնդուած կը զգար: Բարեբաստիկ պատահարներու նախազգացումը կը փոթորկէր իր մէջ: Կ'ուզէր ընկերները համբուրել եւ աղուոր աւետիս մը տալ անոնց: Բայց ո՞րն էր յանկարծաբուխ այս լատտեսութեան բուն պատճառը: Փորձեց վերլուծումի ենթարկել իր կեանքի ընթացքը եւ որեւէ նորութիւն չգտաւ հոն: Այսուհանդերձ, տեղ մը, մոռցուած անկիւն մը իր ներաշխարհին մէջ, շինջ ու կայտառ ջուրերու աղբիւր մըն էր ժայթքած եւ կը հոսէր կարկաչաձայն: Այդ վայրկեանին հաստատ համոզումը ունէր, թէ մայրը ողջ էր, կ'ապրէր տեղ մը, զինք կը փնտռէր գիշեր ու ցերեկ եւ հրաշալի դիպումած մը պիտի գար շուտով զիրենք միացնելու:

Սեղրակ, ընդհակառակը, հետզհետէ կ'ընկղմէր թախծահար ընդարմացումի մը խորը: Իրեն այնպէս կը թուէր, թէ սրիկայութեան նուիրագործումը կը կատարուէր այս արարողութեամբ եւ իրենք օղիով կը ստանալին մեղքին գերագոյն օժոնն ու մկրտութիւնը:

Մրափող յիշողութեան ընդմէջէն կը տողանցէին այն բոլոր խրատներն ու դասախօսութիւնները, զորս լսած էր այլքոյի ահաւոր վնասներու մասին: Դեռ տարի մը չկար, որ հանդիսատար երդումներ ըրած էր բերանը այլքոյ եւ ծուխ չառնելու ո՛չ մէկ ատեն: Դեռ տարի մը չկար, որ սարսափ ու զգուանք կը զգար պատէ պատ զարնուելով տուն գացող

եւ իրենց կնիկները ծեծող գինովներէն: Եւ ահա ամէն վճիռ ու նկատում մէկ կողմ նետած, փողոցին մէջ, վկայեալ սրիկաներու կողքին, կը խմէր դժոխային այն հեղուկէն, որ մարմինին հետ հոգին ալ կ'այրէ, կը փճացնէ: Փճացած մըն էր արդէն ինք: Աւելորդ ու անտեղի մտահոգութիւն եւ մետասաներորդ ժամու կեղծ զոջում: Այլեւ ոչինչ կրնար փրկել զինք: Գոնէ լաւ է, որ արիութիւնը ունենար մինչեւ ծայրը երթալու: Եւ Սեդրակ յուսահատ կատաղութեամբ խլեց շիշը եւ մոլեխինդի բաժակը խմողի մը պէս զայն գլխուն քաշելէ առաջ՝ բարձրաձայն արտասանեց.

- Բոլոր՝ սրիկաներու կենացը...

- Մի՛ աճապարեք, օղլում,- միջամտեց Արսէն,- օղին խմելն ալ իր ձեւը ունի: Կամաց-կամաց կը խմեն, որ քէֆ տայ: Ետքէն՝ գլխուդ կը զարնէ:

Եւ որպէսզի վայելքը երկարաձգէ ու ախորժակները չափաւորէ, գրպանէն դուրս քաշեց սիկարէթի տուփը: Մատներով քանի մը անգամ թմբկահարեց տուփի խաւքարտին վրայ, յետոյ, մեծ հանդիսատրութեամբ, բթամատի հաստ ու կեղտէն սեւցած եղունգը տարաւ-բերաւ տուփի կողին, մինչեւ որ կափարիչը ազատեց:

- Ո՞վ կ'ուզէ,- հարց տուաւ ընկերներուն, ծխախոտը երկարօրէն հոտոտելէ եւ սրտագոյն «օ՛խ» մը քաշելէ ետք: Մերժող չեղաւ: Չորսն ալ նախ գլանիկները տեղատրեցին իրենց ցուցամատին ու միջնամատին միջեւ ու վառեցին լուցկին: Վահանի հազը նորոգուեցաւ իսկոյն, նեղացուցիչ ըլլալու աստիճան: Աւետիս ու Սեդրակ իրենց լեզուին վրայ լեղի համի մը հետ հաճելի գաղջութիւն մը զգացին: Ո՛չ համն էր սակայն զիրենք հետաքրքրողը, ոչ ալ հոտը: Հպարտ էին իրենց առնականութիւնը շեշտող ծուխի քուլաներով, որոնք մասնատր խնամքով մը դէպի վեր բռնուած գոյգ մատներու արանքէն կը բարձրանային: **Քէֆը** կատարեալ էր:

- Կիներու պէս կը ծխէք կոր, ներս քաշեցէք ծուխը,-
ըսաւ Արսէն:

Առաջին փորձողը Սեդրակ եղաւ: Բայց հազիւ ծուխը
թոքերէն ներս առած՝ զօրաւոր հազ մը պողթկաց շըր-
թունքներէն: Կուրծքն ու կոկորդը կ'այրէին. պիտի խեղ-
դրէր կարծես: Թեթեւ գլխու պտոյտ մը ունեցաւ եւ աչքերը
մթագնեցան պահ մը:

Ինքզինք վերագտնելէ ետք չկրցաւ զսպել ջղային
խնդուք մը, որ վերջ չունէր եւ թույցած ջիղերն ու մկաննե-
րը կը ցնցէր ցաւագօրէն:

- Սեդրակ գինովցած է, տղա՛ք. գինովները կամ կու
լան կամ կը խնդան,- դիտել տուաւ Աւետիս:

- Միտքս բան մը ինկաւ, աստոր համար կը խնդամ,-
ըսաւ Սեդրակ:- Ուսուցիչ մը ունէինք, որ սուկալի կը ծխէր,
բայց մեզի տեսարար ծխախոտի վնասներուն մասին կը
ճառէր: Օր մըն ալ հետեւեալ օրինակը լիջեց. Ծխող մարդ
մը եւ չծխող մարդ մը առանձին-առանձին լոգանք կ'առ-
նեն, մասնաւոր լոգարաններուն մէջ: Կը բերեն երկու-ե-
րեք օրէ ի վեր ծարաւ շուն մը եւ կը տանին ծխող մարդու
լոգարանին առջեւ: Այս շունը կը հոտոտէ ջուրը եւ հակա-
ռակ ծարաւին, կը մերժէ խմել ծխողի մարմնին ջուրը:
Բայց երբ սիկարէթ չգործածող մարդու մարմնին ջուրը
կու տան իրեն, շունը մեծ ախորժակով կը խմէ: Գիտե՞ք
ի՞նչու, կ'եզրակացնէր մեր ուսուցիչը. որովհետեւ ծխախո-
տի պարունակած թոյնը մարմնի ծակտիկներէն իսկ դուրս
կ'ելլէ եւ ջուրին կը խառնուի:

- Բաւական անխելք է եղեր ձեր այդ վարժապետը,-
հեզնեց Արսէն:- Փոխանակ ջոքով փորձելու, ծխող եւ չը-
ծխող մարդոց միւր թող տային անօթի շուններուն: Տես-
նենք կ'ուտէի՞ն թէ չէին ուտեր: Քանի որ ծխախոտը մեզ
կը պաշտպանէ շուններուն եւ գայլերուն դէմ, աւելի լաւ ու-
րեմն, մէկական հատ ալ վառենք:

Սիկարէթները նորոգուեցան:

Անցորդներէն շատ քիչեր ուշադրութիւն կ'ընծայէին «անչափասհաս սրիկաներու» քէֆի սեղանին, բայց Սեդրակ այն տպաւորութիւնը ուներ, թէ ամէն անցնող կը դանդաղէր՝ հեզնութեամբ կամ մեղադրանքով դիտելու ներկատուփին վրայ թառած օղիի շիշն ու իրենց շըրթունքներէն դուրս հոսող ծուխը:

Դիմացի հայ նպարավաճառը՝ Կարապետ աղան էր միայն, որ խանութի դրան առջեւ ամբողջ արարողութեան ականատես ըլլալէ ետք, մօտեցաւ եւ պարտականութիւն նկատեց յայտարարելու.

- **Աֆէրիմ** ձեզի, տղա՛ք, ըսելիք չկայ: Պէխ ու մօրուք չբուսած՝ սա խա՞լթն ալ սկսաք ուտել, ամօթ է, ամօթ...

- Ի՞նչ կ'ընենք կոր որ,- դիմադարձեց Արսէն զուարթօրէն,- պէխ ու մօրուքը ջրելու վրայ ենք, որ շուտ բուսնին:

- Պատասխաննին ալ պատրաստ է. երեսնին ջուր չէ մնացած որ. ինչ ըսես՝ կը խնդան:

Կարապետ աղան խոհեմութիւն համարեց խանութ դառնալ:

Աւետիս ոտքի ելաւ եւ յայտնեց, թէ տուն մեկնելու ժամանակն է: Քիչ մըն ալ մնալու եւ երկրորդ շիշ մը ապսպրելու Արսէնի պնդումները ապարդիւն անցան: Ուշ էր արդէն եւ գլուխները բաւականին ծանրացած:

Ոտքի վրայ՝ չորսն ալ պզտիկ տատանում մը ունեցան, ինչ որ շատ զուարճալի թուեցաւ իրենց: Գետինը կակուղ էր կարծես եւ մարմինները՝ թեթեւցած: Սրունքները պարային շարժումներ գծագրելու եւ ծալուելու հակումներ ի յայտ կը բերէին:

- Ասիկա գինովութեան առաջին աստիճանն է,- բացատրեց Արսէն:- Ես լաւ ուսումնասիրած եմ բոլոր աստիճաններն ալ. պապաս գրեթէ ամէն գիշեր գինով տուն կու գայ: Մե՛ղք, որ չուզեցիք երկրորդ ու երրորդ աստիճաննե-

րուն հասնիլ, շատ հաճելի ըլլալու է...

- Վնաս չունի, ատ ալ ուրիշ անգամ: Տուն երթալէ ա-
ռաջ, եկէք պտոյտ մը ընենք, որ սա թմրութիւնը անցնի
մեր վրայէն,- առաջարկեց Աւետիս:

- Լաւ ըսիր,- ընդունեց իսկոյն Արսէն եւ պահ մը մը-
տածելէ ետք՝ խանդավառ շեշտով մը ատելցուց.- եկէ՛ք եր-
թանք դէպի վարի թաղ...

«Վարի թաղ»ի իմաստը միայն Սեդրակ չըմբռնեց:
Վահան թեթեւ մը կարմրելով յայտարարեց.

- Ի՞նչ գործ ունինք այդ թաղը: Ես չեմ գար. եթէ կ'ու-
զէք դուք գացէք:

- Բան մը ընելու համար չէ,- համոզեց Արսէն,- ա-
նանկ, քիչ մը կը պտտինք, կը դիտենք, կը վերադառ-
նանք... խմողները մեծ մասամբ այդպէս կ'ընեն...

- Ատկէ բան դուրս չի գար, եւ յետոյ, շատ հեռու է,-
վճռեց Աւետիս:

- Լաւ, փոխենք ծրագիրը: Կ'ուզէ՞ք գետին եզերքը
երթալ, ատերակներուն կողմը. սա քովի շէնքին սպասու-
նին ալ հետերնիս կ'առնենք:

- Ուրտեղ չըլլալիք բան մը կայ՝ ան կ'առաջարկես,-
հեզմեց Աւետիս,- միշտ խենթ ծրագիրներ, անկարելի ե-
րազներ: Կարծես թէ աղջիկն ալ պատրաստ էր շուտ մը
քեզի հետեւելու:

- Ձեզի ի՞նչ, ես կը բերե՛մ,- ըսաւ Արսէն:- Այսօր չը-
գայ՝ վաղը կու գայ: Ասոնք սպասունի են, հոգի կու տան
տղոց հետ դուրս ելլելու, մա՛նաւանդ եթէ նուէր մըն ալ
առնես՝ ցատկելով կու գան: Մեր քովինը «ոտք» է, եաման
բան մը: Չէ՞ք տեսներ՝ աչքերը կլոր-կլոր կը դառնան...

Պոյաճիները իրենց դեկավար ընկերը լիազօրեցին
սպասունի համոզելու առաքելութեամբ եւ բաժնուեցան
իրարմէ:



Սեդրակ խրախճանքի սեղանէ ելլող մէկուն երևոյ-
թը չունէր բնաւ: Ուրախութիւնը ծանր բեռի մը պէս նստած
էր ուսերուն: Ֆիզիքապէս եւ հոգեպէս ընկճուած կը զգար:
Գլխու պտոյտը հետզհետէ կը վերածուէր սրտխառնութի:
Վայրկեան մը առաջ տուն հասնելու մասին կը մտածէր:
Ամէն ինչ շփոթ էր մտքին մէջ եւ միգապատ: Յէսի մէջ
պատկող գինեմոլին, ծխախտոտի վնասները բացատրող ու-
սուցիչին, «վարի թաղ»ի հանրային կիներուն, բոցավառ
աչքերով արաբ սպասուհիին եւ գետեզերքի խորհրդաւոր
աւերակ տնակներուն պատկերները իրար կը հրմշտը-
կէին՝ աղօտ նայուածքին դիմաց:

Հասաւ տուն: Ուժ չունէր շիղերուն տէր կանգնելու:
Ներկատուիք մէկ կողմ նետեց եւ սկսաւ հանուիլ: Զբարե-
ւեց, չիօսեցաւ, չծպտեցաւ: Յանկարծ շնչասպառ ընող նե-
ղութիւն մը զգաց կուրծքին տակ եւ ճակատը ծածկուեցաւ
պաղ քրտինքով: Հազիւ ժամանակ ունեցաւ դուրս նետուե-
լու: Փսխեց: Մայրը վազեց ետեւէն՝ ահ ու դողի մատնուած:

- Վա՛խ, եւարո՞ւմ, վա՛խ, ի՞նչ եղաւ քեզի:

- Բան չկայ, իրար մի՛ անցնիր, ստամոքսս պաղեր
է,- շշնջեց Սեդրակ մեծ դժուարութեամբ:

Մերժեց ընթրել. մերժեց գաւաթ մը տաք բան խմել
եւ մտաւ անկողին: Կը վախճար մօրը եւ քեռիին աչքերուն
նայելու: Կ'ուզէր քնանալ, կ'ուզէր մոռցուիլ, կ'ուզէր մոռ-
նալ ամէն բան...

Անկողինին մէջ, երբ ծածկոցը քաշեց գլխուն, չկըր-
ցաւ ընել իր սովորական աղօթքը, գոր փոքր հասակէն ի
վեր կրկնած էր գիշերները, ժամանակին եւ հասունցող
տարիքին հետ նոր մաղթանք մը աւելցնելով վրան: Հիմա
կ'ամչնար Աստուծմէ եւ կը վախճար, աղօթքի հաղորդու-
թեամբ, Անոր աչքերուն մէջ նայել:

«Զարուհին... Զարուհին տեսնե՛ր քեզ այս խոզի վիճակին մէջ», - հնչեց ձայն մը հոգիին խորէն:

«Էգ մըն ալ ան, բոլորի՛ն մման, ո՛չ անլի ո՛չ պակաս», մոլտաց ակոսներուն մէջէն, բռունցքները սեղմեց եւ բարձին վրայ գլուխը դարձուց մէկ կողմէն միւսը, կարծես խուսափելու համար Զարուհիի աչքերէն:

Քունը կ'ուշանար տեղատրուիլ փակ կոպերուն ներքեւ: Աշխատեցաւ շարժում չընել եւ քնացած ձեւանալ, որպէսզի չստիպուի մօրը անախորժ հարցումներուն պատասխան տալ:

Պահ մը ետք Սեդրակ լսեց քեռիին զգուշատր ձայնը, որ կը մրմնջէր.

- Քունը լաւագոյն դեղն է ամէն ցաւի: Նայէ՛, տղան ի՛նչպէս հանգստացաւ: Ա՛յս, եթէ կարենայի ես ալ ասանկ աղոտր բուն մը քաշել, յօդացաւերս կէս առ կէս պիտի մեղմանային...

- Դուն ի՞նչ կ'ըսես, Սեդրակս ձեռքէ կ'ելլէ կոր,- շըշընջեց հեւասպառ կինը:- Լեզուս առաջ չ'երթար, որ ըսեմ: Սիրտը թափած ատեն՝ շունչը ամբողջ օդի կը հոտեր: Խմած, գինով տուն դարձաւ տղան...

Մայրը մեծ ճիգ կը թափէր հեծկտուօքը զսպելու եւ քնացողը չարթնցնելու համար: Քեռին, անոր ըրած յայտնութեան վրայ, չկրցաւ զարմանքը զսպել եւ կառչեցաւ համրիչին: Տիրեց խոր, ճնշող լուրթին: Սուգի գիշեր ըլլար կարծես:

- Իմ տղաս մաքուր է, իմ մանչս հրեշտակ է,- շարունակեց մայրը, կարծես ինքն իրեն խօսելով:- Փողոցի տըղաքը, ընկերները գլխէ կը հանեն. ո՛վ գիտէ որո՞նց հետ կը տեսնուի, ի՞նչ տեսակ տղոց հետ կը պտտի: Կը խաբեն, խելքին հետ կը խաղան, շիտակ ճամբէն դուրս կը բերեն իմ չօճուխս...

- Տղադ իրապէս հրեշտակ է: Ծահած դրամը ամբող-

չութեամբ կը բերէ արհիդ մէջ կը դնէ, դուրսը մէկ դրուշ չի ծախսեր: Ամէն իրիկուն ճիշդ ժամանակին տուն կը մտնէ, դէռ չեղաւ գիշեր մըն ալ, որ դուրսերը անցըներ: Ի՞նչ կ'ուզես ասկէ անելի... խմե՛ր է եղեր... անոր խմածը ինչ պիտի ըլլայ. ընկերներով քէֆի եկեր եւ երկու գաւաթ նետեր են երեւի... հալալ ըլլայ: Տղան ասանկով մարդ պիտի դառնայ, աշխարհի չարն ու բարին ճանչնայ: Դուն կ'ուզես փէշիդ կարել, առնել ու նստիլ...

Քեռին կը խօսէր հանդարտօրէն, աշխատելով համոզումի շեշտ տալ իր յայտնած կարծիքին, բայց քոյրը անոր ձայնէն գուշակեց, որ հոգին խոռված էր: Կնճիռները մէկ անգամէն կրկնապատկուեցան ճակատին վրայ: Քեռին լաւ կը ճանչնար կեանքը: Գիտէր, որ սայթաքուն գանդիթափի վրայ կեցողը դժուար կ'ազատի, մանաւանդ երբ սրունքները վատուծ են եւ դեղեուն: Սեղրակ, անփորձ ու սահուն ոտքերով, գանդիթափին վերի ծայրն էր կանգնած: Ո՞վ պիտի արգիլէր անոր անկումը...

- Ո՞վ տէր պիտի կենայ տղոս,- խօսեցաւ քոյրը, իբրեւ արձագանգը անոր մտածումին:- Մէկը չունիմ, ես ծերացած կիւն մըն եմ, իմ ըսածներս քամիի ձայն կու գան իրեն: Դուն չխրատես՝ ո՞վ պիտի խրատէ: Աստուծոյ սիրոյն, Յակոբ, մեր տան մեծը դուն ես, մեծութիւն ըրէ: Քեզմէ կը քաշուի: Առ ծունկիդ քովը եւ հասկցուր իրեն ամէն բան, ամէ՛ն բան...

- Սեղրակ խրատի պէտք չունի, ինք կեանքէն կը քաղէ պէտք եղած դասերը:

- Մի՛նչեւ որ քաղէ՝ վախճամ բանը բանէն անցած ըլլայ: Չհասած պտուղ էր, երբ ծառէն վար ինկաւ: Ա՛խ, երանի շապիկս ծախէի եւ մանչս դպրոցէ չզրկէի... Լուսահոգին ուրիշին գաւակները կը կարդացներ, դպրոց կը դընէր, իր մէկ հատիկ ժառանգը ուսումի կարօտ մնաց...

Սեղրակ, վերմակին տակէն, բառ առ բառ կը հետեւ-

ւեր մօրը եւ քեռիին խօսակցութեան: Իրաքանչիւր բառ
դանակի հարուածի մը պէս կը մխուէր սիրտը: Պատաս-
խան չունէր տալիք, չքմեղանք չունէր ներկայացնելիք, ե-
թէ մինչեւ իսկ իր ճակտին ըսուէին այս ամէնը: Պիտի նա-
խընտրէր սակայն, որ արգահատելի մղկտանքի, անգօր
ողբ ու կոծի փոխարէն տան մէջ շտուէր գոռ ձայն մը եւ
ցնցէր իր ամբողջ էութիւնը: Պիտի մաղթէր, որ ուժեղ ձեռք
մը սթափեցնէր զինք, արիւնելու գնով: Ինչո՞ւ կարելի չէր
որձկալով դուրս թափել հոգիին կուտակուած թոյնը, կեղ-
տը, մորը ճիշդ այնպէս, ինչպէս ստամոքսի օղին կրցաւ
պարպել ու հանգստանալ:

Վարք ու բարքի համար տասը խաչ ստացող հէ՛ք
Սեդրակ...

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻՒԹ

- Պոյաճի՛, պոյա՛...

Սեդրակի ոտքերը անելի արագ կը շարժէին քան իր միտքը: Կիրակին՝ գործելու, վայրկեան չփախցնելու, շատ տեղ հասնելու սովորական եռանդով առաջ կը մղէր զինք: Ուրիշներու հանգիստի օրը պոյաճիներուն կը պարգևէր աշխատանքի ամենէն արդիւնաւէտ, թէեւ ամենէն յոգնեցուցիչ ժամերը: Պոյաճիները ու սափրիչները բախտակից են այս տեսակետով: Երկուքն ալ երես կը փայլեցնեն - մարդու երես եւ կօշիկի երես: Իսկ Կիրակին՝ հանգիստի, վայելքի ու զբօսանքի այն միակ օրն է շաբթուան մէջ, որ կը սիրէ փայլիլ, ճանաչել, նորոգուիլ:

Պոյաճիները շատ լաւ գիտեն այս իրողութիւնը ու կը վազեն: Առաւօտ կանուխ անոնց ձայնը կը սկսի հնչել փողոցներուն մէջ, մինչեւ իսկ կաթնավաճառի եւ քեահրքէ ծախողի կանչերէն առաջ: Կը վազեն թաղէ թաղ ու կը ներկեն փայլակնային արագութեամբ: Ծահը շուտ շարժողին է: Ժամանակը ոսկի է, մա՛նաւանդ, մինչեւ կէսօր, որմէ ետք գործերը կը դանդաղին:

Դերաստի աղջիկներ կան, որոնք թաղին տարեկից երիտասարդներուն սիրտը պիտի գրաւեն արդուկուած սուղ հագուստներով եւ ներկուած մաքուր կօշիկներով: Մանկամարդ հարսներ կան ու նոր փեսաներ, որոնք եկեղեցի պիտի շտապեն. ինչպէ՛ս կրնան իրենց կօշիկները սրբել չտալ: Տարիքոտ մարդիկ կան, որոնք ամօթ կը հա-

մարեմ աղտոտ ոտնամաններով կիրակնօրեայ այցելութիւններ կատարել: Մէկ խօսքով՝ առանց կօշիկի ներկին Կիրակի չի գար կարծես, ինչպէս Զատիկը՝ առանց ներկած հաւկիթի:

Օրհնեալ օր մըն է իրապէս Կիրակին պոյաճիներուն համար: Վեց օրերու անգործութեան տագնապին վրէժը կը լուծէ ան: Դանդաղի չկայ, թեւերու յոգնութիւն զգալ չկայ, երազել, ընկեր փնտռել, քով-քովի գալ ու շատախօսել բացարձակապէս արգիլուած բաներ են: Յետմիջօրէին միայն կարելի է սինեմայի հրապարակը հաւաքուելու եւ գանձանակի մէջ լեցուած արծաթ դրամները համրելու մասին մտածել: Հանգիստը, լեցուն գրպանով, վայելք է այն ատեն:

- Պոյաճի՛, պոյա՛...

Սեղրակ կը յառաջանար հաստատ ու փութկոտ քայլերով, բայց իր մտածումը դատարկապորտի մը ընթացքը ուներ: Կը շտապէր դրամ վաստկելու, կը խորհէր տխուր բաներու մասին:

Քեռիին խօսքերը կը հնչէին ականջներուն մէջ՝ հենարար արձագանգի մը պէս: Ինք սպասած էր, որ գինովութեան յաջորդ առաւօտուն իսկ քեռին անտարան կարդար գլխուն, բայց ի գոյր: Տենցիներու վերաբերումին մէջ որեւէ փոփոխութիւն չէր նշմարած: Ո՛չ մէկ ակնարկութիւն: Մայրը միայն տրտմագին շոպլութեամբ կը բաշխէր իր հոգածութիւնը: Զսպուած վիշտ մը կը բարձրանար անոր իրաքանչիւր շարժումէն: Եւ ասիկա՝ Սեղրակին համար՝ անլի ծանր կու գար, քան կծու յանդիմանութիւնը: Երկու օր անցնելէն ետքն էր, որ քեռին գրոյց ունեցած էր հետը, ընդհանուր ձեով, առանց մեկնակէտի, առանց որոշ նպատակ մը թիրախ ունենալու: Խօսած էր աշխարհի բաներէն, իր սեփական փորձառութենէն, գէշ ընկերներու վտանգէն: Չէր դատապարտած խմիչքը, ծխախոտը եւ տղամարդու արկածները: Բնական եւ նոյնիսկ անհրաժեշտ գտած էր այս

ամէնը երիտասարդի մը համար: Առաքինութիւնները մեղ-
քի կրակին մէջ կը թրծուին,- ըսած էր,- ինչպէս հերոսութիւ-
նը՝ պատերազմի հրդեհին: Բայց...

Ահա այս բայցն է, որ ձիւնահիւսի նման անդադար
գլտորելով քեռիի խօսքին ընդմէջէն՝ սպառնազին համե-
մատութիւններ առած եւ ինկած էր վրան, ծածկելով իր գի-
տակցութեան դաշտի բոլոր ելեւէջները: Լաւ չէր յիշեր հի-
մա, թէ ինչո՛ւ եւ ինչպէ՛ս մարդոց մեծամասնութիւնը կը
դառնար գերին մոլութիւններու, կը խորտակուէին տկար
սանձերը կամքին, ծայր կու տար հոգիի ախտաւոր քայ-
քայումը: Սեդրակ ուշադրութեամբ մտիկ չէր ըրած հան-
րային բարոյականի տխուր այս պատմութիւնը, որ
«բայց»է մը ծագում կ'առնէր:

Լաւ կը յիշէր սակայն, ինչ որ ըսած էր ի՛ր մասին:
Շեշտելէ ետք, թէ ինք ընտանիքին միակ ճրագն էր եւ թէ
հարազատները, դպրոցը եւ մինչեւ իսկ ազգը շատ բաներ
կը սպասէին իրմէ, քեռին բռնած էր Սեդրակին ամէնէն
զգայուն ջղային լարը: Գոված էր իր հանգուցեալ հայրը,
թուած էր անոր հոգեկան ու մտաւոր փայլուն կարողու-
թիւնները, մաքուր համբալը, բացառիկ արժանիքները եւ
եզրակացուցած.

- Տարագրութեան ճամբան բռնելէ օր մը առաջ ձեր
տունն էի. դուն կը քնանայիր՝ երեսիդ բարակ քող մը:
Այսօրուան պէս միտքս է. հայրդ պահ մը քեզ լուռ դիտելէ
ետք դարձաւ ինձի եւ ըսաւ. «Յակո՛բ, դուն՝ ողջ, ես՝ մեռած.
սա տղան իմ օճախս պիտի վառէ կրկին եւ մեծ մարդ պի-
տի դառնայ. մատով ցուցնելիք մեծ մարդ»:

Քեռին վճռական շեշտով մը համոզում յայտնած էր,
որ հօրը մարգարէութիւնը պիտի իրականանայ: Ամբողջ
ընտանիքը հպարտ պիտի զգայ ինքզինք՝ Սեդրակի նման
զառակ մը ունեցած ըլլալուն համար: Նուազագոյն կաս-
կածն իսկ չունէր այդ ուղղութեամբ: Սեդրակ՝ հօրը հարա-

գատ ծնունդը, սահմանում էր մեծ մարդ ըլլալու: Տխուր պարագաներն ու աննպատ պայմանները չէին կրնար արգելք հանդիսանալ...

Պոյաճին դանդաղեցուց ոտքերը, տեղ քաշլ ըրաւ ու յանկարծ կանգ առաւ: - «Մեծ մարդ, մատով ցուցնելիք մեծ մարդ», - կը մրմնջէին դողահար եւ ցուրտէն կապուտցած շրթունքները:

- **Պոյաճի՛, պոյա՛**...

Պոռաց կոկորդին ամբողջ ուժով, ճակատագրին դէմ նետուած թուքի եւ լուտանքի մը պէս: Բայց կոկորդը խեղդուեցաւ յուզումէն: Այդ գոյգ բառերը ահաւոր հեզանանքն իսկ էին հօրը կատարած մարգարէութեան: Իրապէս, ի՛նչ մեծութիւն, ի՛նչ փառք... ինչպէս ալ շո՛ւտ իրագործուած էր գուշակութիւնը... Խե՛ղճ հայր, գար ու տեսնէ՛ր իր որդին... հայհոյաբան, խմող սրիկայ մը, աղտոտ եւ արհամարհուած արարած մը, թաղին աննշան պոյաճին...

«**Պոյաճի՛**», - կանչեց կանացի ձայն մը կոնակէն: Սեղրակ ետին դարձաւ մեքենաբար եւ արցունքով պղտորած աչքերը յառեցան տան մը պատուհանին: Հաւատարիմ յաճախորդներէն մէկն էր: Կիրակին, յոգնած ժպտով, իր վրայ կը ծագէր շնորհալի կնոջ մը քնաթաթախ դէմքէն եւ կիսաբաց լանջքէն:

Սովորականէն աւելի գործ ունեցաւ այդ օր: Գլուխ քերելու ժամանակ չգտաւ: Հազիւ տուն մը գոհացուցած՝ ուրիշ բնակարանէ մը կանչուեցաւ իսկոյն: Ֆիզիքական լարուած աշխատանքը հետզհետէ թեթեւութիւն տուաւ հոգիին: Առանց ճախսանձի դիտեց թաղին երջանիկ պատանիները, որոնք իր ներկած կօշիկները հագնելէ ետք կ'երթային հեծանիւ նստելու կամ խմբովին գուարճանալու: Բնական գտաւ ամէն ինչ, ուրիշներու վայելքը, հարուստներու պերճանքը եւ իր գոգնոցն ու ներկատուփը: Ուրախատիթ բախտաւորութիւն նկատեց գործին առա-

տութիւնը, տեսակ մը յաւելեալ շնորհք, զոր մարդոց բարութիւնը կ'ընծայէր իրեն: Այսպէս է եղած միշտ: Օտառ քիչերն են, որ կ'անդրադառնան ընկերացին անարդարութեան, որուն դառն հետեւանքները ամէն վայրկեան կը կրքեն իրենց մորթին վրայ. եւ անկի քիչերն են, որ կ'ըմբոստանան այդ անարդարութեան դէմ:

Սեդրակ գարմանքով նկատեց Արսէնի բացակայութիւնը: Նոյն թաղերուն մէջ ան ալ յաճախորդներ ունէր եւ Կիրակի առաւօտները քանի մը անգամ իրար կը խաչաձեւէին: Այդ օր Արսէն բնաւ չերեցաւ: Գործ փայցնողը չէր ան. ընդհակառակը, ուրիշներուն իրաւունքը իսկ առանց խղճահարութեան յափշտակող մը շատ յաճախ: Սեդրակ բաւական վարանեցաւ, երբ Արսէնի յաճախորդները իրեն յանձնեցին կօշիկները: Ներկէ՞ր թէ մերժէր: Ի վերջոյ յանձն առաւ անոնցմէ մի քանին, որոշելով շահին կէտը ընկերոջը տալ, եթէ պահանջէր: Բայց Արսէնի կանչը չլսուեցաւ ոչ մէկ փողոցէ: Հիւանդութիւնը միայն, կամ ծանր արկած մը կրնար զինք արգիլել աշխատելէ:

Սեդրակի ենթադրութիւնը չէր սխալած: Իրիկուան դէմ, երբ ուղղուեցաւ դէպի սինեմայի կեդրոնատեղին, հետուէն տեսաւ Արսէնը, գլուխը կապուած, անշարժ իր աթոռակին վրայ, Վահանին քովը: Դժուարութիւն չունեցաւ ամբողջ պատմութիւնը մէկ անգամէն իմանալու: Արսէն հայհոյած էր ու խօսած տեսաբար եւ կը շարունակէր հայհոյել ու խօսիլ: Պատահարը կը պատմէր անկապակից խոստովանութիւններով, կրկնութիւններով, մէկու մը պէս, որ կը վիճի հակառակորդին հետ: Հակառակորդ չկար սակայն դիմացը: Վահանն էր միայն զինք լսողը եւ կը ջանար միփթարական խօսքերով հանդարտեցնել բորբոքած ընկերը:

Արսէնի ընտանեկան ողբերգութիւնը հասած էր գագաթնակէտին: Գիշերը, ուշ ատեն, խորթ հայրը գինով տուն վերադառնալով իրմէ պահանջած էր օրուան շահը:

Արսէն մերժած էր տալ: Ինչո՞ւ պիտի տար: Այլեւս երեկ-
ուան մանուկը չէր: Կը բաւէր ըրած գոհողութիւնները:
Ինքն ալ մարդ պիտի դառնար, ապագայ պիտի շտկէր: Եւ
յետոյ, տալը ի՛նչ օգուտ. գիւնտան բոլոր տակառները
պարպէս՝ նորէն չի թրջէր այդ մարդուն կոկորդը: Քոյրերը
անօթի, մայրը հիւծած... հայր ըլլալիք այդ հրէշը յարձա-
կած էր կնոջը վրայ, պոռալով. «Դուն կը սորվեցնես լակո-
տիդ այս խորամանկութիւնները»: Արսէն չէր կրցած համ-
բերել եւ ուզած էր պաշտպան կանգնիլ մօրը: Այն ատեն,
հայր կոչուող այդ շունը զինք ատած էր ոտքերուն տակ եւ
սպաննած պիտի ըլլար հասանօրէն, եթէ ակոսներուն
ամբողջ ուժովը Արսէն անոր սրունքէն չխածներ: Մայրը
ինկած մարած էր. քոյրերը ճշալով դուրս փախած էին. դը-
րացիներու միջամտութիւնը հագի յաջողած էր վերջ դնել
հայր ու տղու արինալի այս մեճամարտին:

- Ի՛նչ հայր,- կը կրկնէր յաճախ Արսէն ինքն իրմէ
ելած,- ես անոր...,- ու կը գլտորէր թրքերէն հնչեղ հայհո-
յանք մը:

- Հերիք է,- դիտել կու տար Վահան,- բերնէդ ելածը
չես գիտեր, անոր կինը հարազատ մայրդ է, մօրդ կը հայ-
հոյես կոր...

Խղճալի էր Արսէնի տեսքն ու վիճակը: Առաջին ան-
գամ ըլլալով Սեդրակ կարեկցութեան զգացում մը ունե-
ցաւ՝ անոր չեչուտ դէմքին նայելով: Արիւնով թրջուած աղ-
տոտ լաթ մը ծածկած էր ճակատը: Աչքերուն տակ, այ-
տոսկրներուն վրայ կապոյտ ու սեւ արատներ գոյացած
էին: Մէկ ուսը այնքան կը ցաւէր, որ ի վիճակի չէր խոզա-
նակ շարժելու: Որքան ալ աշխատէր քաջ երեւիլ, յայտնի
էր որ հոգեպէս եւ մա՛նասանդ ֆիզիքապէս կը տառապէր:

- Ա՛յ վերջացաւ,- ըսաւ Արսէն վայրկեան մը լռութիւն
պահելէ ետք,- ա՛յ ես այդ տունը ոտք չեմ կոխեր, փողոցը
կը պանկիմ՝ տուն չեմ երթար:

- Փողոցը չես մնար,- պատասխանեց Վահան,- ես ալ մինակ եմ, կ'երթանք միասին կը պակիրնք իմ սենեակս:

Սեդրակ մօտիկ խանութէն գնաց ընկոյզով կարկանդակ բերաւ եւ հիւրասիրեց ընկերները: Եւ միթո՞ղ բոլորովին փոխելու համար դիտել տուաւ.

- Աւետիսը չերեցաւ տակաւին:

- Ե՞րբ տեսեր ես, որ Աւետիսը երեւի, մինչեւ որ Կիրակիին ուղն ու ծուծը չքամէ,- ըսաւ Վահան:

Երկուքն ալ լռեցին: Անկարելի էր չէզոք խօսակցութիւն մը շարունակել: Ցաւէ՞ն, բարկութենէ՞ն թէ իրական տենդէ Արսէնի մարմինը կը ցնցուէր թեթեւ դողով մը: Ամբողջ օրը անցուցած էր թափառելով, անօթի եւ տանջահար:

Վահան շալկեց իր սնտուկին հետ նաեւ Արսէնի սնտուկը, մէկը աջ, միւսը ձախ ուսին եւ երկուքը միասին բռնեցին իր բնակարանի ճամբան:

*

* *

Երբ մինակ մնաց, Սեդրակ հաշուեց դրամները եւ երկու պարզօրտ մէկ կողմ դրաւ: Չորրորդ շաբաթն էր, որ Կիրակիի վաստակէն դրամ կը պահէր նպատակի մը համար, որուն գաղտնիքը միայն ինք գիտէր: Պատրաստուեցաւ տուն մեկնելու, բայց մնաց անշարժ կեցած տեղը, սնտուկին քով: Դիմացի մայթէն դէպի իր կողմը կ'առաջանար Հրայր՝ իր դասընկերը, մրցակիցը եւ մտերիմը, որուն հետ նոյն գրասեղանին վրայ կը նստէին:

- Օ՛, Հրայր, եկուր նայինք, որքա՛ն ատեն է քեզ չեմ տեսած,- բացականչեց Սեդրակ թեւերը բացած: Քիչ մը մնաց, որ ուրախութենէն գրկէր նախկին դասակիցը, եթէ չանդրադառնար իր ձեռքերու ներկին ու կեղտին: Մնացին ոտքի պահ մը, դէմ դէմի, իրար վերագտնող կարօ-

տաքադձ պանդուխտներու նման: Ապա Սեդրակ նստելու հրաւիրեց ընկերը, պոյաճիի իր աթոռակը ցոյց տալով. ըրած առաջարկին ծիծաղելիութիւնը շփոթութեան մատնեց զինք իսկոյն եւ ինք վերագրաւեց իր տեղը: Տարօրինակ երեւոյթ պիտի ըլլար՝ ունեւորի գառակ Հրայրը բազմեցնել ներկատուսին առջեւ, կիրակնօրեայ իր մաքրափայլ զգեստով:

- Է՛հ, պատմէ տեսնենք, ի՞նչ կայ չկայ դպրոցը իմ հեռանալէս ի վեր,- հարցոյց Սեդրակ, հոգիի իրական խոռվք մը աչքերում մէջ:

- Ի՞նչ պիտի ըլլայ, գիտցածիդ պէս,- ըսաւ Հրայր անտարբեր:

- Ո՞վ կը նստի հիմա քովդ, դասերը դժուարացա՞ն, կիսամեայ քննութիւնները լրացուցի՞ք, ո՞վ է առաջինը, դուն ի՞նչ թիւեր առիր...

- Եղբայր, մէկիկ-մէկիկ հարցոյր, որ կարենամ պատասխանել: Քննութիւնները՝ այո՛, լրացուցինք: Բեռ մը ինկաւ ուսերէս. շատ դժուար խնդիրներ տուին. տարուան վերջը իբրեւ թէ աւելի խիստ պիտի ըլլան. հոգաբարձուները անձամբ պիտի գան եղեր քննելու եւ տկարներուն վկայական պիտի չտան:

- Դուն հոգ ընելու պատճառ մը չունիս...

- Ո՛չ, անշուշտ: Անցած շաբաթ հանդէսի պէս բան մը ունեցանք. գիտես՝ ամէն քննութենէ վերջ կ'ընեն: Պարոն տնօրէնը բեմ կանչեց վեց դասարանի առաջինները: Մեր դասարանէն ալ ինծի վիճակուեցաւ բեմ ելլել եւ ծափահարողներուն առջեւ խոնարհութիւն ընել: Չվարժուողին համար շատ անհաճոյ բան է. մարդ կաս-կարմիր կը կտրի կոր...

- Ատիկա հաճութեդ ըլլալու է, Հրայր:

- Բու տեղդ էր բեմը. տնօրէնը ըսաւ արդէն. միշերոս ընդհանուր միջինը կարդացած ատեն՝ դարձաւ տղոց

եւ յայտարարեց. «Աւարտական դասարանը այս տար-
ուան սկիզբը դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր
լաւագոյն ներկայացուցիչը. կեանքի անողոք պայքարին
զոհն է ան. խօսքս կը վերաբերի մեր բոլորին սիրելի Սեդ-
րակին, որուն ջանասիրութեան մրցանիշը ոչ ոք կրցած է
կոտրել դպրոցին մէջ»:

- Իրաւ ըսա՞ւ այս բաները, թէ կը ծաղրես:

- Հաւատա՛, որ ճիշդ կը խօսիմ. խաբելու ի՞նչ պատ-
ճառ կայ:

- Ջարուհին հո՞ն էր այդ պահուն:

- Հոն էր, ինձմէ քիչ մը անդին նստած եւ ամենէն
խանդավառ ծափահարողներէն մէկը: Հա՛, լաւ յիշեցի:
Հանդէսէն ետք, դուրսը, Ջարուհին վե՛ն մըն ալ ունեցաւ
քեզի համար:

- Ինձի՞ համար...

- Մ'ելքոնը՝ կուզ Մ'ելքոնը, բակին մէջ մօտեցաւ մեր
խումբին եւ բողոքի շեշտով մը յայտնեց, թէ տնօրէնը
իրատունք չունէր դպրոցէն հեռացած աղտոտ պոչաճի մը
անունը յիշատակելու:

- Վա՛յ բոզի ձագ, վայ՛...

- Ջարուհին ջղայնացաւ եւ բոլորին առջեւ խայտա-
ռակեց Մ'ելքոնը: Ըսաւ, թէ նախանձէն այդպէս կ'արտա-
յայտուի, թէ կարեւորը մարդուս պաշտօնը չէ, այլ անոր
մտքի եւ հոգիի արժանիքները եւ թէ դուն պոչաճի դատնա-
լով չէիր դադրեր շա՛տ բարեսիրտ եւ շա՛տ խելացի տղայ
մը ըլլալէ:

- Անմաման աղջիկ է Ջարուհին... քրոջ պէս կը սիրելի
զինք... անոր ունեցած սիրտը ոչ մէկը ունէր... դո՛ւն ըսէ, իր
արժէքով, իրեն նման մէկը կա՞յ դպրոցին մէջ:

Պիտի ուզեր ըսել՝ ամբողջ աշխարհի մէջ, պիտի
ուզէր երանի տալ Հրայրի աչքերուն, որոնք ամէն օր Ջա-
րուհին դիտելու անսահման բախտատրութիւնը ունէին,

պիտի ուզէր պարել հրճուանքէն, բայց զսպեց ինքզինք: Արիւնը կը խայտար երակներէն ներս: Զարուհին՝ խարտեաշ մազերով անո՛ւշ այդ աղջիկը, զինք չէր մոռցած ուրեմն. ոչ միայն չէր մոռցած, այլ մինչեւ իսկ պէտք եղած վայրկեանին չէր քաշուեր զինք պաշտպանելու ամետղուկ Մելքոններու առջեւ:

- Գալով այդ շան լակոտին,- ըսաւ Սեդրակ հանդիսաւոր շեշտով,- առնելիքը թող ըլլայ. հարկաւ փողոցին մէջ տեղ մը կը հանդիպիմ օր մը իրեն...

- Կը խնդրեմ սակայն, որ ինձմէ լսած չըլլաս. չեմ ուզեր, որ անունիս շուրջ խնդիր դառնայ:

- Հոգ մի՛ ըներ, ես չօճուիս չեմ:

Մաշիկանման կարմիր կօշիկ մը կոխեց սնտուկին. սպիտակ ու թաւ պեխերով յաղթանդամ ծերունի մըն էր, որ էնթարիին փէշերը հաւաքեց ծունկին վրայ, ձիւնաթոյր ու լայն շալվար մը ցուցադրելով տակէն: Սեդրակ դժուարաւ կրցաւ ետ մղել շրթներուն խուժող հայհոյանքը: Ատե՞ճն էր կօշիկ ներկելու: Ուրկէ՛ ալ տնկուեցաւ սա փայտի կտորը. խերը անիծած անոր տալիք փարային... Հրայրի ներկայութեան ինչպէ՞ս հակէր աղտոտ ոտքերու հոտին ու փոշիին վրայ: Սեդրակ պարտականութեան մարդն էր սակայն. չէր կրնար վճռել ներկայացող յաճախորդը:

- Գծագրութեան ուսուցիչը նորէն կը խաղցնէ՞ք առաջուան պէս,- դարձաւ ընկերոջը, առանց դադրեցնելու խոզանակին արագ շարժումները:

- Հէ՛ջ մի ըսեր, կատարեալ խեղկատակութիւն. մարդը երբեմն լալու աստիճանին կը հասնի: Անցած դասին գծելու համար սեղանին վրայ դրած էր կողով մը. Գրիգոր էջ մը գծեց եւ տարաւ իրեն: Պարոնը փորձեց բարկանալ. Գրիգոր անմիջապէս պատասխանեց. «Դուք չըսի՞ք, որ ամէն աշակերտ իր տեսածին պէս պէտք է գծէ. ես էջ կը տեսնեմ կոր հոն»: Ուսուցիչը գլուխը շարժեց եւ ըսաւ.

«Նման գնմանս սիրեսցէ»: «Ծիշոյ կ'ըսէք պարոն,- վրայ բերաւ անպիտանը,- ամէնէն շատ ձեզ կը սիրեմ»:

- Մի' ընէք, եղբայր, մեղք է մարդուն: Ծատ բարի է, բարկանալ իսկ չի գիտեր: Ամէն անգամ, որ միտքս կ'իյնայ իմ ըրածներս, սիրտս կը ցաւի:

- Դուն ի՞նչ կ'ընէի որ:

- Ծիշոյ ես, բայց բանի մը արժէքն ու անուշութիւնը կորսնցնելէ վերջ կը հասկնաս: Անո՛ւշ բան է դպրոցը...

Սեդրակի գլխուն վերելէն թաւ պեխերը շարժեցան եւ ուշադրութեան հրաւիրեցին պոյաճիի անզգուշ ձեռքերը, որոնք իրենց սահմանէն անցնելու եւ ձիւնաթոյր վարտիքը արատաւորելու սպառնալիքը կ'ընէին:

- Պոյաճիութիւնը ինչպէ՞ս է,- հարցուց Հրայր, վայրկեանի մը լուութիւնը խզելով:

- Ի՛նչպէս կ'ուզես որ ըլլայ. կը տեսնես կոր անա. դպրոցին չի նմանիր. կեանքն է աւ վերջապէս, պէտք է անդադար աշխատիս, պէտք է համակերպիս, պէտք է լրրի կատարես պարտականութիւնդ: Ներողամտութիւնը, հանդուրժողութիւնը տեղ չունին հոս: Վերաքննութիւն չըկայ. կամ կ'իյնաս, կամ կ'ելլես:

- Գիտե՞ս ինչու կը հարցնեմ... Երկուշաբթի օրուան շարադրութեան նիւթերնիս «պոյաճին» է. այս գիշեր ստիպուած եմ գրելու: Չեմ գիտեր ինչո՞վ պիտի լեցնեմ երկու էջը... քիչ մը անելի մանրամասն գաղափար կու տա՞ս ինձի այս մասին...

Խոզանակը սառեցաւ Սեդրակի ափին մէջ: Յաճախորդը ներկի աւարտումին նշան համարեց այս անշարժացումը եւ փէշերը վար առնելով հեռացաւ: Սեդրակ դանդաղօրէն բարձրացուց գլուխը, նայուածքը մխրճեց աւարտական դասարանի առաջնութիւնը շահած աշակերտին աչքերուն խորը եւ ըսաւ հատիկ-հատիկ.

- Այդպէ՛ս ուրեմն... «պոյաճին» շարադրութեան

նիւթ... վալլահի լաւ խորհեր է պարոն Պօղոսեանը... գէշ
նիւթ չէ, բնա՛ւ գէշ նիւթ չէ... ընդհակառակը, ինքնատիպ,
նոր, պատկերալից... ուրեմն ասոր համար էր, որ փնտռե-
ցիր զիս եւ եկար քովս...

- Ասիկա առիթ մը եղաւ, արդէն կը փափաքէի մէյ մը
հանդիպիլ քեզի:

- Ծնորհակալ եմ, շատ ազնիւ ես: Անշուշտ պարոն
Պօղոսեանը նիւթին բլանն ալ տուած ըլլալու է: Իմ ժամա-
նակս, երբ եկեղեցիի դրան մտրացկաններուն կամ կոյրե-
րուն մասին շարադրութիւն պահանջէր՝ չէր մոռնար բլանը
տալու: Կ'ուզե՞ս քեզի գոց արտասանեմ գրելիքիդ յատա-
կագիծը: Առաջին պոյաճիին արտաքինը - հագուստները,
դէմքին արտայայտութիւնը, սնտուկը եւ քալած կամ
նստած պահուն՝ ընդհանուր երեւոյթը: Երկրորդ՝ աշխա-
տանքը - յաճախորդի սպասումը, որոնումը, գիտը, ներկը,
մատներուն եւ թելերուն աշխուժ շարժումները: Երրորդ՝
պոյաճիին ներքին աշխարհը - ի՞նչ կը զգայ, ի՞նչ կը մտա-
ծէ, որո՞ւն համար կ'աշխատի, ի՞նչ բանի պիտի յատկացը-
նէ շահած դրամը: Եւ վերջապէս չորրորդ՝ խորհրդածու-
թիւններ եւ տպատրութիւններ... Ըն՞չո գուշակեցի թէ ոչ:

- Ընչո՞ ես մօտաւորապէս:

- Դէ՛ լաւ ուրեմն, ես գամ սնտուկովս դասարանը կէս
ժամ նստիմ, ինձի նկարագրեցէք:

- Վրա՞ս կը խնդաս:

- Պոյաճիւն ո՞վ է, որ ուրիշներուն վրայ խնդայ. ընդ-
հակառակը, ամէն մարդ կրնայ պոյաճիին վրայ խնդալ՝
պզտիկ պարողուտի մը կօշիկը շփել տալով. պատիւնիս
մե՛ծ է... չե՛ս տեսներ՝ մինչեւ իսկ վեցերորդ դասարանի շա-
րադրութեան նիւթ կազմելու բախտին արժանացած ենք:

- Ասոր մէջ վիրատրուելու ի՞նչ կայ որ...

- Բա՛ւ լիցի, կարելի է միայն փատաւորուիլ այս
բարձր ուշադրութեան համար: Ա՛խ, ձգէին եւ ե՛ս գրէի

պոյաճիներու մասին... լա՛ւ մտիկ ըրէ ըսելիքներս եւ վստահ եղիր, որ գլուխ գործոց մը պիտի արտադրես: Բլանի առաջին եւ երկրորդ կէտերուն վերաբերեալ բացատրութիւն չունիմ տալիք: Պոյաճիին «արտաքին»ը աչքերուդ դէմն է արդէն. աղէկ մը դիտէ եւ տո՛ւր պատկերս: Պոյաճիին «աշխատանք»ը քիչ մը առաջ տեսար. վերջին ծայր գուարճալի խաղ մը. բուրումնաւէտ ներկեր, փափկամազ խոզանակներ եւ մեր նկարչութեան դասը յիշեցընող արուեստագէտի ստեղծագործութիւն: Կատակ չէ, պոյաճին ալ գոյներու եւ վրձիններու հետ կը խաղայ... Կարելորը բլանի երրորդ կէտն է՝ պոյաճիին «ներքին աշխարհը»: Հոս է, որ կրնամ օգնել քեզի: Ի՞նչ կը կարծես, անկիւնը խելօքիկ նստած պոյաճիի մը մտքէն ինչե՛ր կ'անցնին, հոգին ո՛րտեղերը կը թափառի... պիտի փորձուիս գրել գուցէ, թէ ան կարօտով եւ խոր տառապանքով կը դիտէ տարեկից պատանիներու ուրախ-գուարթ դպրոց յաճախելը, որսէ՛ գրկուած է ինք. կը մաղթէ քանի մը դահեկան աւելի շահիլ՝ հացին հետ քիչ մըն ալ պտուղ տանելու համար տունը իրեն սպասողներուն, եւ ուրիշ այս տեսակ սիրտ ծակող բարեմիտ բաներ... անա՞նկ է թէ ոչ:

- Ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ:

- Ըա՛տ բաներ, սիրելիս, շա՛տ բաներ, որոնք քու խելքէդ-մտքէդ վեր են: Պոյաճիին «ներքին աշխարհը» իր ձեռքերուն չափ աղտոտ է: Մի՛ հաւատար եթէ բացատրութիւններու մասին խօսին: Բացառութիւն գոյութիւն չունի: Կան՝ որոնք ուրիշ փափաք չունին, եթէ ոչ կնոջ մը կօշիկները ներկել ոտքերուն վրայ եւ փէշին տակէն մերկ սրունքները դիտել. կան՝ որոնք գիշեր-ցերեկ թոցնելու եւ գողնալու մասին կը մտածեն. կան ալ՝ որոնք իրենց ամբողջ շահածը օդիի, սիկարէթի եւ այլ սրիկայութիւններու կը յատկացնեն, կան բախտախաղի կու տան՝ փողոցը «երեք թուղթ» նետող անպարարներու դէմ կեցած: Քեզի համար ամէնէն լաւը ես

եմ, չէ՞...: Եթէ գիտնաս, թէ «Աերքին աշխարհ»էս ի՞նչ աղտոտութիւններ կը հոսին այս վայրկեանիս...

- Կը չափազանցես, Սեդրակ:

- Չեմ չափազանցեր, կը մեղմացնեմ: Դուս անելի՛ն գրէ. թեւ տուր գրիչիդ, պոյաճիները բաղդատէ պզտիկ ու սեւ սատանաներու հետ, որոնք զգուելի են եւ խայտառակ: Երբ հասնիս նիւթիդ վերջին կէտին՝ «խորհրդածութիւններ», կրցածիդ չափ հարուածէ մեր ցեղը, հէջ մի՛ վախճար. գրէ որ մարդ անունին անարժան թափթփուքներ ենք, բարոյական հիւանդութեան շրջուն բոյներ, գրէ որ ընկերութիւնը պէտք է ազատի այս որդերէն... Սխալած չես ըլլար, հէջ մի՛ վախճար:

Սեդրակ ընկերոջը շմորուն երեսոյթէն քաջալերուած՝ կը խօսէր յաղթական դատախազի մը պէս: Պոյաճիներու այդպէս ըլլալուն ամբողջ պատասխանատուն Հրայրն էր կարծես. կը խօսէր վրէժ լուծողի դառնութեամբ եւ հեշտանքով:

- Հրայր,- լսելի եղաւ քիչ մը հեռուէն կնոջական ձայնի մը խիստ կանչը:

- Այո՛, հօրաքոյր,- արձագանգեց Հրայր մեքենաբար եւ երկուքը մէկ դարձան ձայնին կողմը:

- Ի՞նչ կ'ընես հող, կօշի՞կդ ներկել կու տաս:

- Ո՛չ, կեցեր եմ, կը խօսինք:

- Որո՞ւն հետ կը խօսիս, պոյաճիի՞ն...

- Այո՛... ո՛չ... Սեդրակն է, կը ճանչնաս, դասընկերս, որ հիմա...

Հօրաքոյրը հասած էր արդէն տղոց քով. թեւերը խաչաձեւ կուրծքին վրայ, շանթահարիչ նայուածքը սեւեռած Հրայրին, կիսամութիւն մէջ խոժոռ դէմք մը թօթուելով յայտարարեց.

- Մենք ալ տունէ-տուն քեզ կը փնտոենք: Մի՛նչդեռ պարոնս փողոցի տղոց հետ ժամանակ կ'անցընէ... պոյա-

ճիշտ զատ ուրիշ ընկեր չգտա՞ր:

- Բայց հորաքոյր, Սեդրակն է, ան որ մեզի կու գար երբեմն...

- Հրայր, մանչս, արժանապատուութեան զգացում ունեցիր. գիտցի՛ր թէ ի՛նչ ընտանիքի զաւակ ես եւ ատոր համեմատ ընկերներ ընտրէ: Պոյաճիճ չի դատիր պոյաճի ըլլալէ: Եթէ այսպիսի յարաբերութիւններ մշակես, պիտի փճանաս անարագրով եւ պիտի չյաջողիս դասարանիդ առաջինը հանդիսանալ:

Սեդրակ տժգունած էր մեռելի մը պէս: Ծրթները կը դողային: Պիտի ուզէր ըսել. «Տիկին, որքան ատեն ես դպրոցն էի, Հրայրը միշտ երկրորդն էր դասարանին», բայց չկրցաւ այդ խօսքերը արտասանել եւ ակամայ մըմնջեց:

- Կը տեսնե՞ս, Հրայր, իրաւունք չունէի՞. հորաքոյրդ քեզմէ աւելի լաւ ճանչցեր է պոյաճիները:

Մեկնեցան: Սեդրակ նոր զգաց հարուածին ծանրութիւնը եւ երկու ասիերը բացած՝ նետուեցաւ ներկատուփի ոտնակալին վրայ եւ ամբողջ ուժովը սեղմեց զայն, կարծես թէ կոկորդ մը բռնած ըլլար խեղդելու համար:

ԱՄԵՐԻԿԱՆ ՓՏՆՈՒԵՑԱԲ

Դամասկոսի ամրան գիշերներուն չափ քաղցր եւ հմայիչ աղջիկ մըն էր, որ բացաւ դուռը եւ աստղերուն ժըպիտով ժպտեցաւ իրեն, զոյգ մը տատրականման կօշիկներ լանձնելէ առաջ: Թաւշեայ մթին աչքերը տարօրինակ ցոլքեր արձակեցին, մինչեւ հոգիին խորը թափանցելով: Ուսին վրայ անփոյթ ձգուած վարսերուն ջրվէժը ծփանուտ ալիք դարձաւ եւ ամպի մը պէս եկաւ ծածկելու պահ մը դէմքին կիսալուսինը, երբ աղջիկը ծոեցաւ իր վրայ: Բայց երբ շտկուեցաւ կրկին, դէմքը ստացած էր ճառագայթարձակ նոր փայլ, կարծես լուացուած ըլլար անմահութեան վարդաջուրով:

Տունէ տուն, փողոցէ փողոց եւ թաղէ թաղ շրջած ատեն, պոյաճիական իր ասպարէզի ամբողջ ընթացքին, Սեդրակ շատ աղջիկներ էր տեսած եւ շատ կօշիկներ ներկած, բայց այս մէկը բոլորովի՛ն ուրիշ բան էր: Հրեշտակային յայտնութիւն մը, որ հեքիաթական արեւելքի հուրիներէն առած էր իր գեղն ու հրապոյրը:

Ուրիշներ՝ կօշիկին հետ արհամարհանք, կամ լաւագոյն պարագային՝ արգահատանք կը նետէին երեսին, շառաչածայն փակելով դուռը իրենց ետեւէն: Այս մէկը բարութիւն եւ խանդադատանք տեղացուց իր անմահ աչքերէն: Ուրիշներ իր մատներու խնամքին կը լանձնէին հասարակ ոտնամաններ՝ այծի, ոչխարի, եգի կամ գոմէշի կաշիով շինուած. այս մէկուն տուածը զոյգ մը հագուա-

գիտ գեղօր ըլլար կարծես, որոնց վրայ կարելի է միայն հիանալ ու գուրգուրալ:

Սեդրակի սարսուռն մատները այն հաստատ տպա-տրուութիւնը ունէին, որ վարդի թերթերու կը հպին եւ գեր-զգայուն հոգի մը կը բաբախէ այդ կօշիկներու կուրծքին տակ: Զանոնք շրթներուն եւ ոունգերուն մօտեցնելու փա-փաք մը շրջան կ'ըներ երակներուն մէջ: Աւելի սիրեց քան ներկեց, աւելի գգուեց քան խոզանակեց:

Փողոցի կիսաբաց դռնէն կը տեսնուէր մարմարով սալարկուած ընդարձակ բակ մը, ցայտադիւր աւազա-նով, շուրջը մշտադալար տունկերու թաղարներ: Կախար-դանքը կատարեալ էր: Աղջիկը սատափագարդ փայտէ սանտալներով կը շրջէր աւազանին բոլորտիքը: Քայլե-րուն հնչեղ արձագանգը կը խառնուէր արաբական տրտմանուշ երգի մը մեղեդիին, որ մեղմօրէն դուրս կը հո-սէր անոր շրթունքներէն:

«Վերջալոյսի աղջիկն է սա, ո՛վ Աստուած»:

Սեդրակ իր հիացական վերացումը արտայայտելու համար ուրիշ բառ չգտաւ, եթէ ոչ բացականչութեան մը պէս ինքն իրեն արտասանել Դուրեանի «Թրքումի»ին սա տողը, գոր շատ սիրած էր դասարանին մէջ կարդացած ատեն:

«Վերջալոյսի աղջիկ»ը երբեմն դուրս կու գար, կը կանգնէր սեմին, կը ժպտէր իրեն, կը ժպտէր երկինքին, կը դիտէր հետաքրքրութեամբ իր շարժումները եւ դարձեալ կը մտնէր ներս, շարունակելու համար երգեցիկ պտոյտը աւա-զանին շուրջ: Այնքան մտերմական, այնքան տաք ու քաջա-լերող էր անոր նայուածքը, որ Սեդրակ փորձուեցաւ խօսակ-ցութիւն մը սկսիլ հետը. բայց գիտցած արաբերէն բառերը կը դաւանանէին, հնարամտութիւնը փախուստ կու տար, սրիկայի համարձակութիւնը մէկ անգամէն կը փշրուէր ամօթխածութեան շառագոյն կրակին առջեւ: Անոր ներկա-յութեան Սեդրակ ինքզինք կը զգար այն, ինչ որ էր՝ պոյանի

սնտուկը ուսին առնելէ առաջ: Ի գին դժուարին ճիգերու, վերջապէս կրցաւ գլուխը վեր առնել, շեշտակի դիտել «վերջալոյս»ի անհասանելի շքեղանքը եւ ըսել խոնարհաբար.

- Օտտ աղոյր կօշիկներ են...

- Այո՛, իրատունք ունիս, նախընտրած գոյգս է:

«Սերինա» լսուեցաւ այդ պահուն ներսէն: Մայրն էր, որ աղջիկը կը կանչէր:

«Սերինա» կրկնեց պատանին այնպէս, ինչպէս լուսնի լոյսին տակ, համբոյրէ մը վերջ, երջանիկ սիրահար մը պիտի տար անունը սիրուհիին: Դանդաղօրէն շարկեց ներկատուիքը: Աղջիկը եղնիկի նման ներս վազելէ առաջ՝ ըսած էր իրեն. «Ամէն շաբաթ, այս ժամերուն հանդիպէ մեզի»: Սերունակին կը թուէր, թէ խորհրդաւոր եղանակով արտասանուած էին այդ խորհրդաւոր բառերը: Ուրիշ պարագաներու մէջ, լաճախորդ մը եւս շահած ըլլալու գոհունակութեամբ պիտի ընդունէր նման հրաւերներ, սակայն ներկայիս հրաւերը կը ստանար լուսաշող խոստումի մը համեմատութիւնը եւ գոհունակութիւնը կը վերածուէր ուրախութեան արբեցումի:

Գանձ մը գտնողի երեւոյթն ունէր Սերունակ: Տարօրինակ խաղեր կը խաղայ երբեմն մարդոս ճակատագիրը: Գրեթէ ամէն օր կ'այցելէր այդ փողոցը, կ'անցնէր այդ տան առջեւէն, առանց վայրկեան մը անգամ մտածելու, թէ այդ անշուք բնակարանին դուռը կը բացուի երկրային դրախտի մը վրայ եւ հոն կ'ապրի Սերինան:

Ո՞վ էր սակայն այս դէտատի գեղուհին, որ իրեն տարեկից կամ քիչ մը անելի մեծ կ'երեւէր: Դպրոցակա՞ն թէ տան աղջիկ: Հարո՞ւստ, տեղացի՞ թէ պատահական հիւր: Ամբողջ գիտցածը անոր մասին՝ անուն մըն էր միայն, քաղցրահնչիւն եւ անմոռանալի անուն մը - **Սերինա**: Աւելին գիտնալու պէտք չունէր արդէն: Կը բաւէր, որ ան հոն ըլլար միշտ, շաբաթը անգամ մը գոնէ բանար դուռը, ժպտէր իրեն, նայուածքը միայն էր իր աչքերուն խորը, կը

բաւեր, որ ահերոմն մէջ առնէր անոր կօշիկները եւ հպէր անոնց, ինչպէս պիտի հպէր անոր մարմնի ամէնէն մտերիմ մասերուն: Վարձատրութիւն, փոխադարձութիւն պիտի չցանկար բնաւ. երանութիւնը կատարեալ պիտի ըլլար, եթէ Սերինան գուշակէր իր ներքին փոթորիկը, եթէ Սերինան հանդուրժէ՛ր, որ ինք երկիւղած ու հաւատարիմ երկրպագուն ըլլար իրեն...

Սեդրակ խղճահարութեան նման բան մը զգաց յանկարծ հոգիին խորէն. քիչ առ քիչ երեւակայութեան պատարին վրայ ձեւ ու գոյն ստացաւ վաղածանօթ, բայց շատոնց տժգունած դէմք մը՝ Ջարուհիին դէմքը, որ յանդիմանող թախիծով կը դիտէր իր նոր զգացումները: Մեղաւոր չէ՞ր արդեօք այս անհաւատարմութեան համար: Չէ՞ր վիրատրէր անոր անբիծ յիշատակը:

- Յիմարութի՛ւն,- ըսաւ Սեդրակ բարձրաձայն մեճախօսելով եւ թօթունց ուտերը:- Ծիծաղելի եմ պարզապէս: Կարծես թէ Ջարուհին նշանածս ըլլայ, կարծես թէ իրարու խօսք տուած ըլլանք: Ո՞վ գիտէ, ան ալ իր ժպիտներն ու շնորհները որո՛նց կը բաշխէ այս պահուս...

Համոզիչ չէին գտած պատճառաբանութիւնները, բայց ունեցած յափշտակութիւնը բաւականին զօրատր էր՝ խիղճ մը լոնցնելու համար:

Սպասումի տենդահար շաբաթ մը անցուց Սեդրակ: Պարտասուն ուղտերու դանդաղ քայլերով կ'առաջանային օրերը. երբեմն մինչեւ իսկ ծնկաչոք կը փոռէին փողոցի սալաշատակին վրայ՝ նոյն գորշ վայրկեանները անվերջօրէն որոճալու համար: Պոյանին լքած էր աշխատանքը, յանախորդները, ծանօթ թաղերը. օրը քանի մը անգամ կ'անցնէր Սերինայի տան առջեւէն՝ յուզուած, սրտատրոփ, բայց յուսալից: Դուռը փակ էր միշտ իր բախտէն եւ գայն թակելու իրաւունքին համար ստիպուած էր ամբողջ շաբաթ մը համբերել:

Համբերեց. բայց Սեդրակ միայն գիտէ թէ ի՛նչպէս: Ընկերները դժուարութիւն չունեցան իր տրամադրութիւններուն յեղակարծ փոփոխութիւնը նշմարելու. բացառապէս էր, որ պոյաճի սեւ գոգնոցը նեղ կու գար՝ կոյրծփն տակ փոթորկող պեկոծումը ծրարելու: Իր երազկոտ մեղամաղձոտութիւնը, սիկարէթի յարածուփ քուլաներով պարտունած, «կոնծաբանութեան» պահերուն մանաւանդ, աւելի եւս բնորոշ կը դարձնէր վիճակը: Այնքան որ, իրիկուն մը, Արսէն պողթկաց.

- Խեղը կ'անհծեմ քու այս սերսէմ ձեւերուդ. ալ կը բաւէ՛, խօսէ՛ որ բան մը հասկնանք: Իշու պէս կը գոամ՝ եթէ քիթէդ բռնուած չես դուն...

Սեդրակի խոժոռ դէմքն ու դժգոհ շարժումները մեղմացուցին զինք եւ գորովոտ կարեկցութեամբ մը աւելցուց.

- Ամօթ չէ, օղլում, ամէնու ալ գլխէն ասանկ բաներ կու գան կ'անցնին... պատմէ նայինք, ի՞նչ տեսակ պատահ է, կ'արժէ՞ գոնէ հացէ ջուրէ կտրուիլ իրեն համար...

Սեդրակ չդիմացաւ այլեւս. ազատ ելք գտնող ջուրի հոսանքի մը պէս յորդեցան զսպուած զգացումները: Թեթեւցաւ խոշոր քայլ մը առաջ գնաց կարծես յաջողութեան ճամբուն վրայ: Նկարագրեց Սերիմայի սլացիկ հասակը, թըրթըրուն իրանը, գիշերի գոյն մազերը եւ այն խորունկ աչքերը, որոնք այնքան սիրով ու բարութեամբ սեւեռած էին իրեն:

- Հասկցայ,- ըսաւ Արսէն լուռ մտիկ ընելէ ետք,- սըխալ դուռ գարկեր ես. ան քու բերնիդ պատառը չէ: Դեռ դպրոցը չաւարտած՝ ուզող ուզողի, հարուստ տեղերէ: Ես ալ կը կարծէի, թէ խելքի մօտիկ մէկուն անունը պիտի տաս. այս թաղերուն մէջ սիրուն սպասուհի՞ կը պակսի...

- Սպասուհիներուն աչք տնկելը քու մասնագիտութիւնդ է,- կատակեց Վահան:

- Ինձի որս չի պակսիր. ծեր ամուսիններէ ձանձրացած կնիկները ողջ ըլլան, դուք ձեզ հոգացէք:

- Ի՞նչ ալ չգտնուելիք մէկն ես. երեսիդ նայողը չի կշտանար. երագին մէջ անգամ ուրուականդ կը տեսնէ, ըսաւ Աւետիս:

Խնդրացին: Ծաղկահար դէմքին հետ հիւսուած սովորական կատակներէն վիրաւորուողը չէր Արսէն:

*

* *

Վերջապէս հասաւ Չորեքշաբթին: Այդ առաւօտ Սեդրակ հագաւ նոր ճերմակ շապիկը, խնամքով կարկտել տուաւ բաճկոնին մասերը, փոխեց տաքատը եւ նոսնց գոգնոցի դուրս եկաւ տունէն: Մօրը դիտողութիւններն ու զարմացական հարցումները անպատասխան մնացին: Ներկատուիը փոխանակ շալկելու, ձեռքէն կախուած պրտըտցուց, որպէսզի վրան գլուխը մաքուր մնայ: Ամէն անգամ, որ առիթ ունեցաւ կօշիկ ներկելու, իսկոյն վազեց փողոցի աղբիւրներէն մէկուն մօտ եւ ձեռքերն ու երեսները լուաց, մազերը կրկին ու կրկին սանտրեց:

Որոշուած պահէն ժամ մը առաջ Սեդրակայի տան դիմաց էր: Անոնք որ կը պնդէն, թէ դարը շատ աւելի ուշ կը հասնի իր լրումին քան օրուան մը լետմիջօրէն, երեսի պատանի չեն եղած եւ չեն սպասած անմատոյց գեղութիւի մը գոց դրան առջեւ:

Սեդրակ վերջին անգամ մըն ալ շտկեց շապիկին օձիքը, ճակտին ինկող մազերուն փունջը, խոր շունչ քաշեց՝ սրտին զարկերը մեղմելու համար եւ կրթուած դարոցականի մը շարժումներով բախեց դուրս: Սնտուկն ու աթոռակը պատժուած էին պատին տակ:

- Ի՞նչ կ'ուզես, - հարցուց դուրը բացող երիտասարդը խիստ ձայնով:

Սեդրակ շփոթեցաւ: Անակնկալ էր թէ՛ անձը թէ՛ հարցումը: Ինք նախապատրաստած էր կարօտավառ ժը-

պիտ մը՝ Սերինայի սահմանուած: Ինք ինչե՛ր չէր նախատեսած... բացի այդ պարոնէն եւ անոր չոր հարցումէն:

- Մատմազել Սերինան... մատմազելը ուզած էր որ...,- կնկմաց Սեդրակ:

- Բայց ո՞վ եւ դուն,- ջղայնացաւ երիտասարդը:

- Ես... ես... պոյաճին եմ,- ստիպուեցաւ խոստովանիլ Սեդրակ ամօթահար: Այդ նեղ վայրկեանին, գոզնոցն ու սնտուկը իրենց անտեսումին վրէժը կը լուծէին: Անոնց հաւատարիմ ընկերակցութեամբը Սեդրակ երբեք պէտք չէր ունեցած իր ով ըլլալը ծանուցանելու. մինչդեռ հիմա ծածկել ուզած կեղծիքը իր իսկ ջրթներէն կը յայտնուէր:

- Թող գայ ներս,- լսելի եղաւ Սերինայի զգլուն ձայնը:

Ներսը՝ դամակեան տուներու խաղաղ, սրտբաց եւ ընդարձակ բակերէն մէկն էր, արեւով ողողուն: Շուրջի որմերն անգամ մարմարով եւ աստափով խճանկարուած էին՝ մինչեւ որոշ բարձրութիւն: Սերինան նստած էր ցած սեղանի մը առջեւ, տնային անկոյթ արդուզարդով եւ կ'աշխատէր ցիր ու ցան գիրքերու վրայ հակած: Սեդրակ տեղադրուեցաւ այնպէս մը, որ ճիշդ իր դիմացը ունենար աղջկան տաղասարը, որ շատ նման էր հանդիսապահի մը բեմին, ճակատի երկու սենեակներուն միջեւ, բակէն բաակեանին բարձր, վրան ծածկուած, բայց առաջամասը բոլորովին բաց:

Սերինայի խնդրանքով՝ երիտասարդը, որ իր եղբայրը կը թուէր ըլլալ, գնաց ներսէն քանի մը գոյգ կօշիկ հաւաքեց, բերաւ նստեց Սեդրակին քով եւ մեկնեցաւ փողոցի դռնէն: Պոյաճին խոովքի եւ շփոթութեան ճնշիչ պահ մը անցուց: Ձեռքերը առաջ չէին երթար ներկին տուփը բանալու եւ գործի սկսելու: Հրահանգի սպասող հեզ տղու մը պէս կը նայէր Սերինային, որ, առա՛ղ, մոռցած էր իր գոյութիւնը: Աղջիկը ամբողջապէս կլանուած իր աշխատանքով. կը թերթէր, կը հաշուէր, կը մտածէր եւ բաներ մը կ'արձանագրէր տետրակին մէջ: Ո՛չ իսկ ուշադրութեան

աղօտ շող մը, ոչ իսկ խաբուսիկ ժպիտ մը...

Յուսաբեկ ու վրդովուած՝ Սեդրակ յարձակեցաւ կօշիկներուն վրայ եւ սկսաւ ներկել զանոնք չափազանցըած աղմուկով: Աղջիկը անդորոտելի կը մնար: Ո՛ր շաբաթ մը առաջուան արեւոտ աղջիկը, ո՛ր ջանասիրութեան անտանելի այս տիպարը... Եւ ըսել թէ եօթը գիշեր լուսցուցած էր, եօթը չլուսցող գիշերներ, անոր ասքերու առաւօտը անգամ մը եւս տեսնելու համար...

Սեդրակ այդ ասքերը իր կողմը դարձնել տալու համար ուրիշ միջոց չգտաւ, եթէ ոչ հարցում մը ընել... Կօշիկին մասին: Սերինան վեր առաւ գլուխը, ձախ քունքը կոթնեցուց ափին, ակուաներովը խածաւ գրչակոթը, նայուածքը նետեց պարսպութեան մէջ եւ փոխանակ իրեն պատասխանելու, բարձրաձայն կանչեց.

- Մամա՛, վայրկեան մը կու գա՞ս:

Ու երբ մաման եկաւ նստաւ քովը, բազուկը ուսին նետելով, Սերինան շարունակեց.

- Մամա՛, կը յիշե՞ս արդեօք թէ Քրիստափոր Գոլոմպոս ո՞ր թուականին գտաւ Ամերիկան. տըվուարիս վերջին հարցումն է. տեղ մը գրած էի այս թուականը, բայց չեմ կրնար կոր գտնել:

- Ի՞նչ գիտնամ, աղջիկս, դպրոցէն ելլելս քսան տարին անցաւ,- պատասխանեց մայրը:

Սեդրակի մտքին մէջ յայտնութեան լոյս մը ծագեցաւ այդ վայրկեանին: Ակա՛նջդ խօսի պրն. Գրիգոր, որքա՛ն իրաւացի էիր, երբ կ'ըսէիր. «Թուականները լաւ սորվեցէք, շա՛տ կարեւոր են. թուականներ կան, որ դարագլուխ կը բանան մարդկային պատմութեան մէջ»: Առիթն էր ցոյց տալու իր ո՛վ ըլլալը. առիթը մարդուս մէկ անգամ կը ներկայանայ. պէտք է բռնել գիտնալ զայն: Ո՞ր օրուան համար էին աշխարհագրութեան դասին ստացած «տասը խաչ»երը. ինչի՞ կը ծառայէր Գոլոմպոսին Ամերիկան

գտնելը, եթէ այդ թուականը սիրոյ մէջ ալ դարագլուխս պիտի չքանար:

Սեդրակ արկեց ջիղերը. ձեռքը անցուց ճակատին վրայէն, մէկ վայրկեան աչքերը փակեց եւ Գոլոմպոսի նաուն առագաստին վրայ հրեղէն նշաններով արձանագրուած տեսաւ մեծ թուականը: Յետոյ գիտցած ֆրանսերէն բոլոր բառերը օգնութեան կանչելով կազմեց կոկիկ նախադասութիւն մը եւ կրկնեց երեք անգամ, վերջինը բարձրաձայն.

- Թոյլ կու տա՞ք, որ ես ըսմ. Քրիստապոս Գոլոմպոս Ամերիկան գտաւ 1492ին:

Շանթահարիչ յաղթանակ եւ ընդհանուր զարմացում: Մայր ու աղջիկ դարձան պոչաճիին կողմը: Սերինայի դէմքին վրայ անբացատրելի արտապայտութիւն մը կար: Թերահաւատութիւնն ու հեգնանքը իրար խառնուած էին:

- Այո՛, ճիշդ է, լեզուիս ծայրն էր, կը դժուարանայի ըսել,- համաձայնեցաւ տիկինը:

- Շուտ մը վճիռ մի՛ արձակեր, մամա, պէտք է ստուգել, դիմացնիս նստողը փրօֆէսօր չէ,- ծիծաղեցաւ Սերինան եւ նոր հետաքրքրութենէ մղուած մանրակրկիտ քննութեան սկսաւ ենթարկել գիրքերն ու տետրակները՝ թուականը կրող թերթիկը երեւան բերելու համար:

Սեդրակ քրտինք կը թափէր ամբաստանելի աթոռին վրայ: Ի՞նչ պիտի ըլլար ստուգիչ ատեննի դատաստանը: Հապա եթէ ճիշդ չելլէին իր տուած թուանշանները: Մահավճիռը կորսուած թողթին ծայքերուն մէջն էր: Ու այդ թողթը գտնուեցաւ վերջապէս, պահ մը խշրտաց Սերինայի լուսէ մատներուն տակ ու ինկաւ սեղանին:

Սեդրակ աղջկան աչքերուն մէջ կարդաց իր յաղթանակը:

- Ո՞րկէ գիտէիր դուն,- հարցուց Սերինան քրոջական գուրգուրանքի ջերմութիւն մը տալով ձայնին:

- Դպրոցէ՛ն,- ըսաւ Սեդրակ կտրուկ եւ հպարտ:

- Տարօրհնա՛կ է, չես սպասեր,- դարձաւ աղջիկը իր մօր, ցած ձայնով:

- Հայու զաւակ է, մի՛ զարմանար, տուն ու տեղ ձգած, գաղթական եղած մարդիկ են. ո՛վ գիտէ՝ ինչ լաւ ընտանիքի կը պատկանի եւ ի՛նչպիսի նեղուօթիւններու երեսէն ըստիպուեր է կօշիկ սրբող դառնալ,- խօսեցաւ մայրը նոյնպէս կէս լսելի ձայնով մը, որ սակայն կը հասնէր Սեդրակի գերագրգիռ ականջներուն:

Ձեռքին մէջ գտնուող կօշիկները, իրենց կօշիկ ըլլալէն ի վեր, այդքան առատ ջնարակ եւ ներկ չէին տեսած: Իւրաքանչիւր զոյգին կրկնակի ժամանակ յատկացուց, հետեւելով Սերինայի ամէն մէկ շարժումին: Սեդրակ պիտի ուզէր անհունօրէն երկարել աշխատանքը, բայց զգաց որ շատ ուշ էր արդէն: Չափազանցութիւնը կրնար տանտիրո՞ւհիին անախորժ թոփլ եւ կասկածներու տեղի տալ:

- Լրացաւ, օրհորդ Սերինա,- ըսաւ պոյնամի, դարձեալ ֆրանսերէնով:

Վարձատրութեան արարողութիւնը յուզումնային եւ դժուարին պահ մը ընծայեց: Օրհորդը անձամբ բերաւ իր աշխատանքին գինը. Սեդրակ, մինչեւ ականջներուն ծայրը կարմրելով, մերժեց դրամ ստանալ: Աղջիկը չմբռնեց նախ այս ընթացքը, յետոյ զարմանքէ խոշորցած նայուածք մը նետեց վրան, ի վերջոյ խորաթափանց եւ յանդիմանող ժպիտով մը Սեդրակի թելը բռնելու եւ գրեթէ բռնի՝ անոր ափին մէջ արծաթ դրամներ սահեցնելու համար: Մնացեալ մանրամասնութիւնները չյիշեց Սեդրակ: Չըգիտցաւ, թէ ի՛նչպէս հաւաքեց իրերը, ի՛նչպէս շալկեց սնտուկը, ի՛նչպէս դուրս ելաւ դռնէն եւ ի՛նչ ըսաւ մեկնած ատեն: Հեասպառ էր: Փողոցին մէջ բաւական ատեն սեղմըած մնաց գոց ափը, որ Սերինայի մատներուն խենթեցընող ջերմութիւնը միայն կը զգար: Քալեց նպատակի մը

ետելէն վագողի արագ եւ հաստատ քայլերով: Մամբուն վրայ անցորդներու բախեցաւ՝ առանց ուշադրութիւն դարձնելու: Կեանքին ամէնէն երջանիկ օրն էր. անհաշիւ հազած էր իրեն եւ իր հոգիի խորունկ գաղտնիքին...

Որոշ չափով ինքզինք գտնելէ ետք, երբ բացաւ ասիը՝ դառն հիասթափութիւն մը ունեցաւ յանկարծ. ինքն ալ չը-հասկցաւ թէ ինչո՛ւ, բայց կոտորեցաւ սիրտը: Իրատունքէն ե-րեք անգամ ատելի գումար մը կար ասիին մէջ: Սերինան գինք վարձատրած էր եռապատիկ գինով: Ինչո՛ւ, ի՞նչ պատճառով: «Գթասրտութեամբ, ողորմածութեամբ, գաղ-թական եւ աղքատ հայու զաւակը կշտացնելու համար», - կ'ըսէր ներսէն ձայն մը: Սերրակ համակարծիք չէր այդ ձայնին եւ ատելի կը գտնէր զայն: Վէճի մտաւ հետը, ներ-կայացուց զօրաւոր առարկութիւններ: Ինչո՞ւ միակողմանի եւ ծուռ բացատրութիւններու կառչիլ: Չէ՞ր կրնար ըլլալ, որ Սերինան իրեն հանդէպ զգացած համակրանքը արտայայ-տելու բնական միջոց մը նկատու լատելեալ վարձատրու-թիւնը, ինչպէս ինք անկէ բոլորովին հրաժարելով՝ փորձած էր խօսում մէկ սպացոյցը տալ իյ համր զգացումներուն:

Կրնար ըլլալ:

Եւ սակայն հիասթափութեան տրտմութիւնը շարու-նակեց մէզի պէս պարուրել հոգին:

*

* *

Յաջորդ առաւօտ վերանորոգ լաւատեսութեամբ մը Սերրակ գործի լծուեցաւ: Բաւական բան գիտեր այլեւս Սերինայի մասին, անոր քայլերուն հետեւելու համար. գի-տէր, օրինակ, թէ ան դպրոց պիտի երթար ու վերադառ-նար ընթացիկ ժամերուն: Որոշեց հետապնդել գինք, հեռ-ուէն, առանց նշմարուելու: Գոյքերը դրա ծանօթ խանութ մը եւ ինք հեռագրասիւնի մը կոթնած սպասեց: Առաւօտ-

եան հովը կը խաղար մազերուն հետ. տժգոյն դէմքին վըրայ ազնուական տառապանքի մը վեհութիւնը կար դըրոշմուած: Այդ դիրքին եւ արտայայտութեան մէջ՝ ոչ ոք պիտի մտածէր թէ պոյաճի մըն էր հոն կեցողը, բայց ուշադիր դիտողներէն շատեր ճանչնային հաւանօրէն երագի եւ սիրոյ ինքնամոռաց ասպետը:

Բացուեցաւ դուռը. անգլիական հիւանդանոցի աշտարակէն ժամը եօթուկէս կը գարներ: Սեդրակ հագի կոցաւ ստուգել, որ դուրս գնտուողը Սերինան էր: Աղջիկը, արագ քայլերով, բռնած էր հակառակ ուղղութիւնը: Կոնակէն գրեթէ անճանաչի էր ան. դպրոցականի կապոյտ համազգեստին մէջ, ճերմակ օձիքով, պայուսակը թելին տակ, պզտիկ աղջնակ մըն էր ան հիմա, պզտիկ քոյրիկը կարծես այն հասուն ու փարթամ պարմանութիւն, զոր ճանչցած էր տան երկար եւ թոյլ հագուատներով: Միջոցը լայն էր թէւ իրենց միջեւ, բայց կրնային իրար տեսնել դիրութեամբ: Սեդրակ թէ՛ կը ջանար անճշմար մնալ եւ թէ՛ սրտին խորէն կը մաղթէր, որ անգամ մը գոնէ ետ դառնար աղջիկը, տեսնէր զինք՝ իր քայլերու հետքին վրայ հաւատարիմ շուքի մը պէս, հասկնար լրիւ կերպով ամէ՛ն, ամէ՛ն բան...

Սերինան կանգ առաւ սէօրերու աղջկանց վարժարանին առջեւ, մէկ վայրկեան խօսքի բռնուեցաւ ընկերուհիի մը հետ եւ միասին մտան ներս:

Հետախուզութիւն մը ասկէ աւելի լաւ արդիւնք չէր կրնար տալ: Տունը որոշ, դպրոցը որոշ. իսկ ճամբան, լայնքին ու երկայնքին, Սեդրակի տիրապետութեան տակ:

Այնուհետեւ, իրիկունները մանաւանդ, ժամը չորսի ատենները Սեդրակ հոն էր միշտ, սէօրերու աղջկանց վարժարանին դիմացը, խելօքիկ մը նստած ներկատուփին առջեւ: Կեանքը գեղեցիկ էր, կեանքը իմա՛ստ մը ունէր հիմա. գունաթափ եւ փոշոտած կօշիկներու ետեւէն հեւասպառ վագք մը չէր լոկ օրերու իմաստը, այլ հեշտալուր

գանգի մը դողանջը, որ լայն կը բանար երանության
դռները եւ դուրս կը կանչէր «վերջալույսի աղջիկը»:

Նախ կու գային ամէնէն փոքրերը, ձեռք ձեռքի, թի-
թեռնակերպ ժապատէններով, վարդի կոկոններու պէս.
սաւառնաթեւ սպիտակ գլխանոցով սեօրեր կը հսկէին ա-
նոնց վրայ, կարգի կը շարէին եւ մաս առ մաս կ'արձա-
կէին իրենց տունները, չեւոյ կու գային քիչ մը անելի մեծե-
րը, չարահնի, շատախօս, աղփկարար, որոնք կրնային ա-
մէն բանով ոգեւորուիլ եւ ամէնէն աննշան երեւոյթի մը
համար քրքջալ: Ի վերջոյ կ'երեւէին բարձրագոյն կարգի
աշակերտուհիները, խոնջ եւ նուաղկոտ արտաշաչու-
թեամբ, ծանրաբեռնուած ձանձրոյթի եւ գիրքերու կապոց-
ներով, գոհ՝ որ կը դիմաւորեն քաղաքի ազատ օդն ու եռու-
զեռը: Սերինան վերջին ելլողներէն կ'ըլլար առ հասա-
րակ, ջրախումբի մը հետ, որուն թագուհին էր ինք:

Երկրորդ օրն իսկ, արձակուելու պահուն, դպրոցի
դրան առջեւ կեցած, Սերինան տեսաւ գինք, թեթեւ մը
կարմրեցաւ կարծեա (Սեդրակ վստահ չէր այս մանրա-
մասնութեան վրայ) եւ նոյնքան թեթեւ ժպիտ մը գծագրե-
ցին շրթունքները: Այդ վայրկեանին սահման չունէր Սեդ-
րակի ուրախութիւնը. ճակատամարտը շահած յաղթա-
կան զօրավարի մը չափ հպարտ էր: Չխորհեցաւ երբեք,
թէ ո՞ր էր ինք, ո՞ր էր ան, թէ մինչեւ ո՞ր կրնար հասնիլ
եւ թէ ի՞նչ վախճան կը սպասէր այս իրական երագին:
Բա՛ւ էր անոր ժպիտը՝ կեանքը լուսաւորելու համար: Մի-
թէ կը խորհի՞նք արեգակին հասնելու մասին. բայց կը ծը-
ծենք անոր ճառագայթները, իբրեւ լոյս, ջերմութիւն եւ
սպրեւելու գերագոյն հրճուանք:

Վարժարանի դրան մօտ Սերինայի ունեցած ամէն
մէկ շարժումը մասնաւոր իմաստ մը ստացաւ Սեդրակի աչ-
քին. չնչին մանրամասնութիւններէ սկսաւ մեծ-մեծ հետե-
ւութիւններ հաւնել: Դուրս գալուն, երբ վայրկեան մը կանգ

առնէր եւ ընկերութիւններուն հետ խօսակցութիւնը շարունակելով հանդերձ վեր վերցնէր գլուխը եւ խորհրդաւոր մայրուածքներ պատօցներ չորս դին, Սեդրակ այն վստահութիւնը կ'ունենար, թէ զինք կը փնտռէ. իսկ երբ անծպիտ ու անտարբեր յառաջանար դէպի տուն, առանց այ ու ձախ նայելու, Սեդրակ կ'իյնար մոայլ խորհրդածութիւններու մէջ: Ի՞նչ խոժոռ էր, ինչո՞ւ դժգոհ երեւոյթ մը ունէր. վշտացած էր արդեօք իրմէ, նեղուած էր իր անախորժ ներկայութեան: Կը փնտռէր ու կը գտներ այնպիսի յանցանքներ, որոնք իր երեսակայութեանէն միայն կը ծնէին:

Ամէնէն աւելի կը զգուշանար ընկերներուն մօտիկութեանէն: Վահան, Աւետիս, Արսէն եւ դեռ ուրիշներ երեսան հանած էին իր պարբերական մեկուսացումներուն գաղտնիքը եւ խումբով կու գային զինք գտնել սէօրերու վարժարանին առջեւ: Սեդրակ ստիպուած էր աղաչել, որպէսզի գայթակղութիւններու տեղի չտան: Կարելի՞ էր միթէ պոյաճիներուն վրայ վստահութիւն ունենալ: Կրնային սուլել արձակուող աղջիկներուն ետեւէն, կրնային լսիրշակնարկութիւններ ընել սաոր կամ անոր եւ վարկաբեկել զինք Սերիմայի աչքին:

- Ի՞նչ նորութիւն, ո՞ր հասար, ձեռքդ բան մը անցած, - կը հեզներ Աւետիս:

- Չե՞ս տեսներ, բաւական զարգացեր են կուրծքերը, - կը լրբանար Արսէն, Սերիմայի ետեւէն ցանկասէր շարժումներ ընելով:

Սեդրակ կը կարմրէր ամօթէն, կը զայրանար Սերիմայի դէմ ուղղուած այս նախատիկնքին համար, զգուանք կը զգար իր իսկ անձէն, որուն փակած էր պոյաճիի անունը, կ'ուզէր հեռանալ, անհետ կորսուիլ եւ վերադառնալ իբրեւ նո՛ր մարդ, կ'ուզէր կռուիլ ընկերներուն հետ, եւ դժուար կը յաջողէր հոգիին բովանդակ տագնապը սեղմել սկոռներուն տակ: Ամէն ինչ վերջ կը գտներ սակայն

աղուոր հայհոյանքով մը:

- Կայ եղեր, չկայ եղեր քէլ տղայ մը կայ եղեր,- կը շարունակէր Աւետիս:- Այս քէլ տղան փողոցէն անցած աստեճ թագաւորին աղջիկը կը տեսնէ եւ կը սիրահարուի անոր. թագաւորին աղջիկն ալ խենթի պէս իրեն կը սիրահարուի...

- Հերի՛ք է,- կը պողթկար Սեդրակ ու կը ցատկէր տեղէն: Պոյաճիները կը խնդային առանց չարութեան: Սեդրակ գլուխը առած կը քալէր կ'երթար, մտքին մէջէն կըրկնելով. «Ես ձեզի ցոյց կու տամ թէ ո՛վ է քէլ տղան, ես պէ՛տք է դուրս գամ այս վիճակէն. իմ տեղս չէ ասիկա, ես պիտի ամչցնեմ բոլորդ ալ...»:

*

* *

Մէկ փողոց անդին ֆրանսացի կրօնաւորներուն մանչերու գոլէճը կը գտնուէր: Նուիրական վայր մըն էր այդ թաղամասը Սեդրակին համար: Երկիւղով կը մտնէր հոն, ինչպէս տաճարի մը գաւիթէն ներս: Սրբապղծութիւն կը համարէր գոլէճի շրջակաները «պոյաճի՛» կանչել. արդէն մտքէն իսկ չէր անցներ գործ որոնել այդ կողմերը. կու գար անբացատրելի ուժէ մը մղուած, ներշնչումի ու երագանքի համար կարծես: Կը նստէր մուտքի մեծ դրան դէմ եւ կը սպասէր ինքնամոռաց վիճակի մէջ: Իր բախտի ճամբուն վրայ բարձրացող երկու դռներ, որոնք հաւասարապէս փակ էին իր առջեւ: Անոնցմէ իրաքանչիւրը սակայն հոգիին կէտը խլած էր իրմէ ու բանտարկած: Կեանքին երկու մեծ սերերը՝ երկու դռներու ետին.- Սերինան եւ Գիտութիւնը: Այնքա՛ն մօտ երկուքն ալ, բայց այնքա՛ն անմատչելի:

Սեդրակ լսած էր, որ քաղաքին մէջ բարձրագոյն կրթութիւն տուող հաստատութիւններէն մէկն էր ան, որուն կարող շրջանաւարտները Պէլրութ կ'երթային՝ պետական քննութիւններուն մասնակցելու եւ փայլուն տիտ-

դոսի մը դասին խելու: Մինչեւ իսկ մատով ցոյց կու տային ակնոցաւոր հայ երիտասարդ մը, որ յաջողած էր տիրանալ պաքալորէայի պատուին: **Պոյանին**, ազգային նախակրթարանի աշակերտ եղած միջոցին անգամ, համարձակութիւնը չէր ունեցած ֆրանսական գոլէճի մուտքին ցնորք փայփայելու: Այժմ աւելի եւս խորհրդաւոր կ'երեւէին անոր պարսպանման որմերուն խոշոր քարերը, որոնց քսուելով կ'անցնէին երբեմն, հինաւորց քուրմերու պէս, ծանրախոփ եւ գլխահակ կրօնատրոներ, իրենց մօրուքի ծայրին հետ խաղալով: Սեդրակին կը թուէր, թէ աշխարհի ամէնէն իմաստուն մարդիկն էին անոնք: Իմաստութիւն կը կաթէր նաեւ գոլէճի քարերէն, առանց իր պապակին շիթ մը բարիք ընծայելու:

Կը պատահէր, որ ուսանող մը կոխէր իր սնտուկին: Սեդրակ մասնաւոր հաճոյք կը զգար անոր կօշիկը ներկելէն. աչքերը լսոած կը մնային անոր թելին տակ սեղմուած գիրքերուն, որոնց կողքի անուններն ու նկարները անձանօթ էին իրեն: Կը ճանչնար միայն պատկառելի «Լա Ռուսը», իր խաւաքարտէ վարդագոյն արտաքինով: Ա՛յս, ինչէ՛ր կային արդեօք այդ գիրքերու էջերուն մէջ, ի՛նչ առիճքնող գեղեցկութիւններ, ի՛նչ խորախորհուրդ հրաշալիքներ: Սեդրակի փորը կրնար անօթի ըլլալ այդ պահուն եւ շապիկին կտրծքը պատռած: Ի՛նչ փոյթ: Արցունքի կաթիլը, որ կ'իջնար աչքէն՝ ներկած կօշիկին հայելիի փայլը պղտորելով, ճերմակ ու թարմ հացի համար չէր, նոր ու սիրուն հագուստի համար չէր, այլ գիրքի համար, գիրքի՛: Հայաստանի հեռաւոր մէկ գաւառէն արար խալիֆաներու մայրաքաղաքի փողոցներուն մէջ ինկած հայորդին, արեան անիմանալի ժառանգականութեամբ մը, հաճոյքի ու դրամի փոխարէն՝ սիրոյ եւ լոյսի երագով կը տուայտէր: Ո՞վ ներշնչած էր իրեն այս կարօտը. ո՞րկէ ստացած էր գեղեցկութեան այդ ճաշակը: Ծրջապատը, որմէ կու գար,

թշուառութեան եւ արցունքոտ յիշատակներու խոնարհ խրճիթ մըն էր. միջավայրը, ուր կ'ապրէր, ներկատուիը շալակին, բարոյական աւազախրումի տանող լպրծուն գետին մը կը ներկայացնէր միայն: Եւ սակայն, այն պահուն իսկ երբ իր մարմնին ազազուն թեւերը խոզանակ կը շարժէին աղտոտ կօշիկներու վրայ, հոգիին հզօր թելը երկինքի կապոյտը կը ճեղքէր: Արիւնը կ'եռար երակներուն մէջ՝ քննութեան պատրաստուող ուսանողներու իրարանցումը տեսնելով: Սեդրակ նման էր այն մարզիկին, որ ախոյեանութիւններ է շահած, մրցանիշներ կոտրած, բայց ստիպուած է ներկայիս՝ ջախջախուած սրունքներով՝ մարզահանդէսներու ներկայ գտնուիլ:

*

* *

Կրնան գտնուիլ մարդիկ, որոնք ուզեն կասկածի ենթարկել Պօղոս առաքեալի հոգեդարձին Դամասկոսի ճամբուն վրայ պատահած ըլլալու պարագան: Ամէն կասկածէ վեր է սակայն այն իրողութիւնը, որ Սեդրակի աչքերը բացուեցան Դամասկոսի ճամբաներէն մէկուն մէջ, մանչերու ֆրանսական վարժարանին մօտերը: Մեծ ու բախտորոշ օր մը եղաւ ատիկա: Յիսուն մեթր հեռուէն Սերինան դարոց առաջնորդել է ետք, երբ կ'ուղղուէր դէպի գոլէնի փողոցը, ճշմարտութեան լոյսը փայլատակեց աչքերուն դէմ մէկ անգամէն ու պոյաճիւն տուաւ առաքելական, հերոսական որոշում մը. - մաքրուիլ, բարձրանալ եւ արժանի ըլլալ Սերինային:

Վճիռներ կան, որոնք տրուած վայրկեանէն գործի համարժէք են: Այսպիսի վճիռ մըն էր Սեդրակինը, որ խանդավառութեամբ լեցուց իր հոգին: Պատմութեան մէջ չէի՞ն գտնուած միթէ նշանաւոր դէմքեր, որոնք շատ անլի ծանր պայմաններու տակ, ինքնաշխատութեամբ եւ յա-

մառ կամքով յաջողած էին հասնիլ իրենց նպատակներուն: Ինքը ինչո՞ւ չ'ըներ նոյն բանը: Սեդրակ չկրցաւ մըտաբերել անունը ֆրանսացի այն զօրավարին, որ աղքատ փոսպանի մը զաւակն էր եղած եւ գիշերները, օրուան սպառիչ յոգնութենէն ետք, փոռի կամ լուսնի լոյսէն օգտուելով, պատրաստած էր զինուորական վարժարանի դժուարին քննութիւնները: Անունը կարեւորութիւն չունէր. փաստն էր էականը: Պարոն Պօղոսեան ասոր նման ուրիշ բազմաթիւ օրինակներ ուներ, որոնք մէջտեղ կու գային ամէն անգամ որ խրատ տալու պէտք կը զգար: «Կա՛մք ունեցէք, կամքին առջեւ չկայ արգելք մը, որ չխորտակուի», - կ'ըսէր ան եւ ապա կ'եզրակացներ. «Ձեր նշանաբանը թող դառնայ հոգիով եւ մտքով բարձրանալ»:

Սեդրակ կամք ուներ անկասկած: Այլապէս, ո՞րկէ՛ իր ջիղերը լարող եւ դնդերները պրկող ներքին սա ուժը, հաւատաւոր սա ինքնավստահութիւնը: Որոշեց անմիջապէս լծուիլ աշխատանքի եւ բարձրանալ՝ հոգիով ու մըտքով: Սերինայի աչքերը շողացին աչքերուն դէմ՝ հաւանութեան եւ քաջալերանքի պայծառ ժպիտով: Սեդրակ ինքզինք կարող զգաց մինչեւ իսկ հրաշքներ կատարելու եւ յառաջացաւ տիրական քայլերով:

Չլսեց, կամ չուզեց լսել յաճախորդի մը հրաւերը, որ իրեն կ'ուղղուէր կողքի փողոցէն. ժամանակ չունէր վատնելիք. արդէն շատ ժամանակ կորսնցուցած էր պոյաճիութեան ամուլ եւ քանդող ամիսներուն: Պիտի քայլեր այժմ անյողորդդ, պիտի դիմէր ուղղակի նպատակին...

Ինչպէ՞ս սակայն, ի՞նչ միջոցով, ո՞ր ուղիէն:

- Պենժամէն Ֆրանգլի՛ն, Պենժամէն Ֆրանգլի՛ն,- ականջներուն տակ հնչեց պարոն Պօղոսեանի ձայնը. ան շատ կ'արտասանէր այս անունը: Բայց Սեդրակ ո՞րկէ որ յիշեց յանկարծ շանթարգելի հնարիչը. ի՞նչ կապ կըրնար ունենալ իր տուած մեծ վճիռին հետ:

Աթոռակը դրա պատին ու նստա՝ ուշադիր եւ կարգապահ աշակերտի մը պէս: Դէմն էր ահա գրատախտակը, որուն վրայ բարոյախօսութեան ուսուցիչին մատները հաստ գիրերով կ'արձանագրէին.- «Պենժամէն Ֆրանգլի-նի խղճի քննութեան յուշատետրը»: Ահա նաեւ, տակ-տակի, այն տասներկու առաքիներինները, որոնց տիրացման ի խնդիր մեծ ամերիկացին ամէն իրիկուն իր գործերն ու խորհուրդները քննութեան կ'ենթարկէր եւ յատուկ նիշերով գնահատանքի չափը կը ճշդէր.- **Ժուժկալութիւն, անկեղծութիւն, արդարութիւն, մաքրութիւն, խոնարհութիւն, ջանասիրութիւն, եւ այլն...**

Նշանատր գիտ մըն էր ապահովաբար սահկա՝ մտքով ու հոգիով բարձրանալու համար: Ինքնակրթութեան լաւագոյն հնարքը. դուն քու մեղադրեալդ եւ դատաւորդ նոյն աստեն. դուն քու աշակերտդ եւ ուսուցիչդ: Ինչպէ՛ս չէր ըմբռնած նման յուշատետրի մը փրկարար արժէքը դպրոցականի օրերուն եւ համարձակած էր ընկերներուն հետ խնդալ Պենժամէն Ֆրանգլի-նի միամտութեան վրայ: Թող ան գտած չըլլար «Խղճի քննութեան մատեան»ը եւ կարենա՛ր հնարել շանթարգելը...

Սեդրակ վազեց դիմացի խանութը եւ մատիտի մը հետ գրպանի փոքրիկ տետրակ մը գնեց: Վերադարձաւ աթոռակին, բացաւ առաջին էջը եւ առանց վարանքի արձանագրեց իրեն պակտող առաջին եւ կարետրագոյն առաքիներինը - **Անմեղութիւն:** Այս բառին Սեդրակ կու տար ընդարձակ նշանակութիւն: Անմեղութեան դէմ մեղանշած պիտի ըլլար հայհոյելով, պտուղներ թոցնելով, օղիի եւ ծխախոտի հաճոյամոլութեանց մասնակցելով եւ մինչեւ անգամ ընկերներու վրան բաց խօսակցութիւններուն ականջ տալով:

Երկրորդ գիծին վրայ դրաւ **ջանասիրութիւնը**, որ իրեն պիտի թելադրէր ամէն օր բան մը սորվիլ, բոլոր պարապ ժամերուն գիրք կարդալ եւ գլուխը հազար քարի զար-

նել՝ զարգանալու համար: Սեդրակ աշխուժով բացաւ կրդ-
պըւած դարակը եւ հաշուեց ծնողքէն զաղտնի խնայած
դրամները: Երեք մէճիտի մօտեցող գումար մը ունէր տրա-
մադրութեանը տակ: Ինք արդէն այս դրամները հաւաքած
էր, որպէսզի վէպեր գնէ: Աւելի օգտակար չէ՞ր ըլլար եթէ
ֆրանսերէնէ հայերէն բառարան մը գնէր: Սեդրակ ուզեց
գործնական ձեռով շարժիլ եւ կատարելագործել նախ իր
ֆրանսագիտութիւնը: Բառարանը ունենալուն պէս՝ ուխ-
տեց գոնէ օրական հինգ բառ սորվիլ: Օրը հինգ բառ, տա-
րին կ'ընէ... սա՛քան: Երկու տարիէն,- մտածեց Պենժամէն
Տրանգլիւնի արժանատր հետետորդը,- ֆրանսերէն լեզուն
իր զաղտնիքները յանձնած կ'ըլլայ:

Գալով ընթերցանութեան գիրքերուն, Սեդրակ նախ-
ընտրեց զանոնք վարձքով հայթայթել: Անձնական գրա-
դարանի ծրագիրը սնանկութեան պիտի առաջնորդէր
զինք վստահօրէն: Սնտուկը ամբողջ վաճառելով՝ չորս
հատորի փոխարժէքը հազիւ կրնար ճարել: Լսած էր, որ
քաղաքի կեդրոնական հրապարակին մերձակայքը հայ
լումայափոխ մը կար, որ միեւնոյն ատեն գիրք վարձու կու
տար, շաբաթը մէկ պարդուտի: Որոշեց իրիկունն իսկ եր-
թայ եւ հատ մը ընտրել:

Պատուիրանին երրորդ կէտը պոյաճին մկրտեց
պարտաճանաչութիւն անունով: Այս անունին տակ կը գե-
տնդէր մօրը եւ քեռիին հանդէպ ունեցած իր պարտաւոր-
ութեանց ամբողջական յարգանքը: Ինքնագարգացման
նախաձեռնութիւնները արգելք պէտք չէ ըլլային կօշիկ
ներկելու եւ այդպիսով տան ապրուստը ճարելու գործին:
Իրաւունք պիտի չունենար յաւելեալ դրամներ քաշելու
օրուան ընթացիկ շահէն: Ինչ որ փափաքէր ձեռք բերել՝
պիտի ընէր անձնական զոհողութեամբ, աշխատանքի
ճիգը աւելցնելով կամ սնունդէն կտրելով:

Չորրորդ մաքրութիւն արձանագրեց՝ ֆիզիքական

իմաստով, այսինքն՝ գերծ մնալ գէշ ունակութիւններէ եւ վտանգաւոր փորձութիւններէ, որ կ'առաջնորդէին զինք ամէն վայրկեան իր ընկերներն ու արհեստը:

Յանկը փակեց հինգերորդ առաքինութեամբ մը, որուն վրայ բառական մը տատանեցաւ: Սեդրակ կ'ուզէր դրոշմել այնպիսի բառ մը, որ արտայայտէր Սերինային, աստղերուն, կեանքին եւ իր երազին հանդէպ զգացած պաշտամունքին տեսականացումը, արտայայտէր սէրը եւ սիրոյ վեհութեան գիտակցութիւնը: Երկար մտածելէ վերջ հոգեփոխուած պոյանքին չորս կողմը նայեցաւ, մատիտին ծայրը թրջեց լեզուով եւ գրեց՝ **հաւատարմութիւն:**

Խղճի քննութեան դատաստանագիրքը պատրաստ էր՝ հինգ հիմնական յօդուածներով: Սեդրակ ցանկին առջեւ եօթը սինակներ քաշեց եւ իրաքանչիւրի գլխուն նշանակեց շաբթուան եօթը օրերուն անունները: Իրիկունները, ուշ ատեն, տուն դառնալէն առաջ պիտի մեկուսանար եւ պիտի քններ իր արարքները: Յանցապարտութեան պարագային, յանցանքի աստիճանին համեմատ, ոտնակոխուած առաքինութեան դիմացը պիտի դնէր Տէն վարթուանշան մը: Ջերօն սրբագրելի չէր հետագայ որեւէ լաւ արարքով: Ներողամտութիւն գոյութիւն պիտի չունենար: Զինուորակա՛ն դրութիւն: Սեդրակ ծանրագոյն պատիժներու պիտի ենթարկէր ինքզինք ամէն մէկ գերոյին համար:

Մտքին մէջ ճշդեց պատիժներուն տեսակներն ալ: Ա. աստիճան.- փողոցը անուշեղէն կամ օշարակ ծախողներուն պիտի չմօտենար շաբաթ մը: Բ. աստիճան.- Կիրակի կէսօրէ ետք ֆութպոլի մրցումներ դիտելու պիտի չէրթար: Գ. աստիճան.- Պիտի հրաժարէր ընկերներով հեծանիւ վարձելէ: Դ. աստիճան.- Բանի մը օր պիտի գրկուէր Սերինան տեսնելու բախտաորութենէն...

Սեդրակ փակեց տետրակը եւ ծոցը դրաւ գոհունակութեամբ:

Պեճճամէն Ֆրանգլիւնի հոգին հրճուեցաւ երկինքէն:

ՄԵՒՕՆ ՈՒ ՇԷԿՕՆ

Սիճեմայի դրան մօտ միայն Վահանը նստած էր: Վիզը ներս էր քաշած եւ կը հագար նորէն: Սեդրակ նկատեց, որ զգալիօրէն նիհարցած էր եւ տժգոյն: Որոշեց գիշերը տուն տանիլ եւ տաք ապուր մը խմցնել: Վահան ընկերոջը բարեւը ատաւ իր անայլայլ ժպիտով եւ ուրախ-ուրախ տեղ բացաւ քովը:

- Զարմանալի տղայ ես, Վահա՛ն, օր մը երեսդ ծուռ չտեսանք. շահիս ալ, չշահիս ալ՝ միշտ գոհ ես,- ըսաւ Սեդրակ կէս լուրջ, կէս կատակ:

- Փա՛րք Աստուծոյ, գոհ չըլլալու պատճառներ չունիմ. ողջ եմ, կ'ապրիմ, կերպով մըն ալ ապրուստս կը հանեմ... ապրելէն, ողջ ըլլալէն արելի աղոտօր բան մը կա՞յ աշխարհիս մէջ... մնացածը կը շտկուի:

Սեդրակ լաւ չըմբռնեց Վահանի ըսել ուզածը, որովհետեւ մէկ ականջով մտիկ ըրաւ: Միտքը տեսաբար կլանուած էր իր բախտորոշ վճիռով, իր տեստրակով, ծրագրով: Ուխտի գործադրութեան առաջին օրն էր. մէկ-երկու ժամէն քննութեան պիտի նստէր: Վայրկեան մը լռութիւն պահելէ ետք դարձաւ ընկերոջը.

- Վահան, քեզի բան մը պիտի ըսեմ, բայց վրաս չըխնդաս. եկո՛ր, ասկէ ետքը չհայհոյենք...

- Զհայհոյենք,- ըսաւ Վահան եւ աչքերը փայլեցան:

- Զխմենք, չծիւն'նք...

- Իմ ուզած բաներս կ'առաջարկես կոր: Ծատոնց մը-

տածեր էի ասանկ բաներու մասին խօսիլ հետո, բայց չէի
համարձակեր: Միւսներուն առջեւ չըսես, խափ-խայտա-
ռակ կ'ընեն մեզ... բայց ի՞նչ եղաւ, որ մէկէն որոշումներ
կու տաս:

- Հէ՛ջ, բան չկայ. պարզապէս զգուեցայ աղտոտ
խօսքերէ. թէ՛ լսելէն, թէ՛ ըսելէն: Առանց լկտիութեան կա-
րելի չէ՞ լաւ պոյաճի ըլլալ:

- Պոյաճին եթէ լկտի չըլլայ, կ'ըսեն թէ ներկած կօշի-
կը չի փայլիր,- խնդաց Վահան եւ անմիջապէս ատելցուց,-
խէրը անիծեմ կօշիկին ալ, փայլին ալ. հոգիճիս աղտոտե-
ցաւ, եղբայր. հոգի՞ն կարենոր է թէ կօշիկը...

Սեդրակ լռեցուց ընկերը՝ կողքին մշտելով: Դիմա-
ցէն՝ ձայնը ձգած՝ կ'առաջանար Արսէն, ուր հեւալով ին-
կաւ գետին ու պայթեցուց անխուսափելի հայհոյանքը.

- Ես ասանկ գործին կրօնն ու հաւատը... առտուրնէ ի
վեր կը թափառիմ. ոտքերուս ջուր իջաւ. թաղ չմնաց, որ չմըտ-
նեմ: Քառորդ մէճիտիէ մը անգամ չհանեցի: Հը՛, հանգիստ
մը նստեր էք. ձեր բիանթօն գարկած կ'երելի կոր այսօր:

- Ծահաճս սիրով կը փոխեմ քու շահուղ հետ,- ըսաւ
Վահան անտարբեր:

- Հիմա կու գայ բորենին, գրպանը լեցուցած: Ինչ-
պէ՛ս ալ կ'ընէ՝ մարդուս խելքը չի հասնիր. թէ՛ կեղծ ներկ
կը գործածէ եւ թէ շարունակ գործը պակաս չ'ըլլար: Յա-
նախորդին տգրուկի պէս կը փակի:

Խօսքը դեռ Արսէնին բերնին մէջ էր՝ Աւետիս երեւ-
ցաւ իսկապէս եւ իր տեղը գրաւեց շարքին վրայ:

- Գործերը ինչպէ՞ս են,- հարցուց Արսէն առանց
շունչ տալու:

- Է՛ իշտէ,- ըսաւ Աւետիս եւ սկսաւ ներկի շիշերը
կարգի բերել:

- Է իշտէն ո՞րն է. շիտակ բան մը ըսէ. ձեռքէդ պիտի
չառնե՛նք ես:

- Ականջ մի՛ տար, այսօր քաղաքը սգաւոր էր կարծես. գործը եղածին պէս կեցած էր, բան չկրցայ ընել:

- Հապա ա՞ս ինչ է,- պոռաց Արսէն ամուր մը բռնելով Աւետիսի դաստակէն եւ վեր վերցնելով ձեռքը,- հո՛ս նայեցէք մէյ մը, պարզուտ մը ճերմակ տեղ չկայ մորթին վրայ, ամբողջ ձեռքը ներկով ծեփուած եւ դեռ կը պնդէ, թէ գործ չէ ըրեր: Այսքա՛ն սեւնալու համար ձեռք մը քառասուն գոյգ կօշիկ ներկած ըլլալու է: Ի՞նչ աղուէս ես դուն:

- Զեզի ի՞նչ, ամէն մարդ իր գործին թող խառնուի:

- Ելի՛ր, սատեղէն քիչ մը ֆրստղիս գնէ՛ ուտենք:

- Փարա չունիմ:

- Ես գնեմ նէ կ'ուտե՞ս... Գրեցէ՛ք տեղ մը. աս տղան պիտի հարստանայ անպայման: Գործը գիտցող է, սանթիմին վրայ կը դողայ:

Աւետիս ուսերը թօթուեց արհամարհանքով, ծռեցաւ եւ ամուր մը փչեց ներկատուփին վրայ դիզուած հողմ ու փոշին, շտկուեցաւ նորէն եւ ըսաւ հանդիսատէր եղանակով մը.

- Եթէ իսկապէս հարստանամ օր մը, լաւ գործի մը տէր ըլլամ, ես գիտեմ թէ ի՞նչ պիտի ընեմ:

- Ի՞նչ պիտի ընես:

- Ամէն օր կօշիկս ներկել պիտի տամ պատին տակը անգործ նստող պոյաճիներուն եւ մէկի տեղ երկուք պիտի վճարեմ:

- Սո՛ւտ ես,- մէջ մտաւ Վահան,- հիմա դիրքին է պոլ-պոլ նետելը. հարստանալուդ պէս՝ պոյաճիներուն երեսն իսկ չես նայիր: Բոլոր հարստացողները աղքատ եղած ատեննին քեզի պէս կ'ըսեն, բայց ետքը ամէն ինչ կը մոռնան: Նոյնիսկ չեն յիշեր, թէ ժամանակին պոյաճի եղած են:

Լոնցին: Երեք ձիատր սպաներ, սքանչելի հագուած եւ իրենց կուրծքերը շքանշաններով զարդարած, հպարտօրէն կ'անցնէին պոյաճիներուն առջեւէն: Զիտրու սմբակներուն ձայնը խանգարուած, բայց հաճելի կշռոյթ մը կը հնչե-

ցըներ սալայատակին վրայ: Արսէն ոտքի ցատկեց եւ զին-
ուորական բարեւի կեցաւ իր սնտուկին քով, առանց ուշադ-
րութեան արժանանալու պատուին: Աւետիս կարօտով նա-
չեցաւ սպաներու ետեւէն եւ ի խորոց սրտի հատաչեց.

- Ի՞նչ լաւ կ'ըլլար եթէ ասանկ սպաներէ բաղկացած
բանակ մը անցներ մեր առջեւէն եւ բոլորն ալ կարգով ի-
րենց կօշիկները ներկել տային... որքա՞ն շահած կ'ըլլա-
յինք արդեօք...

- Անօթի հաւը երագին մէջ ցորեն կը տեսնէ,- մորը-
տաց Արսէն:

- Բանի որ մաղթանք պիտի ընես, մաղթէ թագաւոր-
ին պոչածին ըլլալ,- ըսաւ Սեդրակ:

- Աւելի լաւ չէ՞, որ մէկ անգամէն թագաւոր դառնայ եւ
հրաման արձակէ, որ ամէն մարդ, ամէն օր կօշիկը պար-
տադիր կերպով ներկել պետք է տայ,- խնդաց Վահան:

- Ի՞նչ կը խնդաս, շատ լաւ գաղափար է,- ըսաւ Աւե-
տիս լրջութեամբ:- Իմ կարծիքով՝ ժողովուրդի մը քաղա-
քակրթութեան աստիճանը չափել ուզողը պիտի նայի ոչ
թէ դպրոցներու թիւին, ինչպէս կը սորվեցնեն դասարա-
նին մէջ, այլ կօշիկներու մաքրութեան: Հազնուած կօշիկ-
ները որքան մաքուր եւ փայլուն ըլլան, ժողովուրդը այն-
քան յառաջադէմ է...

- Այրած սրտի պարապ մխիթարանք,- ընդմիջեց
Արսէն,- ամէնէն անտանելի գործն է ըրածնիս. հազար
անգամ նախընտրելի էր փոռապանի կամ սափրիչի աշ-
կերտութիւն ընել: Գոնէ մէկը առատ հաց կ'ուտէ, միւսն ալ
պախշիշ կը ստանայ:

- Մի կարծեր,- ըսաւ Վահան,- սափրիչի աշկերտ ը-
սածդ ծառայ ըսել է. փոռապանի աշկերտին տառապանքը
Աստուած թշնամիիս չտայ. փուռէն տաք-տաք ելած մի-
սերն ու կաթօները տեսնելէն հոգին կը հալի. հոտը կ'առ-
նէ, բայց բերանը բան չի հասնիր:

- Ո՛ր կողմ կ'ուզէք դարձէք, վերջ ի վերջոյ պիտի համոզուիք, որ ամէնէն լաւ գործը պոյանհութիւնն է, պայմանաւ որ գործի քրիզ չըլլայ,- եզրակացուց Աւետիս:- Դունքու տէրոյ ես, ազատ եւ անկախ. խօսող չունիս, խառնուող չունիս, հրամայող չունիս ի՞նչ է մեր տարբերութիւնը վաճառականներէն. մեր խանութը պզտիկ է քիչ մը եւ կը շարժի. ա՛յսքան:

Սեդրակ թէ՛ կը հետեւէր խօսակցութեան եւ թէ անհանգստութեան նշաններ ցոյց կու տար: Իրաւունք ունէ՞ր ժամանակը այսպէս պարապ վատնելու. «պարտաճանաչութեան» դէմ մեղանշած չէ՞ր ըլլար: Ի՞նչ տարբերութիւն հիմնի եւ նորին միջեւ. փոխանակ խղճամիտ աշխատատրի պաշտօնը կատարելու, փոխանակ գործի ետեւէն վազելու, նստեր էր ահա առաջուան պէս եւ հաճոյք կը ստանար ընկերներու շաղակրատութենէն: Խղճի մատեանի երրորդ առաքիճութեան սպառնացող զերօն զինք ոտքի հանեց: Արսէն բռնեց թեւէն եւ վերստին նստեցուց արթունակին, յայտարարելով.

- Ո՞ւր կը փախիս. կը վախճաս, որ կ'ուշանա՞ս ժամադրութեանդ. ձգէ որ պսօր ալ Սեդինան սպասէ քիչ մը:

- Ի՛նքզի՛նքդ ծաղրէ,- ջղայնացաւ Սեդրակ:

- Լոխումի պէս աղջիկ է, խօսք չ'ուզեր,- շարունակեց Արսէն:- Քալած ատեն ուշադրութիւն ըրա՞ծ էք. ձուկի մէջք ունի անպիտանը: Մերկացնես, աւազանի մէջ նետես, եզերքը նստիս, անլողայ եւ դուն դիտես...

- Մերկացնելէն ետք՝ չեմ կարծեր որ ուզես աւազանի մէջ նետել այդ տեսակ ձուկ մը,- անելցուց Աւետիս:

- Անօթի հաւը երազին մէջ ցորեն կը տեսնէ,- հեզնեց Վահան:

Սեդրակ այլեւս բան չէր լսեր. արիւնը խուժած էր գլխուն: Քանի մը հիւթել հայհոյանքներ արձակելէ ետք միայն անդրադարձաւ, որ կը հայհոյէր: Սնտուկը շալկեց եւ

առանց շուրջը նայելու հեռացա: Այդքա՛ն շուտ նահանջած ըլլալու դառնութիւնը ծանր կը ճնշէր հոգիին վրայ: Առաջին օրը, առաջին քննութեան իսկ «Ամենադութեան» դէմ գերօ պիտի նշանակէր: Կրնար թերեւցնել լանցանքը անշուշտ, կրնար բարկութեամբ արդարացնել իր գործածած աղտոտ լեզուն, բայց նախընտրելի էր խիստ ըլլալ... Կանգ առաւ, տետրակը գրպանէն հանեց եւ անողոր մատներով տեղույն վրայ իսկ նշանակեց չարաշուք գերօն: Օ՛ այդ կլոր օղակը, որ իր վիզին կ'անցներ կարծես, երկաթէ խեղդիչ անուրի մը պէս: Անտարբերութեամբ մի՛ անցնիք այս արարքին վրայէն: Չերօ՛ կը նշանակէր անհուն ցաւ, սիրտ բզկտող պատիժ, անմխիթար սուգ. գերօ՛ կը նշանակէր երեք օր կամովին զրկուիլ Սերինայի տեսքէն: **Պոյաճի** Սեդրակ հերո՛ս մըն էր այդ պահուն. եւ դուք լաւ գիտէք, թէ տիտղոսակիր որքա՛ն հերոսներ կան ձեր շուրջ, որոնք պարտուած են իրենց խղճին առջեւ:

- Դուն մեղաւոր չես, քեզի բարկացուցին,- ըսաւ Վահան ետեւէն հասնելով եւ քաշելով Սեդրակի կողքն ի վեր:

Ընկերը չբատասխանեց: Բաւական տեղ յառաջացան լուռ ու մունջ, իրաքանչիւրը իր խոհերուն անձնատուր: Մէկէն Սեդրակ կանգ առաւ, ձեռքը խոթեց աթոռակի պահարանին մէջ, հողածեփ պատի նման դեղնեցաւ երեսը եւ աղիտահար մէկու մը յուզումով շրթունքները կակազեցին.

- Վահա՛ն, Սեւօն ու Ծէկօն չկան...

Սեւօն ու Ծէկօն, տիրոջ կողմէ իսկ այսպէս մկրտուած, այն երկու խոզանակներն էին, որոնցմէ մէկը սեւ, իսկ միւրը՝ կարմիր կօշիկ կը փայլեցներ: Իրենց տեսակին մէջ լաւագոյններն էին անոնք եւ շատերու ցանկութեան առարկայ: Ջոյգ մը լծկան եզ՝ առանց որոնց պոյաճիին արօրը գամուած պիտի մնար հողին:

- Անկարելի՛ է,- ըսաւ Վահան,- տեղ մը դրած ըլլալու ես, լա՛ւ փնտռէ:

Սեդրակ վար առաւ ներկատուիը եւ մայթին վրայ պարպեց աթոռակին մէջ թխմուած բոլոր քորջերը, տուփերը եւ մանր խոզանակները: Սեօն եւ Օէկօն դուրս չելան գոմէն:

- Ե՞րբ գգացիր որ չկան,- հարցուց Վահան:

- Հիմա՛, աթոռս թեթեւ եկաւ ձեռքիս:

- Վերջին անգամ ե՞րբ ներկեցիր:

- Ժամը չորսէն առաջ ըլլալու է. սէօրերու դպրոցը դեռ չէր արձակուած. տասը վայրկեանի չափ հոն, անկիւն մը սնտուկս միճակ ձգեցի, երբ Սերինան դուրս կու գար դպրոցէն. այդ պահուն գողցած եմ անպայման:

- Մե՛ղք, շատ մեղք եղան, ի՛նչ ալ աղուոր էին:

- Մեղքն ալ խօ՞սք է, Վահա՛ն, խեթս անհծուեցաւ. ո՞րտեղէն եւ այդպիսի գոյգ մը պիտի գնեմ նորէն: Ատրումիս եւ Թանգարանս ծախեր էի՝ ատոնց դրամը ճարելու համար:

- Ուրիշին մեղքը մտնել չեմ սիրեր, բայց ասիկա ծանօթի գործ է, մերիճներէն մէկուն գործը: Օտար գող մը ինչէ՞ն պիտի գիտնար, թէ ներկատուիդ ամէնէն արժէքատր առարկաները այդ խոզանակներն էին: Եւ ինչո՞ւ անպայման քուկիններուդ աչք տնկած պիտի ըլլար:

Սեդրակի լացը միայն պակաս էր. աչքերը, դէմքը, ձեռքի ջղային շարժումները անդարմանելի կորուստին վիշտով թաթառուած էին ամբողջապէս: Իր յուսահատութիւնը հաւասար էր թանկագին անօթ մը կոտորող կամ մէկ հատիկ խաղալիքը կորսնցնող՝ մանուկի տառապանքին: Հաւաքեց իրերը, շալկեց սնտուկը եւ քանի մը քայլ առնելէ ետք, ըսաւ.

- Գիտե՞ս ինչ յիշեցի. ուսուցիչ մը ունէինք, որ առանց մատիտի դպրոց եկող աշակերտներուն կ'ըսէր. «Դուք առանց գէնքի պատերազմի դաշտ գացող զինուորներ էք»: Միշդ ու ճիշդ իմ պարագաս է. ես հիմա, խոզա-

նակներս կորսնցնելով, առանց զէնքի զինուոր մըն եմ պոյաճիներու գունդին մէջ:

- Կեցի՛ր նայինք, ամէն բան մութ մի՛ տեսներ, տարօրինակ բնատրութիւն ունիս. թերեւս մէկը պահեց՝ կատակ ընել ուզելով. թերեւս տեղէ մը դուրս կու գան: Եթէ նեղը մնաս՝ ես իմ խոզանակներէս մէկը կու տամ քեզի. թող հին ըլլայ, ի՛նչ վնաս ունի:

- Ծնորհակալ եմ, Վահան, առ չէ խնդիրը, ինծի չես հասկնար... Ծէկօն ու Սեւօն առանձին չգացին... բառարանն ալ գնաց, միւս ծրագիրներս ալ ջուրը ինկան...

- Ո՞ր բառարանը, ո՞ր ծրագիրը,- զարմացաւ Վահան:

Սեդրակ չպատասխանեց. ձախ դարձաւ ու մտաւ իրենց տան փողոցը, գրեթէ փախուստ տալով, առանձնանալու զօրատր պահանջքէ մը մղուած: Ընկերը վայրկեան մը նայեցաւ ետեւէն, գլուխը շարժեց եւ շարունակեց իր ճամբան:

Երկուքն ալ, իրարմէ հեռու, ինքնաբերաբար, նոյն մտքին կառչեցան.- Արսէնի մատը կար այս գողութեան մէջ:

*

* *

Յաջորդ օր պոյաճիներու աշխարհին մէջ տարածուեցաւ Ծէկոյի ու Սեւոյի առեւանգումին բօթը: Սեդրակի հետ բարեկամութիւն չունեցող արհեստակիցներն անգամ հետաքրքրուեցան աղէտով եւ եկան ցաւակցութիւն յայտնելու: Մէկը խորհուրդ տուաւ ածան գինով գործածուած զոյգ մը գնել հնավաճառներու շուկայէն, ուրիշ մը թելադրեց մէկ խոզանակով զոհանալ թէ՛ սեւին եւ թէ կարմիրին համար, երրորդ մը խրատեց քիչ մը սպասել, չորրորդ մը զի՛նք մեղադրեց՝ սնտուկը ամէն տեղ ձգել հեռա-

նալուն համար. բայց ոչ ոք արագակի մասին իր մտքէն անցածը բարձրաձայն համարձակեցաւ յայտնել: Սեդրակ հաշտուած էր արդէն գիրքի համար խնայած երեք մէճիտով խոզանակ գնելու գաղափարին հետ, եթէ միայն յարմար բան մը ճարէր այդ գումարով: Առաջին ցնցումէն ետք՝ խաղաղութիւն մը իջած էր հոգիին: Կը զգար, թէ փորձութեան դէմ պայքարելու ժամն էր եւ պարտութիւնը մահ պիտի նշանակէր իրեն համար: Պարտաւոր էր կուրծք տալ դժուարութեանց եւ եթէ հարկ ըլլար, հարիւր անգամ ծախելն սկսիլ նոյն գործը: Պենժամէն Ֆրանգլին կրնա՞ր մեծ մարդ դառնալ եթէ շուտ մը յուսահատէր...

Իրիկուան դէմ երեցաւ նաեւ Արսէն: Առտուն տեսած էր Սեդրակը եւ այնպէս ձեւացուցած, որ իբրեւ թէ բանէ մը լուր չունի: Այս անգամ վազեց քովը, ձեռքի բարեկամական հարուած մը տուաւ ուսին եւ յուզուած շեշտով բացականչեց.

- Միժտէս տուր, խոզանակներդ գտայ...

- Ի՛նչ որ կ'ուզես կու տամ,- խոստացաւ Սեդրակ, աչքերուն մէջ հրճուանքի ճառագայթներ եւ սպասեց, որ ընկերը հանէ զանոնք պահած տեղէն: Բայց ի գուր. Արսէն կեցած էր անշարժ եւ կեղծաւոր ժպիտով կը դիտէր իր տառապագին անհամբերութիւնը: Զինք բաւական քաշքշելէ, յուսադրելէ եւ չարչարելէ ետք, վերջապէս բարեհաճեցաւ յայտնել, թէ խոզանակները արար մարդու մը մօտ տեսած էր շուկան եւ թէ մարդը երկու մէճիտիէ կը պահանջէր անոնց որպէս գին:

- Յո՛ւց տուր ինձի այդ մարդը, այդ գո՛ղ արագակը,- գոռաց Սեդրակ ինքն իրմէ ելած:

- Չ'ըլլար, չեմ կրնար, ետքէն մարս կը լացնէ,- ըսաւ Արսէն նոյն հեզնաժպիտ հանդարտութեամբ:

- Ես ինչպէ՞ս երկու մէճիտ պիտի տամ ի՛մ ապրանքիս համար... ինչո՞ւ տամ...

- Դուն գիտես, մինչեւ վաղը կէսօր մարդը խուսուցաւ ուրիշին չցուցնել: Եթէ շուկայ հանէ չորսի ալ կրնայ ծախել. իմ խնդրանքիս վրայ է, որ երկուքի պիտի տայ:

Սեդրակ կը զգար, թէ առաջին բառէն մինչեւ վերջինը սուտ էր ամբողջ պատմութիւնը. կը զգար թէ դիմացինը օր ցերեկով լրբօրէն կը խաբէր զինք. բռնած էր կոկորդէն եւ դրամ կը պահանջէր: Կատարելապէս վստահ էր նաեւ, որ Սեւօն ու Օէկօն Արսէնի աթոռակիսն մէջ էին այդ վայրկեանին: Կրնա՞ր սակայն իրականութիւնը մէջտեղ հանել: Արսէնի գոյքերուն ձեռք զարնելու համար նախ պէտք պիտի ըլլար անոր բազուկներուն պողպատը խորտակել:

Սեդրակ երկու մէճիտը վճարելէ զատ ուրիշ ճարչունէր: Ու վճարեց...

ԲԱՌԵՐՈՒ ԲԱՆԱԿԻՆ ԴԷՄ

Գիշերները, բառական ուշ ատեն, Դամասկոսի քրիստոնեական թաղամասին մէկ անկիւնը, քաղաքը պողոտաւոր պարտէզներուն կապող փողոցներէն մէկուն մէջ, անցորդները հետաքրքրութեամբ կանգ կ'առնէին, դիտելու համար միհարակազմ, ջղուտ եւ թուխ այն պատանին, որ հողածեփ տնակի մը պատին մօտ նստած, հեռագրասիւնի լամբէն հոսող լոյսին տակ գիրք կը կարդար:

Երկինքէն լուսինը կը փայլէր կամ ոչ, փողոցի երթելնկութիւնը աղմկալի ըլլար թէ ցանցառ, ան հոն էր միշտ, դուրսը, մայթին վրայ, աթոռակը տակը եւ գիրք մը ծունկերուն: Քաղաքապետութեան ելեկտրական լոյսը բաւարար էր՝ տատերը զանազանելու համար, պայմանաւ որ սրատես աչքերու տէր ըլլար ընթերցողը: Եւ այդ լոյսը, հեռագրասիւնի կատարէն, կը շողար մինչեւ կէս գիշեր, մինչեւ արշալոյս: Օդը գաղջ էր, գարնանամուտի մեղմանուշ շոյանքով օծուն եւ նորաբաց ծաղիկներու բոյրով յագեցած: Տեղէ մը, հեռաւոր կամ մօտաւոր պատուհանի մը բաց ձգուած փեղկերէն դուրս կը պանար անպայման արարական «Եա՛ լէլի»ի ոլորուն, երկարաձիգ ու տարփալատ մեղեդին, գիշերային լոռութեան մէջ տարածելով այրուող սրտերու անպարագիծ կարօտն ու տուպտանքը: Պատանին, խորասուզուած իր ընթերցանութեան մէջ, անտարբեր էր շրջապատին հանդէպ: Հագուադէպ նորութիւն մը միայն կրնար հարկադրել, որ ան վեր առնէր գլուխը, չորս դին պտտցնէր

յոգնութենէն պզտիկցած աչքերը, կրկին անձնատուր ըլլալու համար գիրքերու եւ երազի աշխարհին:

Կէս գիշերուան մօտ, ուշադիր անցորդները կը նըշմարէին մայրական մտահոգ դէմք մը, որ դուրս կը կախուէր կոնակի պատուհանէն, պահ մը խանդաղատանքով կը դիտէր կարդացող տղան եւ յետոյ մեղմ, ողորփչ ձայնով կը շշնջէր.

- Կը բաւէ՛, մանչս, կը բաւէ՛ կարդաս. աչքերդ յոգնեցան. հիւանդ պիտի ըլլաս. ժամանակը շատ ուշ է, ե՛լ, անկողին մտիր...

- Այո՛, մամա, հիմա, հիմա պիտի ելլեմ. սա երկու էջն ալ լրացնեմ՝ կու գամ,- կը պատասխանէր պատանին, առանց ետին դառնալու: Երկու էջը չորսի կը վերածուէր սակայն, չորսը ութի եւ սպիտակահեր գլուխը դարձեալ կ'երեւէր կոնակի պատուհանին մէջ...

Փողոցի լամբարին ճառագայթներէն, ժրաջան մեղուի մը պէս, գիտութիւն եւ իմաստութիւն պատրաստող այդ պատանին պոյաճի Սեդրակն էր:

Տերեկները, օրուան որեւէ պահուն, ծանօթ թաղամասի որեւէ մէկ փողոցին մէջ, բայց յատկապէս ֆրանսական գոլէճի մերձակաները, ուր խաղաղութիւն կ'ըլլար, մարդոց աչքը վարժուած էր տեսնելու սեւաչեայ պոյաճի մը, որ շատ աւելի զբաղած էր ընթերցանութեամբ քան թէ կօշիկ ներկելով: Նստած ատեն ոտքերը կը դնէր ներկատուփին վրայ, աթոռակը կը ծռէր դէպի ետեւ, կոնակը կը փակցնէր պատին. մէջքը աղեղ մը կը ձեւացնէր: Այդ դիրքին մէջ, ծանրահակ գլուխով, կարելի է կա՛մ կարդալ կամ քնանալ: Չարաչար կը սխալէին պոյաճին քուն կարծողները: Որովհետեւ եթէ շրթունքները չէին շարժեր, պատճառը այն էր, որ ինքնամփոփուիլ գիտցող, ինքնամոռացութեան հասնող վարժ ընթերցող մըն էր ան արդէն: Քալած ատեն, ընդհակառակն, շրթունքները շատ յաճախ

բաներ մը կը մրմնջէին կարծես եւ պոյաճին ինքն իրեն հետ խօսող ապուշի մը երեսոյթը կը ստանար: Ո՞վ պիտի գուշակէր, թէ ան այդ պահուն գրոյց կ'ունենար կարդացած վէպի հերոսներուն հետ կամ նոր սորվուած իմաստալից ճախադասութիւն մը կը կրկնէր մտովի...

Գարոցի վիճակացոյցն ու Խղճի մատենանը կատարելապէս ներդաշնակ պատկեր մը կը ներկայացնէին: Երկուքին մէջ ալ Սեդրակի ջանասիրութիւնը 10ով պասկուած էր. եւ կրնաք վստահ ըլլալ, որ վերջինին գնահատանքը նուազ արդարադատ չէր քան առաջինին:

Գողութեան դժբախտ պատահարը արգելք չեղաւ, որ Սեդրակ իր որոշումը գործադրէր: Ծիշդ է, չկրցաւ գնել ֆրանսերէնէ-հայերէն առձեռն խոշոր բառարան մը, ինչպէս կը ցանկար, բայց փոխարէնը ձեռք բերաւ անոր փոքրածաւալը, որ «գրպանի» կը կոչուէր եւ բաւական չարչարուած կը թուէր ըլլալ բազում գրպաններու մէջ: Հինն ու նորը նո՛յն գործը կը կատարեն, խորհեցաւ Սեդրակ ու մըխիթարուեցաւ: Բառարանին պզտիկութիւնն ալ մեծ կարեւորութիւն չունէր ի վերջոյ. քանի մը տասնեակ բառ պակաս կամ ատելի. այս չէ՞ր միակ անպատեհութիւնը...

Սեդրակ հաւաքեց բոլոր ուժերը եւ առանց ժամանակ կորսնցնելու ընդհանուր յարձակողականի անցաւ բառերու հսկայ բանակին դէմ: Առաջին գրոհով իսկ կրցաւ ճեղք մը բանալ ռազմաճակատին վրայ եւ գրաւել բառագունդի յառաջապահ դիրքերը: Այս յաջողութիւնը վստահութիւն ներշնչեց իրեն եւ յուսալ տուաւ, որ մէկ-երկու ամիսէն թշնամի գօրքերը դիմադրութիւնը կը դադրեցընեն եւ առանց պայմանի անձնատուութիւն կը հռչակեն: Ափսո՛ւ, շատ միամիտ եւ անփորձ ռազմագէտ մըն էր Սեդրակ եւ գաղափար չունէր ֆրանսական տոկունութեան մասին: Քանի ընդլայնեց ճակատը բառարանի թաւալուն ռազմադաշտերուն մէջ, քանի խորացաւ հակառա-

կորդի դիրքերէն ներս, այնքան անդի զգաց հերքիլեան մեծութիւնը իր ճիգին եւ անատիկ տոկունութիւնը իր դէմ ցցուող բերդերուն: Անհատնում էր բառերու բանակը: Հեղեղի նման իր վրայ կը խածէին սպառազէն գունդերը բառերուն, որոնք ամէն էջի մէջ կ'անէին, կը բազմապատկուէին, աստղահամար կը դառնային կարծես: Ո՞ր մէկուն ետեւէն հասներ, ո՞ր մէկը բռներ, քանի՞ հասող զգեսներ, ինք որ միւ մի՛նակը պատերազմ յայտարարած էր ամբողջ բառարանի մը կայսրութեան դէմ: Ու տարօրինակը հոն էր, որ ֆրանսերէն բառերը բոլորովին նման էին ֆրանսական բանակի զինուորներուն. անոնց մէջ կային ձիաւոր խումբեր, որոնք իրենց սուրը ուղեղիդ կամ սրտիդ մէջ խրելէ ետք, խոյս կու տան սրարշաւ փոթորիկի մը պէս. կային լամատ եւ դաժան լեզունակասներ, որոնք գրոհները կ'արհամարհեն ու կը խնդան մահուան երեսին. կային պնդագլուխ սեւամորթներ, որոնք յուսահատութիւն եւ վախ կը պատճառեն: Սեղրակ խոր դառնութեամբ հաստատեց, որ հազար դժուարութիւններով բռնած գերիներն ալ միջոցը կը գտնէին նոյն օրն իսկ կամ երկու օր վերջ փախուստ տալու... ինչպէ՞ս, ի՞նչ միջոցով եւ ի՞նչ ճամբաներէ.- ուսումնագիտական գաղտնիք մըն էր, զոր չկրցաւ լուծել: Փախչող գերիները դարձեալ ձերբակալելն իսկ անօգուտ կը դառնար շատ անգամ:

Սեղրակ նափոլէոնական նախանջ մը կատարեց. խոհեմութիւնը այդ կը պահանջէր. ժամանակը եւ եղանակը աննպաստ էին իրեն, ուժապահեստը՝ սպառելու վրտանգին տակ: Նման էր այն նաապարին, որ ի գին մեծամեծ ճիգերու կը յաջողի ամբողջ օրը թիակ շարժել, նաաակը առաջ մղել, բայց ջուրերու գիշերային տեղատուութիւնը զայն կը նստեցնէ նորէն առաջին վրայ:

Բառե՛ր, բառե՛ր... ահաւոր է անոնց զօրութիւնը, երբ կեանքէն կը կտրուին, կը դադրին ընկերութեան քաղաքային մէկ անդամը ըլլալէ, կը կորսնցնեն կենցաղա-

վարական ամէն շարժումն ու նրբութիւն, կը զրկուին իրենց համէն, հոտէն ու ջերմութենէն, կը հագուին համագգետ, կը շարուին իրարու ետեւէ անթերի տողանցքի մը մէջ ու կը կազմեն բառարանային բանակ: Սեդրակ շուտով զգաց, որ յիմարութիւն էր պայքարը շարունակել երկաթակոտ անոնց շարքերուն դէմ:

Ընթերցանութիւնը զինք մխիթարեց սակայն, հայրենի օճախի մը պէս հիւրընկալելով խոնջ ու պարտեալ ուզմիկը: Անոր ծոցին մէջ գտաւ ինչ որ մտքին հետ սիրուն ալ կը պահանջէ:

Յիշատակելի դէպք մը պիտի մնայ Սեդրակի կեանքին մէջ առաջին վէպի ընթերցումը: Դպրոցական եղած ատեն մանր-մունր բաներ մը կարդացած էր ի հարկէ. հեքիաթներ, դասագրքային պատմուածքներ, նկարագրական էջեր, բայց մեծահատոր վէպի մը ամբողջական վայելքը չէր ճանչցած տակաւին:

Երբ ներկայացաւ հայ լումայափոխին, որ միեւնոյն ատեն ծխախոտ կը վաճառէր եւ գիրքեր վարձու կու տար, անխուսափելի կուզը շալակին էր: Մարդը ակնոցներուն ետեւէն զարմանքով ու կասկածանքով դիտեց պոյաճին, որ իրմէ «Աղուոր, հաճելի եւ հետաքրքրական» վէպ մը կը պահանջէր:

- Ի՞նչ պիտի ընես գիրքը, որո՞ւ համար է,- հարց տուաւ խանութին տէրը, առանց տեղէն շարժելու:

- Ինձի՛ համար,- պատասխանեց պոյաճին վճռաբար:

- Դուն կարդայ գիտե՞ս, տղաս,- շարունակեց ան իր թերահաւատ հարցալնդումը:

- Շատ լաւ գիտեմ, կ'ուզէք փորձեցէք,- ըսաւ Սեդրակ՝ քննութեան պատրաստուողի դիրք մը ստանալով:

Մարդը դանդաղօրէն ոտքի ելաւ. ակնոցը շտկեց քիթին վրայ, գրադարանին առջեւ կեցաւ ու սկսաւ հատորներու շարքերը աչքէ անցընել: «Աղուոր, հաճելի, հե-

տաքրքրական» կը մոմուային շրթունքները մեքենական ձեւով: Եւ անմիջապէս յետոյ, փնտրոտութիւնը շարունակելով հանդերձ, կ'աւելցնէր. «Ի՞նչ տամ ես այս տղուն, ի՞նչ տամ ես այս տղուն»: Վերջապէս դուրս քաշեց կաշեկազմ խոշոր հատոր մը, բացաւ առաջին էջը եւ երկարեց Սեդրակին: Բաֆֆիի «Խենթ»-ն էր: Պոյաճիւն մէկ շունչով ջուրի պէս կարդաց էջը եւ գոհունակութեան ժպիտ մը խլեց լուսնայափոխէն, որ մասնատր տետրակի մը մէջ անունը արձանագրելէ ետք յայտարարեց.

- Ինձի ծանօթ մէկու մը անունն ալ պէտք է տաս իբրեւ երաշխատր:

- Ես այդպիսի մէկը չեմ ճանչնար, իմ ծանօթներս պոյաճիներ են,- ըսաւ Սեդրակ կարմրելով:

- Այդ պարագային՝ դրամական երաշխատրութիւն կ'ուզեմ. գիրքին գինը... յետոյ ես կ'առնեմ, երբ գիրքը վերադարձնես:

- Ինձի համար շատ դժուար է ատիկա. գործերը պարոն... գիտեք...

- Գիտե՛մ, գիտե՛մ,- ընդմիջեց դիմացինը,- բայց ի՞նչ կրնամ ընել. կրնա՞մ ամէն եկողի գիրք վատահիլ: Քանի՛-քանիներ այդպէս եկած ու տարած են, առանց վերադարձնելու: Դէ՛ գնա՛ փնտրէ, որ գտնես. գացածը գացած կ'ըլլայ:

«Խենթ»-ը վայրկեանին խելօքիկ մը տեղատրուած էր արդէն դարակին մէջ, ի մեծ յուսահատութիւն Սեդրակի, որ աղաչական եղանակով փորձեց մարդը համոզել:

- Ես այդ տեսակներէն չեմ, մէկ անգամ վատահեցէք եւ տեսէք թէ որքա՞ն պարկեշտ մէկուն հետ գործ ունիք:

- Պարկեշտի եւ անպարկեշտի մասին չէ խօսքը. խնդիրը սկզբունքային է. առանց երաշխատրութեան գիրք չ'ելլեր այստեղէն դուրս:

Սեդրակ քայլ մը ետ գնաց ու մտածեց: Ի՞նչ կրնար

ընել, ինչպէ՞ս պիտի ճաղէր անհրաժեշտ երաշխատրութիւնը: Իրեն կը մնար ձեռնունայն վերադառնալ եւ սպասել նոր միջոցներու: Մէկէն լոյս մը ծագեցաւ սակայն մտքին մէջ, առաջ անցաւ, ձեռքը խոթեց արոտակի պահարանէն ներս եւ Օէկոնու Սեւօն դուրս քաշելով՝ գետնից դրամներու ապակեպատ ցուցափեղկին վրայ:

- Ասոնցմէ անլի արժէքատր բան մը չունիմ քովս, պարոն, թող ձեր մօտ մնան, մինչեւ որ գիրքը բերեմ:

- Ծարաթը պարդուտ մը վարձք պիտի վճարես, գիտցած եղիր,- համաձայնեցաւ տէրը,- եթէ մէկ օր անցնի՝ երկու պարդուտ կ'ըլլայ:

- Երեք օրէն կը բերեմ, հոգ մի՛ ընէք:

Պոյանին իր խոստումը կատարեց, արդարեւ: Երեք օր ետք՝ գիրքը նորոգած էր եւ խոզանակները ազատագրած, իբրեւ հաւատարիմ յաճախորդ: Բաֆֆին եթէ գիտնար, որ միայն Սեդրապը պիտի ունենար ընթերցող, դարձեալ պիտի յօժարէրիւր վէպերը գրելու: Չէր կարդար, այլ կը լափէր, կ'ըմբռնէր, կը յափշտակէր: Իրարու ետեւէ պահանջեց եւ իրացուց անոր գրեթէ բոլոր գործերն ալ, առանց խնայելու գրավարձքը, որ իր կշիռը ունէր գրքպանի նիհար պիտոճէի մէջ: «Կայծեր»ը միայն, ծայրէ ծայր կարդալու համար, ստիպուեցաւ կէս մէճիտէ անլի դրամ վճարել, որովհետեւ վարձողը, գործնական ու ճարպիկ մարդ, բազմաթիւ հատորներու վերածած էր զայն եւ առանձին-առանձին կազմել տուած, կարելի եղածին չափ հասութաբեր դարձնելու համար իր գործը: Ամէն անգամ որ գիրք մը աւարտած կու գար կանգ կ'առնէր խանութին առջեւ, հոգին կը լեցուէր երկիւղած զգացումներով: Ռամասկոսի հարուստ ու շքեղ վաճառատուներէն եւ ոչ մէկը ունէր այս կրպակին քաջողական ուժը եւ գեղեցկութիւնը: Պատերու երկայնքին շար ի շար գիրքեր՝ ի՛նչ անփոխարինելի եւ անգին գանձ Սարսուտ կը քալէր Սեդրակի

մարմնէն, երբ կը մտածէր անոնց մասին, որոնց անուններն ու նկարները գիրքերու մէջէն անցած...

Այն օրէն, որ Վահան, Աւետիս եւ Արսէն իր շուրջ բոլորուեցան եւ բերած գիրքերուն բարձրաձայն ընթերցումը սկսան լսել, Սեդրակի արժէքը քառապատկուեցաւ: Մինչեւ իսկ Արսէն շատ բան ստիպուեցաւ գիշիլ իր հեղինակութեան: Նոր ու հիանալի աշխարհ մը փոխադրուողի մանկունակ յափշտակութիւնը կը լուսաւորէր անոր ծաղկահար դէմքը: Յուզիչ էր տեսնել հայհոյաբան ու լիրբ այդ տղուն աղաչանքը, ամենաքնքոջ բառերով եւ արգահատելի խոնարհութեամբ, որպէսփ Սեդրակ քանի մը էջ ատլի կարդար: Երբեմն ստիպուաբար, իսկ երբեմն ալ դիտմամբ Սեդրակ կ'ընդհատէր ընթերցումը, շարունակութիւնը ձգելով յաջորդ օրունան:

- Հոգիդ ուտեմ, Սեդրակ, մի՛ ըներ, քիչ մըն ալ կարդա՛, ամէնէն անուշ տեղը կտրելիք,- կը պաղատէր Արսէն, լուսապագին հետաքրքրութեամբ:

- Լեզուս չորցաւ, աս տղաքի ալ մտիկ ընելէն յոգնեցան. մեզի լիմոնաթա կը խմցնե՛ս կոր,- կ'օգտուէր Սեդրակ առիթէն:

Փողոցի օշարակ ծախողը կը մօտենար, կուրծքէն կախած օշարակի պղնձակուռ խոշոր ամանը եւ ձեռքի պղինձէ թասերը ներդաշնակ շղշկոցով մը իրար գարնելէն: Բաժակները կը լեցուէին ու Արսէն կը ցնծար դրամը, առանց նեղսրտելու:

Եթէ Սեդրակ գործն ու յանախորդները պատրուակէր, Արսէն իսկոյն պատրաստակամութիւն կը յայտնէր իրեն օգնելու, իր փոխարէն եւ իր իաշույն կօշիկ ներկելու, միայն թէ ընթերցումը չընդհատուէր: Եւ այս պարագային՝ ամէն կասկածէ վեր կը մնար անոր անկեղծութիւնը, քանի մը փորձերով ապացուցուած:

- Օրը լրացաւ, քիչ վերջ գիրքը պէտք է տանիմ յանձ-

նեմ, եթէ ուշացնեմ՝ պարողութ մը ատելի կ'առնէ մարդը ինձմէ,- կ'ըսէր Սեդրակ նեղը մնացած ատեն, օձիքը ազատելու համար:

- Ա՛ն պարողուտդ, խալթ մի ուտեր,- կը պոռար Արսէն, արծաթը նետելով Սեդրակի ներկատուփին վրայ:

*

* *

Նոր աւարտած էր «Կայծեր»ու վերջին էջերուն ընթերցումը: Տղաքը նստած էին գետնգերքի ծառերէն մէկուն ներքեւ, իրիկուան դէմ: Զուրիս միալար խոխոջիւնով օրօրուն լուսիս մը կը տարածուէր չորս դին: Սեդրակ պատկաստագրու վարպետի հեղինակութեամբ ընկերներուն կարդացած էր Րաֆֆիի գլուխ գործոցին կարգ մը մասերը: Վէպին գործողութիւնը ծայրէ ծայր ծանօթ էր սակայն բոլորին, որովհետեւ կապը վերահաստատուած էր միշտ, պատմելով մինակը կարդացած հատուածները: Զորս սողոց հոգիներն ալ՝ ափերէն դուրս յորդելու պատրաստ գետի մը պէս ուռած էին եւ ալեծուփ: Զգացումներու ճնշումին տակ բառերը խոյս կու տային:

- Ծա՛տ աղուոր էր,- կրցաւ ըսել Վահան, իբրեւ գերագոյն գնահատանք եւ իբրեւ լաւագոյն վերլուծում:

- Մե՛ղք, որ վերջացաւ,- արձագանգեց Աւետիս:

- Այս բաները իրաւէն եղա՞ծ են արդեօք եւ այս մարդիկը իրաւէն ապրա՞ծ են Հպաստանի մէջ,- խօսեցաւ Արսէն քունէն նոր արթնցողի մը պէս աչքերը շփելով:

- Ասոնք դեռ բան մը չեն. քեռիիս պատմել տուր եւ տես. ինչե՛ր պատահած են եւ ի՛նչ մարդեր եկած անցած. յեղափոխութիւն, ֆետայիներ, հայկական բանակ, ազատութիւն, դրօշակ,- հաստատեց Սեդրակ լաւատեղեակ լրջութեամբ մը:

- Մենք ալ մա՞րդ ենք, մենք ալ կ'ապրի՞՞նք աշխարհէն պէխապար, աշխարհին երես դարձուցած, անպէտ ու աննպատակ:

- Եթէ ուզենք՝ մենք ալ շատքան կրնանք ընել օր մը, երբ առիթը ներկայանայ, երբ պայմանները թոյլ տան, ըսաւ Աւետիս ինքնավստահ:

- Լա գործեր տեսնելու համար առիթ չի պակսիր, առարկեց Վահան:

- Ի՞նչ մեծ-մեծ կը ջարդէք, - պոռաց Արսէն, - ո՞վ ենք մենք, ի՞նչ արժէք կը ներկայացնենք. պոյաճիի կտորներ. մեր երեսն անգամ նայող չ'ըլլար: Պատերա՛զմ պէտք է ծագի. պատերա՛զմ, որ մենք ալ մարդ դառնանք, որ ուրիշ աշխարհներ տեսնենք եւ սա սնտուկներուն տեղ զէնք կըրենք մեր ուսերուն: Ծարժող ջուկերը, հոսող գետերն են, որ տեղ կը հասնին, իսկ մենք հոռեցանք կեցած տեղերնիս, անշարժ ճահիճներու մման:

- Եկէք ուխտ մը ընենք, - յայտարարեց Վահան հանդիսատրապէս:

- Ի՞նչ ուխտ, - հարց տուաւ Սեդրակ զարմացած:

- Ուխտենք, որ չորսս ալ ստակից եւ հաւատարիմ ընկերներ պիտի մնանք մինչեւ վերջ. ինչ որ ընենք՝ միասին պիտի ընենք, ինչ գաղտնիք որ ունենանք՝ իրարու պիտի ըսենք, ուր որ երթանք՝ իրար պիտի չմոռնանք բնաւ. ընդհակառակն, պիտի օգնենք իրարու եւ եթէ պէտք ըլլայ՝ պիտի զոհուինք իրարու համար..

- Հիանալի գաղափար է, - բացականչեց Սեդրակ, - Աստուծոյ անունով երդում ընենք հաւատարմութեան:

Աւետիս եւ Արսէն համաձայնութիւն յայտնեցին, առանց երկար-բարակ մտածելու: Երբ ուխտակիցներու երդումը կատարուեցաւ տեղւոյն վրայ, բաց երկինքին տակ:

- Այս գաղտնիքը սուրբ բան մըն է. պէտք չէ՛ որ դուրս հանենք եւ մեր չորսէն զատ ուրիշ մէկը պիտի չառ-

անք,- ըսաւ Վահան խորհրդատր լոռութիւնը խզելով:

- Աղէ՛կ, բայց բանի մը պէտք է ծառայէ մեր ուխտը, ինչպէս ըսեմ՝ նպատակ մը պէտք է հետապնդէ մեր ընկերութիւնը,- դիտել տուաւ Սեդրակ:

- Գանձանակ մը առնենք եւ չորսիս համար խնայողութեան սնտուկ հաստատենք, ամէն ինչ դրամով կ'ըլլայ, եթէ դրամ չունենանք՝ քայլ մընալ չենք կրնար առնել...

- Ծահածա՞նի՞ս ինչ է որ ի՛նչ պիտի խնայենք,- ընդհատեց Արսէն Աւետիսի խօսքը,- շաբաթը մէկական, երկուքական դրուշ պահելով բան դուրս չի գար. վա՛զ անցէք չէրչիի հաշիւներէն, քիչ մը աւելի լա՛յն մտածեցէք: Անա՛նկ գործեր կան տեսնելիք, անա՛նկ որսեր կան բռնելիք... միայն թէ...

- Միայն թէ ի՞նչ...

- Քաջութիւն պէտք է, սիրտ կ'ուզէ: Դուք մարդ չէք որ... ձեր վրայ կարելի չէ հաշուել որ... մէկական հա՛ւ...

Արսէն իր ծրագիրը չպարզեց, մինչեւ որ ընկերներէն խոստում չստաւ կատարեալ գաղտնապահութեան եւ հատարիս գործակցութեան: Երբ ասոնք յայտնեցին, թէ պատրաստ են վտանգներ դիմագրաւելու՝ ի խնդիր գեղեցիկ նպատակի մը իրագործման, Արսէն զգուշութեամբ չորս կողմը նայեցաւ, ձայնը իջեցուց եւ ըսաւ հատիկ-հատիկ.

- Խաւաճա Անթունը կը ճանչնաք, այնպէս չէ՞. ծեր սարաֆը, որ ոսկիներով լեցուն խանութ ունի: Այս մարդը, եթէ ուշադրութիւն ըրած էք, խանութը գոցած ատեն ամէն իրիկուն դրամները ձեռքի պայուսակը կը լեցնէ եւ հետը տուն կը տանի. ամէն առաօտ ալ նորէն խանութ կը բերէ: Ես լաւ դիտած եմ եւ բոլոր մանրամասնութիւնները լաւ միտքս պահած: Սպասեցէ՛ք, շատ մը իրար մի՛ անցնիք: Լսեցէ՛ք թէ ի՛նչ պիտի ըսեմ: Այս մարդը ծեր է, ձեռքերը կը դողան, քարած ատեն կը կարծես թէ պիտի իյնայ: Պաշուսակը խլել փախիլը մէկ վայրկեանի գործ է. երկու հոգի կը

գբաղեցնէ մարդուկը, երկու հոգի կը փախցնենք: Պտտող թոցնելէն աւելի դիրին...

- Ասիկա կատարեա՛լ գողութիւն է արդէն: Ասոր համար ալ չէք կրնար ըսել թէ գորութիւն չէ, այլ «թոցնել», - ընդվզեցաւ Սեդրակ բունն դժգոհանքով:

- Ծատ վտանգատոր բան է առաջարկածդ, ասոր ծայրը կախադան է,- վճռեց Վահան:

- Վտանգէն վախցողը տունը մամային քով հանգիստ տիտիկ կ'ընէ,- ծաղրեց Արսէն,- ի՛նչ նպատակ, ի՛նչ ուխտ, ի՛նչ ծրագիր...

- Ծօ՛, կառավարութիւնը կը ձգէ՞, որ ուսես այդքան դրամ,- միջամտեց Աւետիս:

- Ուսելու համար չենք ընել կոր, ախմախ, հասկցի՛ր քիչ մը. սուրբ գործի համար է. Պէրոս կը փախիւնք անմիջապէս, գիրք կ'ստնենք, գէնք կ'ստնենք, աշխարհ կը տեսնենք, բահի մը կոթ ալ մենք կ'ըլլանք... Բաֆֆիի նկարագրած հերոսները ի՞նչ ձեռով օգտակար եղան Հայաստանին:

Ծղրիթի մը միալար երգը կը հոսէր գետի արծաթ սահանքին մէջ. ստուերները թանձրացած էին շուրջի թուփերուն եւ ծառերուն ներքեւ. երկյնքին վրայ յամեցող գոյնի վերջին յիշատակներն ալ կը տխրանային եւ իրիկունը կը նետուէր գիշերուան գիրկը:

Չորս ուխտեալները վերջ սուին իրենց ժողովին՝ օրակարգը անլոյծ ձգելով սեղանին վրայ: Զայներու մեծամասնութիւն չստացաւ Արսէնի ստաջարկը:

*

* *

Սեդրակի հոգին կը յորդէր երջանկութեամբ:

Սերինան ժպտած էր իրեն:

Ժպտած էր աչքերուն հրավառ շողիւնով եւ դէմքին ճանճանչող քաղցրութեամբ: Ծշմարտապէս եւ ո՛չ կարծեօք:

Ամբողջ գիշերը Սերինան երազած էր, Սերինային հետ խօսած, Սերինայի հետ ձեռք-ձեռքի պտտած անմահական ջուրերու ափին եւ ծաղկաւէտ դաշտերու մէջ: Անուօտուն, փողոց մը դարձած պահուն, դէմ առ դէմ եկած էր Սերինային ու զայն գտած այնպէս ժպտուն, այնպէս անուշ ու գեղեցիկ, ինչպէս երագին մէջ: Կեանքը դարձած էր ուղղակի երագին շարունակութիւնը, անոր կենդանացումն ու պակումը: Կեանքը գեղեցիկ էր իրապէս...

Սերինան ժպտած էր իրեն մօտէն, շատ մօտէն, բարեւներուն աստուածայինը խտացնելով այդ ժպիտին մէջ: Ժպտած էր ոչ թէ այն անորոշ ժպիտով, որ հագիւ կը գրծագրուի շրթունքներու վրայ եւ չէս գիտեր, թէ որո՞ւն է ուղղուած, այլ ժպիտով մը, որ համակ սէր է ու համբոյր:

Իրիկեամուտ էր արդէն, բայց Սեդրակ տակաւին իր դէմքին վրայ կը զգար Սերինայի ժպիտին ջերմութիւնը:

Ներկատուփը տեղաւորած էր մայթին վրայ: Ձեռքերը տաքատի գրպաններուն խորը, կոնակը պատին, ան նստած էր սրտագոհ՝ սրունքները դէպի առաջ տարածելով անտուկի երկու կողմերէն: Ծուլանալու, անշարժ գետինը տարածուելու պահանջ մը հաճելի թմբիր կու տար մկաններուն: Աննիթացած, ամբողջովին լոյս եւ ժպիտ դարձած Սերինայի դէմքը կը լածէր կարծես իր շուրջ եւ կը ծաւալէր արեգակի հատնող ճառագայթներուն հետ:

Ի՞նչ էր այս կեանքը: Իր կարդացած վէպերուն նման դիտական վէ՞պ մը, յարաշարժ եւ յարափոփոխ երա՞զ մը թէ անողոք ու դաժան իրականութիւն: Ժպիտ մը բաւած էր աշխարհը ոսկեզօծելու եւ իր հոգին անբաւ հարըտութեամբ լեցնելու համար. ու խօսք մը պիտի բաւէր, որպէսզի անմահութիւնը դառնար նուաճուած դղեակ:

Կիսախուփ աչքերուն թարթիչներէն մայրամուտի շողերը գունավառ ծիածան մը կախեցին: Սեդրակ զգաց պահին անկրկնելի վստեմութիւնը: Զգաց որ միջոցի անհուն ժը-

պիտէն Աերիմայի միաձույլ ժպիտը կ'անջատուի, կը խտանայ եւ որպէս մարմնացած հոգիկ'իջնէ իր դէմ: Զգաց որ սովորական պատէշները կը խորտակուին, սահմանները կը շքանան եւ իրենք կը քալեն կողք-կողքի, անմահական ջուրերու ափին, ծաղկաւետ դաշտերու մէջէն: Կը քալեն, կ'երթան շատ հեռուն եւ ոչ մէկ ոժ գոյութիւն ունի զիրենք իրարմէ բաժնող: Հետզհետէ ակի կը սեղմուին իրարու, հետզհետէ աւելի մօտէն կը փոխանցուի իրեն Աերիմայի մարմնին հեշտաբոյր ջերմութիւնը, որ այնքան նման է անոր ժպիտի ջերմութեան ու հափն: Հողը իր երփներանգ գորգերը կը փոէ իրենց ոտքերու առջեւ, ծառերը լաղթանակի կամար կը հիսեն իրենց սիրական անցքին վերեւ, հովերը իրարու կը խառնեն իրնց վարսերը: Սեդրակի թւը համարձակ կը բարձրանայ կ'օղակէ Աերիմայի ճրկուն մէջքը, կրնայ եւ գրկել անորուսերը, կրնայ եւ սեղմըփիլ անոր հոլանի թւին: Աղջիկը կը նայի իրեն բարութեամբ, հեզութեամբ եւ գորովակեով: Կը դիտէ զինք գողունի նայուածքներով, ուր կայ բիրկրանք եւ հիացում:

- Գիտե՞ս,- կ'ըսէ Սեդրակ սօթխած,- շատոնց կ'ուզէի խոստովանութիւն մը ընել քզի. սրտիս վրայ գաղտնիք մը ունիմ...

- Գիտե՛մ, գիտե՛մ,- կ'ընդմիջէ Աերիման,- աւելի լաւ է չըսես, այդպէս շատ աւելի լաւ է.- եւ իր շուշանաթոյր մատները կը դնէ Սեդրակի շրթներուն:

Կանգ կ'առնեն. ո՛չ, կանգ չն առներ, կը նստին խոտերուն վրայ, վճիտ առուակի մը եզերքին. իրենց ծունկերը կպած են իրարու. իրենց հոգիները ձուլուած են իրարու: Աղջիկը մարգարտածաղիկ ք կը քաղէ եւ խորհրդաւոր շշուկներով կը փետտէ անո թերթերը: Սեդրակ կը ժպտի, կը հետեւի պահ մը անոր շարժումներուն եւ յետոյ կը ծոխ ու ականջն ի վար կը փսփսայ.

- Ինչո՞ւ ծաղիկին կը հարցնես. ինձի հարցուր, ինձի՛...

Առուի ալեակներուն մէջ կը բեկբեկի իրենց ցուարձակ պատկերը. ջուրերը կը հոսին կ'երթան ժամանակին հետ, բայց իրենք հոն են, իրենք կան եւ պիտի ըլլան անսահմանօրէն...

Կը մեկնի՞ն: Այո՛, նորէն կը յառաջանան, նորէն կ'ընթանան ձեռք-ձեռքի՛ դէպի անելի գեղեցիկ վայրեր, դէպի լուսեղէն հեռական:

Բայց ահա, յանկարծ, չարագուշակ հով մը կը բարձրանայ կարծես, հորիզոնը կ'ամպոտի, ուրուակերպ եւ դժճետեսիլ մարդիկ կը յայտնուին անտառին խորէն... Չարագործներ են, յելուգակներ, ռճրագործներ, որոնք կը խուժեն իր վրայ՝ Սերինան ձեռքէն առնելու եւ առեւանգելու համար: Սեղրակ կ'ընդդիմանայ. ի՞նչ կ'ըսես, Սեղրակ կը կռուի առիծի նման: Միս-միճակը դէմ կը դնէ հինգ-վեց հոգիներու, մէկը տապալելով բունցքի հարուածով մը, միւսը զգետնելով սուկալի գօտեմարտէ մը ետք եւ մնացեալները փախուստի մատնելով դաշտնով մը, գոր խլած է ինկած չարագործի մէջքէն: Սերինան գետին փոռած է ծառի մը տակ, զգայագիրկ վիճակի մէջ: Իսկոյն կ'առնէ զայն թեւերուն վրայ ու կը քալէ հսկայի յաղթական քայլերով: Ի՞նչ գեղեցիկ է անոր դէպի ետ նետուած գլուխը՝ արձակ մազերով: Քանի մը վայրկեան՝ եւ ահա աղջիկը կը բանայ աչքերը, թեւերը կը փաթթէ իր վիզին շուրջ եւ կ'ըսէ.

- Ի՛նչ քաջս, իմ աննմա՛ն հերոսս...

Վիրաւոր է Սեղրակ, թեւէն արիւն կը ծորի, բայց ո՛վ կարեւորութիւն կու տայ:

- Քեզի համար, Սերինա՛, կրնամ բանակի մը դէմ միճակս կռուիլ. որքան ատեն դուն հետս ես՝ անպարտելի եմ ես:

Սեղրակ աղջկան աչքերուն մէջ սիրոյ նոր հրդեհումներ կը տեսնէ եւ անոր երանաւէտ դէմքին արտապայտութիւնը ըսել կ'ուզէ կարծես. «Տա՛ր ինձ այսպէս, անվերջօ-

րէն տար, միճել աշխարհի ծայրը տար, քու այդ ուժեղ բազուկներուդ վրայ...»:

- Հէ՛յ պոյաճի, ի՞նչ կ'ընես, դուն քնանա՞լ բաց աչքերով...

Սեդրակ ցնցուեցաւ: Առաջին տեսած բանը խոշոր ու սեւ ոտնաման մը եղաւ իր սնտուկի ոտնակալին վրայ. զինուորականի ծանր բեւեռագամ կօշիկ մը: Գլուխը վեր բարձրացուց եւ գտաւ անոր տէրը՝ ֆրանսական բանակի խափշիկ զինուորներէն մէկը: Երեսին գիշերը կը մրցէր կօշիկի սեւին հետ: Բայց շրթունքները ճեղքուած էին՝ սպիտակ ակոսներու ծիծաղ մը ցուցադրելով: Ժպիտը, միջոցին եւ Սերինայի վարդագոյն ու տաք ժպիտը ստուած էր սեւամորթի բերնին շուրջ:

Երազն էր, որ կը խաւարէր խափշիկ զինուորի մը դէմքի գիշերին մէջ:

Կեանքն էր իր դիմացը, երազին ծիծաղադէմ այդ ծաղրանկարը:

Կեանքն էր, որ կու գար ծանր ու աղտոտ կօշիկներու գարշապարով իր երազը ճզմելու:

- Աճապարել, շո՛ւտ, շո՛ւտ ներկել կօշիկներս...

Սեդրակ մեքենաբար ձեռքը տարաւ խոզանակին եւ գայն աթոռակէն դուրս քաշեց... դաշոյնի մը պէս...

ՄՐԲԱԶԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Աւելի քան երկու շաբաթ է ի վեր Սեդրակ չէր բացած խղճի մատեանը: Կը սարսափէր անոր ձեռք դպցնելէ: Բանար ի՞նչ ընէր. ի՞նչ միշտ պիտի տար առաքինութիւններու գլխատրիմն՝ «Ամմեդութեան»: Ինկած մը, փճացած մը, կորսուած մըն էր ինք այժմ: Անվերականգնելիօրէն կործանած մէկը: Այո՛, կը կարդար, կ'աշխատէր, կը ներկէր, շահածը տուն կը տանէր նորէն, բայց ի՞նչ օգուտ: Թիւերու լեզուն անգօր էր արտայայտելու նուաստութիւնը այն սայթաքումին, որ թաւալզլոր անկումի առաջնորդած էր իր հոգին: Ինչպէ՞ս էր պատահած ատիկա յանկարծ, ուրկէ՞ եւ ի՞նչ շուտ փչած էր փորձութեան դաւադիր հովը՝ բզկի-բզկի ընելով խղճի մատեանին սպիտակ էջերը... Սեդրակ կուրծքին տակ նողկանքի վերածուող ցաւ մը կը զգար լոկ եւ մտքին մէջ՝ անթափանց մշուշ: Ընկերներէն ոեւէ մէկը չէր կրնար մեղադրել. ինքն էր միակ յանցաւորը, միակ պատասխանատուն: Հետեւած էր Արսէնի առաջին իսկ հրաւերին՝ անդիմադրելի հետաքրքրութենէ մը մղուած: Գացած ատեն գիտէր թէ ո՛ր կ'երթար եւ ինչո՛ւ կ'երթար, գիտէր թէ պէտք չէ երթար. բայց եւ այնպէս գացած էր՝ տենդալատ մարմնով եւ դողահար հոգիով: Ու յետոյ՝ անխուսափելի. ա՛յն որմէ ամէնէն շատ կը վախնար... Գետեզերքի փլատակ խրճիթներէն մէկը եւ անոր կիսաքանդ որմերէն ներս՝ Արսէնի գովաբանած «եաման սպասուհի»ն, իր կլոր-կլոր դարձող աչքերով: Մնացածը

չէր յիշեր այլեւս: Մնացածը գխապտոյտ պատճառող մանրամասնութիւն էր: Աւելի քաւ երկու շաբաթ է ահա կը փորձէր փախուստ տալ իր անձէի, վրէժ լուծել ինքն իրմէ ու չէր յաջողեր: Այս փախուստը զինք նետած էր կրկին հին պոյաճիին գիրկը: Սկսած էր հայհոյել առաջուան պէս, խմել, ծխել եւ սրիկայանալ:

Սեդրակ կը թափառէր Դամասկոսի փողոցներուն մէջ պարտուած մէկու մը դանդալ քայլերով: Սրտին բեռը շատ աւելի ծանր էր քան ուսէն կսխուած ներկի սնտուկը:

Իրեն թուեցաւ յանկարծ թէ մէկը զինք կանչեց, ի՞ր մականունով: Չհաստաց. այնքան տարօրինակ էր, ներկատուիք ուսին, իր մականունով յորջորջուիլ: Վարժուած էր այլեւս «պոյաճի» անունին պատասխանել եւ իր մականունը օտար էր իրեն. կը պատկանէր կորսուած, մտած տղոյ մը, որ ինք էր եղած երբեմնի ազգային նախակրթարանի գրասեղաններուն վրայ եւ ոյ հիմա գոյութիւն չունէր: Կանչը կրկնուեցաւ աւելի յստակ կերպով: Սեդրակ ցնցուեցաւ եւ անշարժ մնաց տեղը: Ծանօթ, շատ ծանօթ ձայն մըն էր ականջին հասնողը: Ինչպէ՛ս չէ. լաւ կը յիշէր այս ձայնը, որ նոյն ատեն ամբողջ անցեալ մըն էր, զգացումներու եւ ապրումներու աշխարհ մը, խորհուրդ մը եւ սիրելի դէմք մը: Սեդրակ ետին դարձաւ եւ ինքզինք գտաւ պարոն Պօղոսեանին դիմաց: Փախուստի ճամբայ չունէր: Նախկին ուսուցիչը, սրճարանին առաջըը նստած, ձեռքով նշան կ'ընէր իրեն: Տաք քրտինք մը պատեց Սեդրակի մարմինը: Նման հանդիպումի մը երբեք պատրաստ չէր եւ պիտի չուզէր զայն մաղթել ներկայացող պայմաններուն տակ: Գոնէ մաքուր հագուած ըլլար, գոնէ ներկատուիք կարենար տեղ մը պահել: Երեք քայլ հեռուէն պր. Պօղոսեան փաբատեց իր շփոթը, սիրալիք ու զուարթ շեշտով մը բացականչելով.

- Եկո՛ւր նայինք, սա դուն ո՞ր ես. գործի մարդ դառնալէդ ի վեր երեսդ չենք տեսած: Լսանկ շուտ չեն մոռնար

չէր յիշեր այլեւս: Մնացածը գխապտոյտ պատճառող մանրամասնութիւն էր: Աւելի քաւ երկու շաբաթ է ահա կը փորձէր փախուստ տալ իր անձէի, վրէժ լուծել ինքն իրմէ ու չէր յաջողեր: Այս փախուստը զինք նետած էր կրկին հին պոյաճիին գիրկը: Սկսած էր հայհոյել առաջուան պէս, խմել, ծխել եւ սրիկայանալ:

Սեդրակ կը թափառէր Դամասկոսի փողոցներուն մէջ պարտուած մէկու մը դանդալ քայլերով: Սրտին բեռը շատ աւելի ծանր էր քան ուսէն կսխուած ներկի սնտուկը:

Իրեն թուեցաւ յանկարծ թէ մէկը զինք կանչեց, ի՞ր մականունով: Չհաստաց. այնքան տարօրինակ էր, ներկատուիչ ուսին, իր մականունով յորջորջուիլ: Վարժուած էր այլեւս «պոյաճի» անունին պատասխանել եւ իր մականունը օտար էր իրեն. կը պատկանէր կորսուած, մտած տղոյ մը, որ ինք էր եղած երբեմնի ազգային նախակրթարանի գրասեղաններուն վրայ եւ ոյ հիմա գոյութիւն չունէր: Կանչը կրկնուեցաւ աւելի յատակ կեպով: Սեդրակ ցնցուեցաւ եւ անշարժ մնաց տեղը: Ծանօթ, շատ ծանօթ ձայն մըն էր ականջին հասնողը: Ինչպէ՛ս չէ. լաւ կը յիշէր այս ձայնը, որ նոյն ատեն ամբողջ անցեալ մըն էր, զգացումներու եւ ապրումներու աշխարհ մը, խորհուրդ մը եւ սիրելի դէմք մը: Սեդրակ ետին դարձաւ եւ ինքզինք գտաւ պարոն Պօղոսեանին դիմաց: Փախուստի ճամբայ չունէր: Նախկին ուսուցիչը, սրճարանին առաջըն նստած, ձեռքով նշան կ'ընէր իրեն: Տաք քրտինք մը պատեց Սեդրակի մարմինը: Նման հանդիպումի մը երբեք պատրաստ չէր եւ պիտի չուզէր զայն մաղթել ներկայացող պայմաններուն տակ: Գոնէ մաքուր հագուած ըլլար, գոնէ ներկատուիչ կարենար տեղ մը պահել: Երեք քայլ հեռուէն պր. Պօղոսեան փաբատեց իր շփոթը, սիրալիք ու զուարթ շեշտով մը բացականչելով.

- Եկո՛ւր նայինք, սա դուն ո՞ր ես. գործի մարդ դառնալէդ ի վեր երեսդ չենք տեսած: Լսանկ շուտ չեն մոռնար

հին բարեկամները:

Սեդրակ հագի կրցաւ զլիսահակ բարեւ մը տալ եւ սեղմել ուսուցիչին երկարած ձեռքը:

- Նստէ՛,- ըսաւ կրթական մշակը,- Աստէ զրուցենք քիչ մը: Միեւնոյն ատեն կը ներկես կօշիկներս, տեսնենք նոյնքան լաւ կը ներկե՞ս, որքան քերականական լուծում կը կատարէիր:

Սեդրակ սնտուկը դրա ուսուցիչին ոտքին տակ եւ տեղաւորուեցաւ առջեւը: Երսիստապարտ զգաց ինքզինք այս կարգադրութեան համար: Խոզանակի շարժումներուն կատշելով հանդարտութիւնը կը վերագտնէր ու միեւնոյն ատեն կը մտնէր իր բնական դերին մէջ, առանց կեղծիքի ու սեթեւեթի:

Ներկելիք կօշիկը անծանօթ չէր իրեն. դպրոցի օրերէն զայն կը ճանչնար պր. Պօղոսեանի ոտքերուն վրայ: Անոր պէս վաստակաւոր կօշիկ մը, հին, բայց առանց ծակի: Բազմաթիւ անգամներ ինակարկատի խնամքին ենթարկուած:

Սեդրակ ակամայ գլուխը վեր առաւ ու կօշիկներէն աչքը բարձրացուց հայ վարժապետի հագուստներուն: Կարեկցութեան, սիրտ կնող գութի զգացում մը լեցուց հոգին վայրկեանապէս: Ոչ մէկ նորութիւն ուսուցիչին վրայ. նոյն բաճկոնը՝ իդրոտ օձիքով, նոյն գունաթափ շապիկը ուղղահայեաց գիծերով եւ նոյն մաշած փողկապը՝ իր ծուռ հանգոյցով: Պր. Պօղոսեան այդ պահուն սիկարէթ մը փաթթելով զբաղած ըլլալուն, իրենց աչքերը չհանդիպեցան իրարու:

- Ծա՞նր է գործդ, շատ կը յոգնի՞ս,- հարցուց ուսուցիչը այնպիսի շեշտով մը, որ Սեդրակ զգաց թէ նոյն պահուն անոր հոգին ալ ի՛ր հանդէպ հայրական կարեկցութեամբ էր լեցուած:

- Բան մը չէ, շատ աւելի ծանր գործեր ընողներ կան ընկերներուս մէջ,- պատասխանեց Սեդրակ, առանց գլու-

խը վեր առնելու:

- Ամչնալու որեւէ պատճառ չունիս, գիտցած եղիր, հա՛, եւ գլուխդ բարձր բռնէ բորբից առջեւ: Ընդհակառակն, կրնաս հպարտ ըլլալ, որ այս տարիքիդ նետուած ես պաշտարի կրկէս եւ կը կոուիսանողոք ուժերու դէմ: Ես կը սիրեմ այն տղաքը, որոնք քարէ քար զարնուելով, իրենց սեփական ճիգերով մարդ կ'ըլլան: Մէջ մէկ փոքրիկ հերոսներ են անոնք...

«Հերոս» բառը քմծիծաղ մի առաջացուց Սեդրակի դէմքին վրայ եւ չէս գիտեր ինչո՛ւ աչքերուն առջեւ վերակենդանացուց գետեզերքի փլառակ տնակին եւ վաւաշոտ սպասուհիին պատկերը: Ուսուցիչը չափազանց միամիտ, աշխարհի բաներէն անտեղեակ թուեցաւ իրեն ու կրկնապէս խղճաց վրան: Յետոյ լսնկարձ կծու խօսքերով հակաճառելու պահանջ մը զգացել չկրցաւ զսպել հոգիին խորը կուտակուած դառնութեան պոռթկումը.

- Հերոսներ... եթէ գիտնայք, պարոն, թէ ի՛նչ ենք մենք իրապէս, մեր երեսն իսկ պիտի չուզէիք ճայիլ. դուք երեւի կը կարծէք թէ դպրոցի հինտղաքն ենք դարձեալ եւ որեւէ բան չէ փոխուած մեր մէջ: Եթէ գիտնայի՛ք սակայն... կեանքը մեզ դարձուց բորբովին ուրիշ արարած, կեանքը ոչ մէկ խորհուրդ ու սրբութիւն ձգեց մեզի համար. մենք չմեծցած ծերացանք. ամէն բան գիտենք եւ ամէն բան ըրած ենք. գիտենք ուրիշի՛ն ապրանքները թոցնել, գիտենք գինովնալ եւ յետին գիժովի պէս հայհոյել, գիտենք սրիկայանալ եւ դեռ... խելքլ մտքէ չանցած բաներ... Մենք հիմա կ'ապրինք անբան անասուններու նման. չ'արժեր մեր մասին խօսիլ...

Սեդրակ մէկ շունչով արտասանեց այս բոլորը եւ տարօրինակ թեթեւութիւն մը զգաց: Կուրծքը կը հեաւր սակայն. հագիւ կը զսպեր հեծկլտութքը, որ մկանային ցընցումներով կ'արտայայտուէր:

Պարոն Պօղոսեան անակնկալի եկած մէկու մը երեւոյթը չունեցաւ բնաւ. հանդարտօրէն ումպ մը քաշեց առջեւը դրուած սուրճի բաժակէն եւ ծխախոտին ծուխը դեղնած պեխերուն մէջէն դուրս փչելէ ետք, նոյնքան համդարտ եղանակով մը ըսաւ.

- Ո՛չ, տղաս, ո՛չ, ի գոյր կը ճգնիս դուն քեզի սեւցնել. դուն եւ քու նմաններդ իրական հերոսներ էք: Ես շատ լաւ գիտեմ, թէ դուք ինչպիսի փորձութիւններու կը բախիք եւ ի՛նչ փորձանքներ ե կ'անցնիք. այդ բոլորին դէմ մղած ձեր պայքարն է հերոսական: Ձեր քաջութիւնը, դիմադրական ուժը եւ կորովը տեսնելով հոգիս կը հրճուի: Ուրիշ ազգի զաւակներ, ձեր հասակին, փողոցը գնդիկ կը խաղան, իսկ դուք հաց կը վաստկիք ու սուն կը պահէք: Դուք յառաջապահներն էք մեր ժողովուրդի կոտորակուած բանակին, որ այս օտար հողերուն վրայ իր գոյութիւնը կը վերականգնէ: Դուն պոյաճիի սնտուկ մը սնցուցած ես ուսիդ, Կարօն առուծախի թապալա մը կախած է կուրծքէն, Տիգրանը փողկապներ կը պտտցնէ թեւիմ վրայ եւ ամէն մէկդ յաղթանակի վճիռով կը ճեղքէք կեանքը ու կը նետուիք դէպի ապագան, դէպի պայծա՛ր ապագան: Այս սնտուկը ներկերու հասարակ տուփ մը չէ, այլ մարտկոց մը, գրոհի հզօր զէնք մը, որուն առջեւ պիտի իյնան բոլոր պատնէշները: Ձեր կրօնիւր միայն հացի կոնի չէ, այլ հոգիի կոնի, ազգութեան պայքար, ինչպէս ըսեմ՝ գոյութեան եւ յաղթանակի հերոսամարտ, գոյամա՛րտ, այո՛, ճիշդ բառն է՝ գոյամա՛րտ...

Սեդրակ նայեցաւ ուսուցիչի դէմքին եւ հոն գտաւ հաւատքի տարօրինակ ուժ մը, ոգեղէն այնպիսի պայծառութիւն մը, որ կը պարուրէր անոր ամբողջ անձը տեսակ մը պատկառազօրու վեհութեամբ եւ որուն փայլին մէջ կ'անհետանար մաշած բանկոնին, իւղոտ օձիքին եւ գունաթափ փողկապին խղճալի կերպարանքը: Այն յստակ զգացումը ունեցաւ, որ աշխարհի մէջ ամէնէն շատ այդ

մարդը կը սիրէր եւ անոր ձայնը կը թափանցէր մինչեւ իր հոգիին հեռաւոր ծալքերը:

- Թող ձեր կամքը չթուլնայ բնաւ,- շարունակեց պր. Պօղոսեան,- թող ձեր նշանաբանը մնայ միշտ հոգիով ու մտքով բարձրանալ, եւ կրնաք վստահ ըլլալ թէ ձերն է վերջնական յաղթանակը:

- Ձեր այս խրատը երբե՛ք չեմ մոռցած. դպրոցը՝ գրեթէ ամէն դասի կը կրկնէիք գայն. բայց կամքէն ատելի զօրաւոր բաներ կան կեանքի մէջ:

- Կամքէն ատելի զօրաւոր բան չկա՛յ՝ նոյնիսկ մահուան մէջ,- գոչեց դասատուն ձեռքը սեղանին զարնելով,- մեր ժողովուրդի յարութիւնը ատոր ապացոյցն է. քու եւ քու որբ ընկերներուդ շահելիք յաղթանակը պիտի ըլլայ ատոր փառաւոր պսակումը...

Պարոն Պօղոսեան մէկէն ընդհատեց խօսքը, շուրջը նայեցաւ, կարծես անդրադառնալով որ դասարանին մէջ չէր գտնուէր. յետոյ ատելի մեղմ եւ մտերմական եղանակով մը յարեց.

- Գիրքերուն հետ ինչպէ՛ս ես. գիր ու թուղթի երես տեսած ունի՞ս դպրոցը ձգելէդ ի վեր:

- Այո՛, պարոն, կը կարդամ երբեմն:

- Ի՞նչ կը կարդաս:

- Ինչ որ ձեռքս անցնի ասկէ անկէ. շատ անգամ վարձքով կ'առնեմ:

- Կարդա՛, շարունա՛կ կարդա. զարգանալու համար դպրոցը անփոխարինելի չէ. քանի՛-քանիներ կրցած եմ մեծ մարդ դառնալ, բարձր դիրքերու հասնիլ՝ միայն ու միայն ինքնազարգացումով...

Սեդրակ ժպտեցաւ: Գոց գիտէր ուսուցիչին բերնէն ելլող բառերը. չէ՞ր յոգներ այսմարդը նոյն մտքերը տեսարար կրկնելէ. դպրոցէն ներս թէ դպրոցէն դուրս, աշակերտներուն առջեւ թէ պոչաճիի մը ներկայութեան:

- Սեդրա՛կ, տղա՛ս, չեմ կրնար ուրիշ բանով օգտակար ըլլալ քեզի, բայց գիրքի, խորհուրդի եւ բարոյական աջակցութեան համար առանց քաշուելու դիմէ ինձի. երբ որ ուզես՝ եկո՛ւր քովս. պատրաստ եմ ձեռքէս եկածը ընելու:

- Օնորհակալ եմ, պարոն Պողոսեան:

Երբ Սեդրակ դուրս ելաւ արճարանէն եւ ինքզինք առանձին գտաւ փողոցը, իր բոլոր մեղքերէն սրբուած եւ անկումին մէջ՝ ուժեղ ձեռքէ մը բռնած ըլլալու տպաւորութիւնը ունեցաւ:

*

* *

Արտաստովոր շարժում մը նշմարելի էր այդ առաւօտ սինեմայի մուտքին առջեւ: Մեծ դուռը իր երկու թելերով բաց էր. հանուած էին նաեւ փողոցի կողմը նայող պատուհաններուն սեւ վարագոյրները, որոնք գիշեր-ցերեկ գոց կը մնային շարժանկարի ցուցադրութեան ատեն: Ներսը, մաքուր հագուած քանի մը երիտասարդներ կարգադրութիւններ ընելու վրայ էին:

- Ի՞նչ է աս, ի՞նչ կայ, ի՞նչ կ'ըլլայ կո՞ր,- հարցուց Արսէն գարմացած, Վահանին մօտենալով:

- Հայկական հանդէս կայ. քիչ վերջը պիտի սկսի. ձրի է, հա՛:

Աւետիս եւ Սեդրակ չուշացան իրենց ընկերներուն միանալու:

Եռուզեռը կը շատնար սինեմայի դրան առջեւ: Երկու օրիորդներ, մուտքին երկու կողմերը կեցած, մէջ-մէկ կողով ձեռքերնին, գնդասեղի վրայ ամրացուած փոքրիկ սեւ ժապաւէն մը կ'անցընէին ամէն եկողի կտործքին: Կէս ժամ չանցած սրահը լեցուն էր արդէն: Դժուար էր աթոռ ճարելը: Պոյանիները առօք-փառօք բազմեցան բաց պատու-

հանձնարում մէջ, ոտքերնին դէպի ներս կախած: Կարգադիր յանձնախումբի անդամներէն մէկը խոժոռ նայուածք մը նետեց իրենց վրայ, մինչեւ իսկ վար իջնելու հրահանգ տուաւ, բայց ի գուր: Հիանալի էր պատուհաններու դիրքը. թէ՛ բարձր, թէ՛ օդաւտ: Արսէն հայհոյանք մը արձակեց պարոնին, սպաննաց կոհի հանել եւ հանդէսը տակն ու վրայ ընել: Յուրջէն միջամտեցին, անուշի կապեցին եւ տրդաքը հանգիստ ձգեցին իրենց դիրքերուն վրայ:

Բեւը պարզ, բայց տպաւորիչ ձեւով յարդարուած էր: Խոշոր ժապաւէնի մը վրայ, նակատէն, ամէն ներս մտնող կը կարդար. «Յարգանք Ապրիլ 24ի մէկ միլիոն նահատակներուն»: Խունկի քուլաներ կը բարձրանային սեղանի երկու կողմերը, տաճարային խորհուրդ մը տալով սգաւորքող հանդիսաբեմին:

- Եկեղեցին հո՞ս փոխադրած են, ի՞նչ է,- ըսաւ Արսէն սրամտութիւն փորձելով: Սեղրակ, որ քովը նստած էր, չպատասխանեց:

- Հանդէսի մէջ եղած բաներու ամէնէն աղուորը հայկական պարերն են,- անելցուց Արսէն պահ մը ետք:

- Կատակի առեն չէ, լրջացի՛ր. Տէր Զօրի նահատակներուն սգահանդէսն է, որ կը տօնուի. քո հարազատ հայրդ ալ անոնց մէջն է. իմ պապաս ալ մէջն է,- ըսաւ Սեղրակ ցած, բայց խիստ շեշտով:

Արսէն լռեց. բարակ եւ անարիւն շրթունքները պրկուեցան. ծաղկահար դէմքին մէջ աչքերը պզտիկցան ու դարձան կարծես իրենք ալ մէյ մէկ սպիացած վերք, բիրաւոր միւս բոլոր փոսիկներուն պէս:

Նախագահը՝ միջին տարիքի մարդ մը, հանդէսը բացաւ: Սեղրակ լաւ չլսեց ըսածները, միայն տեսաւ, որ բոլոր ներկաները մէկ անգամէն ոտքի ելան եւ գլուխնին կախ՝ պահ մը մնացին այդպէս, լուռ, անշարժ, մինչեւ որ նախագահը ձեռքի նշանով մը կրկին նստելու հրահարեց զանոնք:

- Վահանի ամբողջ ընտանիքը, հայրը, մայրը, քույրերը, եղբայրները, հոս յիշուած գոհերուն մէջն են ուրեմն,- ըսաւ Արսէն անսովոր լրջութիւն մը տալով ձայնին: Սեդրակ դարձաւ միւս պատուհանին կողմը, ուր նստած էր Վահան, Աւետիսի կողքին, վտիտ ու դալկահար: Այդ վիճակին մէջ, ուները կոր ու դէմքը տժգոյն, տաաը տարեկան մանուկի մը տպատրութիւնը կը ձգէր ան: Մանուկ մը՝ որ կորսուած է անձանօթ մարդոց ամբոխին մէջ եւ յուսահատ տրտմութեամբ ու վախով իր տան ճամբան կը փնտռէ:

Թախծոտ երգի մը ոլորուն հնչիւնները տարածուեցան սրահէն ներս: Սեդրակի մարմինը փշաքաղուեցաւ: Քեռին, իր թաւ ձայնով, կ'երգէր յաճախ այդ երգը, իրենց տան ձեռագիր հին երգարանին վրայ հակած: Դարձաւ դէպի բեմ. դեռատի օրիորդ մը խապրիկ կ'աղերսէր հայոց աշխարհի պանդոխտ Կոունկէն:

Հագիւ Կոունկի թելերուն ստուերը անհետացած, երգին յամեցող արձագանգը խզուեցաւ բանախօսին գոռ ձայնով: Անոր արտասանած առաջին բառերն իսկ ցնցում առաջ բերին ներկաներու հոգիին մէջ: Ծերերն ու պատանները գլուխնին կ'օրօրէին աղեկէզ ապրումներու ոգեկոչումով. ոմանց թարթիչներէն արցունքի կաթիլներ կային կախուած եւ ուրիշներ մտիկ կ'ընէին ընդվզումի զայրալից արտայայտութիւններով: Բանախօսը սկսած էր նկարագրել հայկական ջարդերը, տեղահանութեան սարսափները, թրքական բարբարոսութիւնները եւ դէպի Տէր Զօր տանող ճամբաներուն ողբերգութիւնը:

- Վահանը այս բոլորէն շա՛տ ատիկն տեսած է,- մտածեց Սեդրակ եւ նորութիւն չգտաւ բանախօսի պատմած ընդհանուր երեւոյթներուն մէջ: Բայց հանդիսականներուն յուզումը երթալով կը շատնար. անոնցմէ իրաքանչիւրը իր ընտանիքին տուած գոհերը ունէր մտքին առջեւ:

- Նայէ՛, նայէ՛, պր. Նուպարն է, յաճախորդս, ամէն

շաբաթ կօշիկը ինձի ներկել կու տայ,- ըսաւ Արսէն ոգեւորուած, արմուկի հարուածներ տալով ընկերոջը:

Պր. Նուպարը բռնած էր բանախօսին տեղը եւ բաներ մը կ'արտասանէր՝ դէմքի, աչքերու եւ թեւի շարժումներով, մերթ կամաց, խորհրդաւոր, մերթ բարձր ու յաղթական: Սեղրակ առանց հետեւիլ կարենալու արտասանող բանաստեղծութեան ամբողջական իմաստին, զգաց որ գեղեցիկ պատկերներու եւ ճոխ բառերու քաղցրութիւն մը կը թափէր բեմէն: Երբ արտասանութիւնը լրացաւ, մտքին մէջ մնացած էր միայն մէկ տող, յաճախ կրկնող ու երբեք չմոռցող տող մը - «Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին»:

- Տեսա՞ր կօշիկը, ի՛նչ սղուոր կը փայլէր բեմէն. երէկ իրիկուն ներկած էի,- հպարտացաւ Արսէն. կարծես արտասանողի ցուցադրած ամբողջ ճարտարութիւնը ներկած կօշիկներուն շնորհն ըլլար:

- Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին,- մրմնջեց Սեղրակ պատասխանի փոխարէն:

Դարձեալ մեներգ ու արտասանութիւն: Ապա նախագահը յայտարարեց երկրորդ բանախօսին անունը՝ պարոն Պօղոսեան: Զարմանքի բացականչութիւն մը դուրս թուաւ Սեղրակի շրթներէն: Կասկածեցաւ, շունչը բռնեց, բովանդակ ուշադրութիւնը լարած՝ աչքերով որոնեց պր. Պօղոսեանի գլուխը հանդիսականներու առաջին շարքերուն մէջ ու երբ տեսաւ վերջապէս անոր դանդաղաշարժ քայլերուն բարձրանալը բեմի աստիճանէն, չկրցաւ զսպել ուրախութիւնը:

- Նայէ՛, նայէ՛, մեր ուսուցիչն է որ պիտի խօսի հիմա,- դարձաւ Արսէնին, ամէն մէկ բառին ընկերակցելով արմուկի անհամբեր հարուած մը:

Բանախօսը անցաւ սեղանին առջեւ ու վայրկեան մը լռութիւն պահեց: Հանդարտ նայեցաւ շուրջը, այն հարիւ-

րատր աչքերուն, որոնք իր վրայ յառած էին անբացատրելի ակնկալութեամբ մը: Սեդրակ կարօտով ու հպարտութեամբ դիտեց անոր մաշած բաճկոնը, գծաւոր հին շապիկն ու գունաթափ փողկապը: Մարդը եւ հագուստը իրար ձուլուած՝ մէկ անբաժանելի ամբողջութիւն կը կազմէին այլեւս:

- Հիանալի մարդ է եւ շա՛տ աղուոր կը խօսի. դեռ երեք օր առաջ սրճարանը նստած միասին գրոյց կ'ընէինք,- ըսաւ Սեդրակ:

Արսէն թերահաւատութեամբ լսեց ընկերոջը այս խօսքերը, լաւ գիտնալով հանդերձ, թէ ան «փչել»ու սովորութիւն չուներ:

Պարոն Պօղոսեան սկսած էր խօսիլ: Սեդրակին ականջին կը հասնէին կտրտուած նախադասութիւններ, որոնք սրճարանի խօսակցութեան շարունակութիւնը ըլլալին կարծես. «Գոյութեան կոի, գոյատեւելու կամք, գոյապայքա՛ր...»:

Բանախօսին ձայնը յստակ էր, շեշտերը հատու, մտքերը պարզ: Բայց Սեդրակ ի գուր փորձեց կեդրոնանալ եւ բառ առ բառ հետեւիլ անոր ըսածներուն: Տրտմանօշ երազանք մը առած էր զինք թելերուն եւ կ'օրօրէր կէս իրական մթնոլորտի մը մէջ: Կը թուէր, թէ ինք այսօրուան պոյաճին չէր, այլ երէկուան աշակերտը, պր. Պօղոսեանը բանախօս չէր, այլ վաղածանօթ ուսուցիչը, որ կէս մնացած դասը կը շարունակէր դասարանին առջեւ: Ի՛նչ լաւ գիտէր բացատրել ան. որքա՛ն կեանք, հաւատք եւ յուզում գիտէր դնել իւրաքանչիւր խօսքին մէջ:

Բոլոր ունկնդիրներուն հետ Սեդրակն ալ ցնցուեցաւ: Բանախօսը բարձրացուցած էր յանկարծ ձայնը եւ խորագդեցիկ շեշտով մը կը յայտարարէր.

- Այս օրը սուգի օր չէ՛, հայրենակիցներ, այս տօնը սգատօն չէ: Հոս չենք հաւաքուած լալու եւ ողբալու հա-

մար: Եկած ենք մեր մէկ միլիոն նահատակներու յիշատակը յարգելու եւ անոնց ուխտը վերանորոգելու: Մեր մեռելներուն մեզմէ պահանջածը արցունքի հեղեղներ չեն: Մեր թշնամին է, որ մեզի արցունք, ողբ ու սուգ կը մաղթէ: Մէկ միլիոնը ջարդող բարբարոսները շատ ուրախ պիտի ըլլան եթէ վերապրողներու աչքերուն եւ հոգիներուն մէջ արցունքէ զատ ուրիշ բան չտեսնեն: Այդ պարագային անոնք հասած կ'ըլլան իրենց նպատակին ու մեզ վերածած անզօր եղերամայրերու՝ անծայր գերեզմաննոցի մը մէջ: Ո՛չ, ատիկա պիտի չտեսնեն մեր թշնամիները: Արար աշխարհ պիտի տեսնէ, որ հայը կայ, հայը կ'ապրի, հայը անմահ է, նոյնիսկ երբ հուրով ու սուրով դէպի մահ կ'առաջնորդեն զինք: Որովհետեւ, հայուն մեռելները ողջերուն հետ են, ողջերուն մէջ, անոնց հոգին բազմապատկող, անոնց մէկը միլիոնի վերածող անսպառ ուժը: Մեր մեռելները մեր Յարութիւնն են: Մեր լաղթանակը:

- Պրաւօ պէ, սքանչելի կը խօսի կոր մարդը, միայն թէ չեմ հասկնար կոր ըսածները,- փսփսաց Արսէն ընկերոջը ականջն ի վար ծոելով:

- Սո՛ւս, վերջը կը բացատրեմ, մի՛ խանգարեր,- պատասխանեց Սեդրակ, առանց որեւէ շարժում ընելու:

- Հայրենակիցներ,- կը շարունակէր պարոն Պօղոսեան,- մէկ միլիոնը զոհուեցաւ գաղափարի մը համար, նրպատակի մը ի խնդիր: Անոնք կատարեցին իրենց պարտականութիւնը, տուին իրենց կեանքը, ատոր համար ալ նահատակ են, սուրբ են եւ յաւիտ խնկելի: Իսկ ի՞նչ կ'ընենք մենք, ի՞նչ պէտք է ընենք, որ արժանի ըլլանք անոնց ժառանգորդները կոչուելու, որպէսզի բիրատոր անթաղ մեռելներու ոգիները չանհիծեն մեզ: Ծարունակե՛լ պայքարը անասան հաւատքով, մինչեւ որ իրականանայ մեր հայրենի հողերուն վրայ ազատ ապրելու հայուն դարատր երազը: Ահա՛ մեր պարտքը: Նայեցէ՛ք հայ որբերուն, Ապ-

րիլ 24ի մատաղ սերունդին. դուք կը տեսնէք անոնցմէ քիչ մը ամէն տեղ, խանութներու մութ անկիւններէն ներս՝ իբրև աշկերտ, փողոցներու մէջ՝ իբրև պոյաճի, հրապարակներուն վրայ՝ իբրև շրջուն վաճառորդ...

- Ծօ՛, մեր մասին սկսաւ խօսիլ,- բացականչեց Արսէն, շուրջիներէն լսելի դառնալու չափ բարձր ձայնով ու ոգեւորութեամբ: Սեղրակ ուշադրութիւն չըրաւ:

- Անոնք չեն լար, անոնք չեն տրտնջար: Աննման կորովով բոլորն ալ կը ջանան տեղ մը հասնիլ, դիրք մը գրաւել ու մարդ ըլլալ: Հազի որբանոցներէն դուրս նետուած, հազի քիչ մը շունչ եւ արիւն ստացած իրենց ուժաբամ երակներէն ներս՝ յառաջապահը կ'ուզեն հանդիսանալ ահաւասիկ մեր ազգային գոյամարտին: Հսկայ գործ ունին կատարելիք, հայրենակիցներ. ուղեկորոյս այդ տղաքը պէտք է համախմբել նուիրական նշանաբանի մը շուրջ. պէտք է անոնք գիտնան, թէ ինչո՞ւ որբ մնացին եւ ի՞նչ պատգամ կը թողուն իրենց նահատակ հայրերը: Պէտք է գաղափար ու իտէալ ներշնչել անոնց. պէտք է կազմակերպել զանոնք եւ գորգորալ անոնց վրայ: Որովհետեւ, այսօր փողոցներու մէջ ցան ու ցիր՝ վաղը անո՛նք պիտի դառնան մեր դատին դրօշակիրը, մեր յաղթանակին արի բանակը, մեր լուսատր ապագային դարբինները: Հին սերունդէն վերապրողներուս ուներուն կը ծանրանայ այս սուրբ պարտականութիւնը: Նոյն ատեն մէկ միլիոնին պահանջքն է ասիկա: Չ'անցնիր տասը տարի՝ մեր որբերէն իրաքանչիւրը իր աներակ տան օճախը կը վառէ կրկին. վստա՛հ եղէք այդ մասին: Բայց այսքանը չի բաւեր, վառող օճախներուն հետ պէտք է արծարծել դարձեալ հիներու գաղափարական խարոյկը, պէտք է բարձր բռնել միշտ մեր դատին ջահը, որուն արդար լոյսին առջեւ պիտի հալի՛ն ուշ կամ կանուխ բոլոր քնացող ու բարբարոս խղճերու խաւարները...

Սրահի չորս ծայրէն ծափերու որոտ մը թնդաց եւ

խեղդուեցաւ իսկոյն: Պարոն Պօղոսեան հազի իր խօսքը վերջացուցած՝ հանդիսականներէն շատեր չէին կրցած զսպել իրենց ինքնաբոխ ծափահարութիւնները: Արսէն ամենախանդավառ ծափահարողներէն մէկն էր: Բայց նախագահը ոտքի ցատկելով զսպեց աղմուկը եւ յանդիմանական լրջութեամբ մը յայտարարեց.

- Սգահանդէսներուն չեն ծափահարեր:

Սիւնեմայի դռէն դուրս հոսող բազմութիւնը սգաւորի արտայայտութիւն չունէր սակայն: Ամենուն դէմքին վրայ վերանորոգ կեանքի եւ խոստումնաշող յոյսի պայծառութիւն մը կը փայլէր:

Մէկ միլիոն նահատակներու հոգիները մխիթարուած եւ գոհ ըլլալու էին իրենց հարազատներու խունկէն եւ ուխտէն...

*

* *

- Ես այսօր պիտի չաշխատիմ,- ըսաւ Վահան, երբ պոյաճիները միմակ մնացին սիւնեմայի մայթին վրայ, սովորական պատին տակ:

- Ես ալ միտք չունիմ,- անկցուց Սեդրակ:

- Եկէ՛ք, խումբով պարտէզները երթանք եւ տօն բրոններ,- առաջարկեց Արսէն:

Աւետիս ստիպուեցաւ հետեիլ ընկերներուն եւ պոյաճիները ուղղուեցան դէպի Դամասկոսի ընդարձակ մրգատանները: Ծամբուն վրայ Արսէն փորձուեցաւ օղիի շիշ մը գնել, բայց յետոյ ինքնաբերաբար փոխեց միտքը եւ բաւականացաւ տուփ մը սիկարէթով:

Գարնան կենսալիւր շունչին մէջ ծլարձակ սարսուգին յուզումով ողջունեցին այցը իրենց հին բարեկամներուն: Գեղեցիկ ու բեղմնաւոր օրերու վերադարձին համար, անոնց յայտնութիւնը անելի մեծ ապահովութիւն կը

ներկայացնէր քան ծիծեռնակներուն խմբերգը: Տղաքն ալ
նույնքան ջերմ կարօտով շնչեցին բոլոր նշեմի սպիտակ
ծաղիկներուն եւ թզեմի դալար բողբոջներուն:

- Նայեցէ՛ք,- ըսաւ Աւետիս՝ թելը ողջագործումի հա-
մար կարծես դէպի առաջ պարզելով.- նայեցէ՛ք սա խնձո-
րեմիին, որքա՛ն խնձոր կերանք վրայէն անցած տարի:

- Աս չէր,- ճշդեց Արսէն,- մերինը ցանկապատին
միս կողմը կը գտնուի:

- Երկու-երեք ամիս վերջ դրախտ կ'ըլլայ հոս,- շարու-
նակեց Աւետիս՝ մտաբերելով սալորի եւ ծիրանի այն հսկայ
ողկոյզները, որոնք պիտի կախուէին իւրաքանչիւր ծառէ:

- Հիմա ալ դրախտ է,- արեւցուց Վահան, խորունկ
շունչ մը քաշելով իր խշրտացող կուրծքէն ներս,- սա ծա-
ղիկներու հոտը ծծողին թոքերը կը նորոգուին, վրան ուրիշ
տեսակ կեանք կու գայ...

Տօղաթուրմ դալարիքին վրայ աթոռակները շարե-
ցին եւ նստան շուրջանակի: Ներկատուիները բոլորակ սե-
ղան մը ձեւացուցին: Կէսօրը անց էր արդէն, բացին իրենց
հացի ծրարները եւ պարունակութիւնը փոեցին մէջուտը:
Աւետիսին պանիրը եւ Սեդրակին տապկուած գետնա-
խնձորները խառնուեցան Արսէնի չոր թուզերուն եւ Վա-
հանի սոխին ու ձիթապտուղներուն հետ: Եղբայրական
նաշասեղանը ճոխացաւ, զուարթացաւ:

- Դուք լաւ հասկցա՞ք, թէ պր. Պօղոսեան ինչու պո-
յածիներու անունը յիշեց իր ճառին մէջ, ի՞նչ ըսաւ մեր մա-
սին,- հարց տուաւ Արսէն, բերանը լեցուն հաց:

- Ըսաւ, որ պոյածիները պէտք է դադրին պոյածի ըլ-
լալէ եւ արելի պատուաւոր գործ մը ընեն,- բացատրեց Ա-
ւետիս ինքնապատահ:

- Ատանկ բան չըսաւ պր. Պօղոսեանը,- առարկեց
Սեդրակ զարմացած:

- Ատա՛նկ ըսել ուզեց, հապա ի՞նչ ըսաւ: Մենք ալ

քիչ թե շատ հայերէն կը հասկնանք, մենք ալ քանի մը տարի դպրոց գացեր ենք. դուն կը կարծես թէ միմակ բան գիտցողը դո՞ւն ես,- բարկացա Աւետիս:

- Բանախօսին բուն միտքը ուրիշ էր, երեւի դուն լաւ մտիկ չըրիր այդ մասը. ան ըսել ուզեց, թէ...

- Ի՞նչ ալ ըսած ըլլայ՝ իրատունք ունի,- ընդմիջեց Արսէն,- մեր գործը գործ չէ, մեր անունը անուն չէ. մեր ապագան՝ խառի-խայտառակ: Պոյաճիին աղջիկ անգամ չեն տար, եթէ օր մը ամուսնանալու ելլենք: Ծիտակը՝ ես որոշած եմ սնտուկս ծախել եւ շոֆէօր ըլլալ: Հիանալի արհեստ է շօֆէօրութիւնը. օր մը հոս, միւս օր հոն... աշխարհ կը տեսնես...

- Ես որքան հասկցայ՝ պր. Պօղոսեան ըսաւ, թէ որք տղաքը պէտք է ձեռք ձեռքի տան, միութիւն դառնան, կազմակերպուին եւ նպատակի մը ետեւէն վագեն,- խորհրդածեց Վահան, բառերը ծանր-ծանր արտասանելով:

- Մենք այդ բանը մտածեր էինք արդէն, բայց չկրցանք գործադրել,- վրայ բերաւ Սեդրակ:

- Ծօ՛, եկէք խումբ մը կազմենք, ֆութպոլի խումբ մը. հաւատացէ՛ք կը յաջողինք: Չորս հոգի ենք մենք, կ'առնենք նաեւ պոյաճի Համբարը, կ'իրակոսը եւ Ներսէսը. քանի մը հոգի ալ ուրիշ արհեստէ, ի՞նչ կարեւորութիւն ունի որ: Արդէն տասնմէկ-տասներկու հոգի ըլլանք կը բաւ:

Արսէնի առաջարկը ընկերներու անվերապահ խանդավառութեան արժանացաւ: Երեքն ալ օգտակար եւ անհրաժեշտ գտան պոյաճիներու ֆութպոլի խումբի մը կազմութիւնը:

- Ծատ լաւ,- բացականչեց Արսէն ոտքի ցատկելով,- խումբը հիմնուած է այս վայրկեանէս սկսած եւ ես ձեր պետն եմ, ձեր մեծը, ինչպէս կ'ըսեն՝ ամենապետը:

- Ամենապետ չէ, ատենապետ,- ճշդեց Աւետիս:

- Ատենապետը ինքն իրեն չի նշանակեր, քուով

կ'ընտրուի. բոլոր խումբերուն մէջ ա'յս է օրէնքը,- դիտել տուաւ Սեդրակ:

- Ծօ՛ ես յանձն կ'առնեմ ձեր ամենապետը ըլլալ եւ դուք դեռ նա՞՞զ կ'ընէք. ինձմէ աւելի աղէ՞կը պիտի գտնէք,- ըսաւ Արսէն խոժոռ նայուածք մը պտտցնելով խումբի անդամներուն վրայ եւ իսկոյն աւելցուց,- դուն, Սեդրակ, ամենադպիր կ'ըլլաս, գրոց-բրոց ես. Աւետիսը գանձապահ ծնած է արդէն, Վահանն ալ՝ ֆութպոլը եւ ուրիշ բաներ պահող:

- Գոյքապահ,- ճշդեց Աւետիս:

- Գոյք չկայ, որ պահեմ, ես ի՞նչ պիտի պահեմ,- հեզ-նեց Վահան:

- Հոգ մի՛ ընէք, դրամ ալ կ'ունենանք, ֆութպոլ ալ. մինչեւ շաբթուան վերջը կէսական մէճիտ պիտի դնենք ամէն մէկս. միւսներէն աւելիով գանձելու գործը ինձի ձգեցէք,- վստահեցուց Արսէն:

- Անո՞ւնը ինչ պիտի ըլլայ մեր խումբին,- հարցուց Վահան,- անունը շատ կարեւոր է, վերջապէս այդ անունով պիտի ճանչնան ու գնահատեն մեզ:

- Սեդրակ, դէ՛ սանկ աղոտո՛ր անուն մը ճարէ. կարողացած գիրքերէդ լաւ անուն մը չէ՞ մնացած միտքդ,- ըսաւ Արսէն:

- Արարա՛տ,- պոռաց Սեդրակ անվարան:

- Արարատ կայ, կաթոլիկներու վարժարանի տղոց խումբին անունն է,- դիտել տուաւ Վահան:

- Արարատէն աւելի բարձր լեռ գոյութիւն չունի՞:

- Ունի, Էվերեստը կայ, բայց հայկական լեռ չէ:

- Արաքս դնենք, թող երթայ,- մէջ մտաւ Աւետիս:

- Արաքսը աշխարհիս ամէնէն մեծ գե՞տն է,- հարցուց Արսէն:

- Ո՛չ, մեր աշխարհագրութեան ուսուցիչը կ'ըսէր, թէ Ամերիկայի մէջ հսկայ գետեր կան, Արաքսէն շատ աւելի

մեծ, օրինակ Միսիսիփին...

- Միսիսիփի դնենք ուրեմն:

- Չէ՛, եղբայր, չ'ըլլար,- առարկեց Վահան,- հայկական անուն չէ. վրանիս կը խնդան:

Փնտրտուքը դժուարացաւ եւ ճակատները կնճռոտեցան: Վայրկեան մը լռութիւն տիրեց եւ տղաքը խորասուզուեցան խորունկ մտածումներու մէջ: Աստուած իմ, ի՞նչ անուն կարելի էր գտնել արդէօք, որ վայել ըլլար պոյաճիներու նորակազմ ֆութպոլի խումբին:

- Սեդրակ՛կ,- դիմեց կրկին Արսէն ընկերոջը խորհուրդին,- բառ մը չէ՞ս գտներ, որուն մէջ թէ՛ կոհի ըլլայ եւ թէ յաղթանակ: Անուն մը՛ որ այս երկու բաներն ալ նշանակէ միեւնոյն ատեն: Վազ անցէք սա լեռներէն եւ գետերէն. մեզի կոհի պէտք է եւ յաղթանակ:

Սեդրակ ձեռքը տարաւ ճակտին եւ աչքերը փակեց: Փակ աչքերուն առջեւ գտաւ պր. Պօղոսեանի անջինջ պատկերը եւ ականջներուն մէջ հնչեցին անոր խօսքերը. «Գոյութեան պայքար, յաղթանակի հերոսամարտ, գոյամա՛րտ, այո՛, ճիշդ բառն է՛ գոյամա՛րտ...»:

- Գոյամա՛րտ,- գոչեց ոգևոր շեշտով մը, ինքն ալ չըհաստալով թէ ինչպէս կրցաւ այդքան շուտ ճարել Արսէնին պահանջած նշանատր բառը:

- Գոյամարտը ի՞նչ է,- հարցուց Արսէն թերահաւատ կասկածանքով:

- Գոյամարտը թէ՛ կոհի է եւ թէ յաղթանակ,- հաստատեց Սեդրակ այնպիսի վստահութեամբ, որուն դէմ որեւէ առարկութիւն կարելի չէր ընել այլեւս:

Ամենապէտ Արսէն ներկատուփին վրայ ցատկեց այն ատեն եւ ամբողջ ուժով պոռաց.

- Կեցցէ՛ պոյաճիներու «Գոյամարտ» ֆութպոլի խումբը:

- Կեցցէ՛,- արձագանգեցին հիմնադիր չորրորդու-

թեան միւս անդամները:

Այս մեծ դէպքէն անմիջապէս ետք, տղաքը գործի լծուեցան: Ամէն մէկը իր աթոռակի գրպանէն դուրս քաշեց ներկերով ծածկուած քուրջի կտորներ եւ անոնցմով շինուեցաւ ձեռակերտ սքանչելի գնդակ մը: Երկու հարսի պէս գեղեցիկ ծաղկաբաց ծառեր դարձան բերդի զուգ սիւները եւ «Գոյամարտ»ի ֆոթօպոլիստները անհուն եռանդով սկսան իրենց առաջին փորձին...

ՄԵՂԱՊԱՐՏ ԳՆԴԱԿԸ

Կօշկակարի Աշկերտաց ֆութպոլի «Գոյամարտ»
խումբի Պատուարժան Վարչութեան

Մեծայարգ պարոններ,

Կօշիկի ներկարարներու ֆութպոլի նորակազմ «Գոյամարտ» խումբս պատիւն ունի ձեզմէ մրցում մը խնդրելու, յառաջիկայ Կիրակի, Կ.Ե. ժամը 4ին, գերեզմաններու ետին գտնուող բաց դաշտին վրայ:

Արհեստակցական մօտիկութիւնը մեզի համարձակութիւն կու տայ, որ մեր առաջին մրցումը ձեր խումբին դէմ կատարենք: Բարեկամական հանդիպում մը պիտի ըլլայ ասիկա, աոիթ ստեղծելով որ անլի լաւ ճանչնանք զիրար եւ անլի սերտ շփումներ հաստատենք:

Որքա՛ն ուրախ պիտի ըլլանք, եթէ մեր այս ցանկութեան մղում տուող պատճառները ուղիղ ըմբռնուին ձեր կողմէ եւ մրցումը կատարուի ընկերական բարձր մթնոլորտի մէջ եւ ազնիւ նպատակի մը դրօշին ներքեւ: Մեր կարծիքով, կարեւորը կօլ մը անլի կամ պակաս նշանակելը չէ, այլ բարոյական յաղթանակներ շահիլը:

Լիայոյս ենք, որ չէք մերժեր մեր առաջարկութիւնը եւ շուտով դրական պատասխան մը կու տաք մեր նամակին:

Սիրալիք բարեւներով՝
Ի դիմաց «Գոյամարտ» խումբի վարչութեան

Ատեմադափր
Սեդրակ

Ատեմապետ
Արսէն

Յ.Գ.- Գնդակը հայթայթելու զոհողութիւնը մենք յանձն կ'առնենք, իսկ իրաւարար նշանակելու իրաւունքը ձեզի կը շնորհենք:

Նոյն

Երեք անգամ սրբագրեց եւ ընդօրինակեց Սեդրակ այս նամակը, մինչեւ որ ստացաւ վերջնական ձեւ: Երբ աւարտեց անոր ընթերցումը ընկերներուն առջեւ, կասկածոտ նայուածք մը պտտցուց անոնց վրայ, կարծես ըսել ուզելով. «Հը, արդեօք բան մը հասկցա՞ք»:

- Հիանալի է,- բացականչեց Արսէն,- վարդապետն իսկ ասկէ աւելի լաւը չի կրնար գրել, տեսնենք կաշի ծակող խոփօներուն մէջ մէկը պիտի գտնուի՞, որ այս նամակը հասկնալու չափ խելք ունենայ...

Երեքը միասին գործի լծուեցան Արսէնի մատները մարզելու՝ կարելի եղածին չափ գեղեցիկ ստորագրութեան մը ի խնդիր: Ատենապետի իր հանգամանքով պարտաւոր էր նամակը վաւերացնելու: Ամէն մէկը օրինակ մը տուաւ: Արսէն լեզուն դուրս հանած, արիւն քրտինքի մէջ, էջ մը թուղթ մրտտեց եւ վերջապէս ստորագրեց նամակին տակ՝ Ծաղիկ դասարանէն նախակրթարան անցնող մանուկի մը խոշոր գիրերով:

- Եթէ կնիք ունենայինք եւ կարմիր կնիք մըն ալ գարնէինք տակը՝ շատ աւելի լաւ պիտի ըլլար,- ըսաւ Սեդրակ ափսոսանքով:

- Հոգ չէ,- արձագանգեց Վահան,- այս անգամ ասանկ թող երթայ, միւս նամակները ինչալլահ մեր սեփական կնիքով կ'ուղարկենք:

- Լաւ ըրեր ես հասկցնելով, որ ֆուրթպոլը մենք պիտի տանինք մրցումի դաշտ. չկարծեն թէ մենք ալ անոնցմէ ենք, որոնք խումբի անուն կու տան իրենք իրենց, առանց նոյնիսկ գնդակ մը ունենալու,- ըսաւ Աւետիս:

- Միայն թե ինչո՞ւ այդ բանը ուղղակի նամակին մէջ չես դրած եւ տակը անելցուցած ես,- հարցուց Վահան:

- Օրէնքը այդպէս է,- հաստատեց Սեդրակ հեղինակատր վճիռով մը,- պաշտօնական նամակները լետ գրութիւն կ'ունենան անպատճառ:

Արսէն լուռ եւ մտախոհ կը խաղար նամակի թուղթին հետ, գայն ուշի ուշով կարդալ ձեռացնելով: Կարճ վարանումէ մը ետք՝ դարձաւ Սեդրակին.

- Նամակին մէջ կարծես, թէ «դրօշակին ներքեւ» բացատրութիւնը գործածած էիր. սա ո՞ր դրօշակին ներքեւ պիտի ըլլայ մրցումը. դրօշակը մե՞նք պիտի պատրաստենք թէ անոնք:

- Իրաւէն դրօշակ չէ,- խնդաց Սեդրակ,- չես հասկըցած, ես գրած եմ՝ «ազնիւ նպատակի դրօշին ներքեւ». ասիկա ըսելու ձեւ է, գրական ոճ...

Արսէն գլուխը շարժեց առանց գոհացած ըլլալու, բայց որեւէ առարկութիւն չըրաւ՝ տգէտ յորջորջուելու վախէն: Ատենապետ էր վերջապէս: Նամակը գրպանեց եւ յայտարարեց ընկերներուն, թէ վաղն իսկ իր ձեռքով կը յանձնէ կօշկակար Մանուկին, որ հակառակորդ խումբի վարիչներէն է եւ իրենց դրացին:

Սրտատրոփ սպասեցին մէկ-երկու օր. վերջապէս հասաւ պատասխանը. աղտոտ թուղթի վրայ մատիտով խծքծուած, տառասխալներով լեցուն կարճ պատասխան մը: Ի՛նչ փոյթ: Առաջարկը ընդունուած էր. մրցումը տեղի պիտի ունենար որոշուած օրը, որոշուած ժամուն, գերեզմաններու ետին տարածուող բաց դաշտին մէջ: Ամէն ինչ պատրաստ էր, բացի... գնդակէն:

«Գոյամարտ» խումբի վարչական կազմը իրար անցաւ: Եթէ երկու օրուան ընթացքին խոստացուած ֆութպոլը չգտնուէր, կատարեալ խաչտառակութիւն պիտի ըլլար:

Յանելեալ աշխատանքներու, գրկանքի եւ զոհողու-

թեանց շատ խոշոր բաժին մը կար այն պատկանելի գանձին մէջ, գոր տղաքը յաջողեցան քով-քովի բերել եւ Ծաբաթ իրիկուն ճամբայ ինկան դէպի քաղաքի մեծ շուկան: Ծուռ ու նեղ փողոցներէ անցնելով երբ հասան վրան գոց եւ երկարաձիգ շուկայի առաջին խանութներուն, ակներեւ յուզում մը պատեց տղոց հոգին: Չորսն ալ նման էին մանուկներու, որոնք կ'երթան իրենց կեանքի առաջին խաղայիքը գնելու: Ամէն տեսակ ուտելիքի, շաքարեղէնի, մրգեղէնի եւ քաղցրաւեցիներու ճոխ ցուցադրութիւն մը կը հմայէր անցորդի աչքը խանութներու առաջամասէն: Համեմներու գրգռիչ բոյրը մինչեւ մարդու սիրտը կը թափանցէր: Արսէն, Սեդրակ, Վահան եւ Աւետիս կը տեսնէին եւ կը շնչէին այդ բոլորը, առանց ազդուելու, առանց նուազագոյն ուշադրութիւնն իսկ ընծայելու: Կօշիկի, կերպասեղէնի, յախճապակեղէնի այլատեսակ վաճառատուներու ցուցափեղկին մէջ անոնց աչքը մէկ բան կ'որոնէր միայն.- հմայագեղ կաշեգնդակը:

Գոց շուկայի հակադիր ծայրամասին մէջ կանգ առին խանութի մը առջեւ, որ եթէ հանրածանօթ չէր իր շքեղութեամբ, ծանօթ էր սակայն իր տիրոջ համբաւատր ազահութեամբ: Հայ մըն էր սէրը, բայց «հրեայ» պատուանունին արժանացած՝ խանութպանի իր մասնայատկութիւններուն համար: Յաճ առաստաղէն, թելերէ կախուած, հանդարտօրէն կ'օրօրուէին ֆութպոլի քանի մը տեսակներ: Տուփերու բուրգեր կը բարձրանային ներսը, պատերու երկայնքին, իրարու վրայ դիզուած, ոմանք դարակներու մէջ, ուրիշներ՝ գետինը: Բերնէ-բերան ապրանքով լեցուն էր խանութը, ուր առիծի կաթն իսկ կարելի էր գտնել, ինչպէս կ'ըսէ ժողովուրդը: Օրուան բոլոր ժամերուն, ներս նաչողը կը տեսնէր՝ շարունակ վար հակող եւ շարունակ բարձրացող ճաղատ գլուխ մը, ելեկտրական լամպի տմոյն լոյսին տակ շողարձակ: Խանութպանն էր, որ անվհատ

յարատեսութեամբ կը ջանար կարգ մը դնել խանութի յարանորոգ եւ շահաբեր անկարգութեան մէջ:

Ճաղատ գլուխը յանկարծ վեր ցցուեցաւ եւ մտահոգ կնճիռներով ծածկուեցաւ՝ չորս պատանիներու ներխուժումէն շփոթահար: Չկրցաւ սակայն կասեցնել զանոնք դրան սեմին:

Արսէն ձեռքը նետած էր օրօրուող գնդակի կաշիին եւ կը ճմլէր զայն ափին մէջ: Մարդուկը շունչ քաշեց, վըստահալից ժպիտ մը ունեցաւ շրթներուն ծայրը եւ ըսաւ.

- Հիանալի գնդակ է, երոպակաւան, լաւագոյն կաշիէն շինուած. ամբողջ շուկան փնտռէք՝ մնանը չէք գտներ:

- Կլողներէն չենք, մենք ալ քիչ թէ շատ կը հասկընանք,- վրայ բերաւ Արսէն.- դուն գինը ըսէ, որքա՞ն կ'արժէ այս գնդակը մէջով ու դուրսով:

- Մէջի լաստիկով եօթը մէճիտ, առանց լաստիկի՝ հինգ ու կէս:

- Վերջին գինը ըսէ:

- Մէկ դրուշ պակաս չ'ըլլար, ան ալ ձեզի համար:

- Մեր ամբողջ ունեցածը հինգ մէճիտ է,- ըսաւ Վահան յուսահատ շեշտով մը:

- Այն ատեն՝ պզտիկ տեսակը ատէք:

- Ո՛չ,- պատասխանեց Արսէն վճռաբար,- պզտիկը չօճուխներու խաղալիք է, մենք իրական ֆութպոլ մը կ'ուզենք, մարզադաշտի եւ մեծ մրցումներու ֆութպոլ մը...

- Դուք գիտէք:

- Առանց ուրիշ տեղ մայելու՝ ուղղակի քովդ եկանք,- դիտել տուաւ Աւետիս:

- Ծնորհակալ եմ, կրնաք ուրիշ խանութներ ալ պտըտիլ, գալիք տեղերնիդ նորէն ճոս է, իմ ապրանքէս ուրիշ տեղ չէք գտներ:

- Խելքի մօտիկ չէ պահանջած գինը,- միջամտեց Սեդրակ:

- Հայ տղաներ էք ըսելով ես ձեզմէ այս համեառ գինը պահանջեցի:

- Մենք նորակազմ խումբ մըն ենք, «Գոյամարտ» խումբը. տակաւին շատ պզտիկ է մեր պիտոճէն, դուն պէտք է նորակազմ հայ խումբերը քաջալերես՝ աղոտր գեղջ մը ընելով ֆութպոլի գինին վրայ,- պատճառաբանեց Սեդրակ, իր ամբողջ իմաստութիւնը գործածելով:

- Լա՛ւ, ձեզի քաջալերած ըլլալու համար կէս մէճիտը գեղջեմ, տուէք վեցուկէս եւ ուրիշին մի ըսէք, որ այս գինով ֆութպոլ ծախած եմ ձեզի:

- Մեր ունեցածը միայն հինգ մէճիտ է,- կրկնեց Վահան դառնօրէն:

- Հինգով կաշին միայն կրնաք գնել. լաստիկին արժէքը մէկուկէս է, ո՛ր ալ երթաք: Բոլոր նորակազմ խումբերը իմ յաճախորդս են եւ շատ գոհ կը մնան. տակաւին անցած շաբաթ հինգ ֆութպոլ ծախեցի:

- Օհօ՛, ուրեմն մէկ շաբթուան մէջ հինգ նոր խո՞ւմբ կազմուած է,- հեզանեց Արսէն, դիմացինը զինաթափ ընող ծիծաղով մը:

- Չեմ գիտեր, բայց ես ծախեցի, կրնամ տեստակիս հաշիւները ցոյց տալ ձեզի, եթէ չէք հաւատար:

- Քեզի պահէ հաշիւներդ եւ գնդա՛կը տուր մեզի,- լրջացաւ Արսէն:

- Անկարելին կը պահանջէք, ձեր ուզած գինով այս պատուական ֆութպոլը չի տրուիր. դրամագլուխը վեց է արդէն. ամբողջ շահեկիքս կէս մէճիտ է. խանութի վարձք, կառավարական տուրք, լոյսի սպառում, դրամի անկում... Ես ինչպէ՞ս պիտի դարձնեմ այս խանութը:

- Լա՛ւ,- ըսաւ Արսէն պահ մը մտածելէ ետք.- հինգ մէճիտը կանխիկ տանք, մնացածը գալ շաբաթ կը բերենք. վաղը մրցում ունինք, գնդակը անպայմա՛ն պէտք է մեզի:

- Չ՛ըլլար, ապառիկ տալու սովորութիւն չունիմ, չե-

տաճօցեցէք մրցումնիդ,- պատասխանեց մարդը սառնութեամբ:

Արսէն անհամբերութենէն եւ ջղայնութենէն եղունգները սկսած էր կրծել. միւսներու դէմքին վրայ յուսահատութիւնը մութ վարագոյր էր քաշած:

- Եկուր ուրիշ պայման մը կապենք. ոչ դուն վնասէ, ոչ ալ մենք: Մեզի պակտող մէկուկէս մեծիտի փոխարէն քսանհինգ անգամ կօշիկդ կը ներկենք կարգով: Ամէն շաբաթ մէկերնիս կու գանք եւ կօշիկներդ նոփ-նոր կ'ընենք,- յայտարարեց Արսէն, իր ըրած գիտին արդիւնատրութեան վրայ վստահ մէկու մը խանդավառութեամբ:

Խանութպանը նախ չլսելու զարկաւ, ապա խնդաց քիթին տակէն եւ յարեց.

- Ես խանութս փակուած մարդ եմ, դուրս չեմ ելլեր, ամբողջ օրը բապունով. ներկի պէտք չունիմ. եթէ պէտք ալ զգամ՝ ես ինքս կը ներկեմ կօշիկներս: Ներկին արծէքը ի՞նչ է որ...

Վերջին փամփուշտն ալ արձակուած էր՝ առանց նրպատակին հասնելու: Մարդուկին ճաղատ գլուխը կը փայլէր առաստաղէն կախուած ֆոթօպոլին տակ, իբրեւ նորօրինակ ու արտաոռոց ֆոթօպոլ մը, որով անկարելի էր կօլընել: Սեղանին վրայ բաց դրուած էր գնդակը ուտեցնելու ծառայող կարմրագոյն լաստիկներու տուփը, Արսէնի շոյող մատներուն ներքեւ: Պոչածիները անձկալից ու հարցական նայուածքներ փոխանակեցին: Բաշ գիտէին թէ ֆոթօպոլի լասագոյն մառքը այս մարդուն մօտն էր եւ անօգուտ լոգնութիւն պիտի ըլլար ուրիշ խանութներ թափառելը: Յանկարծ Արսէն հատաչանք մը արձակեց կուրծքին խորէն, ինկաւ քովի աթոռին վրայ եւ բազուկները յուսահատական ձեռով նետեց ետին: Եթէ ձեռքէն գար՝ ֆոթօպոլի մը պէս պիտի ուզէր թոցնել մարդուկին ճաղատ գլուխը: Բայց, ո՛վ զարմանք, հանդարտօրէն ելաւ ոտքի, մեղմօրէն ժպտեցաւ,

ձեռքը խոթեց գրպանը, հանեց ափ մը արծաթ դրամ, համրեց հինգ մէճիտը սեղանին վրայ եւ ըսաւ.

- Հոգ չէ, տուր վրայի կաշին, մէջի լաստիկն ալ տեղէ մը կը ճարենք, փոխ կ'առնենք կամ վաղը կու գանք կը գրենք: Ընկերները անակնկալի եկան Արսէնի այս որոշումին առջեւ, ապշած մնացին կեցած տեղերնին, բայց համակերպեցան: Արսէն թեիմ տակ զարկաւ կաշեգնդակը եւ գոչեց. «Հայտէ՛, տղաք, երթանք մեր գլխուն ճարը տեսնենք»:

Հագիլ քանի մը վաճառատուն անցած էին եւ անկիւն մը դարձած, երբ Արսէն կանգ առաւ, դէմքին վրայ սատանայական այն ժպիտը, զոր միշտ կ'ունենար մէկու մը գլխուն խաղ խաղացած ատեն: Ընկերները սեղմուեցան իրեն եւ սպասեցին, որ առեղծուածը լուծուի: Արսէն ձեռքը ետին տարաւ եւ տաքատի յետուքին վրայ գտնուող խոշոր կարկտանի քակուած կարերու բացուածքէն դուրս քաշեց ֆութպոլի մէջի լաստիկը եւ լաղթական դրօշի մը պէս պարզեց օդին մէջ:

- Թող երթայ հասկնայ, որ պոյաճիներու քիթին կարելի չէ խնդալ: Չտուողէն՝ մենք գիտն'նք առնելու ձեռք...

Ընկերներուն դէմքը լանկարծ լուսատրուեցաւ՝ ամպերու ճեղքէն ճառագայթ ստացող պատուհանի մը պէս: Վահանն էր միայն, որ կը շարունակէր պահել իր դէմքին տարտամ եւ երկիւղալի արտայայտութիւնը: Դժուարութեամբ կրցաւ թոթովել.

- Արսէն, լաւ բան չեղաւ աւ ըրածդ...

- Ի՛նչ, դո՞ւն ես խօսողը... առ ո՞ր օրուրնէ խիղճդ այդպէս նրբացեր է. մոռցա՞ր պտղավաճառներու քաշածը ձեռքէդ:

- Նոյն բանը չէ: Մեր ֆութպոլին մէջ մեղք մտաւ եւ այդ պատճառով ալ պիտի պատժուինք: Պիտի կորսնցընենք վաղուան մրցումը:

- Ծօ՛, հիմա կը հասկնամ, թէ ինչո՛ւ այսպէս խոփօ

մնացեր եւ: Քեզի պէս մտածողները ոչ միայն յաղթելու, հապա ապրելու անգամ իրատմբ չունին,- պողթկաց Արսէն ինքն իրմէ ելած:

Աւետիս եւ Սեդրակ կը լռէին. աւելի ճիշդ՝ ձեռքէ ձեռք խլելով՝ ֆութպոլը շօշափելու հաճոյքովն էին տարուած ու մէկ ականջով կը հետեւէին խօսակցութեան:

- Դուն կը կարծես, թէ խանութպանը վնասե՞ց լաստիկին կորուստով. ծօ՛, չորս մէճիտի ալ ծախէր՝ նորէն կէսը շահ է ասոր: Վնասողը մենք ենք միայն, աղքատներս, անպաշտպաններս: Կրնա՞ս ըսել թէ հայրդ, մայրդ, քոյրդ, եղբայրդ ինչո՞ւ ջարդեցին, մեզ բոլորս ինչո՞ւ քշեցին մեր տուներէն եւ հողերէն. ի՞նչ մեղք ունէին անոնք, ի՞նչ մեղք գործած էինք մենք. ըսէ՛, մեր ո՞ր յանցանքին համար պատժուեցանք եւ թուրքը ինչո՞ւ անպատիժ մնաց...

Արսէն շուկային մէջտեղը կեցուցած էր ընկերները եւ Վահանի օձիքէն բռնած՝ կը խօսէր անոր աչքերուն խորը նայելով, առնելիքը պահանջողի մը պէս վճռական ու կորովի: Քանի մը արաբներ իրական կոտորտուքի տեղ դրին վէճը եւ ըսին անցած ատեննին.

- **Պասիթա, մապիսայէ** (վնաս չունի):

- Հոս նայէ՛, օղլում,- ըսաւ Արսէն ձայնը մեղմացնելով,- այս աշխարհը ուժ եւ ճարպիկութիւն ունեցողինն է. յաղթանակները կը պատկանին՝ դանակը լաւ սրողին եւ լաւ կոտորողին: Ֆութպոլի մրցումներու յաղթանակներն ալ այդպէս են. ով որ ոտքի գօրատր հարուածներ տայ՝ կօլ կ'ընէ, լնցաւ գնաց... ֆութպոլին մե՞ղքը որն է: Եթէ քեզի պէս մտածելու ըլլանք՝ պարտուած ենք արդէն, աւելի լաւ կ'ընենք ուրեմն որ դաշտ չիչնենք: Ի՞նչ ըսիք, տղաք,- դարձաւ ընկերներուն:

- Եթէ լաւ խաղանք՝ կը յաղթենք,- հաստատեց Աւետիս:

Գոց շուկայի ծայրն էին հասած: Աւետիս վախ ու դո-

դով դեռ կը շարունակէր յաճախակի ետին դառնալ՝ տեսնելու համար թէ յասնութեանը զիրենք չի՞ հետապնդէր: Փորձանքը անցուցած էին այլեւ: Մտան նեղ փողոց մը եւ Դամասկոսի մեծ ու պատմական մզկիթին կիսաշրջանը կատարեցին: Կը մօտենային իրենց թագաւորութեան տակ գտնուող թաղամասերուն:

- Ֆութպոլին հիանալի է, ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ համագգեստ շապիկներն ալ ունենայինք,- ըսաւ Սեդրակ սրտագին ուրախութեամբ:

- Հոն հասնելու եւ շնորհքով խումբ դառնալու համար՝ առնուագն տարի մը կ'ուզենք դեռ: Դուն անոր նայէ, որ ազատեցանք մութացկանի պէս դաշտերու եզերքը ըսպասելէն, որպէսզի դուրս ելած գնդակին հարուած մը տալու բախտը ունենանք: Հիմա ֆութպոլի տէր ենք մենք ալ, ուզածնու չափ կը խաղանք, ուզած ատեննինս դաշտ կ'իջենք, ոչ որ իրաւունք ունի մեր վրայ պոռալու եւ հայհոյելու,- պատասխանեց Աւետիս:

Մտան հեծելանի վարձու տուող ծանօթ մէկու մը խանութէն ներս եւ անոր փքոցով ունեցուցին գնդակը: Բաւական ժամանակ առաւ ունեցնելու եւ կապելու յուզումնալից այս գործողութիւնը, որուն խառնուեցան չորս տասնեակ անվարժ մատներ: Երբ գնդակը, քարի պէս կարծր, սկսաւ վեր-վեր ցատկել հաճելի զնգոցով, Արսէն զայն յանձնեց Վահանին եւ հանդիսատրապէս յայտարարեց.

- Այս վայրկեանէս գոյքապահի պարտականութիւնդ կը սկսիս կատարել: Կը տանին տուն, լաւ կը պահես եւ վաղը որոշուած ժամուն դաշտ կը բերես: Չըլլա՛յ որ միճակդ տունը խաղալու փորձեր ընես: Պատասխանատու ես հա՛, գիտցած եղիր. վա՛յ որ ֆութպոլին բան մը պատահի, մեռած օրդ է...

Վահան ամուր մը սեղմեց ուռած գնդակը թեւին տակ: Ու երբ բաժնուեցաւ ընկերներէն՝ տարօրինակ վախ

մը համակեց զինք: Հապա եթէ լակոտին մէկը զար ետեւէն ու զարմելով թոցնէր ֆութայուր: Հապա եթէ գիշերը գողնային իր քնացած ատեն: Հի՛նգ մէճիտ թելին տակ եւ վրան ալ մէկուկէս մէճիտ արժող գողցուած լաստիկը: Ամբողջ հարստութիւն մը, զոր չէր կրնար վճարել իր ունեցածները վաճառելով:

Ծատ ծանր էր գոյքապահի իր պատասխանատուութիւնը:

*
* * *

Կօշկակարի աշկերտաց «Ազատամարտ» եւ կօշիկի ներկարարներու «Գոյամարտ» ֆութայոլի խումբերուն մրցումը տեղի ունեցաւ խուռներամ հանդիսականներու... բացակայութեան:

Գերեզմաններու ետին տարածուող բաց դաշտը ամէն յարմարութիւն կը ներկայացնէր խաղապայք մը դառնալու, եթէ արժանանար քաղաքապետութեան յատուկ խնամքին եւ ուշադրութեան: Պէտք ունէր կարգ մը յարդարանքներու՝ մաքրել քարերը, շտկել տեղ-տեղ շեշտուող ելեւէջները, տնկել բերդին ձողերը եւ գծել սահմանները: Ապագայ խաղադաշտ մըն էր ան, զոր անտուն եւ անկայք խումբերը որպէս ներկայ կը գործածէին: Ու չափազանց զոհ էին անոր այդ վիճակէն:

Բերդին ձողերը իսկոյն փոխարինուեցան քարակոյտերով եւ ոտնաչափը ճշդեց իրաքանչիւրին հաւասար բացուածքը: Կը մնար բարձրութիւնը, որուն պայմանական չափանիշ որոշուեցաւ բերդապահներուն վեր ցատկելու կարողութեան աստիճանը: Աւելի ճիշդ իրաւարարի խիղճն ու աչքի չափը:

Իրաւարարը պատկառագոյն մէկը կ'երեւէր իր ան-

ժպիտ դէմքով եւ դանդաղ շարժումներով: Երկու խումբէրուն ալ վատահոլութիւնը շահելու հիմնական տոճեալը ունէր ան, որովհետեւ ոչ կօշկակար էր, ոչ ներկարար, այլ կը պատկանէր երրորդ ճակատի մը: Դերձակ էր արհեստով, հետեւաբար չէզոք գօտիի մարդ: Պատճառ մը չունէր պայքարող կողմերէն ասոր կամ անոր հանդէպ կողմնակալ համակրանքներ սնուցանելու: Գոնէ ա՛յդ ենթադրել կու տար դերձակի իր հանգամանքը եւ ասոր համար ալ կանչուած էր արդարադատ իրաւարարի դժուարին պարտականութեան:

Երբ սուլիչը հնչեց եւ խաղացողները դաշտին վրայ իրենց տեղերը գրաւեցին, տարօրինակ տեսարան մը պարզուեցաւ: Այդ վայրկեանին եթէ Անգլիայէն ֆութպօլիստ մը ժամանէր եւ պատահմամբ հոնկէ անցնէր, պիտի կարծէր թէ մրցումը լրացած է եւ խաղացողներու մեկնումէն ետք՝ հանդիսականներէն կարգ մը անձեր դաշտ իջած են քիչ մը զուարճանալու համար: «Ազատամարտ»ի եւ «Գոյամարտ»ի մարզիկներէն իրաքանչիւրը տեսակ մը հագուստ կը կրէր: Ոմանք կարճ տաբատով էին, ուրիշներ՝ երկար. ոմանք հաւած էին տաբատները, ուրիշներ վարի մասը սոթած եւ գուլպային մէջ խոթած: Կային խաղացողներ, որոնք իրենց ճակատները ճերմակ թաշկիմակով մը կապած էին՝ ֆութպօլը գլխով աւելի լաւ հարուածելու համար անշուշտ: Կային խաղացողներ ալ, որոնք գուլպայ չունէին իրենց ոտքին: Իսկ կօշիկներու ալ լազանութիւնը ցուցահանդէս մը կրնար լեցնել: Կօշկակարներու խումբէն երկու տղաք միայն ուռած քիթով ֆութպօլի կօշիկ կը կրէին՝ իրենց իսկ ձեռքի աշխատանքով կարուած: Եւ անոնց քալուածքն ալ տարբեր էր արդէն միսներէն: Ուռուցիկ պարծենկոտութիւն մը կար անոնց ոտքերուն վրայ: Արսէն ծանր կիսակօշիկ մը ամրացուցած էր ոտքին՝ մասնաւոր կապերու միջոցով: Աւետիս

եւ Սեդրակ իրենց սովորական կօշիկներով էին. իսկ Վահան ճարած էր թեթեւ ու ծակոտկէն սանտալ մը, այն պարզ պատճառով, որ օրուան կօշիկը շատ խոշոր ըլլալուն դուրս կը թռեր ոտքէն:

Միայլ պիտի ըլլար սակայն արտաքին այս երեւոյթէն դատել մրցում մը, որ չափազանց լուրջ էր խորքին մէջ: Սրտերը կը բարախէին յուզումէն եւ հանդիսատրութեան բոլոր պայմանները յարգուած էին: Թէեւ պատուոյ բեմ գոյութիւն չունէր եւ մրցումը որեւէ բարձր անձնատրութեան մը հովանաւորութեան տակ չէր դրուած, բայց եւ այդպէս մարզիկները չէին մոռցած վազելով դաշտ իջնել, քով-քովի շարուիլ մէկ գիծի վրայ, պատուի կենալ բացակայ հանդիսականներուն առջեւ, «հոռոռա» կանչել եւ յետոյ միայն գրաւել իրենց տեղերը: Բաւարար թիով ֆութպոլիստ ճարելու դժուարութիւնը ստիպած էր, որ եօթական հոգիով խաղան, բայց իրաքանչիւրը գիտակից էր իր դերին ու տեղին: Խմբապետները՝ Արսէն եւ Մանուկ, արծաթ դրամ մը օղը նետելով ճշդած էին բերդակողմերու ընտրութիւնը եւ այնուհետեւ, ֆութպոլին հարուած տալէ առաջ, վեհանձնօրէն սեղմած իրարու ձեռքը՝ յանուն «Ազատամարտ» եւ «Գոյամարտ» մրցողը խումբերուն:

Արսէն ստանձնած էր կեդրոնապահի դժուարագոյն պաշտօնը՝ ամէն ուղղութեամբ վազելու իրաւունքով: Աւետին յետասպահներէն մէկն էր, իսկ Սեդրակ եւ Վահան կը գտնուէին յառաջապահ գիծին վրայ:

- Տղա՛ք, մեռնիլ կայ՝ յաղթուիլ չկայ, գիտցած եղէ՛ք, գոչեց Արսէն ու խաղը սկսաւ բուն թափով:

Մարզական թղթակից մը պիտի գրէր ապահովաբար, թէ խաղը կանոնատր չէր ընթանար, կոշտութիւններ տեղի կ'ունենային, փաստարկութիւն գրեթէ գոյութիւն չունէր, գնդակին վրայ յարձակելու փոխարէն երբեմն խաղացողները իրարու վրայ կը նետուէին, կարգի ու կանոնի

ըմբռնում չէր տեսնուեր, եայլն, եայլն... Անհմա՛ստ դիտողութիւններ: Սրտէ բխած բանաստեղծութիւններ կան, որոնք ոչ չանգ ունին, ոչ չափ: Այս մրցումն ալ ճշմարիտ մրցում մըն էր, վայրի յոյգերու պողպացող գեղեցկութեամբ լեցուն...

Արսէնի ձայնը, ուրիշներու կարգին, տեսքար կը հնչէր, մերթ քաջալերելով գնդակը լաւ հարուածող մը, մերթ հայհոյելով անճարակի մը:

Առաջին կիսախաղը վերջացաւ մէկ առ մէկ հաւասար արդիւնքով: Դադարի պահուն երկու խումբի մրցորդներն ալ գոհունակ եւ յուսալից երեւոյթ մը ունէին. ի՛նչ լաւ բան էր հաւասարութիւնը կեանքի մէջ. առանց յաղթանակ մը ըլլալու՝ յաղթանակի կարելիութեան յոյսն է ան եւ առանց գերակայութեան՝ ինքնաբաւ զգացում մը: Խմբապետները, իրենց շուրջ հաւաքած մրցող տղաքը, թերիներ մատնանիշ ըրին եւ թելադրանքներ կատարեցին ճակատամարտի մնացեալ մասին համար: Անոնց խօսքին ու ձայնին մէջ զգալի էր փորձ ուզմագէտի ինքնավստահութիւնը: Կը բաւէր այսպէս հարուածել, այնպէս դիրք բռնել՝ եւ հակառակորդը ծունկի կու գար արդէն:

Երկրորդ կիսախաղը սկսաւ անելի բուռն թափով: Իրարանցումի պահէ մը օգտուելով Սեդրակ չանկարծ գընդակը առաւ եւ սուրաց: Տարօրինակ ուժ մը կը զգար ջլապիրկ մկաններէն ներս. արիւնը կ'եռար երակներուն մէջ. վազքի թափը թեւեր կու տար կարծես իրեն: Արագ նայուածք մը նետեց չորս դին. դաշտին մէկ կողմը իբրեւ հանդիսատես շարուած էին քանի մը բոկոտն լաներ, որոնք սովորութիւն ունին ֆութպոլ խաղացողներու ետեւէն շքախումբ կազմելու, իսկ միւս կողմը՝ շարքի կեցած երկվեցեակ մը ներկատուիներ: Ուրիշ ոչ մէկ դիտող: Փայլակի արագութեամբ աչքերուն առջեւ շողաց Սեդրակի լուսեղէն դէմքը եւ իրեն այնպէս թուեցաւ, թէ ան այդ վայրկեա-

Անն կը հետեւէր իր խոյանքին, կ'ըմբռնէր իր ուժին խորտակիչ գեղեցկութիւնը եւ պատրաստ էր հիանալու իր սիրագործութեան վրայ: Սեդրակ անզուսպ եւ անդիմադրելի դարձաւ: Վրան յարձակողները մի առ մի տապալեցան կամ ընկրկեցան եւ ինք, գնդակը ոտքին, միմակ մնաց հակառակորդի բերդին դիմաց: Բերդապահը գառագեղի մէջ բռնուած անզօր գազանի մը նման աչ ու ձախ կ'երթեւեկէր տագնապահար: Ո՞ր անկիւնէն պիտի գար արդեօք հարուածը: Սեդրակ մօտեցաւ՝ Սերինայի ժպիտը աչքերուն: Ակնթարթ մը չափեց զոնին շփոթ դիրքը եւ ուժեղ հարուածով մը գնդակը տեղաւորեց բերդէն ներս այնպէս, ինչպէս մէկը բաժակ մը բոցավառ գինի կ'ըմպէ իր սիրած գեղուհիին կենացը:

«Գոյամարտ» յաղթական էր՝ մէկի դէմ երկու արդիւնքով:

Մեծ եղաւ խանդավառութիւնը. ընկերները համբուրեցին զինք: Մրցումը շարունակուեցաւ նոյն թափով. եւ ահա շատ չանցած, պատահեցաւ ծանր աղէտը, որմէ այնքա՛ն կը վախցուէր: «Ազատամարտ» հաւասարեցաւ երկրորդ կէտով մը:

Այնուհետեւ խաղը դանդաղեցաւ ու տիրեց շփոթ կացութիւն: Աննպատակ տարութեան մըն էր գնդակին վիճակուող ճակատագիրը՝ յոգնասպառ ոտքերու հարուածներուն տակ, որոնք անելի կիցի նման էին: Արսէն ամէն տեղ էր. հայհոյելով, հեալով կը վազվզէր գնդակին ետեւէն, լեզուն դուրս ինկած գամբոյի մը պէս: Ի՛նչ օգուտ. մէկ ծաղիկով գարուն չի գար. ընկերները ընկեր չէին որ... մա՛նաւանդ սա Վահանը. անպէտք շուք մըն էր պարզապէս. կը մեղցներ բոլոր փասերը. խաղին սկիզբէն ի վեր շնորհքով գնդակ մը չէր գարկած տակաւին:

Մրցումը ասարտելու քանի մը վայրկեաններ մնացած էին միայն, բայց հաւասարութիւնը կը շարունակուէր:

Հաւասարութիւնը պարտութիւն կը նշանակէ բոլոր անոնց համար, որոնք յաղթանակի վճռականութեամբ ասպարէզ կ'իջնեն եւ կը կորսնցնեն նոր կարելիութիւններու ամէն յոյս: Պէտք էր շարժիլ, պէտք էր բան մը ընել, պէտք էր գերագոյնը փորձել՝ վերջին սուղ վայրկեաններէն օգտուելու համար:

- Վահա՛ն, սատկա՛ծ ջորի, ինչո՞ւ չես վազեր, կենրածո՞ յա՞րդ է,- պոռաց Արսէն հեռուէն, ինքն իրմէ ելած:

Ո՛չ, Վահանի կերածը յարդ չէր, բայց այն օրերուն, երբ մարդ ջիղ ու մկան կը կապէ, երբ մարդու ոսկորները կը սկսին կեանքի հիւթովն ու ծուծովը լեցուիլ, Տէր Զօրի անապատներուն մէջ Վահան ջորիի յարդն իսկ չէր գըտներ: Ու հիմա, հակառակ ցորենի հացին ու ձիթապտուղի հատերուն, սնամէջ եղէգներու պէս կը դողդոջային իր սրբունքները տարեկից տղոց մրցադաշտին վրայ...

Մտրակի հարուած ստացող գրաստի մը վայրկեանի սթափումը ունեցաւ Վահան: Արտակարգ ճիգ ի գործ դրաւ ինքն իր վրայ, ճիգ մը՝ որ աւելի հոգեկան էր քան թէ ֆիզիքական, բայց որ զգալի արտայայտութիւն գտաւ իր շարժումներուն մէջ: Մարմնական ո՞ր ճիգին աղբիւրը հոգիէն չի բխիր արդէն: Վահան խլեց Աւետիսի ուղարկած զնդակը, չսարսափեցաւ վրան յարձակողներէն, ճարպիկութեամբ մը ճեղքեց պաշարման շղթան եւ, ո՛վ անմեկնելի հրաշքը կենաց-մահու պայքարներուն, զնդակին հետ միասին ներս մտաւ հակառակորդի բերդէն:

Անհաւատալիկ իրագործուած էր. «Գոյամարտ» յաղթական՝ երկուքի դէմ երեք արդիւնքով:

Սուլեց: Վերջն էր: Քրտնաթոր եւ ցեխապատ երեսներով ախոյեանները հաաքուեցան իրարու քով եւ «հոռոտա՛» պոռացին: Սեդրակ թելը վեր բարձրացուց եւ Րաֆֆիալայել հանդիսաւորութեամբ մը յայտարարեց. «Ազատամարտները կրնան պարտուիլ, բայց Գոյամարտը՝ երբե՛ք»:

Երբ տղաքը շալկեցին իրենց ներկատուփերը եւ

պատրաստուեցան խաղափայրէն մեկնելու, տեսան թէ Վահան կը պակսէր: Վերջին գրոհով մը խումբին պատիւը փրկող հերոսը անայլայլ նստած էր հեռուն, իր խորտակած բերդին եզերքը բրգացող քարերու կոյտին վրայ: Ջայն տոհմ, բայց ան չշարժեցաւ տեղէն. գլուխն իսկ չըբարձրացուց. այն ատեն, տխուր նախազգացումէ մը մղուած, Սեդրակ վազեց քովը.

- Ի՞նչ ունիս, Վահան, ինչո՞ւ նստեր ես:

Վահան չպատասխանեց: Մ'ետելի մը չափ տոգոյն էր դէմքը: Թաշկինակը բերնին՝ ան կ'աշխատէր կարծես խեղդել կուրծքը չարչրկող սովորական հազը, որ հազի նման չէր այս անգամ:

- Վահա՛ն, ի՞նչ ունիս, ուրտե՞ղի վիրաւորեցիր, թաշկինակդ ամբողջ արիւն է,- բացականչեց Սեդրակ, գրկելով ընկերոջը ուսը: Վահան փորձեց պատասխանել, բայց ներքին կծկում մը պատճառ եղաւ, որ թաշկինակը արելի ամուր սեղմէ բերնին:

- Սա ձեռքդ քաշէ, որ բան մը տեսնենք. ակոյալե՞ղ է թէ շրթունքդ վիրաւորեցիր:

- Ո՛չ, ո՛չ, սըտեղէն է, սըտեղէ՛ն,- շշմջեց վերջապէս Վահան, ձեռքը կուրծքին դնելով:

Սեդրակ նշան ըրաւ եւ միւս ընկերներն ալ հաւաքուեցան: Ջուր փնտտեցին՝ Վահանի երեսն ու բերանը լուարու համար, բայց այդ կողմերը ջուր չկար:

- Բան մը չէ, կ'անցնի, երեւի կոկորդէր է,- ըսաւ Աւետիս:

- Սատկած ջրի էիր, բայց վերջին վայրկեանին առիծ կտրեցար,- կատակեց Արսէն եւ արելցուց,- տեսա՞ր ինչպէս լաղեցինք. Աստուած զօրաւորներուն հետ է. քեզի չէի՞ ըսեր թէ պարապ բան է մեղքէն ու լանցանքէն վախճալ...

Վահան ժպտեցաւ, արելի ճիշդ՝ ջանաց ժպտիլ, ըսել

ուզելով կարծես. «Յաղթեցինք, բայց մայէ՛ վիճակիս. մեղքը իր գոհը ընտրեց»:

Մութը կոխած էր. դաշտը ամայացաւ ամբողջապէս: Չորս հաւատարիմ ուխտակիցները հոն էին տակաւին ու կը սպասէին, որ իրենց հիանդ ընկերը ուժերը վերագտնէ քիչ մը: Յոգնած էին բոլորն ալ, բայց չէին զգար իրենց յոգնութիւնը: Նորակազմ խումբին այս առաջին յաղթանակը խոշոր հետեւանքներ կոչուած էր ունենալու: Յաջորդ օր լուրը պիտի տարածուէր ամէն կողմ, խօսակցութեան միւթ պիտի դառնար եւ «Գոյամարտ»ի անունը պիտի փառաւորուէր: Մարզաւէր շրջանակները իրարու պիտի ըսէին. «Լսեցի՞ք, պոյաճիները յաղթեր են կօշկակարներուն»: Մրցումի նորանոր հրաւերներ պիտի ստանային անկասկած, աւելի կարեւոր խումբերու կողմէ: Բազմութիւններ պիտի հաւաքուէին իրենց հետագայ խաղերը դիտելու: Անդամակցութեան դիմումնագրեր պիտի ստանային: Պիտոճէն պիտի մեծնար. անհրաժեշտ էր հիմակուց մտածել՝ որոշելու համար թէ ի՞նչ գոյնէ պիտի բաղկանային իրենց համագգեւտ շապիկները:

Վահանի արհմահոտութիւնը դադրեցաւ քիչ առ քիչ եւ դէմքին վրայ խաղաց վախկոտ կարմրութիւն մը: Աւետիս իր սնտուկին հետ շաղկեց Վահանի ներկատուփը: Սեղրակ թելը մտաւ եւ դանդադօրէն յառաջացան դէպի ո՛րք խցիկը իրենց որք ընկերոջ:

ՄՆՏՈՒԿԸ ՓՈԽԵՑԻՆ

Յաջորդ օր, մինչև իրիկուն, Վահան չերեցաւ ներկարարներու հաւաքատեղին: Լրջօրէն անհանգիստ ըլլալու էր ուրեմն: Ուշ ատեն, տուն դարձին, Սեդրակ սնտուկը նետեց մէկ կողմ եւ ուղղուեցաւ դէպի ընկերոջ բնակարանը:

Բակի մը մէջ, բարձր ու լայն սանդուղներու տակ, եռանկիւնաձեւ սենեակ մըն էր Վահանի գիշերած տեղը: «Սենեակ» բառը շատ էր անշուշտ այդ խուցին համար, որ իրել փայտանոց շինուած ու գործածուած էր նախապէս: Այժմ ամսական մէկուկէս մէճիտ շահ կ'ապահովէր տանտիրոջ՝ վարձակալի քսակէն:

Լոյս չկար ներսը, բայց դուռը կէս մը բաց կը մնար: Սեդրակ մտաւ եւ կիսամութիւն մէջ տեսաւ ընկերը տարածուած գետինը, խշտեակի մը վրայ, որ ոչ գոյն ունէր ու ոչ ձեւ: Վրան առած էր զինուորական պլանքէթ մը, միակ տոկուն եւ արժէքատու իրը սենեակին: Վահանի մարմինը հալած ու կորսուած էր կարծես այդ ծածկոյթին ներքեւ:

- Բարեւ, Վահան, ո՞րտեղդ կը ցախ,- ըսաւ Սեդրակ զգուշութեամբ մօտենալով ընկերոջը սնարին: Վահան անակնկալի եկաւ, աչքերը շփեց՝ թեթեւ մրափէ մը սթափողի փութկոտութեամբ եւ իսկոյն ատելցուց ուրախացած.

- Դո՞ւն ես, Սեդրակ, սա ճրագը վառէ, որ իրար երես տեսնենք:

Մինչ Սեդրակ պատուհանաձեւ խորշին մէջ դրուած քարիղէ լամպը կը վառէր, Վահան շարունակեց.

- Այսօր շատ լուգնած զգացի ինքզինքս, տեղէս չկորցայ ելլել առաւօտուն. խեղճ անհիծած գործին, ըսի ես ինծի, պառկիմ ամբողջ օրը, հանգստանամ...

- Լաւ ըրիր, Վահան, դուն ֆութպոլի չես վարժուած, շատ լուգնեցնող խաղ է:

- Ո՛չ, ֆութպոլը չէ պատճառը. կարծեմ բաւական առին կորսնցուցի:

Սեդրակ ետին դարձաւ եւ ճրագի դողդոջուն լուսիններքէ, գորշ բարձի մը վրայ տեսաւ արտակարգօրէն բոցավառ զոյգ մը աչքեր, կարմրած դէմք մը ու քրտինքի խոշոր կաթիլներ՝ վարսախտի ճակատի մը ամբողջ տարածքին:

- Դուն լուրջ հիւանդ ես, տաքութիւն ունիս, տոքթորի մը մասին մտածենք ի՞նչպէս կ'ըլլայ,- ըսաւ Սեդրակ մըրտահոգ:

- Բան մը չունիմ, կ'անցնի: Ծատ անգամ անկողին ինկած եմ այսպէս եւ նորէն ոտքի ելած: Դուն իմ նիհարմիհար ըլլալու մի՛ նայիր, մարմինս տոկուն է: Գիտե՞ս ի՛նչ չարքաշ մեծցած եմ ես: Որբանոցը ամառ-ձմեռ մէկ շապիկով էինք եւ ոտքերնիս ալ գրեթէ միշտ բոսիկ: Բիթը արիւնող չկար, բոլորս ալ երկաթի պէս առողջ էինք:

Վահան կը խօսէր կարտուած շնչատութեամբ մը եւ խօսելու բուն փափաքէ մղուած: Մթնոլորտը յագեցած էր քրտինքի եւ խոնաւութեան ծանր հոտով մը: Սեդրակ դուռը լայն բացաւ եւ փորձեց կկզիլ դրան քով դրուած Վահանի ներկատուփին վրայ. նստելիք ուրիշ որեւէ յարմարութիւն չկար սենեակին մէջ:

- Բան մը կերա՞ծ ես,- հարցուց փոքրիկ դադարէ մը ետք:

- Ո՛չ, ես ասանկ ատենները բան չեմ կրնար ուտել, աստորձակ չունիմ,- պատասխանեց Վահան եւ յետոյ անելցուց վարանքով,- սիրտս կ'այրի, գաւաթ մը ջուր տուր ինծի:

Սեդրակ ոտքի ցատկեց, շուրջը նայեցաւ եւ դժուա-

րութիւն չունեցաւ հողէ փոքրիկ փարչը գտնելու խորքի
անկիւնէն: Փարչին բերանը կործուած էր երկաթէ կոթա-
տոր ծանր թաս մը: «Որքանոցի գաւաթներէն ըլլալու է», -
մտածեց Սեդրակ՝ ջուրը լեցուցած միջոցին:

- Կը ներես, քեզի կը յոգնեցնես, բայց խնդրանք մը
ես. հո՛ն, սա պայուսակը բաց, մէջը մաքուր շապիկ մը
կայ. ինձի տոտր որ վրաս փոխուիմ. կոնակս ջուր կտրած
է, - ըսաւ Վահան աղաչական ու ամօթխած ձայնով մը:

Պայուսակը հաստ կտաւէ տեսակ մը մախաղ էր, ա-
նոնցմէ՝ զոր զինուորները կամ սկաուտները իրենց ուսը
կ'անցընեն արշաւներու ատեն: Վահան իր երկաթէ թա-
սով, մոխրագոյն ծածկոցով եւ կտաւէ պայուսակով կա-
տարեալ զինուոր մըն էր, անտուն եւ անկայք, տեսաբար
պատրաստ տեղաշարժի...

Ծապիկը փոխած միջոցին երբ մատները դպան ընկե-
րոջը տամուկ եւ այրող մարմնին, Սեդրակ ընկրկում մը ու-
նեցաւ: Վահան այնքան նիհարցած էր, որ կործքի վանդա-
կին բոլոր ուկորները մի առ մի կարելի էր համբել: Ինչպէ՞ս
տոկուն կրնար ըլլալ այսպիսի մարմին մը: Հոգին լեցունեցաւ
գոթով ու կասկածանքով: Ուզեց արտայայտուիլ, բառերը
կշռեց, վարանեցաւ եւ ի վերջոյ համարձակեցաւ ըսել.

- Վահան, սիրելիս, այս այսպէս չ'ըլլար այլես: Դուն
լուրջ խնամքի պէտք ունիս: Ամօթ չէ հիւանդ ըլլալը. մենք
քիչ թէ շատ դպրոց տեսած տղաք ենք: Նախ սա սենեակդ
պիտի փոխես, յետոյ...

- Այո՛, այո՛, իրաւունք ունիս, - ընդմիջեց Վահան, -
բայց ինչպէ՞ս, ի՞նչ միջոցներով:

- Կ'ըսէիր թէ Պէշրուֆ ազգական մը ունիս, լաւ դիրքի
տէր, նամակի կը սպասես իրմէ... Ի՞նչ եղաւ այդ նամակը:

- Չեկա՛ւ, Սեդրակ, չեկաւ այդ նամակը եւ կարծես գա-
լիք ալ չունի... թերես ալ լաւ է որ չեկաւ... խեղը անիծած
ազգականներուն. մարդ ուրիշին վրայ յոյս դնելու չէ:

Ընկերը զղջաց իր շօշափած հարցին համար, որ անթեղուած վերք մը կը բանար: Անգօր էր առարկութիւն ներկայացնելու եւ կը դժուարանար խօսակցութեան նիւթը փոխել մէկ անգամէն: Լոեց: Վահան պահ մը աչքերը շեղ առաստաղին յտելէ ետք, դարձաւ Սեդրակին.

- Գիտե՞ս ինչ կայ, մենք իրար կը հասկնանք. կրնամ բացուիլ քեզի: Ասանկ ատեններ, ամէն անգամ որ հիւանդ իյնամ, մայրս կը յիշեմ. միայն ան կու գայ աչքիս առջեւ: Աշխարհիս երեսին մօրմէն հարազատ մէկը չես գտներ: Գաղթականութեան ճամբաներուն վրայ տեսնէիր ինչպէ՛ս կը խնամէր, ինչպէ՛ս կը գորգորար վրաս: Ինք չէր ուտեր, ինծի կը կերցներ, ինք չէր քնանար, ինծի կը քնացներ: Բացատրելու հարկ չկայ, դուն ալ մայր ունիս, գիտես...

- Այդպէս է, որոշ է ատիկա...

- Այո՛, որոշ է, բայց ինծի համար անորոշ... ո՞ր է արդեօք ան հիմա, մեռա՞ծ թէ ողջ. չի՞ կրնար ըլլալ որ յանկարծ վերագտնենք իրար: Ասանկ ատեններ, ամէն անգամ որ հիւանդ իյնամ՝ նոր յոյս մը կը վատի մէջս: Կը սպասեմ՝ աչքս դրան: Կը կարծեմ, որ դոռը պիտի բանայ եւ ներս պիտի մտնէ անակնկալօրէն, ինչպէս դուն ըրիր քիչ մը առաջ... պիտի մտնէ, ձեռքը ճակտիս պիտի դնէ ու պիտի աղէկնամ: Գիտեմ թէ տղայական է ասիկա, լսողները վրաս պիտի խնդան, բայց...

- Ո՛չ, Վահան, ինչո՞ւ խնդալիք ըլլայ. քանի՛-քանի՛ դէպքեր պատահեցան այդպէս: Դեռ մինչեւ այսօր պակաս չեն իրար գտնող հարազատներ, որոնք ամէն յոյս կորսնցուցած էին:

Վահանի չոր հազը լոռութեան մէջ ցաւագին արձագանգներ բացաւ: Խելօքիկ հիւանդ մըն էր ան, գրեթէ երախտապարտ, որ մարդիկ հանգիստ կը ձգէին զինք պառկելու: Տրտունջ չներկայացուց, վիճակը նկարագրելու փորձեր չըրաւ. չըսաւ, օրինակ, թէ փլուզում մը կը

զգար կործքին տակ, թէ այրող վերքեր կը կոտտային
ներսիդին, թէ նուազումի մօտեցող ուժաթափութեան մը
անձնատուր՝ կը դժուարանար խոյնիսկ շունչ քաշելու: Ո-
րո՞ւմ պիտի ըսէր, ինչո՞ւ պիտի ըսէր. ինք որ երբեք ուրի-
շին գլուխը չէր ցաւցուցած իր ցաւերով եւ ժպտած էր մին-
չէս վերջ, որպէսզի ուրիշներ ալ քիչ մը իրեն ժպտին:

- Ահա այսպէս, սիրելիս,- խզեց լոռութիւնը վահան,-
օր մը աղէկ, օր մը ճիւղանդ՝ կ'ապրինք ու կը մեծնանք:
Փառք տանք Աստուծոյ, մեր քաշածը ո՛վ քաշեց: Եթէ օր
մը գրեմ գլխէս եկած անցածները՝ հաստորներ կը լեցուին.
ոռման է, ոռմա՛ն:

- Կ'ուզե՞ս որ քեզի համար բան մը բերեմ մօտիկ խա-
նութներէն. լաւ չէ այսպէս անօթի պառկելը,- ըսաւ Սեդրակ:
Ընկերը ձեռքի յոգնած շարժումով մը մերժեց: Ու քիչ յետոյ
սրտագին ջերմութեամբ դառնալով Սեդրակին յարեց.

- Դէ՛, ելիր, ժամանակը ոչ է, մամադ քեզի կը սպա-
սէ հիմա. շատ շնորհակալ եմ այցելութեանդ համար...
վաղը նորէն հանդիպէ, եթէ ոտքի ելած չտեսնես ինձ:

Սեդրակ երկու վայրկեանի տատանում մը ունեցաւ եւ
ինքզինք փողոց նետեց: Կործքը կը ճնշուէր ազատ օդի
պահանջով: Վահանը երբեք այդ վիճակին մէջ չէր տեսած:
Որքան ատեն սնտուկը ուսին կը չափէր փողոցները իրենց
հետ՝ հաւասար մէկն էր: Քիչ մը ատելի տկար, քիչ մը վախ-
կոտ ու նուազ կոկիկ քան իրենք, բայց ինքնաբաւ պոյաճի
մը վերջապէս: Սեմեակէն ներս, անկողիին նմանող քորջե-
րու դէզին վրայ՝ բոլորովին ուրիշ էր ան. կատարեալ որբ մը՝
անոք ու անպաշտպան: Անոր ճիւղանութիւնն ու ճիւղանի
տեսքը չէին այնքան սրտայուզ, որքան գորովագուրկ բա-
ցարձակ լքումը: Գաւաթ մը ջո՞ր տոտող չունէր քովը: Եթէ
մեռներ կէս գիշերին՝ ոչ ոք լուր պիտի ունենար:

Մայրն ու քեռին պառկած էին արդէն՝ ճրագին
պատրոյզը վար քաշած: Սեդրակ անմիջապէս մարեց լոյ-

սը եւ ինքն ալ անկողի՞ն մտաւ: Երկար ատեն չկրցաւ քնանալ սակայն: Ինքնաբեր մղումով մը շրթունքները աղօթքի բառեր մը մնջեցին Վահանի համար: Մէկը միսէն աւելի սեւ մտածումներ կը խուժէին վրան: Սպիտակ ու մաքուր իր սաւանին ծալքերուն մէջէն կը զգար կարծես Վահանի քրտնահալ մարմնին ջերմութիւնը: Ինչպէ՞ս պիտի անցնէր արդեօք գիշերը, վաղը ի՞նչ պիտի ըլլար, ի՞նչ վախճան կը սպասէր հէք տղուն...

Առտու կանուխ մօրը բացատրեց ամէն բան եւ հետը միասին տարաւ Վահանի բնակարանը: Հագիւ ներս մը տած՝ մայրը նետուեցաւ հիւանդին քով ու գոչեց.

- Վա՛յ ես քօննամ, դուն ասանկ մի՞նակուկ պառկիս եւ Սեդրակս լուր չտայ ինձի: Գիշերը կու գայի եւ մօտդ կ'անցնէի: Մեղք չէ՞ր քեզի. հիւանդը կրնա՞յ առանձին պառկիլ. հիւանդը կ'աղէկնա՞յ, եթէ շուրջը դարձող, ճանրս-ճիկերս ըսող մը չունենայ...

Վահանի դէմքը պայծառացած էր եւ ուրախութեան ճառագայթներ կ'արձակէր:

- Ի՞նչ նեղութիւն, մամա, ես բան մը չունիմ, այսօր շատ աւելի լաւ եմ,- ըսաւ ինքնավստահ:

- Ո՛չ, չըլլայ թէ ջահիլութիւն ընես եւ ոտքի ելլես: Սեդրակս ալ քեզի պէս է, չի սիրեր անկողի՞ն մնալ. տաքութիւնը անցածին պէս՝ փողոց կը վազէ: Սխալ է, ետրում, սխալ է: Մէկ օր աւելի պառկիլը տասը տողքորի գործ կը տեսնէ:

Մէկ կողմէ կը խօսէր եւ միւս կողմէ՝ տարիներու իր վարժութենէն մղուած՝ ձեռքին տակ ինկած իրերը կը ժողվըրտէր, սենեակը կարգի դնելու բնական պահանջով: Երբ անկողի՞նին քովէն հառաքեց աղտոտ ճերմակեղէնները, պահ մը անշարժ մնաց լաթերը ձեռքին եւ յետոյ անմիջապէս գտաւ իր սովորական կորովը եւ ըսաւ.

- Ջո՞ւր է թէ քրտինք ասիկա. քա մեղա՛յ, քամես՝ կը

քամուի: Հոգ մ'ընեն, տղա՛ս, քո ունեցածդ օրթալըխի հիւանդութիւններէն է. գաղտնի դող, գաղտնի ջերմ, ետքն ալ ջուրի պէս քրտինք. մայրիկայի մէկ տեսակը: Մեր դրրացիին տղան՝ պարոն Սիմոնն ալ ճիշդ քեզի պէս պատկած է. քրտինքը մինչեւ անկողիճին բուրդերը կ'անցնի խեղճ տղուն:

Վահան չէր գիտեր ի՛նչ պատասխանէր: Կ'ուզէր որ ճիշդ ըլլար ըսածը, ամբողջովին ճիշդ: Կ'ուզէր, որ իր ունեցածը ամէնուն ունեցածէն ըլլար եւ ամէնուն պէս ինքն ալ վերագտներ շուտով իր առողջութիւնը: Մայրիկը նըշմարեց սակայն իր աչքերուն մէջ յածող թերահաւատ հարցականը եւ անելցոց.

- Դուն հաւատա՛ իմ ըսածիս. ես տոքթոր չեմ, բայց շատ բան եմ տեսած: Քեզի քիչ մը ետքը աղուոր նանէ մը կ'եփեմ, փորդ կը շտկուի, վերջն ալ սուլֆաթոյի կը սկսիս եւ քանի մը օրէն բան մը չի մնար:

Մայրիկը հեղինակատր կին էր. թոյլ չտուաւ որ Վահան բերանը բանայ՝ մերծումի խօսքեր ընելու համար: Սեղրակը շուկայ դրկեց որոշ գնումներ կատարելու յանձնարարութեամբ եւ ինքն ալ իսկոյն ուղղուեցաւ դէպի տուն: Քառորդ ժամ ետք վերադարձաւ՝ քարիղի օճախ մը, թէյաման մը եւ մէկ-երկու տուփեր գրկած: Ծատ չանցած անանուխին բոյրը եռացող ջուրի շոգիներուն հետ տարածուեցաւ սենեակին մէջ: Վահան աչքերուն չէր հաւատար. վառող օճախ մը իր բնակարանէն ներս, գինով-ցընող բոյրն ու ձայնը տաք ըմպելիին եւ ատոնց վերեւ՝ ամենազօր ներկայութիւնը մայրական ձեռքի մը... երանութիւններուն ամէնէն թանկարժէքը չէ՞ր միթէ ասիկա:

- Տաք-տաք խմէ,- ըսաւ մայրիկը լեցուն գաւաթը հիւանդին երկարելով,- խմէ որ աղիքներդ քիչ մը կակուղան. իբրեւ թէ աս ալ նանէ է, հոտը անգամ չես աններ. աստեղաց ամէն ինչը կեղծ է: Նանէն մեր երկիրը տեսնելու էիր.

եօթը տուն անդին հոտը կը տարածուէր: Այս ալ երկի՞ր է. ոչ հացը համ ունի, ոչ կանանչը: Ծիշո՞ղ է, մեր երկիրը պզտիկ էր. քազինօ եւ սինեմա չուներ, բայց ամէն ինչը օրհնուած էր: Ան ի՛նչ օղ էր, ի՛նչ ջուր. գլուխը ցատող մը չէիր տեսներ: Հոս եկանք եւ տեսակ-տեսակ հիւանդութիւններու անունը լսեցինք: Քառասունը չանցած մարդիկ կը ծերանան: Վրայէդ հեռու՝ օրեր կ'ըլլան որ մէջքս չեմ կրնար շտկել ոսկորներուս ցաւէն. ամէնը աստեղաց օղէն է...

Վահան հեշտանքով կ'ըմպէր բորումնաւէտ տաք հեղուկը եւ մտիկ կ'ըներ՝ ժպիտը դէմքին: Պիտի ուզէր խօսքի խառնուիլ, կարծիք մըն ալ ինքը յայտնել, բայց կը վախնար, որ մայրիկի տրամադրութիւններուն հակառակ բան մը կ'ըսէ: Քիչ մնաց, որ անխոհեմութիւնը գործէր առարկելու. «Բայց, մամա, միայն օդին ու երկրին չէ մեղքը, տարիքն ալ կայ վերջապէս, երիտասարդութիւնը կ'անցնի եւ ցաւերը կը շատնան»: Անդրադարձաւ սխալին եւ շարունակեց լսողի դերին մէջ մնալ: Մայրիկը մինչեւ կէսօր գնաց-եկաւ, խօսեցաւ, աշխատեցաւ ու կէսօրուան պատրաստեց համեղ բրնձապուր մը, որուն նմանը չէր յիշեր կերած ըլլալ Վահան: Դարձեալ գանգատեցաւ, եօթնիցս անիծեց բոլոր անոնք, որ պատճառ եղան հայրենի հողէն ու երդիքներէն հեռանալուն, գտաւ որ այս երկրին բրինձն ու միսն ալ համ-հոտ չունին եւ իրենց աշխարհը ուրի՛շ էր, ուրի՛շ...

Յաջորդ օր, հակառակ իր լաւատես տրամադրութիւններուն, Վահան չկրցաւ անկողինը ձգել: Յոգնած էր եւ ուժաթափ: Արաք դրացիները հոգացին առտուան նախաճաշը՝ բաժակ մը սուրճով եւ կտոր մը հացով: Կէսօրին՝ Մայրիկը հասաւ նորէն, կերակրեց զինք ու մեկնեցաւ՝ ցաւ յայտնելով, որ ամբողջ օրը պիտի չկարենայ մընալ. տունը՝ քեռին ալ հիւանդ պատկած էր եւ անշարժացած յօդացաւերով:

Իրիկուան դէմ Սրբազան Չորրորդութեան միս ան-

դամները, ներկատուփերը շալկած, խումբով եկան այցելութեան: Ամէն մէկը կատակ մը փորձեց: Արսէն հայհոյանքով մուտք գործեց սեմէն ներս եւ հայհոյանքով կենդանացուց իր կատակը: Հիւանդը կրցածին չսփ լայն ժրպիտ մը գծագրեց իր գունատ դէմքին վրայ եւ եղբայրօրէն ընդունեց ընկերները: Աշխարհի երեսին անոնցմէ զատ ուրիշ մարդ չունէր:

- Շուտ ոտքի ելիր, որ գոյքապահի պարտականութիւնդ կարենաս կատարել,- ըսաւ Աւետիս եւ անելցուց,- նոր մրցում մը կազմակերպելու վրայ ենք, գիտցած եղիր:

- Հոգ մի՛ ընէք, պատկած տեղս ալ պարտականութիւնս չեմ մոռցած. նա՛, հոն է գնդակը, նայեցէ՛ք ի՛նչ վիճակի մէջ է,- վրայ բերաւ Վահան՝ անակնկալ պատրաստողի մը չարանճի ուրախութեամբ:

- Ծօ՛, աս ի՞նչ ես ըրեր,- պոռաց Արսէն գնդակը խլելով:

- Լաւ չէ՞, ներկեցի. նոփ-նոր եղաւ,- պատասխանեց Վահան՝ երկու ձեռքերուն վրայ մէջքը վեր բարձրացնելով:

Իսկապէս, ֆութպոլի կաշին կը փայլէր աղուոր մը ջնարակուած կօշիկի երեսին պէս: Գոյքապահ Վահան ներկարարի իր ամբողջ շնորհքը թափած էր գնդակին վրայ: Հիմա նայուածքը յառած ընկերներու դէմքին՝ անհամբեր կը սպասէր անոնց հակազդեցութեան:

- Ասանկ գոյքապահ ո՛չ եղեր է, ո՛չ ալ պիտի ըլլայ,- ըսաւ Արսէն զարմացած:

- Պոսւօ՛ քեզի, հիւանդ վիճակիդ մէջ փոխանակ հանգստանալու, գնդակ ներկեցիր,- յանդիմանեց Սեդրակ՝ փաղաքշական արտայայտութիւն տալով ձայնին:

- Հոգ չէ, կը ձանձրանայի պատկած տեղս, զբաղում եղաւ. ասանկով կաշին անելի կը դիմանայ,- թոթովեց Վահան՝ վարձատրութիւնը գտնող մէկու մը երջանկութեամբ:

Աւետիս աթոռակին մէջէն ափ մը սալոր եւ ծիրան

հանեց ու լեցուց հիւանդի թասին մէջ:

- Կեր, մալիդ պէս կեր, փարա չենք տուած, թոցուած սպրանք է,- անելցուց Արսէն:

Երբ ընկերները մեկնեցան, սուկալիօրէն միմակ ըզգաց ինքզինք Վահան: Նման էր երամէն բաժնուած մեմատր կոունկի մը, որ չի կրնար հետեւիլ իր ընկերակիցներու գուարթ երթին: Վաղը անոնք դարձեալ պիտի նստէին սինեմայի հրապարակին վրայ, Դամասկոսի պալժառ երկինքին տակ, խօսք պիտի նետէին եկող ու անցնող աղջիկներուն, պտուղ պիտի թոցնէին գիւղացիներու էջերէն, պիտի ունկնդրէին Սեդրակի կարդացած վէպերէն հետաքրքրական հատուածներ, պիտի չափչփէին փողոցները՝ «պոյաճի» կանչելով, իսկ ինքը նոյն պահերուն անշարժ պառկած պիտի ըլլար սանդուխներուն ներքեւ, իր տխուր սենեակին մէջ: Կ'ըսեն, թէ միմակութեան կարելի է վարժրիլ եւ չզգալ անոր դառնութիւնները: Ո՛չ, միմակութեան կարելի չէ վարժուիլ. շատ-շատ մարդ կը մոռնայ իր վիճակին ողբերգականութիւնը՝ զայն անի խոր սպրելու համար այնպիսի առիթներու, որոնք ճգնաժամային դարձակէտի մը կը հասցնեն մեր կեանքը:

Տկարութենէ՞ն թէ կոկորդը սեղմող թախիժէն՝ Վահան չկրցաւ քնանալ ամբողջ գիշեր: Աչքերը կը լեցուէին արցունքի տաք կաթիլներով: Անձկութեամբ սպասեց լուսաբացին եւ լուսաբացին հետ դուռը զարնողներուն:

Առաջին անգամ եկողը մայրիկը եղաւ առաւօտուն, թեիւն տակ կապոց մը: Օգնեց Վահանին, որպէսզի անկողինէն ելլէ: Այնուհետեւ լաւ մը թօթուց, շտկոտեց խոշտեակը, բացաւ իր բերած կապոցը եւ մէջէն մաքուր սաւաններ հանելով ծածկեց վրան: Երես մըն ալ անցուց կծիկ դարձած բանպակներու այն տոպրակին, գոր որպէս բարձ գլխուն տակ կ'առնէր Վահան: Ոչ միայն անկողինը կերպարանափոխ եղաւ, այլեւ սենեակն ալ նոր փայլ առաւ

կարծես սպիտակ սառաններու ներկայութենէն: Միայն
հիւանդին տօգունութիւնը անլի շեշտուեցաւ անոնց մէջ:

Ընկերները, վերադարձին, լաւ չտեսան Վահանի
վիճակը: Օրէ օր մոմի պէս կը հալէր տղան զգալիօրէն:
Այտերը փոսացած էին եւ աչքերը անլի խոշորցած՝ ակ-
նակապիճներու խոռոչներուն մէջ: Մորթը դեղնած էր՝
մեղրամոմի թափանցկութեամբ մը:

Արսէն, Սեդրակ եւ Աւետիս իրարու ետեւէ դուրս ելան
եւ բակին մէկ անկիւնը քաշուելով պզտիկ խորհրդակցու-
թիւն մը ունեցան: Վահան բժիշկի պէտք ունէր եւ իրենց
պարտականութիւնն էր բժիշկը բերել: Այսքանը պարզ էր
երեքին համար ալ: Մնացածը՝ շատ բարդ: Իրարու երես
նայեցան պահ մը եւ լռեցին: Լիուլի հասկցած էին իրար:
Լռութիւնը երկար չտեսց սակայն: Արսէն կտրուկ շարժու-
մով մը գոլիսը վեր վերցուց եւ ակոսներուն մէջէն մոլտաց.

- Գնդակը կը ծախե՛նք:

Առարկող չեղաւ: «Գոյամարտ» յաղթական խումբի
ատենապետին համար այս որոշումը նույնքան ծանրակը-
շիւ էր, որքան եթէ նաւապետ մը յայտարարէր. «Զինուոր-
ներ, մեր մարտանաւը ստիպուած ենք խորտակելու»:

Ներս մտան կրկին, շրջապատեցին իրենց ընկերոջ
անկողինը եւ մինչ Սեդրակ եւ Աւետիս կը զբաղեցնէին
հիւանդը, Արսէն կամացուկ մը մօտեցաւ գնդակին, գողի
մը պէս զայն առաւ թեւին տակ ու դուրս սողոսկեցաւ:
Կեանքին ամէնէն դժուար գողութիւնն էր, որ կատարեց:
Ոչ մէկ ատեն ձեռքերը չէին դողացած՝ բան մը թոցնելու
կարիքին առջեւ: Գնդակին միջուկը վաճառատունէն գող-
ցած ատեն հպարտ էր եւ երջանիկ: Այս անգամ սակայն
անսովոր դող մը զգաց մատներուն մէջ, երկիւղի տարօրի-
նակ զգացում մը լեցուց հոգին եւ ինքն ալ չկրցաւ բացատ-
րել պատճառը:

Օր մը ետք բժիշկը եկաւ եւ առանձնացաւ հիւանդին

հետ: Տղաքը շունչերնին բռնած սպասեցին դուրսը, դրան մօտ: Արսէն հայհոյանքի ախորժակն իսկ կորսնցուցած էր. լուռ էին նաեւ միւսները: Իրենց թռեցաւ թէ քննութիւնը շատ երկար տեւեց: Վերջապէս բացուեցաւ դուռը եւ բժիշկը, որ տարիքոտ արար մըն էր, դուրս ելաւ մոռայլ արտայայտութեամբ: Ուշադրութեամբ նայեցաւ պատին տակ շարուած պոռնանիներուն եւ հարցուց.

- Հիւանդը հայր կամ եղբայր չունի՞:

- Մենք իր եղբայրներն ենք,- պատասխանեցին տղաքը անվարան:

- Երե՞քդ ալ:

- Այո՛, տոքթոր:

- Լաւ ուրեմն, ձեզի կրնամ ըսել ճշմարտութիւնը: Դժբախտաբար շատ ուշ կանչեցիք ինձի. ձեր եղբօր վիճակը չափազանց ծանր է. թոքախտը իր ատերը գործած է արդէն... շատ կը ցաւիմ... երկար չի դիմանար...

- Բայց, տոքթոր, վատա՞ն էք որ թոքախտ է. դեղ մը, դարման մը կարելի չէ՞ ընել,- ըսաւ Սեդրակ սարսափահար ձայնով մը:

- Եթէ կանուխ շարժած ըլլայիք՝ հաւանաբար կարելի էր բան մը ընել: Իր այս վիճակին մէջ՝ կատարեալ հանգիստէն գատ ուրիշ միջոց չեմ կրնար առաջարկել: Անշարժ պէտք է պառկի: Եթէ վիճակը հետզհետէ բարելաւուի՝ այն ատեն տղան կը փոխադրէք հիւանդանոց մը, մաքուր օդի մէջ... երկարատեւ խնամքի եւ լաւ սնունդի պէտք ունի: Ինձի տեղեակ պահեցէք, եթէ որեւէ փոփոխութիւն առաջ գայ:

Դեղագիր մը գրելէ եւ սնունդի տեսակներ մատուցելէ ետք՝ բժիշկը մեկնեցաւ: Տղոց առաջին գործը եղաւ Սեդրակի մաման կանչել տունէն եւ տեղեկացնել իրողութիւնը: Մայրիկը ընդվզեցաւ, ըմբոստացաւ, բողոքեց եւ մերժեց հաւատալ: Ըսաւ, թէ տոքթորները բան չեն հասկընար, պզտիկ խնդիրները կը մեծցնեն, պարսպ տեղը կը

չարչարենն հիւանդը: Օրինակներ բերաւ իր ծանօթներէն ու փաստեց թէ ինչպէս այսինչն ու այնինչը, հակառակ տոքթորներու տուած մահաւճիռին՝ աղէկցած էին հրաշագործ խոտերու ջուրը խմելով: Պնդեց նորէն, թէ վահանին ունեցածը մալարիայի մէկ տեսակն է, որու մասին գաղափար չունին տոքթորները եւ թէ այս հիւանդութիւնը դանակի պէս կտրող դեղեր կան:

Իսկ վահան, կոնակին վրայ պատկած, բոլորովին անտարբեր էր այլեւս շուրջի իրարանցումին: Չուզեց գիտնալ մինչեւ իսկ բժիշկին յայտնած կարծիքը: Աչքերուն խորը նշմարելի էր վախի արտայայտութիւն մը, որ երբեմն կը մարէր, երբեմն երեսան կու գար: Երկար ժամեր քնանալ սկսաւ: Երբ կ'արթննար՝ կամ մայրիկը կամ տղաքը իրեն կը հարցնէին թէ ինչպէս է: Միշտ կը պատասխանէր՝ շատ լաւ: Ծնչատութիւնը մեծապէս դժուարացած էր եւ մարմինը անզգայ դարձած:

Ընկերները կարելին ըրին՝ կեանքին դարձնելու համար իրենց սիրելի գոյքապահը, որ աւա՛ղ, գահագուրկ թագաւորի մը պէս, զուրկ էր հիմա թանկագին գոյքէն: Տըղաքը գնդակին փոխարժէքը ամբողջովին ծախսեցին բրժիշկի, դեղերու եւ սնունդի համար: Իրենց օրուան վաստակն ալ չխնայեցին: Անօգո՛ւտ. վահան մահամերձ էր:

Վերջին օրը, առաւօտուն անսպասելի եռանդ մը ցոյց տուաւ: Սկսաւ խօսիլ իր հին ծրագիրներէն. ըսաւ թէ Պէյրութ պիտի փոխադրուէր ազգականին մօտ, անոր գործին մէջ պիտի մտնէր, թերթերու մէջ ծանուցում պիտի տար եւ մայրը պիտի գտնէր, Տէր Զօրի իր յուշերը գրի պիտի առնէր, պիտի պատմէր թէ ի՛նչպէս փրկուեցաւ ջարդի սարսափներէն եւ պիտի տեսնէին թէ ի՛նչ ոռման է իր կեանքը... Յնորահար ինքնամոռացութեան մը անձնատուր՝ խօսեցաւ գրեթէ ամբողջ օրը, յանախակի ընդհատումներով:

Երեկոյեան պոյաճիներու ընտանիքը հաւաքուած էր

սենեակին մէջ: Մայրիկը նստած էր հիւանդին սնարին քով, իսկ տղաքը ոտքի շարուած էին անկողինին եզերքը: Վահան նայուածքը կը սեւեռէր իրենց վրայ, բայց կարծես թէ չէր տեսներ զիրենք: Յանկարծ շարժումով մը հասկըցուց, որ զինք վերցնեն քիչ մը: Մայրիկը թելը անցուց Վահանի ուտերուն եւ կիսովին գրկեց զայն: Վահան ամոր բռնած էր կնոջ ձեռքը:

- Մայրի՛կ,- շշմոջեցին իր արիւնաքամ շրթները:

- Այո՛, մանչս,- պատասխանեց մայրիկը գորովագին:

- Դո՞ւն ես:

- Այո՛, տղաս:

Ձեռքի կծկումին հետ թուլցան նաեւ դէմքի մկաններուն արկումները եւ Վահանի գլուխը ինկաւ բարձին վրայ: Երանութեան ժպիտ մը յաւերժացաւ իր կիսաբաց շրթներուն:

*

* * *

Ներկի սնտուկը ծախեցին եւ տեղը ուրիշ սնտուկ մը գնեցին: Հասարակ տախտակէ շինուած անփայլ եւ անզարդ սնտուկ մը: Նախկինը կրելու պարտականութիւնը Վահանի ուսին կը ծանրանար, իսկ այս մէկը կրեց վատակարբէկ պոյաճիին անկենդան մարմինը: Դերերու եւ տեղերու աննշան փոփոխութիւն մը անշուշտ՝ որմէ ոչ մէկ տեղեկութիւն ունեցաւ Դամասկոս քաղաքը: Ընկերները միայն, այդ երեք վկայեալ սրիկաները, զգացին անհատատալի տարբերութիւնը երկու սնտուկներուն եւ արտասուեցին: Իրենցմէ մէկը անդարձ կը մեկնէր: «Գոյամարտ» խումբի յառաջապահը, որ դաշտին վրայ այնքա՛ն դժուարութիւն ցոյց կու տար վազելու, անհաւասարելի արագութեամբ սուրացեր էր դէպի մեծ Անձաւօթը: Ան՝ որ հարիւրաւոր զոյգ կօշիկներ ներկած, գունաւորած, փայլեցուցած էր՝ հիմա կը պսակէր ներկաթափ, անգոյն, ան-

փայլ, պզտիկ մանուկ մը կարծես, որ կը գնջէ եւ պիտի արթննայ քիչ ետք, պիտի արթննայ ու պիտի սպասէ մօրը, որպէսզի գայ եւ զինքը սեղմէ կուրծքին:

Պոյսանի Վահան չարթնցաւ: Տղաքը ձիաքարչ կտոր մը բերին, մէջը դրին դագաղը եւ տարին հայոց գերեզմանատուն: Սեդրակի մայրիկը շատ խնդրեց, որ ինքն ալ ներկայ ըլլայ թաղումին: «Ան ալ իմ զաւակս էր, ան ալ մօր մը ճիկերն էր... վա՛խ ետարում, վա՛խ, հայու անտէր, անմայր ձագուկներ», - հեծկլտաց՝ արցունքներու տարափ մը թափելով դագաղին վրայ: Տղաքը չձգեցին եւ իրենք եղան միակ յողարկատրները: Գերեզմանատան մէջ գաւառացի ալեգարդ տէրտէր մը կատարեց թաղմանական արարողութիւնը: Կատարեալ խաղաղութեան մէջ հողին յանձնուեցաւ Վահանի սնտուկը: Ընկերները շմաճ, շուարաճ վիճակ մը ունէին: Իրենց այնպէս կու գար, որ խաղ ու կատակ է այս ամէնը: Վերադարձի ճամբուն վրայ երկարատեն համարձակութիւն չունեցան իրարու հետ բառ փոխանակելու: Վերջապէս Արսէն խզեց լուրջութիւնը.

- Մեղք եղաւ Վահանին:

- Ծա՛տ մեղք, լաւ տղայ էր, - ակեցուց Սեդրակ:

Եւ այս ջոխտ մը խօսքը որպէս դամբանական ծառայեց: Վահանի արժանիքները փատաբանող ուրիշ ճառեր չարտասանուեցան: Արսէն, Աւետիս եւ Սեդրակ կամուրջին վրայ իրարմէ բաժնուեցան լուռ ու մունջ:

*

* *

- Վահանը թաղեցի՛ք,- ըսաւ քեռին խիստ շեշտով մը, երբ Սեդրակ ներս մտաւ իրենց տունէն: Պահ մը գլուխը կախ եւ անխօս մնալէ ետք Սեդրակ իր թաց աչքերը վեր առաւ եւ պատասխանեց.

- Յանցաւոր էր, քեռի, շա՛տ յանցաւոր. այսքա՛ն ատենէ հետն էինք, օր մը մեզի չէր խօսած իր հիւանդութեան մասին: Թոքախտէ վարակուած մէկը կրնա՞ր անոր կեանքը վարել:

- Վահանը յանցաւոր չէր, ո՛չ ալ թոքախտը: Տէր Զօրի ատերն է, որ կը շարունակուի: Մեղաւո՞ր է թոքախտը, երբ գաղթականութեան ճամբաներուն վրայ մաշած, կըտոր-կտոր եղած թոքերը գտնէ՝ բոյն դնելու համար: Ոճրագործ ձեռքեր անոր կտրծքին տակ վէրքեր բացին, հող փորեցին եւ բարակ ցաւը հոն եկաւ սերմեր նետեց... շարդը կը շարունակուի... խեղճ տղայ, աչքիս առջեւէն չի հեռանար:

Մահուան մերձաւորութիւնը կը ցամքեցնէ ապրողներուն հոգիին ակունքը, ինչպէս գիշերուան սարսափը կը կտրէ թռչուններու կենսայորդ խմբերգը: Ատոր համար է, որ մտելի տուններուն մէջ մարդիկ բառ չեն գտներ արտասանելիք ու կը նստին լուռ, անբանային ինքնամփոփումով: Լոռութիւն տիրեց նաեւ Սեդրակեանց ճնշող յարկին տակ: Պահ մը վերջ քեռին շտկուեցաւ անկողինին մէջ, սիկարէթ մը վառեց, ազափօրէն ներս քաշեց մոխըր եւ կարծես ինքն իրեն հետ խօսելով պոռթկաց յանկարծ.

- Ինչո՞ւ կ'ապրիմ ես, ինչո՞ւ ողջ կը մնամ տակաւին, երբ ֆիտանի պէս տղաներ կ'իյնան շուրջս: Սիրելիներու ցաւերը ողբալո՞ւ համար ես ստեղծած ինծի, Տէ՛ր Աստուած: Այս ի՛նչ պատիժ է. ինչի՞ կը ծառայէ իմ կեանքըս: Ոչ մէկ բանի պէտք եմ. անկիւն մը նետուած քորջի կտոր, տիւանի բարձ, անելորդ բեռ...

Սեդրակի համար բոլորովին անսպասելի էր այս պոռթկումը: Կը լսէր, բայց լաւ չէր հասկնար քեռիին խօսքերուն իմաստը: Կ'ուզէր ընդմիջել, հակառակը պնդել, բայց լեզուն կապուած կը մնար: Նախընտրեց որ կրկին լոռութիւն հաստատուի սենեակէն ներս եւ արտաշնչուած ծուխի ամպեր պարուրեն իր դէմքը: Տակաւ սկսան մեղ-

մանալ քեռիի դէմքին պրկուած գիծերը եւ դարձեալ լսեց
անոր ձայնը, այս անգամ աւելի հանդարտ, աւելի տաք.

- Մէկ սպասում ինձ կապած կը պահէ դեռ այս կեանքին: Ներսէս ձայն մը կ'ըսէ, թէ այս այսպէս չի կրնար տեւել, մեր ժողովուրդին եղած չարիքները չեն կրնար մոռցուիլ. հատուցում պիտի ըլլայ, արդարութիւն պիտի ըլլայ: Եթէ Վահանի կուրծքը խորտակուեցաւ, ուրիշ հազարաւոր Վահաններ ունինք անսպասուներէն հաւաքուած՝ շա՛տ աւելի ամուր կուրծքերով: Անոնք իրենց իրաւունքը պիտի պահանջեն, անոնք իրենց իրաւունքին տէր պիտի կանգնին... վաղը կրկին մեր երկիրը պիտի երթանք, օր մը նորէ՛ն մեր օճախներուն մէջ պիտի վերահաստատուինք: Կ'ուզեմ քիչ մըն ալ սպասել, քիչ մըն ալ շնչել, այդ օրը տեսնելու եւ մեր հողին մէջ թաղուելու համար...

Սեդրակ զգաց, որ քեռին իր սովորական ոգեւորութիւնը վերագտնելու վրայ է, աչքերուն այն ինքնաշատուկ արտայայտութեամբ, առանց որուն օտար, անհաղորդ մէկը կը դառնար: Քեռին հիանալի էր եւ հարազատ՝ իր ոգեւորութեան մէջ միայն: Եւ ինք գիտէր, թէ անոր մանկունակ խանդավառութիւնը եւ ամուր հաւատքը յօդացաւի սուր տագնապներն իսկ չէին կրցած խեղդել:

- Եթէ ես չտեսնեմ այդ օրը,- աւելցուց ան մտերմօրէն ծռելով Սեդրակի կողմը,- դուն անպայման կը տեսնես, տղա՛ս, անպայման՝ կը տեսնես. վստահ եմ ատոր:

ԿԵԱՆՔԻ ՆԱԻԱԿԸ ՀԵՏՔ ՉԹՈՂՈՒՑ

Անելի քան ժամ մըն է Սեդրակ կը թափառէր Սերինայի տան մօտերը: Տասնեակ անգամներ անցաւ այն դրան առջեւէն, որուն ետին կը շնչէր աշխարհի ամէնէն քաղցր էակը: Չէ՞ր կրնար ըլլալ, որ դիպուածով մը դուռը բացուէր եւ Սերինան իր հասակի նազանքը օրօրէր մայթին վրայ: Մեծ էր տառապանքը պատանի հիացողին: Իրեն կը թուէր, թէ մէկ դարէ ի վեր չէր տեսած գայն: Բոլոր փնտրտուքներն ու սպասումները ի զուր անցած էին վերջին շաբաթներու ընթացքին: Դպրոցէն արձակուող ընկերուհիներու շարքին մէջ չէր այլեւս ան. ո՛չ ալ իր տան սեմին. ո՛չ ալ երեկոյեան պտոյտի ճամբաներուն վրայ: Արդեօք հիւս՞նդ էր, արդեօք մեկնա՞ծ էր քաղաքէն: Որո՞նք հարցնէր, ինչպէ՞ս հարցնէր, ի՞նչ անունով եւ ի՞նչ պատրուակի տակ տեղեկութիւններ քաղէր: Սեդրակ անճրկած կը մնար այս անելին առջեւ, բայց Սերինան գոնէ հեռուէն անգամ մը տեսնելու պապակը կ'այրէր իր ողջ էութիւնը: Կարելի հնարքները մի առ մի աչքէ անցուց: Մտածեց միևնչեւ անգամ նամակ գրելու մասին: Մտքին մէջ նախադասութիւն առ նախադասութիւն պատրաստեց նամակին բովանդակութիւնը, գտաւ արտայայտութեան նորագոյն կերպեր, ըսաւ շատ քնքուշ եւ սրտազեղ բաներ, զոց սորվեցաւ շարադրելիք նամակը, բայց ի հարկէ ոչ գրեց եւ ոչ ալ դրկեց գայն:

Ի՞նչ լեզուով պիտի գրեր եւ ո՞ր հասցէին պիտի ուղարկեր: Նախորդ օրը, համբերութիւնը սպառած, գնաց եւ վճռաբար բախեց Սերիմայի տան դուռը, այն յոյսով որ ինք կ'ըլլայ բացողը, կամ առնուազն ներսէն կը նշմարէ: Դժբախտաբար եղբայրը ներկայացաւ, ուզեց նախ վորձտել զինք, յետոյ փոխեց միտքը եւ զոյգ մը կօշիկ յանձնեց ներկելու: Սերիմայի ստուերն իսկ չէրեցաւ: Ամայութի՛ն, տրտմութի՛ն, լուութի՛ն: Թաղը պարպուած էր կարծես եւ մտելային ձանձրախտի մը մէջ ընկղմած: Կեանքը համ չունէր եւ շահը՝ հրապոյր: Սերիմայի մէկ նայուածքը կըրճար հրաշափոխել ամէն ինչ, կրճար երգի ու կեանքի նոր սարսուռներ տալ իր հոգիի թեւերուն:

Սեդրակ ներկատուփը գետեղեց դիմացի տան պատին տակ ու նստաւ: Պէտք ուներ ինքնամփոփուելու եւ հանդարտ գլխով հաշիւ տալու ինքն իրեն: Իր ընթացքը տղամարդու վայել ընթացք մը չէր ի վերջոյ. պատերու քով սլքտալ, դռներու առջեւ թափառիլ, ճամբաներու վրայ հեռուէն հսկել յանուն ինչի՞, փոխարէնը ի՞նչ ստանալու համար... Ծատ հաւանաբար աղջիկը մինչեւ հիմա իր բուն զգացումներուն ալ տեղեակ չէր: Ամօթալի էր իսկապէս իր այս թուլամորթ վերաբերումը, իր այս դատապարտելի անհամարձակութիւնը: Կարդացած վէպերուն հերոսները իրեն չէին նմաներ բնաւ: Անոնք գիտէին յարատեւել, խոչընդոտներ խորտակել, պայքարիլ եւ ի հարկին զոհուիլ նաեւ՝ իրենց սէրերուն համար: Իսկ ի՞նք: Օ՛, ինք օդին մէջէն նայուածքի գողութիւն եւ ժպիտի որսորդութիւն ընել գիտէր միայն: Սեդրակ մտածեց, թէ այս այսպէս պէտք չէ տեւել եւ նոր գլուխ մը պէտք է բացուի իր սիրոյ վիպերգութեան մէջ: Հերոսակա՛ն գլուխ մը: Այս մտածումները ունեցած պահուն պոյանքին չտեսաւ իր առջեւ դրուած ներկատուփի անանցանելի պատնէշը եւ ինքզինք ի վիճակի զգաց վայրկեան մը լեռներ տապալելու: Վճռեց որեւէ ձեռով Սերիման գտնել եւ

յայտնել ամէն բան: Չքաշուիլ, չծածկել, չտատամսիլ: Ո՛վ գիտէ, թերեւս փոխադարձէ իր սէրը. թերեւս ան ալ իրեն համար կը տոչորի ու կը տատապի՝ առանց արտայայտելու համարձակութեան. թերեւս յօծարի փախչիլ իրեն հետ, ի՛րը ըլլալ, իրե՛ն նուիրուիլ: Ի՛նչ է, ծիծաղելի՞՞ ենթադրութիւն մըն է ըրածը. բայց միթէ՞ չեն եղած ասանկ բաներ. միթէ՞ հարուստ ու գեղանի աղջիկներ չեն փախած աղքատ տղոց հետ...

Սեդրակ ոտքի ելաւ, մեքենաբար շալկեց սնտուկը եւ մօտեցաւ Սերիմայի տան դրան: Որոշած էր անմիջապէս գործի անցնիլ, որպէսզի որոշումը փոխելու ժամանակ չունենայ: Պիտի մտներ ներս, պիտի գտներ աղջիկը, առանձին տեսակցութիւն մը պիտի խնդրէր հետը եւ պիտի ըսէր թէ կեանքը իմաստ չունի առանց իրեն, չի կրնար ապրիլ իրմէ հեռու...

Աւելի հզօր զգացում մը, քան իր սրտին զարկերը գահավէժ արագութեան հասցնող ուժը, աւելի բուռն տենչանք մը, քան վախի եւ ամօթի ջլատիչ արգելակները, զինք մղեցին կախարդական դուռը բախելու: Մէկ վայրկեան շունչը բռնած սպասեց: Ի՛նչ վայրկեան էր ատիկա: Կեանքին մէջ շատ քիչ անգամներ մարդիկ նման վայրկեաններ կ'ապրին: Ծայրագոյն լարումով պրկուած աղեղ մըն էր ջիղերուն ամբողջ խորձը, աղեղ մը՝ ուրկէ հոգիին նետը պիտի արձակուէր դէպի ճակատագրական նշանակետը: Ո՛չ մէկ մտածում. ո՛չ մէկ դատողութիւն: Մեր միտքը կը դադրի գործել գերագոյն վայրկեաններուն, ուր ի յայտ կու գայ հոգիին գերազանցութիւնը:

Բակին մէջ հնչող ոտքի ձայներ... ի՛նքն էր, Սերիման, գողտրիկ մուճակներու զգլխիչ ոտնաձայնով... Աչքը գոց կը տեսներ զայն: Կը յառաջանար ահաւասիկ, կը մօտենար դրան, ձեռքը կը նետէր նիգին, հիմա պիտի բացար զայն... հաւանօրէն մինակն էր տան մէջ, հաւանօրէն կը նախզգար իր գալուստը...

Բացունցաւ դուռը եւ Սեդրակ տեղն ու տեղը արձանացաւ: Դէմ առ դէմ կը գտնուէր Սերիմայի եղբօր հետ, որ նախ զարմացած, յետոյ զայրացկոտ արտայայտութիւն մը ստացաւ եւ պոռաց ամբողջ ուժով.

- Ի՛նչ աներես պոչաճի եւ դուն. ե՛րբ դուռը բանամ՝ առջեւ կը տնկուիս. երէկ տակաւին հոս էիր եւ կօշիկներս ներկեցիր. ամէն վայրկեան կօշի՞կ պիտի հասցնենք քեզի, կորսուէ՛ սըտեղէն:

- Ես... ես... ներողութիւն,- թոթովեց Սեդրակ շուարած, յուսաբեկ եւ ամօթահար:

- Ո՞վ է ան,- լսելի եղաւ ներսէն Սերիմայի երգեցիկ ձայնը:

- Աներես պոչաճի մը, որ շարունակ մեր դուռը կը զարնէ,- պատասխանեց եղբայրը:

- Թող ներս գայ, ես կանչեցի զինքը,- ըսաւ քոյրը, ակնարկ մը նետելով դրան մէջ:

Մութ ու ցրտին քարայրէ մը դէպի լոյս աշխարհ եկող մէկուն կենսանորոգ տպաւորութիւնը ունեցաւ Սեդրակ: Օր ու արեւ կար այս աշխարհին երեսը եւ ինք կրնար ազատ շնչել...

Սերիմայի եղբայրը ուները թօթունեց դժգոհ շարժումով մը եւ բակին մէջ իջնող սանդուղներէն բարձրացաւ տան վերնաշարկը: Սեդրակ կեցաւ առազանին եզերքը, աչքերը յստած հոն լողացող կարմրախայտ զոյգ մը ձուկերու ճապուկ շարժումներուն: Աղջիկը կ'ուշանար եւ ինք միս-միսակ կը սպասէր այնտեղ, տարտամ լոյսերու եւ տրտմանու շքեղանքի մը խռովքին անձատուր: Սերիման փրկած էր զինք, փրկած էր իր արժանապատուութիւնը եւ անճաման վեհանձնութեամբ վարուած հետը: Պիտի ընէ՞ր նոյն բանը ուրիշ պոչաճի մը հանդէպ: Պիտի ուզէ՞ր սրբագործուած սուտով մը ներս հրաւիրել ռեւէ մէկը, ինչպէս ըրաւ իրեն համար: Ո՛չ անշուշտ: Ուրե՞մն...

Սերիման երեւցաւ զոյգ կօշիկ բռնած ձեռքը: Հագած էր ծաղկաւոր թելթել շրջագգեստ. դէմքը տժգոյն էր եւ մագեըը անխնամ ձգուած ուսերուն: Բարեւեց ժպիտով մը եւ իրեն երկարեց կօշիկները, որոնք ներկի պէտք չունէին: Սեդրակ նայեցաւ աղջկան այնպիսի խորունկ նայուածքով, ուր երախտագիտութենէ զատ կային տակաւին շատ մը խորհրդաւոր ուրիշ զգացումներ: Սերիման ըմբռնե՞ց այդ նայուածքին ամբողջ իմաստը. ո՛վ գիտէ: Բայց չհեռացաւ բակէն: Ըիշդ Սեդրակին դիմաց՝ նստաւ աւագանին եզերքը եւ սկսաւ դիտել պոյաճիին աշխատանքը:

Խոզանակի իրաքանչիւր շարժումին հետ Սեդրակ կը խորհէր, թէ լաւագոյն առիթն է խոստովանութիւնը կատարելու: Եւ սակայն լեզուն կապուած կը մնար եւ թարթիչները՝ վար կախուած: Կը զգար, թէ երեսները կարմրած էին եւ մատներուն վրայ թելթել դող մը կը պտտէր: Դիմացի աղջիկը ի՞նչ կը դիտէր եւ ի՞նչ կը մտածէր արդեօք:

Վերջապէս համարձակեցաւ գլուխը բարձրացնել եւ փոխանակ սրտին մէջինը ըսելու, խեղդուկ ձայնով մը մրմնջեց.

- Հիւս՞նդ էիք, օրիորդ:

- Ինչո՞ւ կը կարծես թէ հիւանդ էի:

- Որովհետեւ բաւական առեւնէ դպրոցական ձեր ընկերուհիներուն հետ չէք եւ դէմքերնիդ տժգունած է քիչ մը...

Սերիման լռեց՝ տրտում ժպիտ մը դէմքին: Ծուրջը նայեցաւ զգուշութեամբ եւ լետոյ յանկարծ հարցուց.

- Անունդ ի՞նչ է:

- Սեդրակ:

- Արհեստակից ընկերներուդ չես նմանիր դուն. կ'ենթադրեմ որ չուզելով կ'ընես այս գործը:

- Ստիպուած, օրիորդ:

- Երբ մէկը հարկադրուած է իր չուզածը ընելու՝ դժբախտ է անշուշտ:

Սերինան կը խօսէր ֆրանսերէն բառերով խառն արաբերէն մը, որ յատուկ է ֆրանսական վարժարան յաճախող գրեթէ բոլոր տեղացիներուն: Սեդրակ դիրքութեամբ կը հասկնար, բայց կը դժուարանար պատասխանելու:

- Նայէ՛, Սեդրակ,- վրայ բերաւ աղջիկը անմիջապէս,- միայն դուն չես դժբախտը: Աւելի մեծ դժբախտութիւն է, երբ մէկուն կը պարտադրեն յաիտենական կապուած մնալ որոշումի մը, որուն ինք հակառակ է:

Պոյաճին հարցական նայուածք մը նետեց Սերինային վրայ, որ աւագանէն ելած յաւերժահարսի մը չափ գեղեցիկ ու տրտում էր այդ պահուն:

- Չսիրած գործդ օր մը կրնաս փոխել,- շարունակեց ան,- բայց չսիրած կեանքդ չես կրնար վրայէդ նետել, սա սնտուկին պէս:

- Եթէ որեւէ ծառայութիւն կը սպասէք ինձմէ՛ պատրաստ եմ կատարելու:

- Կօշիկներս լաւ ներկէ,- խնդաց աղջիկը դառն խընդուքով մը,- որովհետեւ այլեւս առիթը պիտի չունենաս զանոնք ներկելու: Այս Կիրակի կ'ամուսնացնեն զիս եւ կ'ուղարկեն ուրիշ քաղաք մը...

- Օհօ՛, չըսէ՞ք, հարսանեական ներկ է սահկա, շնորհաւորութիւններս...

Սեդրակ մէկ անգամէն հոգեփոխուեցաւ: Դիմացիներ հեզնելու, վիրաւորելու փափաք մը արթնցաւ մէջը:

- Գեղեցիկ ու հարուստ պարոն մըն է անշուշտ,- ծաղրեց չոր շեշտով մը:

- Չեմ ճանչնար:

- Վրա՞ս կը խնդար:

- Հայրս ու եղբայրս կը ճանչնան եւ շատ յարմար կը գտնեն ինձի, որովհետեւ մեծ վաճառատուն մը ունի եղեր Հոմսի մէջ:

- Իսկ դո՞ւք:

- Իսկ ես կը գտնեմ, որ չսիրած մէկուդ հետ ամուսնանալէ աւելի գէշ բան չկայ աշխարհիս երեսին:

- Սերինա՛, ո՞ւր ես,- կանչեց մայրը վերի սենեակներէն մէկուն պատուհանէն:

Սերինան ցնցունեցաւ, ոտքի ցատկեց եւ քանի մը քայլ առաւ: Մանդուղներու առաջին աստիճանին մէկ ոտք դրած՝ ետին դարձաւ եւ անգամ մըն ալ նայեցաւ Սեդրակին: Աչքերուն մէջ արցունքի կաթիլներ կը շողային:

Սեդրակ երբեք պիտի չմոռնայ այն նայուածքը, որ օգնութիւն հայցող յուսահատի մը սրտաշարժ նայուածքն ըլլար կարծես: Կօշիկները դրաւ մէկ կողմ, իրերը հաւաքեց ու նետուեցաւ փողոց:

*

* *

Ջիղերուն պրկուած աղեղը յանկարծակի թուլցաւ եւ նպատակին չարձակուած նետը ինկաւ գետին: Վերջացած էր ամէն բան. Սերինան կ'ամուսնանար Կիրակի օր: Այլեւս պիտի չտեսներ զայն. այլեւս երբե՛ք պիտի չլսէր անոր ձայնը: Ի՞նչ սրտով պիտի անցնէր անոր տան առջեւէն. ինչպէ՞ս պիտի դիտէր իր երջանկութեան յաւէտ փակ դուռը...

Սեդրակ առաջացաւ աննպատակ: Քալելու զօրատր պահանջ մը կը զգար: Երթալ հեռո՛ւ, հեռո՛ւ, մոռնալ եւ մոռցուիլ: Ամստնային արեգակին լոյսը փոռած էր չորս դին՝ կուրցնող սպիտակութեամբ մը: Փոշին բռնած էր շրջապատը եւ դիզուած փողոցի ծառերու տերեւներուն վրայ: Տիկով չոր շալկած մարդ մը փողոցը կը ջրէր՝ տիկին բերանը քիչ-քիչ բանալով եւ շարժելով աջ ու ձախ: Սեդրակին թուեցաւ թէ քաղաքն ու կեանքը երբեք այս աստիճան գորշ, անկեանդան եւ անտանելի չէին եղած: Չպատասխանեց զինք կանչող յաճախորդի մը կոչին. շարունակեց ճամ-

բան: Միտքը հետզհետե կը գտնէր պայծառութիւնը եւ կ'անդրադառնար իրականութեան: Ինք յիմար էր արդէն. իրաւունք ունէ՞ր տարբեր բան ակնկալելու: Օր մը չէ որ մը ասիկա պիտի պատահէր, Սերիման պիտի ամուսնանար ուրիշին հետ: Քիչ մը ուշ, քիչ մը կանուխ՝ ի՞նչ է տարբերութիւնը: Կարծես թէ իրեն խօսք տուած ըլլար կամ ինք միջոցներ ունենար անոր տիրանալու: Ծիծաղելի էր պարզապէս զգացած վիշտը...

Տրամաբանութեան սրսկած ջուրը ե՞րբ կրցած է մարել մեր սրտերուն հրդեհի: Սեդրակի վիշտը զայրոյթի վերածուեցաւ եւ կծու հայհոյանք մը մոլորաց ակոսներուն տակէն աշխարհի հասցէին: Քայլերը արագացուց՝ ժամադրութեան ուշացած մէկու մը պէս: Ո՞ր ժամադրութեան: Ո՛չ գործի ժամ ունէր, ո՛չ սրտի: Թափառելով պիտի ճարէր գործը եւ դիպուածը պիտի ըլլար իրեն առաջնորդ: Սերիման կորսնցնելէ ետք՝ հիմա բոլորովին միմակ կը մնար: Ընկեր չունէր ատենէ մը ի վեր. Արսէն եւ Աւետիս լքած էին պոյաճիութեան ասպարէզը՝ հետեւելու համար իրենց նախասիրած արհեստներուն: Ինք մնացած էր վերջին հաւատարիմը, յամառօրէն սպասելով բախտի ժպիտին... Մէկ հարուածով Սերիման կը կտրէր անա բախտին թելը ու զինք կը նետէր յուսահատական անորոշութեան մը մէջ:

Հոսուն ջուրերու ձայն մը զինք ուշքի բերաւ. բաւական հեռու քալած էր. կը մօտենար մեծ մզկիթին, որու նախամուտին առջեւ, անշարժ ու անայլայլ ձերունիներ ծալապատիկ նստած՝ մեծ ցայտադիւրիւն շուրջ կլկլակ կը քաշէին՝ փիլիսոփայ հանդարտութեամբ մը: Մզկիթին տեսքը հին յիշատակներ արթնցուց հոգիէն ներս: Այսպիսի արեւոտ օր մըն էր, որ նոյն այս ճամբայէն չորս ընկերներով ֆութպոլ գնելու գացին եւ վերադարձան ուրախ-գուարթ: Վահան ողջ էր այն ատեն եւ Սերիման՝ խոստումնալից որոնում եւ յարանում կարօտ: Երկուքն ալ չկային հիմա:

Չկային նաև միւս երկու ընկերները, որոնց ներկայութիւնը առնուազն մխիթարանք մը պիտի ըլլար իրեն: Մ'զկիթին դարաւոր քարերը անտարբեր զինք կը դիտէին: Ոչինչ կար փոխուած իր շուրջը: Կլկլակ քաշող մարդիկն անգամ քարացած արձաններ էին կարծես՝ անյիշատակ ժամանակներէ մնացած: Եւ սակայն, որքա՛ն տարբեր էր կեանքը իր մէջ, որքա՛ն անճանաչելի:

Վահանի կորուստին կսկիծը իր ամբողջական կշիռով, նոր միայն զգաց: Անոր դագաղին առջեւ ինքն ալ լացած էր ուրիշներու պէս, բայց լրիւ չէր հասկցած, թէ ի՞նչ է մահը եւ ի՞նչ կը նշանակէր այդ իրարանցումը: Կը քալէր ու չէր կրնար աչքին առջեւէն հեռացնել Վահանի ազագուն մարմինը, գնդակը թելին տակ ամուր սեղմած, լուրջ եւ ժպտուն միանգամայն: Սեղրակ զգաց, թէ կոպերը կ'այրին եւ նայուածքը կ'աղօտի: Թեզանիքով սրբեց ճակտին քրտինքը եւ շարունակեց քալել: Չես գիտեր ինչպէս, չես գիտեր ո՛ր հովուն բերած ներշնչումով, մտքին մէջ վերակենդանացան բանաստեղծութեան մը առաջին չորս տողերը, զոր ինք սիրած էր դպրոցը զոց սորված ասեմնին: Ծրթները արձագանգ եղան մտքին եւ կրկնեցին մեղմաձայն.

Կեանքի նաւակը հետք չթողուց իր ետին,

Մոռացումն առաւ ինձմէ ամէն բան,

Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,

Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման...

«Այս տողերուն իմաստն ու խորութիւնը հիմա չէք ըմբռներ: Տարիները պէտք է անցնին, պէտք է ծերանաք, մազերնիդ ճերմկի, յոյսեր ու յուսախարութիւններ պէտք է կրէք, որպէսզի կարենաք հասկնալ, թէ իրապէս ի՛նչ ըսել ուզած է բանաստեղծը», - շեշտած էր պարոն Պօղոսեան, երբ դասարանին մէջ քերթուածը կը բացատրէր:

Կը սխալի՞ք, պարոն Պօղոսեան, բնաւ պէտք չկայ ճերմկած մազեր ունենալու՝ հասկնալու համար թէ ի՛նչ կը

Աշանակէ «Կեանքի նաւակը հետք չթողուց իր ետին...»: Կարելի՞ է գտնել մէկը, որ Սեդրակին չափ երիտասարդ ըլլար եւ անոր չափ խորունկէն զգար տողին ամբողջ իմաստը: Առանց մեծ ծովերու վրայ առագաստ բանալու, իր կեանքի նաւակը ճանչցաւ ամէն տեսակ փոթորիկ, զարնրւեցաւ խութերու, օրօրուեցաւ շոյող կոհակներու ծփանքին հետ, պայքարեցաւ յորձանոտ ալիքներու դէմ, բայց որեւէ նաւահանգիստ չհասաւ: Ոչ մէկ հետք իր ետին, ոչ մէկ կանչող փարոս՝ իր առջեւ: Դէպի ո՞ր նաւարկէ հիմա...

- Հէ՛յ, ո՞ր կ'երթաս այսպէս...

Ձեռք մը կար ուսին վրայ եւ ծանօթ ձայն մը՝ ակամջին: Սեդրակ զարմանքով անդրադարձաւ, որ մտած էր Դամասկոսի գոց շուկայէն ներս եւ կը գտնուէր Աւետիսի աշխատանքի խանութին առջեւ:

- Ի՞նչ ունիս, քիթ ու բերանդ տեսակ մըն են, այս կողմերը ի՞նչ կը փնտռես,- անկցուց իսկոյն Աւետիս, խանութէն դէպի դուրս քայլ մը եւս առնելով:

- Բան չկայ, կը պտտիմ:

- Դուն մէկուն հետ կոտած ես անպայման:

- Ատոր մօտ բան մը:

- Որո՞ւն հետ կոտեցար:

- Ես ինձի հետ, Աւետիս:

Սեդրակի դէմքին լրջութիւնը խտտոր կը համեմատէր իր արտասանած խօսքին հետ, զոր ընկերը կատակի տեղ առաւ, բայց զգաց որ անտվոր կատակ մըն էր:

- Գործէդ գո՞հ ես, Աւետիս,- հարցուց պոյաճիհն, միթէր փոխելու բացալայտ դիտումով:

- Գոհն ալ խօ՞սք է, այս ամբողջ խանութը ինձի է յանձնուած. տէրը մեծ վստահութիւն ունի վրաս. ես ալ, շիտակը, աչքս չորս բացած եմ. ներս մտնող յաճախորդը չեմ ձգեր որ պարսպ դուրս ելլէ:

- Նպատակիդ հասար վերջապէս, կ'ուզէիր կօշիկի

առեւտուր ընել:

- Դեռ ոչ, դեռ կամաց-կամաց. օր մըն ալ պիտի տեսնես, որ ընկեր եղած եմ այս խանութին, օր մըն ալ պիտի տեսնես որ հ'մա եղած է ամբողջ խանութը...

Մահմետական երկու դեռատի կիներ ցուցափեղկին առջեւ կանգ առին եւ իրենց դէմքերու քողերուն ծայրը կիսովին վերցնելով՝ սկսան աչքէ անցընել կանացի կօշիկներու ցուցադրուած մոտիշները: Աւետիս անոնց մօտ փութաց. ամենահաճոյակատար բառերով ներս հրաւիրեց, բայց կիները հեռացան առանց ուշադրութիւն դարձնելու:

- Արսէնը ո՞ր է, տեսած ունի՞ս,- հետաքրքրուեցաւ Սեդրակ, երբ ընկերը կրկին իր քով եկաւ:

- Առջի օր էր տեսայ, քամիոնի մը մէջ, շոֆէտօին քովը նստած: Տեսնէի՛ր չալըմը՝ ձեռքով բարեւած ատեն: Գիղերէն ցորեն փոխադրող քամիոնի մը շոֆէտօին օգնականը դարձեր է: Քանի մը տարիէն, վատահ եղիր, իր օթօն կ'ունենայ:

- Ան ալ հասաւ իր մուրազին:

- Ըիշդ է, հասաւ իր մուրազին, կը մեռնէր օթօ քշելու համար:

- Ինչ որ եղաւ՝ խեղճ վահանին եղաւ:

- Է՛հ, այո՛, բայց ո՛վ գիտէ. թերեւս վահանն ալ հասաւ իր երազին: Չէ՞ որ միշտ կ'ուզէր մօրը միանալ...

Աւետիսին շրթունքները դողացին այս բառերը արտասանած ատեն եւ գլուխը անդին դարձուց:

- Ե՛ս միայն մէջտեղ մնացի,- լրսաւ Սեդրակ դառնութեամբ:

- Յանցատորը դո՛ւն ես. մարդ չի գիտեր ինչ կ'ուզես... թերեւս դուն ալ չես հասկնար ուզածդ:

- Ի՛նչ ալ ըլլայ՝ այլեւս համ չմնաց պոյաճիութեան մէջ. մեր միութիւնը քանդուեցաւ, գործերը թեթեւցան. նոր-նոր պոյաճիներ կ'ելլեն կոր մէջտեղ:

- Եկո՛ւր, Սեդրակ, քեզի ուրիշ գործ մը գտնենք, ապագայ ունեցող գործ մը:

Սեդրակի համար գաղտնիք մը չունէր ընկերոջը առաջարկելիքը, բայց եւ այնպէս սպասողական երեւոյթ մը առաւ:

- Վերը, խանութին վրայ, մեր գործատեղին է,- շարունակեց Աւետիս,- չորս-հինգ դալֆաներ կ'աշխատին իրենց աշկերտներով: Անոնցմէ մէկը աշկերտի մը պէտք ունի. ես կը խօսիմ եւ քեզ քովը կ'առնէ:

- Տեսնենք, մտածեմ:

- Մտածելու պէտք չկայ. ես կը խօսիմ՝ առաջին շաբաթէն պզտիկ վճարում մըն ալ ընել կու տամ: Ասկէ լաւ տեղ չես գտներ՝ արհեստ սորվելու համար: Վարպետնիս շատ բծախնդիր մարդ է. մեր քով կարուած կօշիկներուն չափ մաքուր գործ չես կրնար ճարել ամբողջ քաղաքին մէջ:

- Օրը քանի՞ անգամ կը կրկնես այս գովասանքները:

- Ես քու աղէկութեանդ համար կ'ըսեմ, կ'ուզես հաւատա՛, կ'ուզես մի՛ հաւատար: Չես գղջար: Լաւ մտածէ եւ անանկ որոշում տուր:

Սեդրակ պահ մը լուռ մնաց, կնճիռները հաւաքեց ճակատին վրայ եւ ծանրակշիռ որոշում տուող մարդու մը յանկարծական շարժումով դադար ընկերոջը.

- Լա՛ւ, Աւետիս, կ'ընդունիմ, քիչ մը տեսակնիս փոխենք, նայինք ինչ կ'ըլլայ:

- Լմնցաւ գնա՛ց, շաբաթ գիշեր ես լուր կը բերեմ ձեր տունը. Երկուշաբթի առտու գործի կու գաս...

Յաճախորդ մը մտաւ խանութ. Աւետիս ներս խուծեց ետեւէն: Պոյաճիճն, միճակ մնալով մայթին վրայ, վերադարձի ճամբան բռնեց: Ի՞նչ էր տարբերութիւնը. կօշիկ ներկելու տեղ՝ կօշիկ պիտի կարէր: Կեանքի նառակը դարձեալ հետք պիտի չձգէր հոգիի ջուրերուն վրայ:

Հազիւ քանի մը քայլ առած՝ լսեց իր անունը: Աւե-

տիս գինք կը կանչէր:

-Քիչ մնաց կը մոռնայի կոր,- ըսաւ ընկերը, երբ Սեդրակ ետ դարձաւ,- երէկ իրիկուն պարոն Պօղոսեանը տեսայ. մեր խանութին առջեւէն կ'անցնէր. ինծի պատուիրեց, որ քեզ գտնեմ եւ անպայման իր քով դրկեմ: Ըսաւ որ չուշանաս, շատ կարեւոր է:

- Ի՞նչ կայ արդեօք,- հարցուց Սեդրակ զարմացած:

Եւ վերադարձի ամբողջ ընթացքին մտքին մէջ շարունակ հոլովեց նոյն հարցումը. «Ի՞նչ կայ արդեօք, պարոնը ինչո՞ւ ուզեր է ինձ տեսնել...»:

ԴԷՊԻ ԱՂԲԻՒՐԸ ԼՈՅՍԻՆ

Լոյսը նոր կը բացուէր քաղաքին վրայ, երբ մայր ու տղայ դուրս ելան տունէն: Սեղրակ խոշորկէկ տոպրակ մը սեղմած էր թեւին տակ, իսկ մայրը բռնած թուղթէ ծրար մը: Անխօս առաջացան ամաչի փողոցներէն, իրաքանչիւրը տարբեր մտքերով ու մտահոգութիւններով տարուած:

- Կարծեմ շատ կանուխ ճամբայ ելանք,- խզեց լոռիւնը տղան:

- Վնաս չունի, թրէնի պիտի հասնինք, չեղլենք փախցընենք,- ըսաւ մայրը:

Երկուքն ալ լռեցին նորէն: Ծա՛տ բաներ ունէին ըսելիք իրարու, բայց բառերը կը պակսէին: Այծերը առջին ձրգած կաթնավաճառին տեսքը, քովի փողոցին մէջ, անցած օրերու պատկերը արթնցուց աչքերուն դէմ: Այսպիսի առաւօտ մըն էր, որ ներկատուիը ուսին առած՝ փողոց իջաւ պոյաճի դառնալու: Այն ատեն ծանօթ վայրերու մէջ անծանօթ կեանք մը դիմաւորելու համար ճամբայ կ'ելլէր՝ անփորձ տղու ամօթխածութեամբ: Իսկ հիմա կը դիմէր անծանօթ միջավայր մը՝ իր երազներուն տիրանալու: Նոյն յուզումը սակայն, զոր ունեցած էր առաջին անգամ «պոյաճի» կանչած վայրկեանին, կը խեղդէր կոկորդը:

- Տո՛ւր, քիչ մըն ալ ես կրեմ տոպրակը, բաւական ծանր է, կը յոգնիս,- ըսաւ մայրը փղձկելու մօտ խանդաղատանքով:

- Ներկի սնտուկս ասկէ ծանր էր, չէի յոգներ,- պատասխանեց տղան եւ միւս թեւին տակ առաւ տոպրակը:

Կը գտնուէին Սերիճայի տան մօտերը: Սեդրակի քայլերը արագացան ու երբ հասան ճիշդ դրան առջեւ՝ ակամայ կանգ առին պահ մը: Պատուհաններու փեղկերը փակ էին: Սերիճան շատոնց մեկնած էր այդ տունէն, որ լքուած եւ կիսաւեր դղեակի մը տրտում երեւոյթը կը պարզեր Սեդրակի աչքին: Վերջին անգամ մըն ալ խորունկ նայուածք մը նետեց անոր վրայ, զայն իր ամբողջութեան մէջ պարագրկելու եւ հետը տանելու կարօտով, ապա շարունակեց ճամբան, գլխիկոր:

Կառք մը կ'անցներ իրենց մօտէն. կեցուցին եւ մէջը մտան: Ստուգելէ վերջ, որ լաճախորդները շոգեկառքի կայարանը կ'ուզէին երթալ, կառապանը մտրակեց զոյգ ձիերը եւ քթին տակէն սկսաւ երգ մը մոլտալ:

Որքա՛ն անսպասելի դէպքեր պատահած էին անցնող երեք ամիսներուն:

Աւետիսի խանութէն բաժնուելով, Սեդրակ ուղղակի գացած ու գտած էր պարոն Պօղոսեանը, որ իրեն անտուած էր հետեւեալ լուրը. «Միջնակարգ հայ վարժարանի մը համար գիշերօթիկ սաներ պիտի ընտրուին. պատրաստըլէ՛, կարելիս պիտի ընեն, որ դուն յաջողիս»:

Այնուհետեւ՝ գիշերը ցերեկին խտնելով լծուած էր աշխատանքի, լուծած էր խնդիրներ, սորված պատմութիւն ու աշխարհագրութիւն, որոնցմէ որեւէ մէկը պէտք չէր եղած քննութեան: Գրել տուած էին շարադրութիւն մը միայն, իբրեւ ճիւղ ներկայացնելով՝ «Ինչո՞ւ կ'ուզես ուսանիլ» հարցումը: Սեդրակ իր ամբողջ հոգին դրած էր գրածին մէջ: Ծատ մը ուրիշ գեղեցիկ գաղափարներու շարքին, չէր մոռցած նաեւ անելցնելու, որ կ'ուզէր ուսանիլ՝ ազգին ու մարդկութեան ծառայելու համար: Բերանացի քննիչներու ներկայութեան շղային վիճակ մը ունեցած էր:

Եւ յետոյ՝ երկարատեւ ու սիրտ մաշող սպասումը: Բազում էին կոչեցեալք, բայց սակաւ պիտի ըլլային ընտրեալք: Սեդրակ լաւ գիտէր այս պարագան: Արդեօք ինքը պիտի գտնուէ՞ր սակաւաթիւ այդ բախտաւորներուն մէջ: Թուղթերը դրկած էին այն հեռաւոր քաղաքը, ուր կը գտնուէր գիշերօթիկ վարժարանը եւ ուրկէ պիտի գար ընտրուածներուն ցանկը: Պարոն Պօղոսեան վստահալից էր, բայց ինք՝ թերահաւատ: Թեկնածուներու մեծ մասը կը բաղկանար դպրոցականներէ, որոնք թարմ մտքով եւ գիտելիքներով ներկայացած էին քննութեան, մինչդեռ ինք՝ կոշտացած մտքով պոյանի մըն էր, շատոնց հեռացած դպրոցի գրասեղաններէն:

Սեդրակ տունը լուր չէր տուած իր առած քայլին մասին՝ կանխահաս յուզումներու եւ իրարանցումի տեղի չըտալու համար:

Սպասումի եւ անորոշ կացութեան այդ օրերուն էր, որ յանկարծամաս եղած էր իր սիրելի քեռին: Մոմի մը պէս շիջած էր ան անկողիներէն մէջ, առանց հոգեվարքի տանջանքներուն: Մահուան վկայագիրը տալու համար կանչուած քաղաքապետութեան բժիշկը սրտի տագնապ մը հաստատած էր. ինք ու մայրը մնացած էին գլուխ գլխի: Սեդրակ սկսած էր խղճահարութիւններ ունենալ: Հասկա եթէ յաջողէր՝ ինչպէ՞ս պիտի մեկնէր, ինչպէ՞ս մայրը միմակ պիտի ձգէր տան մէջ, բոլորովին միմակ եւ անօգնական:

Իրիկուն մըն ալ պարոն Պօղոսեան ներս մտած էր իրենց սենեակէն Աւետիսին հետ միասին եւ բացականչած խանդավառօրէն.

- Աչքդ լոյս, մամա, տղադ յաջողեցաւ. մէկ շաբաթէն կը մեկնի:

Խեղճ կինը, անակնկալի գալով՝ նախ չէր հասկցած, թէ վարժապետը ի՞նչ ըսել կ'ուզէ, յետոյ, Սեդրակի տուած բացատրութիւններուն վրայ սկսած էր լուռ արտասուել:

Պր. Պօղոսեան երկար քարոզ մը խօսած էր, շեշտելով որ Սեդրակին փայլուն ապագայ կը սպասէ եւ մայրը փոխանակ լալու՝ պէտք է ցնծայ այս բախտաւոր առիթին համար:

Կատքը կանգ առաւ քաղաքէն դուրս, շէնքի մը դիմաց: Վար իջան եւ անցան կայարանի սպասման սրահը, որ ամայի էր: Տակալին մէկուկէս ժամ կար շոգեկառքի մեկնումին: Մայր ու տղայ տեղաւորուեցան նստարանի մը վրայ:

- Մի՛նակդ ինչպէ՞ս պիտի ճամբորդես,- ըսաւ մայրը, աչքը տղուն վրայէն առանց հեռացնելու:

- Մի՛նակս չեմ, ընկերներ պիտի ունենամ:

- Զգուշ եղի՛ր, գլուխդ թրէնի պատուհանէն դուրս չհանես: Խելքս-միտքս հետդ պիտի ըլլայ. մէյ մը ողջ-առողջ տեղ հասնէիր եւ մամակդ ստանայի՝ ուրիշ բան չեմ ուզեր:

- Հոգ մի՛ ըներ, բան չի պատահիր, ես պզտիկ չեմ:

Լռեցին: Պատին գամուած կայարանի խոշոր ժամացոյցին սլաքները դաշոյնի պէս մխուած կը մնային ժամանակի սրտին խորը: Երեք հոգի եւս եկան ու նստան իրենց մէ քիչ մը անդին:

- Ունեցածներուդ տէր եղիր, ճամբան չկորսնցնես. այս տոսարակին մէջ դրած եմ երկու ձեռք ճերմակեղէն, գուլպայ, շապիկ եւ թաշկիմակ: Բորդէ ելեկդ ալ մէջն է. ցուրտ օրերուն տակէն հագիր եւ բնաւ մի՛ հաներ: **Սմա՛ն**, տղաս, պաղ չառնես. ես քովդ չեմ, ո՞վ պիտի նայի քեզի:

- Հոն կանոնաւոր դպրոց է, ամէն խնամք կը տանին:

- Ինչ ալ ըլլայ՝ դուն **ճահիլ** ես: Հարիւրներով աշակերտ կայ քեզի պէս, ո՞ր մէկուդ պիտի հետեւին: Դուն քեզի ուշադրութիւն ըրէ: Բաղնիքէն ետք հոսկերուն դիմացը չկենաս: Նայէ որ գիշերները չբացուիս, ո՞վ պիտի ելլէ եւ ծածկէ վրադ:

Երկաթուղիներուն վրայ նայող ապակեպատ գոց դռնէն Սեդրակ աչքերը յառած էր վակոններու անշարժ

շարքին եւ հագիւ կը լսէր՝ ատենէ մը ի վեր ամէն օր կրկնուող մայրական խրատները, զոր գոց գիտէր այլեւս: Այդ կատաշարն էր ուրեմն, որ զինք պիտի տանէր հեռո՛ւն, անձամօթ հաստատութեան մը առաջին հանգրուանին, ուրկէ անդին դեռ ճամբայ ունէր կտրելիք: Վակոններուն կարգապահ եւ խիստ տեսքը տարօրինակ երկիւղ մը կը ներշնչէր իրեն: Մանուկ հասակին, տարիներ առաջ, գաղթականութեան ցաւատանջ օրերուն, թշուառ բազմութեան մը հետ ինքն ալ թխմուած էր վակոնի մը մէջ, մօրը փէշին ամուր փակած եւ շոգեկառքը կտրած էր մոռալ տարածութիւններ: Այն ատեն վայրաշարժ մեքենան հրաքորքոք երախով հրէշի մը տպաւորութիւնը գործած էր վրան, հրէջ մը՝ որ հայ կիներ ու մանուկներ կույ կու տայ գիշերուան մութին մէջ... Այդ տպաւորութիւնը խուլ արձագանգներ կը բանար հոգիէն ներս եւ անխոստովանելի անձկութեամբ կը սպասէր հիմա անոր վերջաչտնութեան:

- Քեզի համար շատ դժուար պիտի ըլլայ այս բաժանումը,- ըսաւ Սեդրակ մօրը դառնալով:

- Ծիշո՞ղ է, դժուար պիտի ըլլայ, բայց ի՞նչ ընեն. կըրնայի՞ փափաքիդ հակառակիլ: Քու ապագայիդ համար է. գնա՛, մարդ եղիր, զարգացիր, հոգ չէ, ես ալ հոս ակոսա կը սեղմեմ քիչ մը... մէկ հոգի եմ, ինչպէս ըլլայ կ'ապրուիմ...

- Տարի ըսածդ մէկ օրուան պէս կու գայ կ'անցնի:

- Նամակդ պակաս չընես: Եթէ նամակդ ուշանայ՝ գիտցած եղիր որ ես հոս հիւանդ եմ: Ա՛յս, գրել-կարդալ գիտնայի տէ, դուն ալ տեսնէիր. ամէն օր կը գրէի, ի՞նչ բան է երկու տող գրելը...

- Պատուիրած եմ Աւետիսին. Կիրակի օրերը պիտի հանդիպի քեզի եւ քու բերնէդ նամակիս պատասխանները պիտի գրէ:

- Ողջ ըլլայ տղան. շիտակը դրացիներս ալ լաւ մարդիկ են. պէտք եղած ատեն անոնց ալ գրել կու տամ:

- Պարապ բաներու համար սիրտ մի հատցնէր: Ես հոն շատ լաւ կ'ըլլամ. դուն իմ գրածներու հաւատա՛ եւ ոչ թէ խենթիս-մենթիս երազներուդ:

Բազմութիւնը հետզհետէ շատցաւ: Հասան նաեւ Սեդրակի հետ նոյն վարժարանը մեկնող երեք տղաքը եւ կարճ ատենուան մը ընթացքին բախտակից մայրերը դժուարութիւն չունեցան իրարու հետ մտերմանալու, տաւը տարուան ծանօթներ դառնալու...

Վերջապէս բացուեցան դէպի շոգեկառք առաջնորդող դռները եւ տղաքը, իրենց ազգականներուն հետ, բարձրացան երրորդ կարգի վակոն մը: Մեկնումի վերջին ազդանշանին վրայ Սեդրակի մայրիկը տղուն վիզը փաթթուեցաւ եւ արցունքներու մէջէն մրմնջեց.

- Իմ անուշիկ տղաս, քեզ տեսնեմ, բարով երթաս, բարով վերադառնաս, Աստուած հետդ ըլլայ, Աստուած իր ձեռքը պակաս չընէ վրայէդ... դուն քեզի լաւ նայէ, շուտ-շուտ նամակ գրէ... ո՛վ ունիմ ես այս աշխարհիս երեսին. վերը Աստուած, վարը՝ դո՛ւն...

Շոգեկառքի պաշտօնեան գրեթէ բռնի վար իջեցուց ողջերթի եկողները եւ վակոնի դռները շտապաձայն փակուեցան:

Վայրաշարժը սույեց. անիւները դորդացին եւ կառաշարը ցնցում մը ունեցաւ, դանդաղօրէն ճամբայ ելլելով: Սեդրակ պատուհանէն դուրս կախուեցաւ. մայրը կեցած էր քիչ մը անդին, միս-փնակ, գլխուն սեւ շալ մը նետած, սեւ հագուստներու մէջ եւ սպիտակ թաշկինակ մը ձեռքով շրթներուն սեղմած:

- Բա՛ջ եղիք, մայր, շուտով կը վերադառնամ,- պոռագ Սեդրակ վերջին անգամ: Անիւներու աղմուկին մէջ լսե՞ց արդեօք մայրը՝ փտամ չէր: Ան գամուած կը մնար կեցած տեղը, անշարժ, կարծես քարէ սեւաւոր արձան մը: Վերադարձին պիտի գտնէ՞ր զինք հոն, նոյն դիրքով, ինչ-

պէս պոյանհոյթեան առաջին օրուան իրիկունը գտած էր իրենց տան սեմին - վստաֆ չէր...

Շոգեկառքի օձապտոյտ դարձուածք մը կատարելով մխրճուեցաւ ծառաստանի մը մէջ: Կայարանը կորսուած էր:

Սեղրակ ինկաւ նստարանին՝ տօգոյն, խոով եւ շփոթահար: Բոցէ երախով հրէշը անդադար կը սուլէր եւ կը վազէր: Քիչ-քիչ ընդարմացան ջիղերը, տարօրինակ կըշռոյթ մը ստացաւ երակներէն հոսող արիւնը եւ չես գիտեր ինչպէս, չես գիտեր ո՞ր հովուն բերած ներշնչումով՝ մըտքին մէջ հնչեց վաղուց լսուած եւ վաղուց մոռցուած բանաստեղծութեան մը մէկ տողը.

«Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին...»:

Թաալուն անիւները բարբարոս առողջանութեան մը գոռ շեշտերով ամբողջացուցին մնացածը...

1948-1950

Պէլլուֆ

ԾԱՌ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Էջ

Նորընծան	5
Առաջին վաստակը	10
Տունէն ներս	19
Աքլորամարտը	31
Հաշտութիւն	43
Որբանոցի տղան	56
Մոզական հայելիներ	70
Սրիկաներու կենացը	94
Ծարադրութեան սիրտ	108
Ամերիկան գտնուեցաւ	123
Սեւն ու Շէկոն	144
Բաւերու բանակին դէմ	154

Սրբազան Միութիւն	170
Մեղապարտ գնդակը	189
Սնտուկը փոխեցին	207
Կեանքի նաւակը հետք չթողուց	224
Դէպի աղբիւրը լոյսին	237